ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ



ՊԱՊԻԿ ԵՒ ԹՈՌՆԻԿ

ԹԻՒ 28

Է Տ Վ Ա Ն
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ՊԱՊԻԿԵԱՆ ԹՈՒՆԻԿ

(ՄԱՀՈՒԱՆ 50-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)



ՏՊԱՐԱՆ ԷՏՎԱՆ
ՊԷՅՐՈՒԹ
1957



Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ
ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ
(1820 — 1907)



ՀԱՑԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ ՌԱՀՎԻՐԱՆՆԵՐ

կուժ մը ջուր երասխայ դրախտի գետեն, մի բուռ հող Մասիսի ծոցեն պիտի յղեմ Ձեզ, ո՛վ Մխիթարեան Ուխտ: Դրախտի գետի ջուրը սրսկեցեք Հայր Ալիշանի գերեզմանին վրայ. իսկ մի բուռ հող փոխրիկ սափորիկով դրեք ճորա շիրիմին ծովիկ. այդ թող լինի միայն ճուիրական յիշատակ Հայր Ալիշանին:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՒՐՈՒԱԳԻԾ
ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԿԵԱՆՔԻՆ

1820 Ապրիլ 4, Ծնունդ Վան։
1847 Ուսուցիչ ի Կ. Պոլիս։
1849 Նամակ առ Բագրատունի։
1850 Հրաւիրակ Արարատեանը կը հրատարակուի։
1850 Ուխտաւոր յԵրուսաղէմ։
1851 Հրաւիրակ Երկրին Աւետեացը կը հրատարակուի։
1852 Կ'այցելէ Կիլիկիա։
1853 Կը վերադառնայ Վան։
1854 Վարդապետ կը ձեռնադրուի Աղթամարի մէջ։
1855 Դարձեալ Կ. Պոլիս կ'անցնի։
1855 Կը հրատարակէ Կ. Պոլսոյ մէջ Արծուի Վասպուրականը։
1856 Վան կը դառնայ, իբր վանահայր Վարագայ։
1858 Վարագայ մէջ կը հրատարակէ Արծուի Վասպուրականը։
1860 Կ'այցելէ Կովկաս։
1862 Առաջնորդ կ'ընտրուի Տարօնոյ։
1863 Մշոյ մէջ կը հրատարակէ Արծուիկ Տարօնոյ։
1866 Կը ճամբորդէ Կ. Պոլիս և նոյն տարին կը դառնայ Մուշ։
1867 Կը հրատարակուի Մարգարիտ Արքայութեան Երկնիցը։
1868 Գէորգ Դ.է կը ձեռնադրուի եպիսկոպոս։
1869 Կ'ընտրուի Պատրիարք Կ. Պոլսոյ։
1873 Պատրիարքութենէ կը հրաժարի։
1874 Քարոզիչ Գուղկունճուքի։
1875 Բ. տպագրութիւն Հրաւիրակ Արարատեանի։
1876 Գրի կ'առնէ Բարենորոգմանց Ծրագիրը, կը հրատա-
րակէ Խաչի Ճառը և Ժամանակ և Խորհուրդ Իւրը։
1877 Կը հրատարակէ Վանգոյժը և Հայգոյժը։

1878 կը հրատարակէ Դրախտի Ընտանիքը. նոյն տարին Պերլինի վեհաժովին կ'երթայ։

1879 կը հրատարակէ Սիրաք և Սամուէլը։

1879 կ'ընտրուի առաջնորդ վանի, ուր կ'երթայ։

1885 կը վերադառնայ կ. Պոլիս։

1886-88 Ատենապետ կրօն. ժողովոյ։

1890 Երուսաղէմ կ'աքսորուի։

1892 Մայիս 5 Ամենայն Հայոց Կաթողիկոս կ'ընտրուի։

1893 Սեպտեմբեր 26 կ'օծուի։

1894 կը հրատարակէ Պապիկ և Թոռնիկ։

1895 Բեթրսպուրկ կ'երթայ։

1898 կ'այցելէ Պաքու։

1900 կը հրատարակէ Թագաւորաց ժողովը։

1901 կը հրատարակուի վերջալոյսի Ձայները։

1903 կը հրամայէ չը գործադրել եկեղեցական կալուածներուն գրաւման մասին ցարական հրովարտակը և կը մերժէ յանձնել Էջմիածնի վանքին գանձարանն ու դրամարկղը։

1904 Պատուիրակութեան մը պաշտօն կը յանձնէ դիմել Եւրոպայի և Մ. Նահանգներու արքունիքներուն։

1907 Պատուիրակութիւն մը կը ղրկէ Լա Հէյի խաղաղութեան ժողովին և նամակ մը կ'ուղղէ Անգլիոյ Թագաւորին։

1907 Նոյեմբեր 11 (Հոկտեմբեր 29) կը վախճանի։

1909 կը հրատարակուի Բարեկործութեան Ծրագիրը։

Բաղուած Թ. Եպս. Գուշակեանի ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ գիրքեն։

«ԽԱՐԻՄԱՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ԵՐԿԱԹԵՑԻ ՇԵՐԵՓԸ» (*)

(Քարոզը՝ Կ. Պոլսոյ Մայր Եկեղեցիին մէջ 1878-ին)

«— Օրհնեալ և սիրելի ժողովուրդ Հայոց, Հիմա դուք ամէնքնիդ ալ ականջնիդ սրած, անհամբեր և սրտատրոփ կը սպասէք թէ արդեօք Սրիմեան Հայրիկ ի՞նչ աւետիս բերած է մեզ Պերլինի վեհաժողովէն և թէ ի՞նչ պիտի ըսէ 61րդ յօդուածի մասին, որ աշխարհի հզօր տէրութիւնք չնորհեցին մեր հայրենակ գաւառներուն, ինչ որ կ'ըսեմ լա՛ւ մտիկ ըրէք, ըսածներուս իմաստը խորապէս ըմբռնեցէք և ամէնքնիդ ալ գացէք աղէկ մը խորհեցէք ըսելիք խօսքերուս վրայ...։

«Գիտէք որ մենք Ներսէս Պատրիարքի և Ազգային ժողովոյ որոշմամբ իբր պատգամաւոր գացինք Պերլին Հայկական Դատը մեծ պետութեանց վեհաժողովին ներկայացնելու համար։ Շատ մեծ յոյս ունէինք, որ վեհաժողովը աշխարհին խաղաղութիւն՝ իսկ փոքր և ճնշեալ ազգաց, ի թիւ որոց նաեւ մեր ազգին՝ ազատութիւն պիտի չնորհէր։ Վեհաժողովը բացուեցաւ. աշխարհի մեծ պետութեանց քաղաքագէտ պատգամաւորները չարուեցան կանանչ սփռոցով ծածկուած դիւանագիտական սեղաններուն բոլորտիք, իսկ փոքր և ճնշեալ ազգաց պատգամաւորներս վեհաժողովէն դուրս կը սպասէինք։ Վեհաժողովին մէջտեղը, կանանչ սփռոցով ծածկուած սեղանի մը վրայ դրուած էր մեծ կաթսայ մը խարիսայ, ուրկից բաժին պիտի ստանայինաշխարհիս մեծ ու փոքր ազգերն ու տէրութիւնք։ Ժողովականներէն ոմանք կը քաշէին Արեւելք, ոմանք կը քաշէին Արեւմուտք և այսպէս երկար վիճաբանելէ յետոյ, սկսան կարգաւ, մի առ մի, ներս կանչել փոքր ազգաց պատգամաւորներ։ Նախ Պուլկար ներս մըտաւ, ապա Սերպիացին, Ղարադաղցին, որոց կողերէն կախուած սուրերու չաքուրչուքոց գրաւեց ժողովականներու ուշադրութիւնը։ Բաւական խօսելէ յետոյ, այս երեք պատգամաւորները fաւեցին իրենց սուրերը եւ իբրեւ երկաթեայ շերեփ խոթելով խարիսայի կաթսային մէջ, իրենց բաժին խարիսան առին և հպարտ ու համարձակ հեռացան։ կարգն եկաւ Հայոց պատգամաւորին. ես մօտեցայ և Ազգային ժողովին կողմի ձեռքս տրուած աղերսաթուղթը ներկայացուցի և ազաչեցի, որ իմ ամանս ալ

(*) Հայկ Աճեմեան — Խրիմեան Հայրիկ, էջ 511։

լնուն խարիսայ։ Յայնժամ կաթսային գլուխ սպասող մեծաւորները ինձ հարցուցին. «Ո՞ւր է քո երկաթեայ շերեփը, յիրաւի հոս խարիսայ կը բաժնուի, բայց երկաթեայ շերեփ չ'ունեցողն չէ կարող անոր մօտենալ, զայս իմացիր, որ եթէ մօտ ատենէն այս խարիսան կրկին բաժնուի յայնժամ առանց շերեփի չը գաս, զի պարապ յետ կը դառնաս»։ Է'հ, սիրելի ժողովուրդ Հայոց, ես կրնայի՞ խարիսայի կաթսային մէջ խոթել իմ ԹՈՒՂԹԷ ՇԵՐԵՓԸ, որ պիտի թրջուէր և հոն մնար։ Հոն, ուր զէնքն է խօսող, ուր սուրերը կը չողչողան. հոն ի՞նչ գործ ունին խընդիրք և աղերսաթուղթեր։

«Եւ յիրաւի տեսայ, որ Ղարադաղցուն, Պուլկարին և այլոց պատուիրակներուն քով կային քանի մի քաջեր, որոց կողերէն կախուած սուրերէն արիւն կը վազէր...։ Յայնժամ դարձուցի երեսս և իբր թէ կը փնտռէի իմ Զէյթունցի, Սասունցի, Շատախցի և այլ լեռնեցի և դաշտեցի քաջերս, բայց ո՞ւր էին. ժողովուրդ Հայոց, ըսէք ո՞ւր էին այդ քաջերը, պէտք չէր որ անոնցմէ մէկ երկու հոգի ալ իմ քովս գտնուէին, որ անոնց արիւնոտ սուրերը վեհաժողովի քաղաքագէտներուն ցուցնելով գոչէի. տեսէք, ահա՛ իմ երկաթեայ շերեփներս, հո՛ս են, պատրա՛ստ։ Բայց աւաղ... միայն աղերսաթուղթ մ'ունէի, որ խարիսային մէջ թրջուեցաւ, և մենք վերադարձանք դատարկաձեռն...։ Արդարեւ եթէ զիս բաղդատէին վեհաժողովոյ պատուիրակներուն հետ, ես անոնցմէ աւելի բարձրահասակ էի, դէմքով ա'լ աւելի գեղեցիկ, սակայն ի՛նչ օգուտ, ձեռքս բուղթի կտոր մը տրուած էր և ոչ թէ սուր. ահա այս պատճառով ալ զրկուած մնացինք խարիսայէն։ Այսու հանդերձ ապագայի տեսակէտով, անօգուտ չեղաւ Պերլինի վեհաժողովին երթալս։

«Ժողովո'ւրդ Հայոց, անչուշտ լաւ հասկցաք թէ զէնքը ինչ կրնար գործել եւ կը գործէ, ուրեմն սիրելի և օրհնեալ հայաստանցիներ, գաւառացիներ, երբ Հայրենիք վերադառնալու լինիք ձեր բարեկամաց և ազգականաց իբր պարգեւ՝ մեկ մեկ զէնք տարէք, զէնք առէք եւ դարձեա'լ զէնք. ժողովո'ւրդ, ամենեն առաջ ըո ազատութեան յոյսը ըո վրայ դիր, ըո խելքին եւ բազուկին ո'ւժ տուր, մարդ ինքնիրմեն պետք է աշխատի որ փրկուի»։

•

Իւր ազգն ու հայրենիքը չի սիրող անձը, մարդկային կեանքի մէջ ապրելու իրաւունք չի պիտի ունենայ:

•

Հայ հողը Հայաստանի հողին վրայ միայն կը ճանչնայ թէ ինքզինքն եւ թէ ազգն ու հայրենիքը:

•

Ո՛վ Արմուճի վառօդապետ, մու ամբարած վառօդէդ իչ մըն ալ Հայաստանցի հայերուս տուր, որ գործածենք մեր քրտնամիներուն դէմ:

•

Ո՛վ Արմուճի ձարտարապետ, բա՛ւ է որ Սուլթանաց համար պալատներ շինես. եկո՛ւր էզ Հայաստան տանիմ, հոն մեր նախնեաց աւերակներ շատ կան, եկո՛ւր. նորոգէ՛ մեր փլած եւ կիսաւերակ ամրոցներ, բերդեր եւ պալատներ:

•

Այս աշխարհ եւ աշխարհիս գաներ՝ ամեն գայթակղութիւն եւ որոգայթներ ունին, խեղճ եւ ստրուկ ժողովուրդներ բռնաբարուած են եւ կը գոչեն ազատութի՛ւն: Այլ ոչինչ ճար չունին, դորա միակ ազատութեան ճար՝ լոյս եւ կրթութիւնն է. դու զայն երբ ի ձեռս բերես, այն օր է միայն որ ազատութեան տօնահանդէս:

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

•

Խրիմեանը հոգով բանաստեղծ է իսկ ստով առաքեալ: Նա սիրում է գործել, ընկնել, կանգնել եւ միշտ պատերազմել վտանգների մէրկածուփ խռովութեան հետ:

ԲԱՖՖԻ

•

Մանուկ եւ հսկայ, հեզ եւ վիթխարի. ահա Խրիմեանի պատկերը. Հաւատալ խօսքի ոյժին, հաւատալ մտքի անյաղթելի ազդեցութեանը, հաւատալ ճշմարտութեան. ահա Մկրտիչ Խրիմեանի նշանաբանը:

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ



ՍԱՐԾՈՒԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ԹՈՒՈՑԵԱԼ ՀԱՑՐԵՆԱՍԷՐ ԹԵՒՕՔ
ՑԱՐԾՐՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԷՆ ՎԱՐԱԳԱՑ

ԽՄԲԱԳԻՐ ՀԱՅՐԵՆԱԽՕՍ
ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ

1860 ՀԱՏՈՐ ՁՈՐՐՈՐԴ ԹԻ Ր·

ՎԱՆՏՈՍՊ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՈՒՈՑՆ
Ի ՎԱՐԱԳ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ ԵՒ ԱԼԻՇԱՆ

Մի ձայն միայն հնչում էր՝ բարձր ու խրոխտ՝ այդ վեհերոտ, մեղկացուցիչ լռութեան մէջ, հնչում էր մարդկային արժանապատւութեան լիակատար գիտակցութեամբ, առանց բնաւ սողալու, ծռելու, երկրպագելու, առանց բնաւ վարագուրելու Մեծ Համրի, ժողովրդի արիւնահոտ վէրքերը, հայկական արիւնաներկ ու անիծակուռ դժոխքը... Ձայնը հնչում է Վասպուրականից, Վարագայ բարձունքներից, ուր թառել էր *Արծիւը*, գուտտենպերգեան մեքենան շալակած եւ ուսկից նա թափահարում էր անդադար իր հզօր թեւերը, արձակում էր իր սուր ճիչը դէպի Հայոց աշխարհի մշուշապատ հորիզոնները, լալիս էր իր հարազատ ժողովրդի հետ, մարմնացում էր նրա տանջանքն ու նահատակութիւնը եւ շեփորում նրա յուսահատ բողոքը խաւարի ու բռնութեան համատարած ուժերի դէմ:

Խրիմեանն էր: Այն ժամանակուայ հայութեան խիղճը, նրա իղձերի սգաւոր եւ ցաւատանջ թարգմանը:

* * *

Ալիշան ողբում է՜ եւ երգում *տարածութեան* վրայ, Հայրենիքից հազարաւոր մղոններ հեռու, առանց երբեք ոտք դընելու իր երգած սարերի ու ձորերի մէջ, իր ցեղային միջավայրումը, — Խրիմեան անձամբ ապրում է եւ ողբում հայրենի թշուառ, այլանդակուած իրականութիւնը:

Ալիշան գրում է Վենետիկեան ազատ ջրերից — Խրիմեան հնչեցնում է իր շեփորը բուն իսկ դժոխքի մէջ. շրջապատուած ամեն կողմից ոսոխներով:

Ալիշան հայոց ազգի բանաստեղծն է, նրա դիւթիչ, պերճախօս մարգարէն, նրա խանդավառ, անզուգական աշուղը: Խրիմեան թէ աշուղ է, թէ յեղափոխական գործիչ, թէ երազող եւ թէ մանաւանդ ձգտող, իրագործող... միանգամայն *միտք, կամք* եւ *ճիգ*.

Եւ ի՜նչ հոյակապ ճիգ... ի՜նչ ահռելի դժուարութիւններ՝ իր յղացած ծրագիրների իրագործման ճամբու վրայ... ո՞վ կարող է հաշուել այն բոլոր խոչընդոտները, չափել այն բոլոր վտանգները, զրկանքները ու տառապանքը, որոնք ուղեկցում էին Հայոց Հայրիկին այդ տատասկոտ ուղիի վրայ, երբ նա խիզախում էր յիսունական թուականներին տպարան

ու մամուլ հասցաւել հայկական լեռնադաշտում, 1855 թուականին:

Օրի, Մխիթար, Ներսես Աշտարակեցի, Ալիշան, Խրիմեան, Նալբանեան, Րաֆֆի, Պատկանեան, Արծրունի եւայլն — այդ յուսատու փարոսներից են, լոյսի ու ջերմութեան այդ կենդանի աղբիւրներից, որ ժայթքում են հեռուէն-հեռու, ժամանակ առ ժամանակ, կեանքի գորշ, արեւակէզ անապատում. ազգային պատմութեան միօրինակ տարածութեան վրայ, կոթողում են իրենց անձով ու գործով այդ պատմութեան դրուագները, տարածում են իրենց շուրջը ոգեւորութիւն ու եռանդ, եւ դնում են իրենց ձեռքով խարիսխները հայկական կառուցուածքի... Նրա ազգային վերածնութեան պատմութիւնը, նրա ճշմարիտ իմաստը:

Խրիմեանը գուցէ ամենից օժտուածն էր, գուցէ ամենից ինքնատիպը այդ գեղեցիկ շարանի մէջ...

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

* * *

Հայրիկի գրուածները՝ թեեւ գրական արուեստի հրապոյրը չունին, սակայն չենք կրնար ուրանալ թէ անոնք իրենց պարզ բայց խորունկ արտայայտութիւններուն մէջ կը պահեն բնական ու սրտառուչ գեղեցկութիւն մը: Մանաւանդ որ մեր ամօթխած եւ հայրենաբաղձ բարերուն ճկարագիրը զոր հայրական ջերմ զգացումներով ու կիրք փորձառութեամբ կ'աւանդէ մեզի, դասեր են որոնք չենք կրնար իբրեւ ղօղանջիւն բախել մեր ականջները, ա՛յնքան հնչիւն է եւ թրթռուն Հայրիկի Սրտին վրդովեցուցիչ զանգակին պղինձը: Մեր կեանքին գիրը պիտի կարդանք իրմով, իր մէջ ծրարուած անցեալ մը վերյիշելու համար ի պատիւ մեր ցեղին:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ

* * *

Ձեմ յիշեր տեսած ըլլալ աւելի սիրուն եւ գրաւիչ դէմք մը, որուն իւրաքանչիւր գիծին վրայ գրուած է մտացիութիւն եւ ճրքութիւն: Խրիմեանը երկար տարիներ եղած է Հայկական շարժումին յառաջապահը: Այն դասը զոր Խրիմեանը կը պատպանէր, ամենեն արդարն էր դասերուն:

Հ. Ֆ. Պ. ԼԻՆՉ

* * *

Պապիկ եւ Թոռնիկը կը զատուի այս ընդհանրապայրերէն, ըլլալու համար հայոց հայրենիքին տիրական խորհրդանիւտ աշխարհը։ Հոն խօսող ձայնը լուռ, անուշ, կախարդական մեղեդին է հայ հողերուն։ Հոն տիրական պատգամ է ԱՅԴ ՀՈՂԵՐՈՒՆ ՏԷՐԸ ՄՆԱԼՈՒ դարաւոր պարտականութիւնը։ կրօնք, հկեղեցի, բարոյական ըմբռնողութիւն, ընտանիք, ամէն բան կնիքին տակն է այդ սրբազան պարտականութեան։ Հողը ամէն բան է հայ գեղացիին։ Երբ անիկա, հողը, ողջ է, ամէն բան ողջ է, ամէն վտանգ խուսափի, ամէն կորուստ դարմանելի։ Սըրիմեան այս մռայլ, խորունկ հաւատքը պայծառ մխսքիֆով մը կը թելադրէ, երբ տարօրինակ թուղթ բայց այնքան իրաւ, հեռատես նմանութիւն մը կը գործածէ Թոռնիկը պատրաստելով Շուշանիկ (կինը) կորուստին, քանի որ աստր տեղը Աննա մը կրնայ լեցնել Թոռնիկին կուշտին։ Բայց հո՞ղը։ Որ մեռնի, ճար չկայ։ Ահա Պապիկ եւ Թոռնիկ հատորին անխորտակելի, անվերածելի յատակը։ Այս հիմնական իր եղրին, կերպարանքին վերածուած հատորը բոլոր յարմարութիւնները կը միաւորէր հայ գրականութեան գոհարներէն մէկը ըլլալու, քանի որ դարաւոր գեղութեան ամենէն ազատ, աչքին միշտ փռուած խորհրդանիշը, հողը մեր ժողովուրդի հոգեստուերին ամրագոյն սրբութիւնն էր։

Ես չեմ կարդացած որեւէ գրականութեան մէջ էջ մը այնքան իրաւ, մարդկային, սրտառուչ որքան Պապիկին խօսակցութեան մէկ մասը մահուան հրեշտակին հետ ուր անիկա արքայութեան դաշտերէն իրեն բաւող վարելահո՛ղ կը պահանջէ։ Ասիկա գիրքերուն վսեմն է ահա Դարձեալ, Պապկե Պսակ ի դաշտը ծանր տարողութեամբ էջ մըն է, հայ հողերուն հետ հայ գիւղացիին անքակտելի միութեան խորհրդանիշ պատգամը։ Այս գլուխին տակ Սրիմեան գտած է մեր ժողովուրդի ապրումներուն ամենէն իրաւ գանձարաններէն մին։ Յուզիչ են գերեզմաններու արձանագրութիւնները, աշուղ Մուշոյի մահը, պապկէ կտակը։

Այսքանը բա՞ւ՝ որպէսզի արեւմտահայ գրականութիւնը տեղ մը նուիրէ այս մարդուն։ կը պատասխանեմ, առանց վարանումի։ Այո՛։

Յ. ՕՇԱԿԱՆ

* * *

Վերջին անգամ Հայրիկին տեսայ 1906 թուի աշնանը. ցաւալիօրէն թոյլ էր և գունատ։

— Հիւանդ է Հայրիկը, — ասաց, — չատ չի ապրի Հայրիկը... Է՜հ, չատ մարդ կայ պառկած հողին տակ՝ վիրաւոններ, արքաներ, հերոսներ, Խորհնացի, Նարեկացի, Վիքթոր Հիւկօ... վաղն ալ ես կը պառկեմ հողին քնով։ Դուն կուգաս վանքը ու Հայրիկին չիրիմը կը տեսնես, կուլաս, չես լայ — այդ չեմ կրնար ըսել, բայց այն ժամանակ կը զգաս Հայրիկին կարօտը, հոս տեղ ուրիշը նըստած կ'ըլլայ ու չես կրնար Հայրիկին հետ խօսել ու ծիծաղիլ...

Տխուր նախազգացումով պաշարուած, ուշի ուշով դիտում էի նրան — արծուենի հայեացքը, ուր դեռ արեւ կար, հոգեթով ձայնը և հնադարեան մագաղաթի նման դեղին աչը։

Զգում էի, որ վերջին անգամ եմ տեսնում նրան՝ հայ ժողովրդեան այդ մեծ զաւակին։ Մի երկար ու խորին համբոյրով նրա աչն առա և հեռացայ մտայլ ու տխուր։

Ես հաւատացած եմ, որ մինչեւ մահս իմ հոգում անջինջ և անաղարտ կը մնայ նա՝ այդ մեծ հայրենասէրը։

Երբեք չեմ կարող մոռանալ նրա հայեացքը, նրա նուիրական ձայնը։ Այնպէս խորն է ազդել իմ հոգու վրայ։

Եւ հայ ժողովուրդն էլ չի մոռանայ նրան։ Քանի հնանայ, այնքան աւելի պիտի պայծառանայ նրա յիշատակը։ Նա դարերի միջից պիտի նայէ հայ ժողովրդին և պիտի խօսի նրա հետ հարազատ լեզուով նրա նուիրական իղձերից և անմահ նպատակներից։

Ժողովուրդը նրան չի մոռանայ երբեք, որովհետեւ նրա սրտից էր եկել և դէպի նրա սիրտն էր գնում։

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

●

Սրիմեան — այս անօրինակ հոգեւորականը մեն-մենակ մի խորունկ խորհուրդ է։ Նրա կեանքը, նիստուկացը, հագուելու, խօսելու եղանակը, նրա կերակուրներն անգամ՝ հռչակաւոր Թանէ ապուրը անսահման ու երկիւղած հետաքրքրութեան նիւթ է։ Նրա ամէն մի խօսք անքննադատելի ու վսեմ պատգամ։

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Անկեղծ բնաւորութիւն, անշահասէր գործունէութիւն, ուղիղ միտք, բաց սիրտ, համարձակ խօսք, ժողովրդասէր գործ, անխոնջ ուղղութիւն, եւ անսեթեւեթ կեանք, ինչպէս անարուեստ այլ սրտաբուխ էին իր ատենաբանութիւնները:

Խրիմեանի գերազանց արժանիքը եղած էր հայ տարրին սիրտին մէջ ինքնաճանաչ զգացման, ներքին զարգացման, գաւառական պահանջից, եւ ստորին դասակարգի պաշտպանութեան գաղափարը ոչ թէ միայն արծարծել, այլեւ ստեղծել, ինչպէս որ նկատած ենք իր պատրիարքական ընտրութեան առթիւ: Խրիմեան ստեղծիչ կամ հիմնադիր եղաւ այդ ըմբռնման, եւ այս է ՀԱՅՐԻԿ մակդիր անունին իմաստը, որ իրեն տրուեցաւ անդստին իր առաջին կեանքին մէջ վարժապետութեամբ զբաղած օրերէն:

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊՍ. ՕՐՄԱՆԵԱՆ

Արդար դասի մը անկեղծ նուիրեալը: Այդ դասը իր ցեղին գաղափարն էր: Մեծ գաղափարի մը ջահակիրն ըլլալ: Այս էր իր կոչումը:

Այս գիրքը, ՊԱՊԻԿ ԵՒ ԹՈՌՆԻԿ, շատ բան պիտի խօսի դեռ Հայութեան. ու վաղը, երբ անցնի ընդհանուր մոռմոքի եւ անձկութեան ներկայ շրջանը, երբ աւերաքանդ հայրենիքի վերաշինութեան հարկն ու պարտականութեան գիտակցութիւնը խօսքի եւ կիրքի պայքարներու մէջ անիմաստօրէն գրուած մեր ոյժերը ժողովէ հայրենի հողին ու աշխատութեան սեղանին առջեւ, այս գիրքը պիտի լուսաւորէ մեր ճամբան դէպի գիւղակեանքի գեղեցկութիւնները, դէպի շինական կենցաղի երջանկութիւնը:

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊՍ. ԳՈՒՇԱԿԵԱՆ

Չկար նրա համար ոչ իշխան, ոչ ծառայ, ոչ հարուստ, ոչ ալ աղքատ, ամենքը միեւնոյն արժէքն ունէին նրա աչքում: Այդ տեսակէտից նա կատարեալ բանաստեղծ էր: Միայն մի բանի առաջ էր խոնարհւում նրա անկախ ու հպարտ հոգին — ժողովրդի:

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

Անարուեստ պարզութեան մարդը հոգի այդ ինքնաբուխ արտայայտութեա՛նց մէջ է մանաւանդ որ կը տեսնուի իր բովանդակ առաքինող գեղեցկութեամբը։

Գրի առնուած կենդանի բառեր են ասոնք, իրենց մէջ է Հայրիկ, որչափ բեմի՝ նոյնքան մտերմութեան մարդը, հրապարակախօսն ու բարեկամը, միւս Հայրենիքի խորհուրդէն տարուած, միւս ազգային կեանքի ընդհանուր եւ առօրեայ հարցերովն համագրաւուած։

Պիտի ապրի այդ գրականութիւնը. արցունքով եւ սփոփանքով պիտի կարդան զայն ապագայ սերունդները, վասն զի Հայ Հոգւոյն ամենահարազատ ցոլացումն է ան, բազմակողմանի շնորհներով գեղեցկացած իմացականութենէ մը պրխումակուած։

Ամէնքը անոր մէջ պիտի տեսնեն հինաւուրց ցեղի մը ամէնէն ազնուական տիպարներէն մին, որ գաղտնիքն ունի սիրտերը հմայելու։

Մէկը՝ անոր վրայ պիտի ճանչնայ իր երազին մտապատկերին առջեւ ունայնացած *տէրվիշը*, միւսը՝ Աստուածաշունչի ներգործութեամբը առլցուն եւ տեսիլքէ տեսիլք յափըշտակուող Մարգարէն, ոմանք՝ պատուական Ուսուցիչը, ուրիշներ՝ հայրենանուէր Գործիչը եւ անառիկ Գաղափարի մը անկեղծ Առաքեալը, ու ամէնքը՝ գութի, սիրոյ, բարութեան եւ խանդաղատանքի մարմնացեալ Անհատականութիւնը, որ միակ անուն մը ունեցաւ, Ազգին ծոցէն՝ ժողովրդին սրտէն փրթած բառ մը. ՀԱՅՐԻԿ։

Այս անունը ամենուն մտածութեանը պիտի գծագրէ քաղցրութեամբ օծուն դէմք մը շրջանակուած խորհրդապատկերներու շարքով մը, որուն կազմիչ տարրերը պիտի ըլլան խաչքարի մը շուքը՝ կաթողիկէի մը կիսաստուերը, հովիւէն գրկուած գառնուկ մը՝ արօրի մը մանը՝ փետուրէ գրիչ մը որ արծուեկտուց կաղամարի մը մէջ է թաթխուած եւ խաչանիշ արտախուրակներ։

Իր գիրքերէն հատուածներ պիտի կարդացուին եկեղեցւոյ մէջ, իր մահուան օրը պիտի յիշատակուի կրօնքին ու Ազգին երախտաւոր գործիչներու շարքին մէջ։

Ու նայելով Սփոփուած Հայաստանի պատկերին՝ զոր ամէն Հայ պիտի ունենայ իր տան մէջ Հայրիկի պատկերին դիմացը, ամէնքը պիտի ըսեն իւրովի.

— Վա՛խ որ չհասաւ այս օրերուն։

ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՊՍ. ԳՈՒՇԱԿԵԱՆ

Որչափ աւելի մեծ պիտի լինի սոցի բերկրանքը վաստպուրականցի Հայերի, որոնք պարծանքով տեսնում են այսօր իւրեանց վեհ Հայրենակցին, իւրեան սիրած եւ պաշտած Հայրիկին, որ գալիս է իւր Արծուի թեւերը Մասեաց Բարձունքից սփռելու բնդհանուր հայութեան վերայ եւ նորան հովանաւորելու:

ՍՏԵՓԱՆ ՄԱԼԽԱՍԵԱՆ

Հայրիկը մեր ցեղին ընկերական ու հաղաքական պատմութեան հետ կապուած խոշոր յիշատակ մ'ունի: Ժողովրդական մեծ, եւ ատով յատիտենականացուց իւր հոչակը խանդակաթ:

Հ. ՍԻՄՈՆ ԵՐԵՄԵԱՆ

Տարօնի իր Առաջնորդութեան օրերուն, Խրիմեան կը տեսնէ որ տեղացի ժողովուրդեն կը գանձուի տուրքեր՝ որոնք վանքի մէջ գոյութիւն չունէին: Ան կը դիմէ տեղական կառավարութեան, որ սակայն կառավարութիւնը չընծայեր, կը գրէ Պատրիարքարան, օգուտ չըներ, կը բողոքէ կարնոյ կուսակալութեան, որմէ վարչականապես կախուած էր Մուշ, անպատասխանի կը մնայ: Խրիմեան կ'րնէ այն ատեն, իր խընամքին յանձնուած մեծ ընտանիքին համար բան մը, որ սովորական ամեն հօր տրուած չէ ընել իրեն սեփական զաւակներուն համար: Կ'ելնէ, ձմրան եղանակին, կարին կ'երթայ, կուսակալին կը ներկայանայ, ատոր կը դիմէ, անոր կը դիմէ, Առաջնորդը կը դրդէ, երեւելիները միջնորդութիւններու եւ բարեխօսութիւններու կը մղէ ու վերջապէս կը յաջողի տուրքերու ջնջումին հրամանը ձեռք բերել եւ հրովարտակը գրպանը՝ վերադառնալ Մուշ:

Մուշի ժողովուրդը՝ խուռներամ խանդավառ ընդունելութիւն մը կ'րնէ իր Առաջնորդին, որուն ցոյց տուած անձնուէր հոգածութիւնը ան ո'չ տեսեր էր նախորդ առաջնորդներուն կող, ո'չ ալ լսած ուրիշ առաջնորդներու մասին: Այդ օրը անա Մշեցին էիչ կամ անհամապատասխան գտած է «Առաջնորդ» տիտղոսը եւ «ՀԱՅՐԻԿ» անուն տուած է իր Առաջնորդին:

Ա. ԹԼՐԶԻՊԱՇԵԱՆ

ՄՈՐՍ ՀԱՄԱՐ ԳԱԶԵԼ

Յիշում եմ դէմքը քո ծեր, մայր իմ անուշ ու անգին,
Լոյս խորշոմներ ու գծեր, մայր իմ անուշ ու անգին։

Ահա նստած ես տան դէմ ու կանաչած թթենին
Դէմքիդ ստուեր է գցել, մայր իմ անուշ ու անգին։

Նստել ես լուռ ու տխուր, հին օրերն ես յիշում այն,
Որ եկել են ու անցել, մայր իմ անուշ ու անգին։

Եւ յիշում ես քո որդուն, որ հեռացել է վաղուց —
Ո՞ւր է արդեօք հեռացել, մայր իմ անուշ ու անգին։

Ո՞ւր է արդեօք հիմա նա, ո՞ղջ է արդեօք թէ մեռած,
Եւ ի՞նչ դռներ է ծեծել, մայր իմ անուշ ու անգին։

Եւ երբ յոգնած է եղեր, եւ երբ խաբուել է սիրուց —
Ո՞ւմ գրկում է հեծեծել, մայր իմ անուշ ու անգին։

Մտորում ես դու տխուր եւ օրորում է թթենին
Տխրութիւնը քո անծիր, մայր իմ անուշ ու անգին։

Եւ արցունքներ դառնաղի ահա ընկնում են մէկ-մէկ
Քո ձեռքերի վրայ ծեր, մա՛յր իմ անուշ ու անգին։

Ե. ՉԱՐԵՆՑ

ՈՐԴԻԱԿԱՆ ՍԷՐ

(ԱՒԱՆԴԱՎԷՊ)

Մի մայր ունէր չորս հատ որդի։
Մէկը՝ ուսած, հռչակաւոր,
Ունէր պաշտօն վարժապետի,
Եւ միւսը կըրօնաւոր,
Մի քահանայ սըրբակենցաղ.
Իսկ երրորդը վաճառական,
Լայն ձեռնարկներ, մեծ առ ու ծախ։
Բայց վերջինը... թափառական,
Աստանդական, աղքատ ու խեղճ...

Երբ մահն եկաւ, մայրն Աստըծուն
Շնորհ խնդրեց տեսնել շիրմից՝
Թէ ի՛նչպիսի վերաբերում
Պիտ՝ ընդունէր որդիներից։
Վարժապետը գըրեց ներբող,
Աղօթք կարդաց սուրբ քահանան,
Եւ հարուստը նըւիրեց փող.
Իսկ հէք որդին թափառական՝
Բեկւած սիրտը մօր բերեց...։

ԱՒ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԳԱԶԵԼ ՎԱՆԱՅ ԾՈՎԻ ՄԱՍԻՆ

Իմ հայրենի չքնաղ ծո՛վ, ես քեզ եմ միշտ երազում,
մի անսովոր թախիծով ես քեզ եմ միշտ երազում:

Որդեկորոյս մօր նման, քո արփաւէտ ափերից
Կանչում ես դու հոգեբով, — ես քեզ եմ միշտ երազում:

Մերթ քնի մէջ դու գալիս, գուրգուրում ես ճակատըս,
Ինչպէս Սիփան սարի հով, — ես քեզ եմ միշտ երազում:

Մերթ տժգունում է հոգիս, սարսափում եմ, թէ յանկարծ
Մեռնեմ քո վառ կարօտով, — ես քեզ եմ միշտ երազում:

Իմ կապուտաչ բարեկա՛մ, քեզնից հեռու, բայց քեզ հետ,
Քեզ հետ եմ ես միշտ սրտով, — ես քեզ եմ միշտ երազում:

Գիտե՛մ, որ մենք մի լաւ օր նորից պիտի հանդիպենք
Ու այդ պայծառ հաւատով ես քեզ եմ միշտ երազում:

ՍԱՐՄԵՆ

* * *

... Եւ տարիք անցան, բայց իր կտրիճին
Մտքից չհանեց մայրը մի վայրկեան,
Եւ հանգչող աչքը որդու ճամբէքին՝
Մի բուռ հող դարձաւ սիրտը մայրական:

Բայց ամէն գարուն՝ մօր գերեզմանին
Երկու կապուտակ ծաղիկ են բացւում,
— Նրանք աչքերն են մօր կարօտագին,
Որ միշտ իր որդու ճամբէն են պահում...

Յ. ՇԻՐԱԶ







Այս գիրքը կը հրատարակուի
ՆՈՅԵՄԶԱՐ ՊՈՂՊԱՏԵԱՆԻ
անթառամ յիշատակին
որպէս մահարձան՝
իր երախտագէտ զաւակներուն
ԱՆՆԻԿԻ եւ ԵԴՈՒԱՐԴԻ
կողմէ

Ա.Ո.
ՇԻՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՀԱՅՈՑ

ՊԱՊԻԿ ԵՒ ԹՈՌՆԻԿ ինձ համար գրեցի եւ ոն անուան նուիրում եմ, իմ սիրելի դաստաբնակ մտակ ժողովուրդ, Հայոց Հայրիկ, որ այժմ ծերացած մի պապիկ դարձած ես, ձա սիրեց եւ փորութիւն չհամարեց, որ ինքն պահ մի իբրեւ մի շինական պապիկ ձեւանայ, որպես թե Վասպուրականի Առնակ գիւղի մէջ ծնած է, վարագայ վանքում մանկալ եղած է, շատ անգամ ի Պոլիս գնացել եկել է եւ առանց դպրոցի ձա միայն մտիկ անելով եւ գրքեր կարդալով իչ մի բան սովրած եւ իւր սովրած կ'աւանդէ իւր սիրական թոռնիկին:

Պապիկի միակ նպատակն ի՞նչ է որ այս փորրիկ գիրքը շարադրեց ինձ համար, որպես զի ու կարդաս իմանաս ու ճանչնաս ոն նշանակութիւն, ճանչնաս ու զգաս միանգամայն ոն խեղճ կեանք ու վիճակ:

Երջանիկ ես եւ բոլառ կ'ապրիս, բազմահարուստ գանձի տէր ես եւ գրպանդ մի փող չկայ, երկրիս մեծ կալուածատէրն ես, բայց միշտ հացի կարոտ ու պարապած՝ երկրի ընդհանուր հաղթացի ժողովուրդին ամեն կենսական բարիքներ դու կը մատակարարես, թագաւորեն սկսեալ մինչեւ յետին հաղթացուց սեղանին հաց կուտաս, իւղ կուտաս, միս կուտաս, հագուստներու նիւթ կը մտակես, բուրդ կուտաս, բամբակ կուտաս, քթան կուտաս, շերամ կուտաս եւ այլ շատ բաներ, զորոնք ես այստեղ չեմ ուզեր թուել: Բայց ի՞նչ է պատճառը գիտե՞ս արդեօք, որ դու ոն թուած այնչափ բարիքներեն միշտ զրկուած կը մնաս, դու կարդա' «ՊԱՊԻԿ ԹՈՌՆԻԿ», հաչ կ'իմանաս թե դորա միակ պատճառ տգիտութիւնն է, գռեհկութիւն, կարդալ, գրել, հաշուել, անտեսել չգիտնալն է: Իսկ ոն տգիտութեան եւ այդ վիճակի մէջ այդպես մնալուն պատճառն ի՞նչ է, այն էլ խօսիմ ու բացատրեմ ինձ, դու մտիկ արա, որ գիտնաս եւ խելամուտ լինիս:

Ինձ այնպես կը թուի թե դու եղեր ես մի մոռացեալ երկիր, ինչպես ասում է Սաղմոս. դու լայնածաւալ դաշտե-

րու եւ լեռներու վրայ բնակում ես, ի՞նչ զարմանալի բան է, որ քաղքցիք զքեզ չեն տեսնար, քո դիրք շատ խոնարհած գետնահաւասար եղեր է, անխոնջ մրջիւնի նման կ'աշխատիս, քաղքցին բարձրավիզ է, չի տեսներ զքեզ եւ շատ անգամ, ո՛հ, կոխկռտելով կ'անցնի քո վրայէն եւ դու կը ճմլիս նրա ոտքի տակ:

Քաղաքացիք իմաստասէր մատենագիր դարձան, բայց չեն գիջանիր քեզ համար գրքեր գրել, թէեւ խմբագիրք եւ գիւղատնտեսներ քեզ համար շատ յօդուածներ նուիրում են, դու մի զանգատիր, նոյնիսկ գիւղականի մի զաւակ, որ մի բարերարի շնորհիւ կ'երթայ Եւրոպա, կ'աւարտէ իւր ուսումն եւ համալսարանէն կը վերադառնայ, ասացէ՛ք դուք շիտակ դէպ ուր կ'երթայ, դէպ ի քաղա՛ք առանց իւր հայրենի շինական տան ու ծնողաց առաջին ողջոյն եւ այցելութիւն տալու. եթէ ասես, պարոն ինչու մոռանում ես քո գեղ, որ քո ծննդավայր եւ խանձարուրն է:

Տե՛ս դու, ի՞նչ կը պատասխանէ. ես քաղաքակիրթ աշխարհակիրթ աշխարհէն կուգամ, կեանքս եւ ճաշակս բոլորովին փոխուած է. ես լոյս եւ գիտութիւն ունիմ, միթէ կարելի՞ է որ գիւղական խաւար եւ անկիրթ ժողովուրդին մէջ ապրիմ, որ երբէք չգիտեն գնահատել իմ արժէք, ո՛հ, ես յիշում եմ մեր տուն ու խրճիթ եւ այն չարաճճի անզգամ լուեր, որ զիս կը խածէին եւ կը տանջէին: Ուրեմն մեր պ. համալսարանական պիտի բնակի քաղաքում եւ պիտի սպասէ այնչափ, մինչեւ իւր գեղը քաղաքակրթուի, խաւար գիւղացիք լուսաւորուին, իւր խրճիթներ ապարանք դառնան, եւ ապա մեր պարոնը վերադառնայ իւր գիւղը: Եւ թէ ասես, մի սպասիր այդ անյայտ երկա՛ր ժամանակին, դու այժմէն գնա կրթէ, լուսաւորէ գիւղացի մանուկներ եւ այդ բախտաւոր ժամանակ դու բեր քո անբաղդ գիւղին համար, միթէ դու ինքնին պարտականութիւն չունի՞ս, յիշէ այն օրը, երբ պաղատում էիր քո բարերարին թէ զիս Եւրոպա ղրկէ, կ'ուխտեմ. եւ կը խոստանամ, թէ ողջ վերադառնամ, ամենայն անձնուիրութեամբ հայրենեացս ծառայեմ, բայց պարոնին միայն քաղաքն է եւ ո թէ գիւղ:

Թողունք Եւրոպիոյ համալսարանի պարոնը, որ գուցէ իւր առարկութիւն երբեմն իրաւացի լինին, հապա ի՞նչ ասեմք այն պարոններուն, որ առանց Եւրոպիոյ աշխարհ տես-

նելու, նոյնիսկ մեր աշխարհին մէջ, կիսակրթութեան փոքր ինչ զարգացումն ստանալէն յետոյ՝ իրենց միտք եւ իրենց սըրտի թագուհի տենչանք դէպի քաղաքն է, որոնց մեծ մասն դարձեալ գիւղացի զաւակներն են, կրթութեան եղանակի՞ն է յանցանք, չը գիտեմ, դաստիարակ ուսուցիչներո՞ւն է յանցանք, չը գիտեմ, ժամանակի եւ կեանքի պահանջմա՞նն է յանցանք, դարձեալ չը գիտեմ: Միմիայն այս գիտեմ ես, որ դպրոցի կրթութեան կապանքէն արձակուելէն յետոյ, դէպ ի քաղաք կը վազեն:

Ես լսեցի գիւղացի այրերու ոմանց տրտունջն ու գանգատ, Հայրիկ, ես զաւակս մեծ փափաքով կրթութեան տուի, որ ծերութեան ցուպ լինէր, նա գնա այլեւս չի դարձաւ, մոռացաւ իւր որդիական պարտիք եւ աւելի ճիշտ է, որ ասեմ ուրացաւ իւր ծնողք եւ այլն:

Կրթութեան այս մեծ խնդիր, ունի շատ իւր դժպատեհ հետեւանքներ, եթէ չը մտածենք դեղն ու դարման եւ թողունք որ այսպէս շարունակուի այս կրթական հիւանդութիւնն քիչ ժամանակէն պիտի տեսնամք, որ մեր գիւղացի պատանիներ դպրոցէն դէպի քաղաք մի գաղթականութեան ճանապարհ պիտի բանան, եւ ի՞նչ կը լինի յայնժամ, երբ հայ ժողովուրդի ամենամեծ մասի կեանք հողն ու երկիրն է:

Ահա քեզ համար հոգացի եւ պատրաստեցի. «ՊԱՊԻԿ եւ ԹՈՌՆԻԿ», իմ սիրելի գիւղացի ժողովուրդ, որ դու քո հայրենատուր հողն ու դաշտ սիրես եւ երբէք չի բաժնուիս, գիտնալով թէ քո կեանք հողն է եւ հողագործութեան արդար ու հալալ վաստակ: Ուշադրութեամբ կարդա՛ այն խորհրդաւոր գլուխն՝ «ՊԱՊԻԿԷ ՊՍԱԿՆ Ի ԴԱՇՏ», թէ ինչպէս Պապիկ իւր Թոռնիկ խաչով. Աւետարանով պսակելէ յետոյ, կը տանէ զինքըն ի դաշտ եւ կ'ասէ՝ գիւղացի փեսայի համար բաւական չէ, ես այժմ կրկին պիտի պսակեմ զքեզ հողին ու մաճին, զութանին եւ հողագործութեան հետ, պէտք է ուխտես երկնից եւ երկրի առաջ, որ այս պսակն անքակտելի պահես, ահա կը դնեմ քո գլուխ ցորենաբոյսի ցողուններէն հիւսուած այս գեղեցիկ պսակ, թող վկայ լինին մեր մշակներ, հոտաղներ եւ մեր լծկան գոմշուկներ եւ եզներ:

Գիտե՞ս, Թոռնիկ, Աստուած մի արասցէ, եթէ քո ամուսին Նուշան մեռնի, մի ուրիշ Նուշան կարող ես առնել, բայց երբ հող քեզ համար մեռնի, այսինքն կամ ծախես, կամ ձեռքէդ հանես եւ զրկուիս քո ժառանգած հողէն, էն

ժամանակ դու էլ կը մեռնիս, Տուշանն էլ հետ քեզ կը մեռ-
նի եւ Պապկի տուն եւ օճախ կը քանդուի:

Այսպէս Պապիկ իւր Թոռնիկին վրայ կրկնապատկ մի կատարեց, Հայրիկն էր համայն գիւղական ժողովուրդին գըլուխն կը դնէ իւր պսակն՝ Պապիկ Թոռնիկով եւ կ'աղօթէ որ դու այս պսակ՝ անթառամելի պահես, սիրես քո հող եւ հողագործութեան աշխատութիւն, սիրես ուսումն եւ կրթութիւն, որ քո մշակութեան քրտնաթոր վաստակ արդիւնաբեր լինի, որով միայն քո կեանք կը բարւոքի եւ դու տառապանաց կապանքէն կ'ազատուիս, որ տգիտութեան արգասիքն է:

Վերջին բան առ քեզ ուղղելով, ո՛վ Վասպուրական երկիր, իմ անձկալի Հայրենիք. ՊԱՊԻԿ եւ ԹՈՌՆԻԿ յատկապէս Ձեզ համար գրեցի, Երուսաղէմի Սիոնի լերան վրայ, խաչի հովանեաց տակ, դու կարդալով կը տեսնաս, որ Պապիկ Թոռնիկի նիւթեր՝ Վասպուրական երկրի շինական ժողովուրդի ծաղիկներէն քաղած եմ. զոր փնջիկ կապելով եւ ահա ձերն՝ ձեզ կը նուիրեմ:

Հօտոտելով այս փունջը, անշուշտ կ'զգաք եւ վա՜շ կ'ասէք: Առնկեցի Պապիկ մեր ծաղիկն է, Աշըղ Մուշօն մեր ծաղիկն է, մեռելոց դաշտի մէջ ննջած այն մեծ մեծ տանուտէրներուն խաչքարերու յիշատակներ մեր պարծանքն է:

Կը թուիմ թէ շատ մօտ եմ ձեզ, միայն հինգօրեայ ճանապարհ մի անջրպետ կայ: Վարագայ խաչի սար ծածկուած է աչքէս: Վասպուրական Արծիւն էի երբեմն, բայց այժմ թեւաթափ ծերացած եմ, եւ ո՞ տայր ինձ որ նորափետուր արծուի լինէի, թռչէի վերանայի զէթ վերջի անգամ տեսնայի բարձր քարին վերայ գրուած իմ աւերակ բունիկս:

Այլ եւս ի զուր է այս ցանկութիւն, կը մնայ ինձ հոգւով մօտ լինել ձեզ եւ հոգւով աղօթել վասն ձեր:

Իսկ ձեզ կը մնայ կարդալ Պապիկ Թոռնիկ եւ յիշել զՀԱՅՐԻԿ:

Թէ մեռնիմ երթամ գերեզման եւ այլ եւս չկարեմ խօսիլ ձեզ հետ կենդանի բարբառով ու գրով. ահա կը թողում ձեզ գիրս իբրեւ մշտախօս կտակ եւ յիշատակ, որոյ միակ նպատակն է, որ հայն իւր հայրենատուր հողէն չը բաժնուի, զի իւր սեփական ժառանգութիւն է դրախտի երկիր, զոր Տէր Աստուած մեր Ադամ՝ պապուն եւ ժառանգորդներուն տուաւ եւ ասաց գործել զերկիր ու պահել:

ՊԱՊԻԿՆ ԱՌ ԹՈՌՆԻԿ

Սիրելի Թոռնի՛կ, կը տեսնես ահա. Պապիկդ ծերացել է, հօթանասուն տարին անցուցի, դու միակ ժառանգ մնացեր ես մեր հայրենի տան։ Ես միայն մի անդրանիկ զաւակ ունեցայ, Թորոս անուն, որ չատ աննման, կարիճ, աչխատասէր մի զաւակ էր։ Մեր տան գործեր բոլոր նա կը գարձուներ։ Ժամանակին ամուսնացուցի զինքն, աւա՜ղ, երկու տարի միայն մնաց իւր սիրական նորահարսին մօտ. Թողուց գնաց Ըստանպօլ, նորա գնալէն յետոյ դու ծնար. ես թուղթ գրեցի հօրդ թէ քեզ մի որդի ծընաւ, մկրտեցին, անուն Յուբէն դրի. Թորոս, քո հայր չտեսաւ քո ծնունդդ, քո խանձարուր և չը համբուրեց քո մանկութեան երեսներ։ Երբ երկու երեք տարեկան եղար լեզուդ բացուեցաւ. միայն մայրիկդ և պապիկ կը կանչէիր. հայրիկդ չը կար որ տեսնայիր ու ճանչնայիր. որչա՞փ դառն բան է այս, երբ մայրեր աստ կը ծնեն, հայրեր Ըստամպօլէն կ'իմանան։

Երբեմն կան այնպիսի հայրեր, որ կամ ձախորդութեան պատճառաւ և կամ անխղճմտանք լինելով, տասն և մինչեւ քսան տարով օտարութեան մէջ մնալով՝ իրենց զաւակաց երես տեսած չեն։ Եւ երբեմն Հայրիկ ի Պոլիս օգնութեան կը կանչեն իրենց զաւակներն, երբ պանդխտութեան խոր տժմին մէջ խորասած կարող չեն խլրտել՝ դուրս ելնել։ Շատ անգամ կը պատահի, որ անտէրունջ դժբախտ կին՝ ճար հատած իւր հասուցած միակ զաւակ՝ աչքին լոյս ի Պոլիս կը ղրկէ, կ'ասէ՝ գնա տես ի՞նչ եղաւ քո հայր, քանի տարիներ եղաւ ո՛չ թուղթ կը ղրկէ ո՛չ դրամ։

Բայց քո Հայր Թորոս այնպէս չէր, նա միշտ ժամանակին թուղթ և դրամ կը ղրկէր, նա չատ կը պատուէր պապիկդ և չատ գորովական սիրտ ունէր դէպի իւր ամուսին։ Հապա զքեզ որչա՞փ կը սիրէր տառանց գգուանքի և տեսութեան, սիրուն ու գեղեցիկ լաթեր կը ղրկէր քեզ։

Մայրիկդ կը հագցուներ և կ'ասէր թէ՝ Հայրիկդ զրկած է. դու էլ կը հարցնէիր, Մայրի՛կ, հայրիկս ե՞րբ պիտի գայ Պոլսէն, դու խեղճ միամիտ մանկիկ էիր, չգիտէիր թէ Թորոս Պոլսէն չպիտի գայ։ Մի ժամանակէն յետոյ, Թորոսէն թուղթ եկաւ, որ կը գրէր թէ, «հիւանդացայ, գեղացիներս զիս տարին դրին հիւանդանոց»։ Դու չե՞ս յիշեր, Թոռնիկ, երբ Պապիկ Մայրիկիդ հետ կուլար ու կողբար Թորոսին մահ. դու կը հարցնէիր, թէ ինչո՞ւ կուլաք Պապիկ և Մամիկ. մեք չուզեցինք ասել քեզ թէ Թորոս հայրիկիդ համար կուլանք, որ մեռած է ի Պոլիս։

Դու կը կարծես Թոռնիկ թէ՝ միայն այն օ՞ր լացի, ո՛չ. ես երբեմն առանձնացած կը չարունակեմ նոյն ողբն ու լաց, երբ կը յիշեմ Թորոսին մահն ու յիշատակն, դու չգիտես թէ այդ քաղցր անուն ի՞նչ անցեալ բաներ կը բերէ մտքիս մէջ. իմ մեծ պապս կը պատմէր թէ ուրիշ Թորոսներ ծնած են մեր տունէն, ամէնքն ալ ժուռ ու մուռ մեռած են և մէկն էլ պարսից արշաւանքն մեր գիւղի վերայ գալով գերի վարած է։

Խոստովանիմ քեզ, Թոռնի՛կ, այդ պանդխտութեան ճամբան, նախ ես բացի մեր խեղճ Թորոսին առաջ. նա կը տեսնար թէ ի՞նչպէս քանիցս անգամ Պոլիս երթալով գալով, Աստուած յաջողութիւն կուտար բաւական գումարներ վաստկելով կը դառնայի։ Բայց դու գիտե՞ս, թէ ի՞նչ մեծ նեղութեամբ դառն քրտինք թափելով մեր պանդխտեղբայրներ դրամ կը վաստկեն։ Մի օր չեմ մոռանար, երբ ութ հոգի կարիճ բեռնակիրներս մի ահագին պալեա ձողիկներու զարկած կը տանէինք, Պոլսոյ նոր խանի դռրու վեր, քրտինք ծնծնալով մեր ճակատէն ճողճող կը վազէր, մեր երեսէն կ'իջնար ու կը թրջէր մեր բացուած կուրծք. տեսանք որ Հայրիկ մեր դիմաց կուգայ, պալեաս վար դրինք կեցանք։ Հայրիկ ողջոյն տուաւ մեզ, հարցուց մեր օրպիսութիւն։ Մէջերնին ես համարձակ էի, ասի. Հայրի՛կ, ահա մեր օրպիսութիւն, բեռներու տակ ընկճուած կը հեծեմք և կը թափեմք մեր դառն քրտինք այս քարայատակներուն վերայ։ Ես նայեցայ որ Հայրիկն աչքեր լեցուեցան, ասի մտքիս մէջ, թէ մեր վիճակին ու մեր ճակատին քրտանց դէմն՝ Հայրիկն իւր աչքի արտասուքով կը պատասխանէ։ Այո՛, Հայրիկ մի կարճ պա-

տասխան տուաւ, խիղճ զաւակներս, ասաց, այդ բեռն պիտի կրէք մինչեւ կարդալ գրել սորվէք, մինչեւ ճանչնաք ձեր գեղին ու հողին արժէքը, ուր եթէ թափէիք ձեր այդչափ աշխատութեան քրտինք, երբէք պանդխտութեան երես չէիք տեսնար։ Այսչափ խօսեց Հայրիկ, աչքեր սըրբեց ու անցաւ։ Ես որովհետեւ փոքր ի շատէ կարդալ գիտէի, իմ ընկերներուս լաւ կերպով հասկցուցի Հայրիկին խօսած բանին միտքը։

Ճշմարիտ է, Թոռնիկ, ես փորձով հասկցայ, եթէ մեք ամենայն հոգւով ու սրտով աշխատենք մշակել մեր հողերն՝ կ՚ապրենք և երբէք չենք տեսնար պանդխտութեան երես։ Ինչպէս վեր խօսեցայ, քանիցս անգամ Պոլիս գնացի դարձայ. առատ առատ ստակ բերի. բայց գիտես թէ՝ այդ Ստամպօլէն շահած դրամին մէջ խեր պէրէքէթ չըկար, կը տեսնայի որ մէկ երկու տարուան մէջ կ՚ըսպառէր, աշնան աղբիւրներու պէս շուտով կը ցամքէր։ Ափսո՜ս, երիտասարդ ծաղիկ կեանքս պանդխտութեան խորշակով ոռմեցաւ, անագան խելքս գլուխս եկաւ։ Վերջին անգամ երբ դարձայ Պոլսէն. արդէն միտքս դրած էի, որ առաջին անգամ Արճակու վանից Ս. Աստուածածնայ տաճարին ուխտ երթամ, մոմ, խունկ, կանթեղին ձէթ պատրաստեցի ու գնացի, մտայ Տաճար, գլուխս բացի, սեղանին առաջ ծունկի վերայ եկայ, աղօթք արի սիրտս փլաւ ու շատ լացի. կանչեցի Տիրամայր Աստուածածին, գործիս յաջողութիւն խնդրեցի, Քրիստոսի խաչի սեղանին առաջ ուխտեցի, որ այլեւս չհեռանամ գեղէն, զնեմ տուն ու տեղս, արտերս ու դաշտերս։

Ուրախ սրտով ելայ տաճարէն, մի քաջալերութիւն եկաւ վրաս. ես այն վայրկեանէն հաւատացի որ Տիրամայր իմ մուրատ պիտի տայ, և Քրիստոս իմ բան պիտի յաջողէ։ Իսկոյն Պոլսէն բերածս դրամով երկու գոմէշ և վեց հատ եզ գնեցի, գութան ամբողջ գործիքներով սարքեցի, հանի չուխայ լաթեր, հագայ շալէ շալվար, վերցուցի գլխէս մեծ պուխով ալ ֆէս, դրի շինականի թախքէ քօլօզ, հանի ոտքիս ճըռվռուն կօնդուռան, հագայ չարուխ և կքեցի թեւեր՝ մատանի մի եւս ունէի, էն էլ հանի մատնէս, լաթերուն հետ դրի սնտուկն. ասի պահեմ Թոռնիկիս փեսայութեանն։ Այս ամէն անելէն յետոյ երկու

երեք մշակ եւս վարձեցի առի խարազան, ձգեցի հերոսական պատմօն, գնացի դաշտ սկսեցի գութան և վարուցան, էն օրէն մինչեւ էսօր էլ չես պանդխտութեան երես չը տեսայ։

Այսպէս, Թոռնիկ հոգւով մարմնով հողագործութեան տուի զիս վարեցի՝ ցանեցի, և Աստուած չատ հաց տուաւ, երբէք հացի կարօտ չի մնացի։ Մեր տուն մի հին նահապետական տուն է. դուռն միշտ հիւրերն անպակաս և ես այժմ մեր տան ծերունի նահապետն եմ, թէ մեռնիմ դու պիտի յաջորդես իմ տեղս։

Այժմ դու սիրելի Թոռնիկ, միակ ժառանգս ես մեր տան և օճախին, դեռ չի մեռած, քեզ չատ բարի և օգտակար դասեր և խրատներ պիտի տամ։ Գիտե՞ս ես բանական կարդալ գրել սորված եմ, հասակաւոր ժամանակս՝ ի վարագայ վանքն; ուր երկար ժամանակ մաճկալութիւն արած եմ։ Վերջի ժամանակ երբ այն տեղ երկրագործութեան դասեր կը խօսուէր, ես չատ ուշադրութեամբ մըտիկ կ՚անէի ձմեռան պարապ ժամանակ ես միշտ սորվելու կ՚աշխատէի։

Իսկ ամրան բանի ժամանակ աւելի կը սորվէի գործնական փորձառութեան մէջ. վասն զի Հայրիկ ո միայն վանահայր էր վարագայ վանքին, և առանձին դպրոցի պարտէզ կը մշակէր. այլ աւելի դաշտի մշակ էր, զի գիտէր վանական բազմաթիւ ընտանիք և դպրոցի աշակերտներ հա՛ց կ՚ուզեն հա՛ց։ Սորա համար ինքն չատ կը սիրէր հողագործական աշխատութիւն, միշտ մտածմունքն այն էր, որ հին մշակութեան տաժանելի աշխատութիւններ դիւրացնէ, թէ մարդոց հանգիստ լինի թէ խեղճ անասնոց, և թէ հողն աւելի խնամով մշակելով արդիւնաբեր լինի։ Ուստի մտածելով երբեմն հնարամիտ կերպեր և միջոցներ ի գործ կը դնէր. իւր միակ նպատակն էր երկրագործութեան արուեստն գոնէ փոքր ի չատէ յառաջ տանել ու բարւոքել, որպէս զի հողագործութեան չահաբերութեամբ կառավարուի վանքն ու վարժարան։ վասնզի վարագայ վանքն բացի իւր հողային կալուածներէն ուրիշ մշտական վարձք բերող կալուածներ չունի։

Այստեղ պէտք է խոստովանիմ, Թոռնիկ, որ ես վարագայ վանուց մշակութեան մաճկալ լինելով, Հայրիկի



Ժողովո՛ւրդ Հայոց, քանի կենդանի եմ կալուածները չը պիտի յանձնեմ, այլ պիտի բողոքեմ, պաշտպանեմ մեր եկեղեցւոյն եւ ազգի դարաւոր իրաւունքները, վստահ եղէք, Հայրիկը կը լսէ ժողովուրդին արդար բողոքն ու հզօր ձայնը, որ իւր՝ տեղն կուգայ: Միայն թէ դուք ալ ամուր եւ անսասան մնացէք:

վորձառական կերպերէն չատ բան սորվեցայ, և այժմ այդ սորված բաներս իրրեւ վարժապետ պէտք է գլուխ գլուխ դաս տալով աւանդեմ քեզ, մանկ արա դասերս, վասնզի մեզ համար չատ կարեւոր է. որովհետեւ մեք գիւղացի համք, մեր ապրուստ և կեանք միայն հողագործութեան վաստակն է։ Եւ ի՞նչ աւելի արդար, ազատ և անխարդախ վաստակ կայ աշխարհիս վերայ քան հողագործութիւն։

Ականջ դիր և ուշիմ թոռնիկ, այժմ պիտի սկսէ պապիկ իւր դասերն. ոչ վարժատուն պէտք է, ոչ գրասենեան, ոչ թուղթ, ոչ գրիչ, ոչ մելան, դու տես թէ ո՞ւր պիտի խօսեմ դասերս։ Տան մէջ, ախոռին մէջ, դաշտին մէջ, լեռներու վերայ, աղբիւրներու գլուխ, գութանին ժամանակ թէ մահճ կը բռնեմ թէ դասերս կը խօսիմ, դու լծան վրայէն ականջ անելով դասերուս լսէ, և ձէնովդ լծկաններ խրախուսէ։ Բացուած ակօսներուն պէս, ես էլ քո միտք պիտի հերկեմ ու բանամ։ Սերմանացանի ժամանակ վա՛շ. ի՞նչ սիրուն է. մի կողմէն ցորենի հատիկներ և միւս կողմէն դասերս մտքիդ մէջ պիտի ցանեմ։ Հունձքի ժամանակ երբ սարակներ դէպի հովի տակ նստած մանգաղներ կը սրեն, ես էլ կը նստեմ քո դաս կը խօսեմ և կը սրեմ քո գործ միտք։ Կալատեղն էլ ի՞նչ յարմար դասարան է. երբ դու կամնասայլին վերայ կը կենաս, ես քառեչտ ձեռքս կը չրջեմ կալին բոլոր, մի կողմէն օրան կը դարձնեմ և օրանիս հետ դասերս կը խառնեմ և կասելով ցորեն յարդէն կը ջոկեմ, դու լից ու պահէ զայն մտքիդ չտեմարանին մէջ։

Ես այժմ պիտի սկսեմ հողագործութեան բնական եւ դիւրին դասերը տալ քեզ, որչափ լսած եմ և որչափ փորձառութեամբ սորված եմ։ Ականջ դիր թոռնիկ, բոլոր ուշքդ ինձի դարձուր. լաւ ըմբռնէ դասերս և ամփոփէ մտքիդ մէջ։ Ժամանակ հասած է, եթէ պապիկդ մեռնի, գոնէ իմ դասերս և խրատներս քեզ ժառանգութիւն կը մնան. եւ գիտե՞ս դու թէ ամէն բաներէն աւելի թանկագին է այս ժառանգութիւն։ Ո՛վ գիտէ դու եւս օր մի ծերանաս, ինձի նման պապիկ դառնաս ինչ որ այսօր ինձմէ կ'ուսանիս, զայն քո թոռնիկին կ'ուսանցնես։ Բայց նայէ որ պապիկի սակաւամասն այս դասերը բաւական չը համարես, այլ

պէտք է ճարտար և հնարամիտ լինիս, ինքնաչխատասէրութեամբ նորանոր բաներ սորվիս, ժամանակ միշտ յառաջ կը վարէ զմարդիկ, դու էլ պէտք է յառաջ երթաս, պէտք է գիտնաս որ եա մնացողը, հացի կարօտ կը լինի։ Երկիրն է որ մեզ հաց և ուրիշ բարիքներ կուտայ, ա՛վ որ գործէ զերկիրն այսինքն վարուցան անելով աշխատի, իւր տուն հացով ու բարօրութեամբ կը լեցուի, իսկ այն որ գութանի մաճն ձեռքէն կը թողու ծուլութեան ու դատարկութեան մէջ կը չրջի, նորա տուն չքաւորութեամբ կը դատարկուի, դաշտէն հաց կը պակսի և ամանէն իւղ, ապքաստութիւն արագոտն սուրհանդակի պէս իւր վերայ կը հասնի, ինչպէս կը խօսի առակն։ Եւ այս ամէն ընդարձակ կերպով պիտի խօսիմ քեզ։ Լո՛ւր ուրեմն, Թոռնիկ, Պապկի դասերուն և բարի խրատներուն, որ պիտի սորվիս թէ ի՞նչ է երկիր և իւր բնակիչներ, քաղաքացին ու գիւղացին. քաղաքացին իւր արուեստն ունի, գիւղացին իւր հողագործութիւն։ Թէ ինչպէս այս երկու դաս ժողովուրդն իրենց աշխատութեան արդիւնքն իրարու հետ կը փոխանակեն։ Ի՞նչ է մեր արդի հողագործութեան վիճակ, որ դեռ հնութեան մէջ մնացած է։ Ինչպէս կարելի է հետզհետէ հնութեան կերպեր փոխել և նորագոյն կերպերով մշակել երկիր, որով մեր աշխատութիւն կը դիւրանայ երկիր աւելի կ'արդիւնաւորէ՝ մեր չահն ու վաստակ կըրկնապատիկ կը լինի։ Երկրին արդիւնաբերութեան չահ ո՛չ միայն մեզ օգուտ է, այլ և տէրութեան և բոլոր ժողովուրդին. վասն զի աշխարհիս վերայ հացի խնդիր մեծ է, զի մարդիկ հացով կ'ապրին։

Ա.

Ե Ր Կ Ի Ր

Սիրելի Թոռնիկ, պէտք է Ադամայ մեր պապէն սկսիմ, Տէր Աստուած երբ մեր յանցաւոր Նախահայր Ադամը դըրախտէն դուրս հանեց, մի պատուէր տուաւ անոր, որ երկիր գործէ և պահէ, և թէ իւր երեսի քրտինքով իւր հաց ճարէ և ապրի։

Լաւ ի միտ առ, Թոռնիկ, որ այս մեր բնակած երկիրը կամ հողագունդը Տէր Աստուած մարդուն ժառանգութիւն և կամ իբրեւ դրամագլուխ տուած է. և գիտե՞ս թէ որչափ ընդարձակ, որչափ անսպառ և անհատնում է այս ամենառատ, ամենաճոխ երկրի բնական հարստութիւն։ Մտիկ արա, որ թուիմ քեզ. անծայր, անսահման ծովեր անչափ լայնատարած ցամաք երկիրներ, որոց վերայ կը բնակին միլիոնաւոր մարդիկ և զանազան ազգեր, դաշտեր, լեռներ, հովիտներ, ձորեր, աղբիւրներ, գետեր, բիւրազգի բոյսեր, ծառեր և ծաղիկներ, ծովու ձկներ, ցամաքի վայրի և ընտանի անասուններ, և թռչնոց երանիներ և այլ չատ բաներ Տէր Աստուած մարդոյն համար ստեղծեր է. և մարդոց տուած է, որ մարդիկ ապրին երկրի վերայ, մարդիկ վայելեն այդ բարիքներ և օրհնեն ստեղծողին և տուողին անունը։ Ուստի մարդիկ պէտք է գործեն զերկիր, զի երկիրն է իրենց կեանք պահող։

Բայց դու կը տեսնա՞ս Թոռնիկ, թէ մարդիկ ի՞նչպէս կ'աշխատեն երկրի վերայ, գիւղացին իւր հողագործութեան մէջ վարած արտին ակօսներ իւր քրտինքով կը թրջէ, քաղաքացին իւր արհեստով դարձեալ նոյն քըրտինքը կը թափէ։ Դու տեսե՞ր ես դարբնին թափած քըրտինքը, որ բորբոքուած հնոցին դիմաց կեցած կիսամերկ, ահագին եռանդով երկաթ կը ծեծէ, և մեր գութանին համար խոփ կը պատրաստէ։ Վաճառական՝ ծովու և ցամաքի վերայ ճամբորդելով, աշխարհէ աշխարհ կ'երթայ, կը տաւապի և նոյն քրտինք կը թափէ, Նոյնիսկ աշխարհիս վարիչներ քրտինք թափելով կը վարեն զաշխարհ։ Թագաւորէն սկսեալ մինչեւ յետին պաշտօնեայն նոյն քրտինքն

ունին, զի վարիչ և կառավարող միաքն եւս իւր քրտինքն ունի, ամենայն հոգեմաչութեամբ նորա գործը վերադված է, մինչ հնձող մշակը ցորենի խուրձ գլխուն դրած անուշ կը քնանայ բացօթեայ դաշտին մէջ և իւր անկողինը իւր մշակած կակուղ հողն է։ Թէպէտ քրտանց և աշխատութեան մէջ մեծ զանազանութիւններ կան, հողագործ մշակ արեւուն տակ դաշտին վերայ իւր քրտինքը կը թափէ, ո՛վ քանի՞ դառն, քանի՞ դժուարին աշխատութիւն է այն գործաւորաց համար, որ հինգ հարիւր կանգուն երկրի խորութեան մէջ, անլոյս անարեւ տաժանելի աշխատութեամբ քարածուխ կը հանեն, որպէս զի չոգենաւեր, չոգեկառքեր և բովանդակ մեքենական գործարանները բանին անդադար։

Մեր դաշտերու ազատ մշակներ հազար անգամ երջանիկ են անոնցմէն, որ մարգերու վերայ կը շրջին, հովտաց ծաղիկներու վերայ կը ճեմեն, և պաղ աղբիւրի գլուխ նստած՝ իւրեանց հաց կուտեն. փառք տուր Աստուծոյ Թոռնիկ, որ նոյն բախտն ունես և քո աշխատութիւնդ շատ քաղցր և անուշ է։

Այսպէս, աշխարհիս վերայ ամէն կարգի և աստիճանի մարդիկ թէ առաւել թէ նուազ քրտինք թափելու դատապարտուած են, որով Աստուածային սահմանած վճիռը անվրէպ կը տարածուի բոլոր մարդկութեան վերայ, այն է «քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո»։ Այսպէս մարդիկ արեւուն տակ, երկրի խորութեան տակ, ցամաքի վերայ, ծովերուն վերայ տաժանելի աշխատութեամբ իւրաքանչիւր մարդ թէ՛ իւր և թէ ի՛ւր ընտանեաց օրապահիկ հաց պիտի հայթայթէ։ Սորա համար կը խօսի իմաստուն Սողոմոն «Ամենայն ջանք մարդոյ ի բերան»։ Արդար է այն մարդ, որ միայն իւր քրտանց հացով կ'ապրի. անիրաւ է այն մարդ, որ առանց աշխատութեան ուրիշի քրտանց հաց կ'ուտէ լի զրկանքներով, և ո՞վ կարող է չափել այն բազմադիմի զրկանքներ, որ կը լինին արեւուն տակ աշխարհիս վերայ և զրկեալներուն դասը ամենամեծ մասն կը կազմէ։

Եւ գիտես դու Թոռնի՛կ, այն որ գիր չգիտէ, կարդալ չգիտէ, ուսումն չունի անկիրթ է, ռամիկ է, մէկ խօսքով տգէտ է. նորա կեանք միշտ թշուառ է աշխար-

հիս վերայ և տգէտ մարդոյն ճակատագիրն է միշտ զըրկանք կրել, և նոյնիսկ տգիտութիւն ամենամեծ զրկանք է տգէտ մարդոյն համար։ Թէպէտ երբեմն ես ուսեալ եւ կրթեալ մարդ, հարուստ և զօրաւոր տգէտին ձեռքէն զըրկանքներ կը կրէ։ Եւ դու մի զարմանար, զի մարդոյն ընկերական կեանքին մէջ շատ հակառակ և հակասական բաներ կան, զոր տեսնելով կը տարակուսիմք և մերթ եւս նախախնամութեան դէմ տրտունջ կը բառնամք, թէ ինչո՞ւ բարիները կը հալածուին, չարեր կը յաջողին։

Դաւիթն եւս կը տեսնար այս բան և Աստուծոյ առաջ կը հանէր. «Ահա մեղաւորք են և յաջողեալ է նոցա, կան ունին զմեծութիւն աշխարհի»։ Թողունք Թոռնիկ այս խնդիրը, բանի կարգէն դուրս ենք, սկսենք մեր կարեւոր դասերը։

Բ.

ԵՐԿՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ

ԳԻՒՂ ԵՒ ՔԱՂԱՔ

Բովանդակ աշխարհիս բնակիչներ երկու դասի կը բաժնուին, քաղաքացի և գիւղացի։ Քաղաքացիք մեծամեծ քաղաքներ շինելով յարմարագոյն տեղեր՝ անոր մէջ կը բնակին։ Իսկ գիւղացիք դաշտավայրեր ընտրած են և իրարմէ բացագոյն փոքրիկ փոքրիկ գիւղեր շինելով միայն երկրագործութեամբ կը պարապին։ Քաղաքացւոց պարապումն արհեստ և վաճառականութիւն է, և փոքր մասն եւս երկրի վարչական կառավարութեան զանազան պաշտօններ կը վարեն։ Հարցուր Թոռնիկ, թէ ի՞նչ զանազանութիւն կայ քաղաքացւոց և գիւղացւոց մէջ կամ նոցա վարած կեանքի առաւելութիւն կամ նուազութիւն, բարեկեցութիւն և թշուառութիւն ի՞նչ են։

Քաղաքացւոց և գիւղացւոց կեանքն նկարագիր շատ ընդարձակ է, ես միայն պիտի քեզ գլխաւոր զանազանութիւններ, որ կ'երեւին մեզ իրենց արտաքին երեւոյթով, մնացեալ մասեր կը թողում քեզ որ դու ինքնին խելամուտ լինիս։ Սիրելի Թոռնիկ, դու գիւղին մէջ փակուած չես, շարունակ կ'երթաս քաղաք կուգաս, ամէն բան աչ-

քովդ կարող ես նկատել, որովհետեւ փոքր ի շատէ ուշադրութիւն մտացի և չափահաս ես, կարող ես ինքնին դատել և կշռել թէ՛ մեր և թէ քաղաքացւոց կեանքը, որ իւրաքանչիւր իր քաղցրութիւն և դառնութիւն ունի, բարեկեցութիւն և թշուառութիւն ունի, առաքինութիւն եւ մոլութիւն ունի. շատ և բազմակերպ բարի և չար կողմեր ունին, վասն զի մեր կեանքը՝ մի խառնուրդ է, չար ու բարին ի միասին կ'ապրին, ինչպէս ցորեն և որմն ի միասին կը բուսանին և կ'աճին։

Մեզ այնպէս կ'երեւի, որ քաղաքացիք չատ երջանիկ և բարեկեցիկ կեանք ունին. զոր օրինակ կը տեսնեմք վան քաղաք, որ մեզ չատ մօտ է. վայելուչ բարձրաչէն տուները, լայնածիր փողոցներ, ուռի ծառեր անկուածք չարան չարան ջուրերուն եզերքը, որք կարկաչելով կը վազեն չատ փողոցներէն, կը մտնանք տուներու մէջ՝ կը տեսնեմք գեղեցիկ նախշուն նախշուն օդաններ, վայելուչ կահ կարասիքներով զարդարուած։ Քաղաքացւոց սեղան չատ ճոխ է՝ անոյշ և համադամ կերակուրներով, զոր կը պատրաստեն նահապետական ընտանիք։

Հապա Թուռնիկ, որչա՞փ մեր աչքին սիրուն և նազելի կ'երեւան պէս պէս վայելչաձեւ հագուստներ, որ չատ թանկագին են՝ թէ արանց և թէ կանանց, չը մոռնանք այն չար ի չար ոսկի մանեակներ, զոր կիներ և աղջիկներ կը կախեն իրենց պարանոցէն։ Թողլով այս մարմնական վայելք և հաճոյք, քաղաքացիք ունին նաեւ հոգեւորական և բարոյական վայելքներ. նոցա եկեղեցիք եւ եկեղեցւոյ հանդերձանքներ չատ չքեղ և փառաւոր են, ոսկեայ հանդէսներ, քաղցրաձայն դպիրներ, հանդիսաւոր թափօրներ և պատարագներ և քան զամէն առաւել՝ բարեկարգ քարոզիչ վարդապետք, որք եկեղեցւոյ փառք են և ժողովրդին մխիթարութիւն։

Քաղաքացիք կրօնական և հոգեւոր մխիթարութենէն ի զատ, ունին նաեւ մեծ մխիթարութիւն մի՝ այն է դպրոց և կրթարան. ուր կարդալ գրել կը սորվին իրենց մանուկներ և աղջիկներ, որա համար քաղաքացիք չատ մեծ առաւելութիւն ունին մեզմէ, վասն զի կրթութեամբ միայն մարդը՝ մարդ կը լինի. Թող կուսաց ամօթխութիւն և բրտութիւն, պիտանի անդամ կը կազմէ մարդկային

ընկերութեան, տէրութեան հրկրին, իւր ժողովրդին և ընտանեաց։ Իսկ ընդհակառակն՝ ագէտ և անկիրթ մարդ՝ անպիտան և վնասակար է իւր տէրութեան, ժողովուրդին և ընտանեաց։

Ախո՜ն, ազնիւ Թոռնիկ, որ պապիկդ կարող չէ հրկար ճառերով նկարագրել քեզ և ցոյց տալ թէ՝ ի՞նչ է գիտութիւն և ի՞նչ է ագիտութիւն։ Միթէ չը գիտե՞ս դու, վարժապետ քեզ չսիրվեցո՞ւց թէ՝ գիտութիւն լոյս է, իսկ ագիտութիւն խաւար, դու չը կարդացի՞ր մեր սուրբ Եղիշէի խօսքը թէ՝ կոյր մարդ կը զրկուի արեւու ճառագայթներէն, այսպէս նաեւ ագէտ մարդ կը զրկուի կատարեալ կեանքէն։ Ինչպէս մեզ գիւղացիքս զրկուած ենք կատարեալ կեանքէն թէ բարոյապէս և թէ նիւթապէս։ Բայց պէտք է լաւ նկատես Թոռնիկ, և այնպէս չի կարծես, որ քաղաքացւոց վիճակը հաւասարապէս բարեկեցիկ է, ա՛յ, էդպէս մի՛ դատեր։ Քաղաքացւոց մեծ մասն չատ թշուառ և չարաչար կեանք ունին. մեծ աշխատութեամբ իրենց օրական պարէնն կը ճարեն, խիստ սակաւապետութեամբ կ՚ապրին. կարօտ են մի աման թանապուի, մեծ բախտ է նէթէ մի կավ կամ մի այծ ունենան։ կը տեսնաս իրենց տները որ մեր խրճիթներէն չատ տարբերութիւն չունին, կը տեսնաս իրենց հագուստներ մաշուած ու պատռտած և իրենց դէմք՝ չունի գունարթութիւն և կայտառութիւն. զօրհանապազ ընտանեկան հոգածութենէ յոգնած, կը չրջին դատարկ և անգործ, որոնք մեծաւ մասամբ իրենց ծուլութենէն այդ վիճակին հասած են։

Կան նաեւ քաղաքացւոց դասէն այնպիսի մարդիկ, որ արտաքին ցուցամոլութեամբ իրենց ներքին յոռութիւն և թշուառութիւն ծածկելով՝ վարկ վաստկել կ՚ուզեն. նորանոր հագուստներ կը փոխեն, մեծ մեծ բաներ կը խօսեն, այնպէս որ կը կարծես դրամատէր վաստակաւոր և տուն չէն պահող մի մարդ է. բայց նէթէ մտնես նորա տունը՝ կը տեսնաս դատարկ նոյնիսկ կարեւոր եւ կենսական բարիքներէ. ոչ տաշտին մէջ հաց կայ և ոչ ամանին մէջ մի դգալ իւղ, հապա ի՞նչպէս կ՚ապրին, է՛ Թոռնիկ, այդ մի հարցներ, միայն հրեք բառով հասկըցնեմ քեզ «խաբէութեամբ և մասամբ նորին»։ Քաղաքացիք թէեւ փոքր ի չատէ կրթուած են, ընկերական կեան-

քի մէջ քաղաքավարութեան շնորհ ունեն քիչ շատ, բայց օրըստօրէ անբարոյական կեանքի զեղծումներ կ'աւելնան իրենց մէջ։ Սիրելի Թոռնիկ, ես կը յիշեմ, ատի յիսուն տարի առաջ քաղաքացի ընտանիք մէկ մէկ նահապետական տուներ էին, երկիւղած և Աստուածավախ, ժամասէր և աղօթասէր. հաւախօսին ժամհար ելած ժամանակ, տան միջի բոլոր ընտանիք կը զարթնէին, այր մարդիկ մանուկների հետ եկեղեցի կ'երթային. և՛ այսպէս էն ժամանակի բարեպաշտ հայրերը իրենց զաւակներ տղայութեան հասակէն բարեպաշտութեան մէջ կը կրթէին՝ իրենց բարի օրինակներով։ Իսկ ծնողաց կրթութիւն ուրիշ բան չէր, խրատէն և խօսքէն աւելի, բարի օրինակն էր. և գիտե՞ս Թոռնիկ, մի բարի օրինակ կ'արժէ հազար խրատ։ Անցաւ գնաց էն բարի ժամանակ, իւր հետ տարաւ այն առաքինի նահապետական մարդիկ։ Արդի ժամանակ նոր նոր մարդիկներ բերաւ աշխարհը. վասն զի ամէն ժամանակ իւր մարդիկներ ունի, այժմ աշխարհ փոխուած է. մարդիկներ յառաջդիմութիւն կը սիրեն, միայն թէ ճշմարիտ յառաջդիմութեան պայման, միջոց և նպատակ ի՞նչ է, զայն դեռ չգիտեն։ Մեր քաղաքացիք միայն յառաջդիմութեան մի մասն ըմբռնած են այսինքն դրամ շահել և հարստանալ, ի՞նչ միջոցով կը լինի թող լինի։ Ագահութեան և շահամոլութեան ոգին այնչափ սաստկացած է, որ շահավաճառութեան մէջ իւրաքանչիւր մարդ միայն իւր շա՛հ փնտռէ. նա հաշիւ չըներ և չգիտէ թէ ընկերին և իւր շա՛հ համերաշխութիւն ունին և մարդիկ միշտ շահակից են իրարու հետ։ Բայց շահամոլութեան անյագ, անխիղճ ոգին, գիտես թէ միայն կ'ապրի աշխարհիս վերայ՝ և կ'ասէ, ես շահեմ, ես հարստանամ, ես մեծանամ և վայելեմ աշխարհիս ամէն վայելք, ինձ՝ ի՞նչ փոյթ թէ ընկեր կը կործանի կամ աղքատ Ղազարոսի նման ինկած իմ դրան առաջ, սեղանի փշրանաց կարօտ կը քաշէ։

Բայց Թոռնիկ թողնենք շահամոլ քաղաքացւոց նկարագիրը՝ դառնանք մեր գիւղ. վասն զի իմ նպատակս է միայն գիւղական կեանքի և աշխատութեան վերայ խօսել և ցոյց տալ քեզ, թէ ո՞րչափ քաղցր է գիւղական ժողովուրդի կեանք. և ո՞րչափ մեծ է հողագործութեան արդիւնք, վասն զի աշխարհիս բոլոր արուեստներուն

մայր երկրագործութիւն է. և իրմով միայն աշխարհս կ'ապրի, զի մարդոյն անուննդ և կեանք հացն է, թողնում այն բազմապատիկ այլ և այլ բուսական արդիւնքներ, զորս մարդ իւր ճարտարութեամբ կը պատրաստէ մեր կեանց պէտքերուն համար, և այնչափ որ թիւ և սահման չունին, որոյ վերայ առ հասարակ յետագայ դասերուն մէջ համառօտ կերպով պիտի ասանդեմ քեզ։

Գ.

ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՒՐ ԱՐԴԻՒՆՔ

Լաւ ուշադիր եղիր, Թոռնիկ, որ լաւ հասկնաս, թէ աշխարհիս բովանդակ մարդոց անուննդ և կեանք հողագործութեան արդիւնքէն է։ Մեր քնակած լայնածաւալ երկիր իբրեւ մայր կը անուցանէ զմեզ իւր բազմատեսակ բուսական բերքերով։ Թէպէտ երկիր ինքնին պտուղ կը բերէ, ինչպէս ասաց Յիսուս, բայց մարդ պէտք է աշխատակից լինի երկրին։ Տէր Աստուած ամէն տեսակ սերմեր իւր բարերար արարչագործութեան մեծ բաժին ունի. պէտք է վարէ, ցանէ, ջրէ և պէտք եղած դարմաններ հոգայ. որպէս զի կարենայ հնձել՝ կասել ու ժողովել ի չտմարան. և այնուհետեւ վայելել իւր աշխատութեան արդիւնքը։ Այսպէս Թոռնիկ, Մայր երկրին ինքնաբեր արդիւնաւորութեան հետ, անհրաժեշտ է որ մարդոյն աշխատութիւն եւս միանայ։ Բայց պէտք է գիտնաս նաեւ որ երկրին ինքնաբերութիւն և մեր աշխատութիւն դարձեալ ոչինչ կարող են արդիւնաւորել, եթէ երկնից Հօր բարերար կամքը չծագէ արեւ աշխարհիս վերայ իւր համատարած լուսով, և հրաման չը տայ ամպերուն որ անձրեւ տեղան լեռներուն, դաշտերուն ու մեր ցանած արտերուն վերայ։ Դու կը տեսնաս ձրթեմն, երբ մեք որ սովոր ենք աւելի մեր նեղութեան մէջ յիշել զԱստուած, ժողովուրդ ջերմեռանդ սրտաբեկութեամբ աղաղակ կը բառնայ դէպ երկինք. Աստուա՛ծ, անձրեւ տուր, անձրեւ։ Բարեգութ Աստուած լսելով ժողովրդի ձայնին կը թափէ երկնից ամպերէն իւր բարի կամաց անձրեւ։

կը խելամտի՞ս, Թոռնիկ, երկնից արեւ և անձրեւ,

երկրի ինքնաբերութիւն և մեր աշխատութիւն միանալով, բովանդակ աշխարհի մարդկանց կեանքի սնունդ կը պատրաստուի. մարդիկ կը վայելեն և կը լիանան թէ առաւել և թէ նուազ։ Մեր մշակած ցորենէն հաց, մեր սնուցած անասնոց միսը, կարագ, իւղ և պանիր. մեր դարմանած բանջարեղէնք, մեր փեթակներու մեղր, մեր տնկած այգիներուն խաղողն ու գինին, մեր ձեռատունկերէն հասուցած պատուական միրգեր, կ՚երթան կ՚ելլեն մինչեւ թագաւորին սեղան և զայն կը զարդարեն թագաւորավայել ճոխութեամբ. աշխարհիս պետական վարիչներ, և համայն քաղաքարնակ ժողովուրդներ կը վայելեն իրենց աստիճանին և կարողութեան չափով. անշուշտ մենք էլ մեր չափով կը վայելեմք մեր քրտանց աշխատութեան արդիւնքը։

Թողունք հաց և այլ ամէն բան, զորս գիւղական ժողովուրդ կը պատրաստէ մարդոց կեանքին և սնունդին համար, այդ չէ միայն. և տես դու, որ նոյն մշակ ժողովուրդ կը պատրաստէ մարդոց մերկութեան ծածկոյթ, զոր Տէր Աստուած միայն մի անգամ թզենւոյ տերեւով ծածկեց։ Այժմ թուեմ քեզ, Թոռնիկ, այն ամէն սկզբնական նիւթերը, զոր մշակելով յառաջ կը բերէ երկրագործ և կը յանձնէ արուեստաւորին։ Մեք կը մշակեմք բամպակ՝ կուտամք կտաւագործին, նա ժողովուրդին համար չապիկ կը պատրաստէ, և արուեստաւոր տարազագործ քանի՞ բազմազան ծաղկէնկար չիթեր կը հնարէ, որով լեցուած է աշխարհի վաճառականաց տուներ և շուկաներու խանութներ։

Մեք կը տնկենք թթենին և կը հանենք չերամի այն զարմանալի խոզակ, որ վաճառականաց ձեռքով կը հասնի մետաքսագործ արուեստաւորին ձեռք և նա հիանալի կերպասներ կը պատրաստէ, որով կը պճնին սիրամարգի նման աշխարհիս թագուհիներ և պալատականներ։ Հին ժամանակ այդ պերճանաց հանդերձներ միայն թագաւորական տանց և իշխանուհեաց համար առանձնաշնորհեալ պատիւ էր. բայց արդ՝ հասարակ ժողովրդի ընտանիքներն եւս նոյն ծիրանափայլ զգեստներով կը զարդարին։

Թողլով չերամի մշակութիւն, հապա ո՞վ կը մշակէ այն պատուական կտաւատ, որոյ սերմերէն ձէթ հանելով

մեր ճրագներ կը վառեմք, մերթ եւս ձէթով փիլաւ կը չինեմք, որ քան զձիթենիի իւղ չատ աւելի օգտակար է։ Իսկ կաւաւոի ցողունէն արուեստաւոր ձեռք ընտրելագոյն քթան կաւներ կը պատրաստէ, որքան գձիւն սպիտակ կը լինի և մի չապիկցուն մինչեւ մէկ ոսկւի արժէք ուներ։ Բայց քթանէն և քամպակէն և մետաքսէն գատ կան տակաւին ուրիշ բուսական նիւթեր, որոնցմէ հնարամիտ արուեստաւորն ոչ միայն հանդերձի համար, այլ և բովանդակ աշխարհի գրողներուն համար, տպագրութեան համար անհուն քանակութեամբ թուղթ կը պատրաստէ. Թող բուսական խոտ՝ նոյնիսկ փայտի տաշեղներէն անգամ թուղթ կը պատրաստուի, որ մեք զայն անպէտք համարելով կը վառեմք։

Թողունք, Թուռնիկ, ուտեստի և հագուստի վերաբերեալ բաներ, որ գիւղական ժողովրդի աշխատութեան շընորհիւ կը պատրաստուին. հապա ո՞վ կը տնկէ անտառի ծառերը, և կը պատրաստէ աշխարհիս մարդոց բնակութեան անթիւ, անհամար չինութեան փայտեր, Թող ցամաք երկրին, ծովու վերայ գնացող նաւերուն փայտերը։ Թէպէտ ի սկզբան Տէր Աստուած այս մեր աշխարհի լեռներ, դաշտեր ինքնաբոյս անտառներով զարդարած էր. բայց երկրի բնակիչ մարդիկ կտրելով սպառած են այժմ այդ հին գարերու յաւիտենական անտառներ։ Այնուհետեւ սկսաւ անտառապանութեան մշակութիւն, որ երկրագործութեան մի կարեւոր ճիւղն է։ Եւ գիտե՞ս դու, թէ այժմ տնկելով, դարմանելով ո՞րչափ նորանոր անտառներ կը հասցուննն։ Երանի՜ թէ քախտ ունենայիր, Թուռնիկ, Եւրոպա երթալ և տեսնալ այն գեղեցիկ մայրի ծառերու և այլ պէս պէս, որոշ որոշ անտառներ թէ հնաստունկ թէ նորաստունկ, զորս կը խնամէ և կը պահպանէ անտառապահ մշակն, գիտէ ժամանակին հինը կտրել կարգով և նոր մատաղ տունկ տնկել, կամ անտառի սերմեր ցանել. և այնչափ ճարտարութեամբ դարմանել՝ որ մի քանի տարուան մէջ, այդ փոքրիկ սերմիկներ մեծ մեծ ծառեր կը լինին և կը ծածկեն գետնին երեսը, որոնց հովանեաց տակ կը հանգչի աշխատաւոր մշակը. անոյշ անվրդով քուն կը քաշէ և անտառին քաղցրահոսիկ սոխակներ յոգնած մշակին օրօր կը կարդան։

Այսչափս միայն խօսելով, մտավարժ Թոռնիկ, կարծեմ լաւ հասկցար թէ՝ քանի՞ մեծ է և պիտանի հողագործութեան արդիւնք, զորս մշակ ժողովուրդ կը մատակարէ աշխատիս քաղաքացի ժողովուրդին։ Իսկ քաղաք ժողովուրդ, ընդունելով այդ ամէն վայելք, ինքը եւս գիւղացի ժողովրդոց խիստ կարեւոր պէտքեր կը հոգայ, որով համերաշխ մի փոխանակութիւն կը լինի երկուստեք, որով բարւոք կը կառավարեն աշխարհիս իրարմէ անջատեալ ժողովուրդներ, գիւղացին ի գիւղ, քաղաքացին ի քաղաք։

Դ.

ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆ ԳԻՒՂԱՑԻՈՑ ԵՒ ՔԱՂԱՔԱՑԻՈՑ

Սիրելի Թոռնիկ, կը տեսնաս միշտ և դիւրապէս կարող ես ըմբռնել, թէ ի՞նչ է փոխանակութիւն մեր առուտրական կեանց մէջ։ Առանձին մարդ, սոսկ իւր ինքնաշխատութեան արդիւնքով չի բաւականանար, ի մարդկային ընկերութիւն համաշխատութեամբ կ՚ապրի. այսինքն ինչ որ մեք ունիմք, զայն կուտամք և ինչ որ չունիմք, զայն կ՚առնումք։ Մեք ունիմք շատ բաներ, զոր քաղաքացին չունի. նմանապէս քաղաքացին ունի շատ բաներ, որ մեք չունիմք։

Զոր օրինակ, մեք ցորեան ունիմք և ուրիշ շատ հընտեղէն և բանջարեղէն բաներ. ոչխար և տաւարներ ունիմք, կաթ, պանիր և իւղ ունիմք. կան նաեւ շատ երկրագործութեան այլ և այլ արդիւնքներ, որոնց ամէնքը ծախելով կը գնեմք մեզի պէտք եղած բաները, որ շատ քիչ են. զի գեղացւոց կեանքի պէտքեր աւելի պարզ եւ անպաճոյճ են։ Մեր հագուստի համար բաւական են չալեղէն և կտաւեղէն նիւթեր. ընտանեաց համար վանայ չիթ, կարմիր կտաւ և տեղացի մանիսան բաւական էր երբեմն, իսկ այժմ եւրոպիոյ փտած պատմաներ և չուխաներ բաւական չեն համարեր։

Է՛, Թոռնիկ, ժամանակ փոխուած է, գիւղացի ընտանեաց ճաշակն եւս բացուած է քաղաքացւոց պէս։ Քաղաքացի ընտանեաց փայլուն զարդարանք անշուշտ կը

հրապուրին մեր պարզասէր ընտանիքը, բայց պէտք է գիւղացի ժողովուրդ ամենայն կերպով աշխատի իւր պարզութիւն և իւր սակաւապետ կեանքի սովորութիւններ պահել։ Վասն զի գիւղացին իւր ստիճանին չափով պէտք է ապրի։ Եւ առանձին դասով պիտի խօսիմ քեզ գարձեալ այս նիւթին վերայ։

Հագուստէն ի զատ, գեղացւոց աշխատութեան ամենապիտանին երկաթէ գործիքներն են, զոր կը պատրաստէ քաղաքացի արհեստաւոր և մեք կ'առնեմք դրամով։ Մեր գութանին խոփը, հնձելու գերանդին ու մանգաղ, և այլ կարեւոր երկաթէ բաները, որ մեզ համար անհրաժեշտ է, և զորս գարբինը կը պատրաստէ մեզ համար։

Հարցո՛ւր, Թոռնիկ՝ միթէ կարելի՞ չէ, որ գիւղացին իւր ամէն պէտքեր ինքն հոգայ։ Ախր՛ս Թոռնիկ, այդ չատ մի խելացի հարցումն է, կը բաղձաս որ գիւղացին երբէք կարօտութիւն չունենայ քաղաքացւոյն։ Այո՛, այդ չատ դիւրին բան կ'երեւի, միայն թէ գիւղացին եւս գըրել, կարդալ սովրի քաղաքացւոյ պէս, միտք բացուի, մտածել գիտնայ և իւր չափով յառաջդիմէ. էն ժամանակ՝ նա կը մտածէ և քանի մի մտացի մանուկներ քաղաքացի գարբնին քով աշակերտ կը դնէ, քիչ ժամանակի մէջ լաւ կը սովրի, կը գառնայ գիւղ, մի գարբնի խանութ կը բանայ. ոչ միայն իւր գիւղին, այլ և շրջակայ գիւղերու համար կը չինէ, կը պատրաստէ պէտք եղած գործիքներ։ Թող այս, մեք մեր պարզ հագուստներն եւս կրնամք պատրաստել, քանի որ գիւղացին բուրդ և բամպակ ուներ։ Թէպէտ մեր վանայ երկիր բանպակի մշակութիւն չի յաջողիր, բայց Մուշ, Երզնկայ, Խարբերդ և այլ բազում գաւառներ բամպակի մշակութիւն բաւական յաջողած է։ Վանայ գիւղացւոց համար էլ բամպակ չի պակսիր, Պարսկաստանի մօտ սահմանէն բազում քանակութեամբ բամպակ կուգայ, վաճառին կարող է առնել, մանել և կտաւ գործել։ Բայց աւելի լաւ է, որ գիւղացին իւր ոչխարի բուրդէն չալեղէն բաներ գործելով իւր հագուստներ պատրաստէ։ Մանաւանդ ձմեռ ժամանակ, որ մշակութեան գործերէն կը դադրի, կարող է չալ գործել և ուրիշ արհեստներու պարապել, որ գիւղական ժողովուրդին համար կարեւոր և պիտանի են։

Շատ կը ցաւիմ Թոռնիկ, որ մեր վանայ և Մշոյ գիւղացիներ չատ ծոյլ և անաշխատ կեանք կը վարին, մանաւանդ քաղաքի չրջապատ գիւղերը, որ խումբ խումբ յաճախելով ի քաղաք, կը դիզուին գինետանց մէջ օրերով՝ արբեցող և մոլի կը լինին։ Եթէ չեմ ասեր որ աշխատասէր գիւղացին զրկուի այդ վայելքէն, ինչ որ քաղաքացին սեպհական չափազանց կերպով կը վայելէ։ Եւ գիտե՞ս դու բոլոր վանայ և չրջակայ գիւղերու այգիներն գրեթէ երկու հարիւր հազար լիտր գինի կը լինի, և այդ ամէն վանայ զուարճասէր ժողովուրդ խմելով կ'ըսպառէ. և ի՞նչ անէ չ'ըսպառէ, վասն զի հետեւեալ տարին քացախ կը դառնայ։ Այգեպանք գինեգործութեան արուեստ չեն գիտեր, թէ գիտնային եւս դարձեալ անօգուտ էր. չեն կարող չահագործել, քանի որ փոխադրութեան միջոց չունին, ծովէն չատ հեռու, ճամբաներ դժուարին և անհարթացած են։ Ինամատար տէրութեան չնորհիւ, Թուրքիոյ չատ գաւառներում քաղաքէ ի քաղաք ճամբաներ չինելով հարթուեցան և այդ գաւառներուն չահագործութիւն օրըստօրէ յառաջ կ'երթայ. յոյս ունիմք որ մեր գաւառներն եւս նոյն բախտն ունենան ու յայնժամ ոչ միայն գինին, այլ եւ մշակութեանց արդիւնք պիտի կրնայ փոխադրուիլ մինչեւ Տրապիզոնի նաւահանգիստը։

Ահա, սիրելի Թոռնիկ, քո հարցման պատասխանելով, կարգն այնպէս բերաւ որ ուրիշ բաներ էլ խօսեցայ. բայց պէտք է դառնամ քո հարցման և բացատրեմ քեզ աշխարհի տնտեսութեան մի անհրաժեշտ օրէնքը, որ մարդկային ընկերութիւն իրարու հետ կը կապէ չահագործութեան ու առեւտրական միջոցներով. դու կ'ուզես, որ գիւղացին իր աշխատութեամբ իր ամէն պէտքերը հոգայ, երբէք կարօտութիւն չունենայ քաղաքացիներէն բան գըտնել և իր պէտքեր հոգալ։

Է՛հ, Թոռնիկ կը մոլորիս, այդ դատողութիւնը՝ սոսկ մանկական մի բաղձանք է, հակառակ ընդհանուր մարդկային ընկերութեան, բարոյական միութեան և համերաշխական չահուն։ Եւ դու պէտք է գիտնաս որ՝ մարդկային ընկերութիւն իրմով կ'ապրի, միոյն կարօտութիւն և պակասութիւնը՝ միւսն կը լրացնէ և աշխարհիս ամէն բան փոխարինութեամբ կը կառավարուի։ Դու ի՞նչպէս կ'ու-

զես, ցորեան տանես քաղաք ծախես և չուկայէն բան մի չառնելով՝ ե՞տ դառնաս, այսինքն միայն ծախես և երբէք ծախու չառնես. այս կերպ առեւտուր չատ անիրաւ և անարդար է միանգամայն թէ վաճառականաց և թէ արհեստաւորաց մեծ զրկանք կը լինի ու կը փակուի նոցա ապրուստին դուռը։ Վասնզի դու ինչպէս ցորեան և այլ մշակութեան բերքեր ծախելով կապրիս, վաճառական ևս իւր ապրանք ծախելով կապրի։ Մի գաւառի ժողովուրդք ամենամեծ մասն գիւղացի է. եթէ գիւղացին իւր առեւտուր կարէ քաղաքէն, միթէ կարելի՞ է քաղաքի ժողովուրդն ապրի. նմանապէս գիւղացի ժողովուրդ կապրի՞, եթէ իւր մշակութեան բերքերը քաղաքացւոց չը ծախէ, կամ իւր նեղութեան մէջ չը դիմէ քաղաքացի բարեկամին և փոխառութիւն չանէ։ Ո՞վ չը գիտեր որ գիւղացւոց գանձարան քաղաքն է։ Խեղճ գիւղացին իւր մշակութեան բովանդակ բերքերով, կարող չէ տակաւին իւր պէտքեր և պարտքեր հոգալ և ժամանակին տէրութեան տուրքեր վճարել։ Սորա համար նա միշտ հարկադրեալ է դրամատէր քաղաքացւոյն դիմել և փոխ դրամ խնդրել։

Այս մասին դարձեալ պիտի խօսիմ Թոռնիկ, և դու պէտք է համոզուիս և ուսանիս թէ՝ քաղաք գեղով է գեղ քաղաքով կապրին. դի աշխարհի տնտեսութեան մի կարգադրեալ օրէնք է, որով կը կառավարուին բովանդակ ազգեր և ժողովուրդներ։

Ե.

ՎԻՃԱԿ

ՄԵՐ ԱՐԴԻ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

Տեսնո՞ւմ ես, իմ սրատես Թոռնիկ, որ մեր գիւղական ժողովրդի հողագործութեան վիճակը նոյն հնութեան խանձարուրին մէջն է, դեռ հին հին դարերու մէջ կը թափառիմք. մեր հողագործութեան ամէն աշխատութիւններ դառնաքիրտն տանջանք է, մեր բանեցուցած գործիքներ անտաշ, անարուեստ, և կոպիտ չինուածներ են, որ չէ թէ միայն զմեզ կը տանջեն, այլ առաւել մեր խեղճ անխօսուն անասուններ։

Ցե՛ս անա գիւղացի մշակը ցորենի որոն բարձած սայլին՝ արտէն կուգայ. մի զոյգ ուժեղ գոմէշներ լծած է և մի զոյգ եզներ, որ սայլը դժուարաւ քաշելով կէս ժամու ճանապարհը մի ժամէն հազիւ կը բերեն ի կալատեղ։ Անխիղճ սայլորդը խարազանով չըփըռ չըփըռ կը վարէ խեղճ գոմշուկներ, լեզուներին դուրս հանած չնչասպառ փնչփնչալով կը քալեն. մօտ երթանք տես, Թոռնիկ, այդ կոպիտ սոսկավիթխար սայլը. չափէ սայլի երկայնութիւն և լայնութիւն. սայլին սռնակներով ի միասին կը դառնայ, սռնակի վերայ հեծած մառանը իւր ակներով հանդերձ եթէ կչռենք հարիւր լիտրէն աւելի է, վասն զի բոլոր թեղի ամուր փայտէ չինուած է. որ չատ ծանր է փայտերու տեսակին մէջ, ուսոի սայլն ինքնին մի անագին բեռ է և այս բեռան վերայ կը բառնան մինչև հարիւր յիսուն և աւելի ցորենի խուրձեր։

Շատ կը մխիթարուիմ, Թոռնիկ, զի կը տեսնամ այժմ վանայ գիւղական ժողովուրդ սկսած է կարնոյ թևթև սայլեր գործածել, որ մեծ դիւրութիւն կուտայ երկրագործին։

Երթա՛նք, անա մօտ այն տեղ արտ կը վարեն ցոյց տամ քեզ ագամայ գութան. տես մի հատ կորաքամակ հացի փայտ է, երեք կանգունէն աւելի երկայնութիւն ունի. և սորա անուն էշ կասեն վանայ գիւղացիք, յիրաւի դանդաղ մի էշ է քաշելու համար. այս էշ փայտին յետսակողմ կցուած առատամն և անոր գլուխն անցուցած են երկաթէ խոփը։ վանայ գութան մի զոյգ ամուլաձիգ գոմէշներով և երեք զոյգ եզներով կը հերկեն գետին. որուն բացած ակօսներ հազիւ մի մեծ թզաչափի խորութիւն ունի։ Բայց խօսիմ քեզ, Թոռնիկ, եթէ դու Մշոյ դաշտի, Ալաշկերտի և Արարատեան երկրի գութաններ տեսնաս, պիտի սոսկաս, ինն զոյգ կուռան գոմէշներով և եզներով հազիւ կը բանեցնեն այդ կոպիտ գութան. և իրեն բացած ակօսը չատ մեծ տարբերութիւն չունի մեր գութանի ակօսէն, գիւղի քանի մի տուներ միանալով հազիւ կարող են մի գութան լծել։ Մեր վանայ գիւղերու գութաններ, եթէ դոցա հետ բաղդատենք չատ աւելի կատարեալ գործուած են. վասն զի մեր գութանի հիւսներ չատ վարպետ են և լարաչափով այնպիսի ուղղութիւն



Նկար՝ ԿԱԼԷՆՑԻ

Ներքա՛նք, ահա մօտ այն տեղ արտ կը վարեն ցոյց տամ քեզ
ադամայ գութան...

Հօ՛լ արա, ե՛զը,
Ջա՛ն, ա՛ղբէր, ջա՛ն, հօ՛,
Թօ՛լ արա, ե՛զը,
Ջա՛ն ա՛ղբէր,

Դէ՛, սիրո՛ւն, ե՛լ, ե՛լ, ե՛լ, ե՛լ,
Դէ՛, ծի՛րան, ե՛լ, ե՛լ, ե՛լ, ե՛լ,
Դէ՛, տո՛կան, ե՛լ, ե՛լ, ե՛լ, ե՛լ, հօ՛։

Հօ՛լ արա ակը,
Ջա՛ն, աղ՛բէր, ջա՛ն, հօ՛,
Թօ՛լ արա ակը,
Ջա՛ն, ա՛ղբէր.

Դէ՛, սիրո՛ւն, ե՛լ, ե՛լ, ե՛լ, ե՛լ,
Դէ՛, ծի՛րան, ե՛լ, ե՛լ, ե՛լ, ե՛լ,
Դէ՛, տո՛կան, ե՛լ, ե՛լ, ե՛լ, ե՛լ, հօ՛։

Կ. Վ.

կուտան գութանին, որ երբեմն առանց շեղելու գծի վերայ կը քալէ և ակօս կը բանայ։ Բայց թէ Եւրոպիոյ գութանին հետ բաղդատենք, մեր գութան ետ կը մնայ, վասն զի մի զոյգ գոմէշ կամ երկու զոյգ եզը, եթէ լծես Եւրոպիոյ գութանին ամենայն դիւրութեամբ գետին կը հերկէ՝ թէ և կորդ լինի, այն ինչ մեր գութան պէտք է չորս լծով բանեցնես։ Եւ գիտե՞ս, Թոռնիկ թէ որչա՞փ տնտեսութիւն է երկրագործութեան աշխատութեան համար, երբ չորս լուծի տեղ կարենամք երկու լծով հերկել։ Մանաւանդ գիւղացի այն տուներու համար որչա՞փ ձեռնտու և շահաւոր է, որոնք շատ լծկան տաւարներ չունին։

Շատ ուրախ եմ, Թոռնիկ, ես լսեցի և գնացի տեսայ Վանայ մէջ մի ճարտար հնարամիտ հիւսն կայ ուսթայ Դաւիթ կ'ասեն, որ ամենայն ճշտութեամբ Եւրոպիոյ գութաններու նման կը շինէ. նմանապէս մի այլ արուեստաւոր դարբին կայ Ալէքսան անուն, նա ևս գութանի երկաթէ մասերը կը շինէ, բաւական է որ կաղապար ցոյց տաս։ Այժմ Վանայ շրջակայ գիւղացիք սկսած են այդ գութանը գործածել. գինն շատ աժան է. երեք ոսկիով մի գութան կրնայ շինուիլ։ Որչա՞փ դիւրութիւն է գիտե՞ս, Թոռնիկ, գիւղացւոց համար պատրաստի գութան գնել։ Ես գիտեմ խեղճ գիւղացին, թէ՛ գութանի համար թէ՛ սայլի համար և թէ մշակութեան պէտք եղած այլ և այլ փայտեր գնելու համար, թողլով իւր դաշտի աշխատութիւն, օրերով կերթայ կը դեգերի Վանայ ծառաստաններում. որպէս զի յարմար փայտեր գտնայ և այն որչա՞փ սուղ կը պարտաւորի գնել։

Երանի՜ թէ՝ Վանայ մէջ մի գործարան բացուէր, ճարտար հիւսներէն և երկաթագործներէն. մի չափաւոր ընկերութիւն կազմելով՝ երկրագործութեան պէտք եղած ամէն գործիքներ պատրաստուէին այդ գործարանում, ոչ միայն գութան՝ այլ և փոքր արօրներ, թեթև սայլեր, որոյ սռնակներ անիւներու մէջ դառնային. կասելու վերաբերեալ բոլոր գործիքներ կամնասայլ, ջառջառ ևայլն. մանկեռ, տափան, լծներ, ևայլն։ Էն ժամանակ տեսնաս դու Թոռնիկ, թէ օ՞րչափ դիւրութիւն կը լինի երկրագործ ժողովուրդին համար։ Եւ օ՞րչափ պիտի շահի այդ փոքրիկ ընկերութիւն, ոչ միայն Վանայ գիւղացւոց, այլ

և՝ գրոցի գաւառներուն համար ևս՝ կարենայ պատրաստել. վասն զի վտանգ ծովակ մեծ դիւրութիւն կուտայ, մշակութեան գործիքներու փոխադրութեան համար: Եթէ յաջողի այս ձեռնարկութիւն, հին գործիքներ փոխուին ի նոր. չատ պիտի յառաջանայ երկրին արդիւնաբերութիւն, որ ոչ միայն հպատակ ժողովուրդին, այլ և Տէրութեան հասոյթին կրկնապատիկ յաւելումն կը լինի. զի երկրին մշակութեան բարգաւաճանք Տէրութեան գանձարանին հարստութեան աղբիւրն է:

Այսպէս Թոռնիկ, հին գործիքներ և միանգամայն հին ուսնակացեալ նախապաշարմունք ի բաց թողլով, պէտք է ընդունիմք արուեստին հնարած նորանոր գործիքներ. թէպէտ անգիտակ ժողովուրդին համար բաւական դժուարին է, այլ երբ ժողովուրդ իւր աչքով տեսնայ գործնական օրինակ, աշխատութեան դիւրութիւն և միանգամայն չահն ու վաստակ, նա իսկոյն կը քաջալերուի և հետամուտ կը լինի փորձել և սովորել. միթէ դու այնքան ապուշ և տխմա՞ր կը կարծես մեր գիւղացի ժողովուրդ, որ իւր չահը աչքին առաջ տեսնայ և չաչխատի ձեռք բերել:

Մտի՛ր արա, Թոռնիկ, քեզ մի փոքրիկ պատմութիւն անեմ, համոզուիս թէ մարդիկ՝ ինչ բան որ չահաբեր է, պայն իրարու ձեռքէն յափշտակել կը ջանան:

Կը պատմեն թէ մի Ֆրանսացի բաւական քանակութեամբ փամփէս, իբր սերմ Ամերիկայէն փոխադրեր է ի Ֆրանսա և մի որ փամփէս անկելով՝ յաջողած է մեծ արդիւնք առնել: Եւ որովհետև իւր նպատակն այն է եղեր, որ այդ օգտակար տունկին մշակութիւն տարածէ Ֆրանսայի մէջ. ուստի իւր մշակած փամփէս ձրի բաշխել կ'ուզէ ժողովուրդին, ոչինչ կարեւորութիւն չի տար ժողովուրդ գուցէ կը ծաղրեն ևս: Դու տե՛ս ինչ կ'անէ հնարամիտ ագարակատէր, կառավարութիւնէն ոստիկաններ կ'ուզէ և պահապան կը դնէ փամփէսի արտին: Բայց գաղտնի հրահանգ կուտայ ոստիկաններուն եթէ մտնան փամփէսի արտ և գողութիւն անեն, պահապաններ այնպէս ձեւանան՝ որպէս թէ չեն տեսնար, թոյլտուութիւն անեն: Մարդիկ կը տեսնան որ, պահապաններ կան արտին վերայ, ուրեմն կ'ասեն, արտին մէջ լաւ բաներ կան

ուսնելու կը սկսին ճարպիկութեամբ գողնալ փոքրիկ իրեր. առաջ հոս հոս կ'ուտեն և յետոյ կ'սկսին՝ կը տեսնան որ, մի պատուական բան է. հաւկիթի պէս համ ունի և բաւական անուանդ կուտայ մարդոյն։ Ահա այս կերպով ոչ միայն ի Յերանսա այլ և բոլոր յԵւրոպա կը տարածուի փոքրիկ իրերի մշակութիւն, սովու ժամանակ ժողովուրդին համար մի ազատարար անուանդ է։

Տեսա՞ր Թոռնիկ, ի՛նչ վարպետ եղանակ բանիցուց հանճարեղ Յերանսային. իր գիւտը գողերու ձեռքով բոլոր Յերանսայի երկիրը տարածեց. թող Յերանսա, այսօր համարյն Եւրոպա փոքրիկ իրերի մշակութեամբ կը պարապին. ցորենէն յետոյ ամենակարեւոր մի պէտք համարուած է անուանդի համար։

Որչա՞փ ցանկալի կը լինէր, եթէ մեր մշակ ժողովուրդն ևս այս օրինակին հետևելով՝ սովորէր մշակել այդ չնաւէտ բոյսն, որ միայն տեղ մինչև երեսուն քառասուն կը պտղաբերէ. և երբ պատահէր որ ցորենի մշակութիւն չի յաջողէր, փոքրիկ իրերի մշակութիւն կը լինէր նորա տեղ և այլ ևս մարդիկ սովու դառն աղէտէն ապատ կը մնային։

Մշակութեան գործիքներու վերայ խօսելէ յետոյ, գիտե՞ս Թոռնիկ, սեղի կարեւոր կենդանի գործիքներ ևս կան, այն է մեր լծկան աշխատասեր անասուններ, որ քան զմեզ առաւել կը խոնջին մշակութեան ամենածանր աշխատութեան մէջ։ Բայց գիտնալ պէտք է, թէ մշակութեան համար ո՞րն է աւելի յարմարագոյն, ե՞զ, գոմէ՞շ, թէ ձին։ Մենք սովորաբար եզ և գոմէշ կը գործածենք, փորձառութիւն ցոյց կուտայ մեզ, որ հեզաբարոյ եղն աւելի յարմարագոյն է քան գոմէշ, գործածութեան համար մեծ դիւրութիւն կուտայ։

Վասն զի գոմէշ մեծ զբաղմունք և դժուարութիւն կը յաւելու մշակին, մանաւանդ գարնան սկիզբն, երբ ի ձմերան ախոռին մէջ գերացած՝ յօրացած դուրս կը հանուին, քանի մի շաբաթ պէտք է, որ այդ ամեհի և կատաղի կենդանիներն ընտելացնես և ապա կարենաս նոցա սէգ պարանոցը լուծին տակ դնել։ Դու տեսա՞ր ևս, թէ մշակներ ի՞նչ միջոց ի գործ կը դնեն այդ կուռան գոմէշներ իրարու հետ յաշտեցնել համար։ Այսպիսի յիմար

և կոպիտ միջոց մտածեր գտեր են որ դուցա կռուոյ տեսարանին առաջ, մարդ չի կարող դիմանալ՝ երբ փափուկ սիրտ ունի։ Երկու կռուան գոմէշներ դաշտ հանելով թող կռտան, տես դու յայնժամ, թէ քանի՞ ուժգնութեամբ գլուխ գլխու կը զարնուի անագին ճայթումով, կռուոյ վախճան այն կը լինի երբեմն, որ մին առաջին հարուած կրելով կը տեսնայ իւր ակարութիւն և խոյս կուտայ. մերթ ևս հաւասար ուժեր երկուստեք յամառելով չեն բաժնուեր, մինչեւ մէկին կամ միւսին ոտքը կը կոտրի կամ կոտոչն արմատէն կը թռչի։ Մի զարմանալի օրէնք կայ այս կռուաններու միջոց. երբ մին յաղթող հանդիսանայ և միւսն կը փախչի, այլեւս հաչտ են իրարու հետ և խոնարհելով կ'երթան ի միասին լուծին ներքեւ։

Զարմանանք Թոռնիկ, որ անգէտ գիւղացին գոմէշներու հաչտութեան պայմանը այդպէս կը կնքէ. միթէ աշխարհի հաչտութեան օրէնքն ևս այդպէս չէ՞։

Թող այս, գոմէշին գործածութիւն ուրիշ կերպ աշխատութիւն և դժուարութիւն ևս ունի. վանդի գոմէշներ որչափ որ պինդ և հաստակաշի են, բայց չատ փափուկ են և մեծ գարման կ'ուզեն. ոչ ցուրտի կը դիմանան և ոչ տաքի, յամարան օր քանի մ'անգամ պէտք է լուանաս՝ ի ձմերան ևս գոնէ քանի մ'անգամ պէտք է լուանաս և օծես ձէթով։ Եւ գիտե՞ս, թէ քանի՞ դժուարին է գտնել այնպիսի գոմէշներ, որ չեն ընտելանար միշտ կռիւ կը սիրեն և կը վրդովեն միւսներուն խաղաղութիւն։ Մի մշակ պէտք է գորա հետ գրաղի առանձին և պահպանէ զայն, գիւղացին միայն հնարք մի ունի, այդ անզուսպ կռուաններր գործածելու, և անմիջապէս կը հնազանդեն։ Եւ մերթ ևս գիւղացիք մեծ պարծանք կը համարին իրենց համար, եթէ կռուան գոմէշներ ունենան. վանդի չինական ժողովուրդն ևս իւր չափով փառասիրութիւն ունի։ Որչա՞փ կը հպարտանայ մեր Թորոս աղբար, երբ իւր գոմէշն՝ յաղթէ Կիրակոսի գոմէշին. տես դու էն ժամանակ Թորոսին և Կիրակոսին կռիւ. մանաւանդ երբ յաղթուած գոմէշին վտանգ պատահած է, կամ ոտք կոտրեր և ամ կոտոչ թռեր է. և սորա հետեւանք կը լինի ոխութիւն կամ վրէժխնդրութիւն իրարու դէմ։

Ինձ այնպէս կը թուի, Թոռնիկ, մշակութեան ծանր և անտանելի գործիքներ պատճառ տուած են գիւղացւոց գոմէշ գործածել։ Բայց երբ գործիքներ թեթեւնան և դիւրանան, այլեւս հարկ չի մնար գոմէշի գործածութեան։ Այո՛, անասնատուծութեան կարգին գոմէշն ևս իր պիտանութիւն ունի իր կաշւոյն և մսին համար, հապա կոտոչն, յորմէ Եւրոպացին իր ճարտարութեամբ չատ տեսակ բաներ կը չինէ, դանակի, չախուի՝ կոթեր և կոճակներ, իսկ մեր ձէթ ծախող՝ կոտոչով կը չափէ իր ձէթ և միայն այսչափ է պիտանութիւն։

Ուստի լաւագոյն է Թոռնիկ, որ գիւղացիք համոզուին և սովորին, աւելի եզն գործածել մշտական աշխատութեան մէջ, որոյ դարմանն թէ ամառան և թէ ձմերան չատ հեշտ է, ոչ լուանալ կ'ուզէ և ոչ ալ օծել. բաւական է միայն քերոցով իր կռնակ քերել և մաքուր պահել։ Բայց պէտք է եզներուն սերունդ ազնուացնել ինչպէս Ալաշկերտ գաւառի եզներ, որ չատ պատուական և հսկայ են. մեր վանայ գաւառի եզներ, չատ գաճաճ և անոյժ են, դորա պատճառներ կը բացատրեմ քեզ իր տեղը։

Բայց թէ խօսիմ՝ Թոռնիկ, թէ քան գոմէշ և եզն չատ մեծ տարբերութիւն ունի ձին, եթէ գիտնայինք և կարենայինք գործածել զայն մեր հողագործական աշխատութեան մէջ։ Գիւղացին կը խնդայ թերեւս, նա չէ տեսեր և չի կրնար հաւատալ, թէ բոլոր Եւրոպիոյ աշխարհ միայն ձի՝ը գործածէ երկրագործութեան համար, թէպէտ անհուն եզներ կը դարմանէ և այդ միայն՝ մսին և կաշւոյն համար է։ Ձիոյն յատկութիւններ խօսիմ քեզ, նախ որ ձիոյն կուրծքը կրկնապատիկ ոյժ ունի քան եզան վիզը, երկրորդ ձին չատ արագութիւն ունի աշխատութեան մէջ այնպէս համարինք եթէ եզ և գոմէշ լծուած գութեան մի օր յիսուն ակօս կը բանայ, անշուշտ ձիոյ գութեան մինչեւ հօթանասունն և աւելի ևս ակօսներ կը բանայ։ Մանաւանդ սայլ քաշելու և սրան կապելու համար, ձիոյն գործածութիւն անհամեմատ է։

Այլ միթէ գիւղացին կը համոզուի՞ իր հին աւանդական դրութիւն և սովորութիւն թողնել, այո՛ Թոռնիկ. գիւղացին ևս իր իրաւունքն ունի, քանի որ կրթութիւն և ժամանակն ձեռնտու չեն իրեն. և աւելի քան

զամէն իւր խոր արմատացած նախապաշարումն. այդ հընուանդ գաղափարը իւր մաքէն խլելու համար կրթութիւն և հարուստ ժամանակ պէտք է։

Բայց միթէ սպասե՞նք, որ նա կրթուի և մաքով հաւանի նոր յառաջդիմութեան. ո՛չ, ինչպէս խօսեցայ յառաջ, պէտք է գործնական օրինակով ցոյց տանք գիւղական ժողովուրդին, թող տեսնայ իւր աչքով. վասնզի նա որ գրել կարդալ չի գիտեր կը դժուարի մաքով ըմբռնել. աչքի տեսութեամբ և յայտնի օրինակով շուտով կ՚ըմբռնէ. և գործին շահաւէտ արդիւնք կը մղէ զինքն հետեւիլ օրինակին։ Հին աշխարհի դարերում երբ գիր չը կար, ոչ դպրոց և ոչ կրթութիւն ամէն բան և արուեստ աչքի վարժութեամբ կը սորվէին իրմէ. և նոյնիսկ արդի մեր արեւելեան աշխարհ նոյն վարժութեամբ կ՚ուսանին պարզ արհեստներ զոր օրինակ, դարբնութիւն, դերձակութիւն, կօշկակարութիւն, հիւսնութիւն եւայլն, այն ինչ արեւմտեան յառաջադէմ աշխարհ այդ արհեստներ նախ տեսական կերպով դպրոցի մէջ դաս կուտան և երբ դպրոցէն ելլէ աշակերտ, շատ դիւրութեամբ կ՚ուսանի գործնական վարժութիւն արհեստանոցին մէջ։

Զ.

ՎԱՐՈՒՑԱՆ

ԵՒ ՄՇԱԿԱԿԱՆ ԱՅԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՔ

Մշակական աշխատութեան գործիքներու վերայ բաւական խօսելէն յետոյ, այժմ պիտի սկսիմ Թոռնիկ, վարուցանի և այլ զանազան աշխատութեանց վերայ խօսել։ Մեր Վանայ գիւղական ժողովուրդ երկու կերպով գետին կը վարէ, եթէ գետին կորդ է, գութանով կը վարէ. իսկ եթէ գետին անցեալ տարի վարուած լինելով փխրած է հողը, էն ժամանակ հարօրով կը վարէ մի զոյգ գոմէշ կամ եզն լծելով։ Սովորաբար հարօր գարնան միջոցներ կը գործածուի գարի կամ այլ հնդեղէն բաներ ցանելու համար։ Երբեմն Ապրիլ ամսոյ վերջեր և երբ գարուն շուտ գայ, և երբեմն Մայիս ամսուան մէջէն կը սկսին գութան, և առաջին նուագին կաթնավար կ՚ասեն, երբ հողը

կակուղ և դիւրավար է. և յետոյ հետզհետէ կը պնդանայ՝ մեծ մեծ կոչկոռներ կը լինին վարած ժամանակ։ Սորա համար կ'աճապարեն մեր գիւղացիք որ գութան չուտ լծեն, որ կաթնավարի ժամանակ չանցնի։ Բայց վանայ ծովու եզերք Արձկու և Արճիշոյ գաւառները, որոնց գետին վարելու եղանակ տարբեր է և աւելի արդիւնաւոր. և այդ կերպ մշակութեան դիր կ'առնեն, նոքա երկու անգամ կը հերկեն գետինը, առաջին անգամ սկիզբն գարնան խորունկ կերպով հարօրավար կ'անեն և կը տափեն կը ձնայ այնպէս մինչեւ աշնան սկիզբն, և ապա կը սկսին կրկին վարել դարձեալ մի տեսակ հարօրով, որուն խոփի առեւ կցուած կան երկու տախտակներ կանգուն ու կէս երկարութեամբ և թզաչափ լայնութեամբ, իսկ վարի մասն մի մասի չափ բաց է տախտակներու երկարութեամբ, այնպէս որ սերմնահան այդ հարօրին առեւէն երթալով սերմը փոքրիկ բուռով կը ձգէ տախտակներու մէջ և անոի ակօսին մէջ կ'իյնան կարգաւ սերմի հատիկներ, ակօսի երկու կողմի հողեր թափելով կը ծածկեն սերմեր։ Դու տեսնես բուսած ժամանակ որչա՞փ սիրուն ձեւ կ'ունենան ուղիղ գծով ակօսէն կը բարձրանան. և յաջող տարին մինչեւ մէկին քսան և քսան հինգ կուտան։ Այդ կողմի երկրագործներ սերմէն եւս վաստակ ունեն. զի մեր ցանած մի չափի տեղ նոքա կէս չափ կը ցանեն և ցանուած սերմի հատիկներ ամբողջապէս կը բուսանին այն ինչ մեր կերպով ցանուածներ մի երրորդ մասն կը կորսուին, զոր պիտի պատմեմ իւր տեղը։ Այս երկու գաւառներու մշակութեան արդիւնքը այնքան բեղմնաւոր կը լինին որ ցորենով կը լնու վաստուրական երկիրը. ինչ տարի որ անյաջող լինին այս գաւառներու հունձքեր, այդ նշան է որ այն տարին հացի թանգութիւն կը սկսի։ Արճիշոյ և Արձկու գաւառներու մշակութեան մասին միայն այս չափը գրելով կը դառնամ չարունակել Թուռնիկ մեր մշակութեան կարգը։

Կաթնավարի հերկագործութիւն չատ չի տեւեր քանի չաթաթէն յետոյ վարելիք արտեր կը սկսին պնդանալ և այն ժամանակ տես դու որչա՞փ դժուարութեամբ գութանը կը ճղքէ ակօսներ, և որչա՞փ մեծամեծ կտէմի կոշտերը պալ պալ կը չարունակեն ակօսներու վերայ։ Մեր

գիւղացիք տակաւին չեն գիտեր սորտ դիւրին միջոցը. բայց Խարբերդցին քաջ գիտէ, վասն զի պնդացած եւ կարծրացած արտերը նախ կը ջրէ և ապա կը վարէ, որ բնաւ այլեւս կոշկոռներ չի լինէր, որովհետեւ գութանի ժամանակ դեռ ջուրեր առատ կը լինին։

Որչա՞փ լաւ կը լինէր Թոռնիկ եթէ մեք եւս հետեւելով այս օրինակին կարգ դնելով հեղհեղէ ջրէինք պընդացած արտերը և այնպէս վարէինք, և գիտե՞ս դու երկու կերպով շահաւոր կը լինի այս միջոցը։ Ո՛չ միայն արտ դիւրին կը վարի և կռէթ չի տար, հապա ջուրն եւս զօրութիւն կուտայ հողին և կ'աւելցնէ նորա բուսական ոյժը։ Թող այս՝ արտ ցանուած ժամանակ երբ հերկ մեծ մեծ կոշկոռներ ունի, ցանուած սերմին մի մասն այդ խոշոր կռէթներուն տակն իյնալով կը կորսուին, մի մասն եւս հերկ ջրուած ատեն ջրատար կը լինին, եթէ հաշուենք նաեւ թէ ջրկալին ոտք որչա՞փ հատիկներ դէպի վար կը տանի, հապա երբ սերման ընտրութիւն չի լինէր, վտիտ և անչաճ հատիկներ եւս անբոյս կը մնան։ Այս հաշուելով մի չափ սերմի ցորենէն՝ հազիւ կէսը կը բուսնին և կէսն ի կորուստ կ'երթայ։

Պէտք է հաշուենք նաեւ ջրկալներուն օրավարձք որ շատ աւելի կը լինի այդպիսի արտերուն համար մանաւանդ երբ ցանուած հերկերը առանց կոփի քաշելու կը ջրեն, ինչպէս Վանայ շրջապատ քաղաքացւոց և ուրիշ գեղերու արտեր։ Այս մասին ես շատ ուրախ եմ Թոռնիկ որ մեր Արճակու գիւղացիք կոփի քաշելու շատ վարժ են, և մեր արտերն եւս դուրան լինելով չորս ջրկալի տեղ՝ մի ջրկալ բաւական կը լինի, և մինչեւ մի ջրաղացի ջուր թող կուտայ մի արտի մէջ և կարող կը լինի կառավարել։

Հերկելու կռէթներն մի ուրիշ սոսկալի դժուարութիւն էլ կուտան, երբ ցանուելէն յետոյ կը մանկեռէ մըշակը. դու տեսեր ես մանկեռ, որ չորս կանգուն երկայնութեամբ մի հաստ թեզի կարծր և ծանր փայտ է, որոյ վերայ շարուած են տասն կամ աւելի փայտէ մատներ, որոյ վերայ կը կենայ մշակ չուանի մը ծայր կը բռնէ, որոյ միւս ծայր կապուած է լուծին։ Ահա ցանուած արտ մի կը մանկեռեն երթանք աչքովդ տես Թոռնիկ, որ

հաւատաս թէ մշակական աշխատութեան մէջ ամէնէն սոսկալի դժուարութիւն մանկտուն է, տես ինչպէս մեծ մեծ քաղերուն սաստիկ զարնուելով և չփուելով մանկտ մերթ ընդ մերթ կ'ոսանուս յառաջ կը նետուի, մերթ եւս հուժկու կռէմներ դիմահարելով մանկտը կը կեցուընն. բայց անխիղճ մշակին խարազան դարձեալ կը վարէ յառաջ. վերջապէս անխօսուն գոմշուկներ անհնարին չարչարանքով կ'աւարտեն մանկտի գործողութիւն։

Հարցուր Թոռնիկ, թէ այս անտանելի աշխատութեան մասն ինչ կերպով կը դիւրանայ։ Վերը խօսեցայ որ մի միջոցն այն է, որ կամնավարէն յետոյ ճնացած արտերը ջրեն, և ապա վարեն. կան տակաւին ուրիշ հնարքներ, զոր ճարտար հերոպացին հնարած է յատուկ արտերու կոչկոռներ փշրելու համար, բայց ի՞նչ օգուտ զի մեր գիւղացի ազքատ ժողովուրդ միջոց չունի այդ գործիքներ ձեռք բերելու։ Լաւ է որ մեր բնական խելքով հնարներ մտածենք։

Ես կ'ասեմ Թոռնիկ, ինչ հարկ կայ մեր գութան երկար ժամանակ տեւէ որով վերջին վարելիք արտեր պընդանան. քանի որ նոր գութանի գործածութիւն երկու զոյգ լծով կը լինի. չատ դիւրին է ուրեմն երկու գութան կը լծենք և քանի աւուր միջոց քառասուն աւուր գործ կը տեսնենք. և այսպէս կամնավարի ժամանակ մեր գարնան հերկերու գործը կը լրացնեմք։

Բայց այն հերկեր զոր կը վարեմք այս տարի եթէ ծողուեմք որ ձմեռ անցնի վերայ. դու կը տեսնաս ի գարնան որ ձիւն և սառնամանիք այդ կոչկոռներ փշրելով աւուր են դարձուցեր, և աշնան սկիզբը երբ միանգամ եւս հարօրավար անելով ցանուելն չատ աւելի արդիւնաբեր կը լինեն։

Ես լսեր եմ, պատմեմ քեզ Թոռնիկ. կ'ասեն ՎԵՐԳԻԼԻՈՍ իր մշակական բանաստեղծութեամբ խրատ կուտար Հռոմայեցւոց, որոյ տողեր միտքս պահած եմ։

«Այլ ըզ կամըս մշակին
Ագահութեան հերկ այն լցցէ
Որ կրկին համբեր sopոյ
Եւ կրկնակի սառնամանեաց»

Բացատրեմ քեզ. այն հերկուած արտը մշակի ցան-

կութիւն կը լեցնէ, որ կրկին ամարան ջերմութեան և ձմերան սառնամանեաց դէմ կը կենայ; վասն զի երկու ամարան ջերմութիւն գողն աւելի կ'ուխէ և կրկին ձմեռն ևս հողակոչտեր կը լուծէ և կը փխրէ։

Ջանի՞ս Թոռնիկ, դպրոցէն ես կուգամ, վերգիլիոսէն դու կը խօսես։ Է՛ Թոռնիկ, մի քանի տարի դպրոց մնալով կը կարծես որ Պապկի չափ բան գիտես, ես յիսուն տարի է որ լսելով տեսնելով և փորձառութեամբ կը սորվիմ։ ես քեզ պէս դպրոց չեմ մտեր, բայց աշխարհի բանները, աշխարհի մարդիկներ ինձ համար դպրոց են և ես դեռ կը սորվիմ այս ծերութեան ժամանակ, այն ինչ դու նոր դպրոցէն ելար, կը կարծես թէ ամէն բան գիտես. դեռ քեզ շատ հաց պէտք է որ ուտես և Պապկի չափ բան գիտենաս։ Պապիկդ բաւական յիշողութիւն ունի, ով գիտէ քանի տարի առաջ երբ Հայրիկ վերգիլիոսի այդ տողերը կը բացատրէր աշակերտներուն ես մտիկ անելով միտքս պահած եմ։

Երանի՛ թէ հին հռովմայեցւոց պէս կարենայինք մեր արտեր մշակել։ Վերգիլիոսի խրատէն այս կ'ուսանիմք, թէ պէտք է հողն աւելի դարձնել, զի որչափ հողը տակն ի վերայ շրջուի, այնչափ աւելի պտղաբեր կը լինի, վասն զի էն ժամանակ հողն հաւասարապէս կ'ուխի արեւուն առաջ, տակի հողեր հոմ չեն մնար, մանաւանդ ցուրտ կլիմաներու տակ այս դրութիւն շատ կարեւոր է։ Վանայ գիւղացիք այս մասին շատ անգէտ են և անփորձ, մինչդեռ Յարբերդու, Կարնոյ և Բասենու գիւղական ժողովուրդ աւելի բանգէտ և փորձառու է, երբէք աշխատութիւն չի խնայեր իւր միանգամ վարած արտը երկու անգամ, երեք անգամ և մինչեւ չորս անգամ հարօրօրավար անելով հողը չուռ տալ։ կարծես թէ ինչպէս կերակուր կրակի վերայ խառնելով հաւասար կ'եփի, այսպէս խելացի գիւղացին փորձառութեամբ հասկցած է թէ քանի անգամ որ հողը արեւուն առաջ դառնայ և շրջի, այնչափ աւելի բուսական զօրութիւն կ'առաւելու և այդ աճողական զօրութիւն ցանուած սերմին կուտայ. որով կրկնապատիկ հատապատիկ արդիւնաբեր կը լինի արտն։

Բայց դու հարցուր, Թոռնիկ, թէ ինչո՞ւ համար վանայ գիւղացիք միանգամ միայն կը վարեն արտ և չեն

հետեւեր միւս գաւառացւոց փորձառու օրինակին։ Դորա պատճառներ շատ յայտնի է Թոռնիկ և ես կ'ուզեմ մանրամասն պատմել քեզ վասն զի այս դասը՝ իմ դասերուս ամենակարեւոր մասն է։

Կը տեսնաս Թոռնիկ, որ մեր Վասպուրական երկիր յոյժ ընդարձակ է, շատ արօտական դաշտեր, լեռներ, հովիտներ, ձորեր և մշակելի հողեր ունի. Ջուրն էլ նմանապէս շատ առատ է. սորա համար մեր գիւղական ժողովուրդ շատ հարուստ է հողով՝ և իւրաքանչիւր տուն մեծ հողաբաժիններ ունի, որ հին գիւղական օրէնքով և արքունի գրոց համեմատութեամբ բաժին եղած է իւրաքանչիւր ընտանեաց վերայ։

Բայց դու՝ եկ տես Թոռնիկ, որ շինական ժողովուրդ այնչափ ագահ է հողի մասին, որ չեմ կրնար պատմել, ինչպէս աշխարհիս հարուստ գանձատէրեր եթէ լերան չափ ոսկիներ դիզեն՝ դարձեալ բաւ չեն սեպեր, այսպէս հողագործ ժողովուրդ որչափ ընդարձակ հողեր ունենայ իւր ձեռք, հերիք չ'սեպեր միշտ անկուշտ է և հետամուտ է հող ունենալ։ Եթէ մի տուն քան կամ երեսուն արտ ունենայ դու տես գիւղացւոյն հաշիւը, կ'ասէ ինքնին ամէն տարի տասն արտ կը ցանեմ, մնացեալներ կորդ կը թողում, որ աւելի արդիւնք տան։ Ահա քեզ առաջին պատճառ իւր ագահութեան, և ցաւալի է, որ մեր գիւղացիք արտ զօրացնելու համար, միայն մի միջոց գիտեն, այն է կորդ թողուլ։ Բութ է միտքը, նա չէ կարող մտածել թէ հող պարարտացնելու համար կան շատ ուրիշ զանազան միջոցներ թողունք արուեստին սորվեցուցածը, նա իւր դըրան առաջ և գիւղին մէջ դէզադէզ եղած աղբերուն պիտանութիւն էլ չի գիտեր։ Թող այս, մեր մշակ ժողովուրդ հողի ագահութեան հետ ունի նաև սաստիկ տենչ, այն է շատ վարեմ շատ ցանեմ և շատ արդիւնք ստանամ, խեղճ անտեսագէտ չէ, թուաբան չէ որ գիտնայ հաշուել, թէ շատ վարուցանի հետեւանքն այն է, որ աշխատութիւն բազմապատկելէն յետոյ՝ բազում ծախքեր եւս կը յաւելու։ Թուեմ քեզ, Թոռնիկ, վարելու աշխատութիւն, ցանելու աշխատութիւն, մանգաղի դժնդակ աշխատութիւն, աշնան և ամրան ջրելու աշխատութիւն, հնձելու աշխատութիւն, արտէն ի կալատեղ կրելու աշխատութիւն. բար-

դէ այս բոլոր աշխատութեանց վերայ մշակներուն օրա-
վարձք։ Զարմանալին այն է որ հողագործ տանուտէր իր
տան ընտանեաց և գաւակաց աշխատութիւն երբէք հաշուի
չի դներ։

Եթէ գիւղացին այսպէս կը մտածէ և կը գործէ զար-
մանք չէ, Թոռնիկ. հապա մեր հայոց վանքերու վանա-
կան եղբայրներ, որ գրել կարդալ գիտեն և ընդարձակ
հողեր ունեն մշակելու, ոչինչ առաւելութիւն ունեն գիւ-
ղացի ժողովուրդէն. նոյն խելքով և նոյն կերպով է ի-
րենց երկրագործութեան եղանակ։ Որոց պարտքն էր գո-
նէ փոքր ի չատէ յառաջ տանէին մշակութեան գործեր,
որով կարող կը լինէին թեմական գիւղերուն օրինակ տալ։
Թէպէտ խոստովանիլ պէտք է, մինչեւ ցարդ չեղաւ վա-
նօրէից համար մի վանական հաստատուն խորհուրդ որ
կարենար կարգ դնել և ուղղութիւն տալ։

Թողուենք այս բաներ իր տեղը. լաւ հասկացա՞ր Թոռ-
նիկ, մեր գիւղացւոց սկզբունք, որ միշտ իր վարուցան
տարածել կ'ուզէ, չատ ընդատակար է, և չգիտէ և չ'ուզեր
ամփոփիլ, որ հետեւապէս ձեռնհաս լինի իր հողերը լաւ
մշակելու, փոխանակ տաժանելի աշխատութեամբ տասն
արտ մշակելու՝ լաւագոյն և օգտակար չէ՞ հինգ արտ մի-
այն մշակիլ և բարւոք մշակիլ, այնպէս որ հինգ արտի
արդիւնք հաւասարի տասն արտին, որով թէ աշխատու-
թիւն և թէ ծախս մեծապէս կը չափաւորի։

Ցասես դու, Թոռնիկ, թէ Պապիկ՝ հակասութիւն կ'ա-
նէ, վասն զի երբ տասն արտի աշխատութիւն պիտի բար-
դուի հինգ արտին վերայ, թէ կրկնավար անելով արտեր,
թէ աղբ տալով և ուրիշ այլ և այլ աշխատութեամբ. ու-
րեմն նոյն կը լինի աշխատութիւն։ Ո՛չ. այդպէս չէ, այլ
մեծ զանազանութիւն կայ, մշակութեան տարածման և
ամփոփման աշխատութեան կերպերուն ժամանակի տեւո-
ղութեան մէջ և մանաւանդ դիւրութեան եղանակին մէջ,
հարկ չէ որ մանրամասն բացատրեմ քեզ, գործնական
փորձերու մէջ պիտի տեսնաս ու սորվիս։

Հարցո՛ւր, Թոռնիկ, երբ հինգ արտ միայն բարւոք
մշակելով բաւական համարինք, մնացեալ հինգ արտն ան-
մշակ և ապարդի՞ւն մնայ։ Այդ մասին պիտի գրեմ իր
կարգին, այլ այժմ միայն այսչափ յիշեմ, միթէ գիւղաց-

ւոյն համար ցանելու բան կը պակսի՞, թող խոտ մշակէ, առւոյտ ցանէ, կորնկան ցանէ, վարսակ (իւլաֆ) ցանէ, փաթաթէս ցանէ, չողգամ ցանէ, ճակնդեղ ցանէ, բակլայ ցանէ, ոսպ ցանէ, սոխ ցանէ, սեխ, վարունգ, ձմերուկ և այլ շատ բաներ, որ բոլորն եւս մեր կեանքին պիտոյքներ են։ Ափսո՜ս, որ Վանայ գիւղացիք միայն ցորեն, գարի, տարեկան (կորեկ) սովորած են ցանել, և ուրիշ խիստ պիտանի բաներուն կարեւորութիւն չեն տար։

Աւարտելով հերկագործութեան դասը, այժմ պիտի խօսիմ սերմերու ընտրութեան մասին, որ շատ կարեւոր է լաւ երկրագործին համար։

Է.

ՍԵՐՄԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

ԵՒ ՍԵՐՄԱՆԱՑԱՆ

Լաւ ուշադրութիւն արա, Թոռնիկ, ես համառօտ կերպով նախ նկարագրեմ քեզ, թէ ի՞նչ են այդ փոքրահատիկ սերմեր, որոց մէջ թագուն մեծ զօրութիւններ կը պարունակուին, զոր Տէր Աստուած աշխարհիս ստեղծագործութեան ժամանակ հրաշապէս միանգամ պատրաստեր և դրեր է մայր երկրին արգանդին ծոցն, մարդ կը զարմանայ թէ ի՞նչպէս կը յղանան հատիկներ, կը ծլին, հողէն դուրս կ'ելլեն, կ'աճին օրըստօրէ և կը մեծնան ծառի չափ. ինչպէս Յիսուս իւր առակով կը խօսի մանանեխի հատիկի համար որ այնչափ կը մեծնայ, մինչեւ թռչուններ կը հանգչին նորա ոստերուն վերայ։

Կը տեսնա՞ս մեր բնակած բովանդակ երկրագունդ, Աստուծոյ արարչագործ ձեռքով ցանուած սերմերով լի է։ Բոլոր անտառներ, բոլոր պտղատու ծառեր, ծաղիկներ խոտ և այլ զանազան բանջարեղէն բոյսեր, և ամէն բուսական բաներ, սերմի հատիկներէն յառաջացած են։ Այս տեղ դու փառք տուր Աստուծոյ, համբուրէ հոգւով Նորա նախախնամ ձեռք, որ այս երկիրն իբրեւ ժառանգութիւն և իբրեւ անսպառ դրամագլուխ տալով մարդոյն, ամենացեղ ազգի սերմերն եւս երկրին հետ պարգեւեց։ Եթէ առանց սերմի չոր և անբոյս երկիր տար միայն, ի՞նչ

կը լինէր մարդոյն վիճակը, նա այլ եւս չէր կարող ապրել, վասն զի մեր սնունդ և մեր կեանքն երկրի սերմնաբոյսերն են։

Զգիտեմք, Թոռնիկ, թէ հանճարեղ մարդ, ո՞ր ժամանակէն սկսեալ իւր սնունդին համար առաւել քան զամէն ցորենի սերմն ընտրեց, զայն ցանեց քաղեց, բայց յետոյ իւր ջուրի մէջ խաչելով իբրեւ հատիկ կերաւ, բայց յետոյ իւր հնարամտութեամբ երկանով աղաց, ալիւր եղաւ, ալիւրէն խմոր շաղեց գնահիկ գնահիկ չինելով կրակին վերայ եփեց պատուական հաց եղաւ, և այսօր բովանդակ աշխարհի մեծ մասն հացով կ'ապրի. եթէ պակսի հաց, մարդ սովամահ կը լինի, թէպէտ կան այնպիսի երկիրներ և ժողովուրդ, որք հացով չեն ապրիր և պարմանալի է, եթէ հաց ոտանն կը վնասին. այլ հացին տեղ բրինձ կ'ուտեն և այլ ուրիշ բաներով կ'ապրին։ կը թուի թէ, մարդ իւր սովորած բաներով կրնայ ապրիլ, ինչպէս անտառական վայրենիներ պտուղներով և որսի միսերով կ'ապրին։ Այսչափ միայն ընդհանրապէս խօսելով նախապատրաստեալ սերմերուս մասին, բաւ է. և դու տեսա՞ր, Թոռնիկ, որ մեր առօրեայ կեանք սերմերէն կախում ունի, մանաւանդ ցորենաբոյս (հացահատիկ) սերմէն։ Այժմ պէտք է խօսիմ այդ պատուական սերմի ընտրութեան համար. վասն զի յայտնի է որ ցորենի սերման հետ ուրիշ օտարոտի սերմեր կը խառնուին, որք խորթ և ինքնաբոյս զաւակներ են մայր հողին և կը թուանին առանց ցանելու և մշակելու. զոր օրինակ որոմն ճլղիկ և այլն։ Սերմանացան մշակ, ոչ միայն պէտք է, այլ օտար սերմերը ցորենահատիկէն զատէ, այլ և նոյն իսկ վատ և ցամքած հատիկներ եւս որոշէ կրկին և կրկին մաղելով յատակելով այնպէս որ մաքուր հատիկներ մնան, գէր և լեցուն։

Ցանելու համար թէպէտ արդի Եւրոպիոյ երկրագործներ այլ և այլ արուեստական մեքենաներ հնարած են որ շատ հաւասար կը ցանեն և արտին մէջ ինկած հատիկներ հաւասար չափով իրարմէ հեռու կը լինեն, որով հաւասար կերպով կը թուանին հաւասար չափով մայրենի հողէն իրենց սնունդ կ'առնուն։

Չե՞ս զարմանար, Թոռնիկ, որ արուեստին փորձը ցոյց

տուած է. թէ մի հատիկին աճման համար, ո՞րչափ հող պէտք կը լինի, որ անուշանէ և պահէ սերմի հատիկն մինչեւ հնձելու ժամանակ։

Բայց յայտնի է այն արտեր որ կորդ ճնալով ուժովցած են. կամ աղբով պարարտացած են, շատ աւելի սերմ կարող են ընդունել և պահպանել, ինչպէս մի հարուստ մարդ կարող է շատ զաւակներ ճոխութեամբ պահել։ Ուսաի փորձառու երկրագործը քաջ գիտնալով իւր արտին ոյժը և ակարութիւն ըստ այնմ կը ցանէ իւր սերմ թանձր կամ նօսր, և իրաւունք ունի. միթէ կամ չունեցող մայր կարո՞ղ է մէկին տեղ երկու զաւակ անուշանալ։ Թողուանք ցանելու մեքենան, Թոռնիկ, զի մեզ համար գոնէ այժմ շատ դժուարին է զայն գործածել. մեր սերմանահան մըշակներու ձեռք բաւական քաջավարժ է սերմ ցանելու համար, ձեռքի բուռը իւր համեմատական չափն է. երբ ուզէ թանձր ցանել բուռը լի կ'առնէ, և երբ նօսր՝ բուռը կծկելով կ'ամփոփէ։

Է, Թոռնիկ, այստեղ միտքս եկաւ յիշեցի և պատմեմ քեզ։ Էր մի ժամանակ, որ գիւղական ժողովուրդ շատ երկիւղած էր, սերմանացանի ժամանակ, նախ կը տանէր սերմն գիւղի քահանային օրհնել տուտար և ապա կը սկսէր ցանել։ Օրհնեալ լինին մեր նախնի եկեղեցւոյ Հայրեր, չեն մոռացած, սերմն օրհնելու համար եւս աղօթք շարադրած են Մաշտոցի կարգին մէջ։ Ես էլ շատ անգամ օրհնել տուած եմ մեր քահանային, որ աղօթք կարդալով կ'ասէր։ «Օրհնեա՛ Տէր Աստուած զսերմն և զսերմանողն, առատատուր ես ի պարգեւս և դու տաս սերմն սերմանողաց. թէպէտ առանց սերման կարող ես յերկրէ հաց հանել. և առանց կերակրոյ զքաղցեալս լցուցանել եւ այլն»։ Այսպէս մեր նախնիք պարզամիտ էին ու հաւատով, սերմն, արտ, չեմարան, այգին, հնձան և այլ ամէն արմտիք և պաղպտերութիւն օրհնել կուտային և տասնորդական բաժին կը հանէին քահանային նոյնպէս եւ վանքերուն։

Թող այս սերմի օրհնութիւն. թէ պատմեմ քեզ, Թոռնիկ, պիտի զարմանաս, սերմանացան տանուտիրոջ երկիւղած ներմուծանդութեան վերայ։ Այն օրէն երբ ցանք կը սկսէր, նա այլեւս տուն չէր դառնար դաշտէն, այլ

բացօթեայ կը մնար, իր գիշերահանգիստ արտին ակօսն էր, մինչեւ լրանար սերմնացանի ժամանակ. դու տեսնայիր թէ ինչպէս կը սկսէր ցանք. նախ և առաջ գօտին պինդ կը կապէր բուռն մի սերմէն առնելով չափկի սըրտալացէն կը ցանէր ծոցին երկու կողմը մինչեւ անթատակեր. յետոյ երեւ խաչակնքելով կը սկսէր ցանել արտը։ Քսան և երեսուն օր կը տեւէր ցանքին աշխատութիւն, մինչեւ կը ծլէին ցանուարի ծոցի հատիկներ, որ արեւ նոցա բաց կուրծքին վերայ զարնելով ջերմութիւն կուտար և ի ներքուստ մշակին քրտինք իբրեւ ցօղ հատիկներ թրջելով ծիլեր կը հանէր։ Եւ այդ բան մի բարեգուշակ նշան կը համարուէր ցանուած արտերուն պըաղաբերութեան. գիտ՞ես Թոռնիկ, ինչպէս արտավարութեան ժամանակն լծատար անասունները այսպէս հեւ սերմանացան իր խորհրդաւոր աղօթքի մրմունջներ ունի։

«Ես կը ցանեմ ո՛վ իմ Աստուած
Դու անձրեւ տուր առատ առատ
Զոր հասիկներ ծըլին հողեն
Պճնին արտերս կանաչ կանաչ.
Եւ ուռճանան հասկեր կապեն
Ասոք ցորեն կարմրահաս
Խընդրեմ, ով Տէր. տուր մեկին տեղ
Երեսուն վարսուն եւ հարիւր
Որ տամ նախ ես իմ տէրութեան
Տասանորդի տուրքն արդար
Եւ ապա տամ պարտատիրոջ
Տոկոսիքներ ծանր ու ծանր,
Ապա գիւղի Եկեղեցուն
Աղքատներուն ել բաժին տանք
Եւ ինչ մընայ այն է միայն
Իմ ընտանեաց հաց եւ նարակ
Եւ հիւրերուն որ գան ու գնան
Ուտեն տանեն ձրի հաց.
Այս է օրենք մեր աշխարհին
Մեր նահապետ պապերէն,
Շինականին դուռն է բաց
Հացն ու սեղան միշտ պատրաստ»։

Կը տեսնե՞ս Թոռնիկ, թէ մեր աշխատութեան արդիւնքէն ո՞րչափ բաժիններ կը լինին. բայց դու երբէք մի վհատիր որքան բաժիններ շատ լինին, այնքան առատ կուտայ Աստուած զի երկրագործին վաստակ լիութեամբ օրհնուած է, չի սպառեր, միայն թէ երկրագործ ժողովուրդ ազատութեան պաշտպանութիւն և խնամք վայելելով՝ կարենայ և հանգիստ և ապահով կերպով երկիր մըշակել և արդիւնաւորել իր անխոնջ աշխատութեամբ։ Եւ քաջ գիտէ Տէրութիւն թէ իւր գանձարանին մեծ աղբիւրը մշակ ժողովուրդի դաշտէն կը բխի. որչափ Տէրութեան տարածեալ թեւոց տակ, բարւոք պաշտպանի այնչափ աւելի եւս կ'առատանայ գանձարանին աղբիւրը։

Չմոռնամ Թոռնիկ, քիչ մը եւս խօսիմ ցանելու ժամանակին և եղանակին վերայ։ Ցանքեր սովորաբար երկու եղանակին մէջ կը լինի, գարնան և աշնան այն է Ապրիլ և Սեպտեմբեր ամիսներ։ Մեր Վասպուրականի գաւառ, ինչպէս նաև Բարձր Հայք, Ալաշկերտ և Մշոյ քանի մը բարձրադիր գաւառներ ընդհանրապէս գարուն անողան կուգայ, և երբեմն մինչեւ Մայիս կը ձգի, որով գարնանացան չի յաջողիր վասն զի անձրեւային եղանակներ կ'անցնին. երկրագործին համար մեծ բախտ է եթէ գարուն շուտ գայ, և ինքն կարենայ Մարտ ամսուն մէջ կամ Ապրիլի սկիզբը գարնանացանի գործը աւարտել, որպէս զի անձրեւներուն կարգ չանցած՝ սերմ հողին մէջ գտնուելով շուտով բուսնի և զօրանայ։

Մեր երկրագործներ շատ մեծ յոյս չունին գարնանացանի յաջողութեան մասին, սորա համար սակաւ կը ցանեն, մինչ ցանքին մեծագոյն մասն աշնանացանքն է, որ սովորաբար կը սկսի Օգոստոս ամսոյ կիսէն, և այս ցանք կը տեւէ մինչեւ Հոկտեմբեր և մերթ եւս կ'անցնի։ Լաւագոյն է Սեպտեմբերէն սկսելով հերկուած արտեր ցանուելն, փորձուած է որ առաջին ցանուած արտերն աւելի կը յաջողին, վասն զի շուտով կը ծլեն և կը բուսնին և արմատ ձգելով կը զօրանան, քանի որ արեւուն զօրութիւն եւս նուազած չէ բաւական կը կանաչին մինչեւ աշնան վերջ ձիւն կուգայ կը ծածկէ, և գարուն գալուն պէս կ'աճին կը բարձրանան ցօրենի ցօղուններ, հասկեր կը կապեն և գրեթէ երեք ամսէն յետոյ Յուլիսի

սկիզբներ մանգաղ ի հունձ կը մտնայ. վասն զի աշնանացան սերմ ամենէն չուտ կը հասնի, և գարնանացան ամենէն վերջի հունձքն է։

Գարնանացանէն և աշնանացանէն զատ մի ուրիշ ցանք եւս կայ, զոր աշնան վերջերը կը թողուն, էն ժամանակ կը ցանեն, որ ձմեռնամուտ կը մտնայ, գետին կը սառի և այլևս սերմին հատիկներ ոչ կը ծլին և ոչ կը բուսանին, այլ այնպէս կը մնան հողին մէջ առանց աճման և գարուն գալուն պէս իսկոյն կը բուսանին գարնանացանէն առաջ, որովհետև արդէն ցանուած ու պատրաստ են և սերմերը կակղացած ու ծլած. մինչդեռ գարնանացան անձրեւներու և օդերու պատճառու ամէն տարի չի յաջողիր, որ չուտ բուսանի։

Կարծեմ բաւական է, այսչափ միայն գրելով սերմի ընտրութեան և սերմանացանի մասին, այժմ պիտի խօսիմ, ջրոյ և արտօրէից ոռոգման վերայ որ արմատաց առատութեան մի կարեւոր միջոցն է։

Ը.

ՋՈՒՐ

ԵՒ ՈՌՈԳՈՒՄՆ ԱՐՏՕՐԷԻՑ ԵՒ ԴԱՇՏԱՅ

Լաւ խելամուտ եղիր, Թոռնիկ, թէ միայն հողը ոչինչ կարէ բուսացնել կամ աճուման տալ եթէ ջուր և անձրեւ չ'ոռոգին զայն. ինքնին ամուլ և անբեր կը լինի հողն եթէ ջրոյ և անձրեւի զուարթարար զօրութիւն չը միանայ իւր հետ։ Ռովանդակ համաատարած աշխարհ անձրեւով կ'ոռոգին, բայց կան շատ տեղեր, որ անձրեւով և ջրով միանգամայն կ'ոռոգին։ Սակայն պէտք է գիտնաս, որ անձրեւ և ձիւն շատ առաւելութիւն ունին, նախ որ երկնից ամպերէն իջնալով ամենաբարձր լեռներ, և դաշտեր կարող են ի միասին հաւասարապէս ոռոգել, բայց գետնէն բխած աղբիւրներ, վազող վտակներ և գետեր՝ միայն հարթ և ցած դաշտավայրերը կ'ոռոգին։ Եւ պէտք է գիտնաս Թոռնիկ, որ գետնի երեսը վազած բովանդակ ջրերու ամենամեծ աւազանը անձրեւէն և ձիւնէն կը գոյա-

նայ. իբրեւ շտեմարան կը ժողովի երկրին ծոցը և ապա երկրի ծոցէն դուրս կը բխին աղբիւրներ, վտակներ եւ մեծ գետեր կը կազմեն։ Մերթ եւս առանց երկրին ծոցն իջնալու, գետնի երեսէն սարերէն կը վազեն, ահագին ջրհեղեղ կը յառաջացնեն տեղատարափ անձրեւներէն յորդելով։

Այսչափ միայն տեղեկութիւն տալով քեզ, մտացի Թոռնիկ, դու ինքնին մտածելով սովրիր, որ այս երկու տարրերքն հողն ու ջուր միանալով բովանդակ բուսական բիւր տեսակ աննման զաւակներ կը ծնին ու կը սնուցանեն։

Եթէ համարինք, որ հողն իբրեւ մայրենի արգանդ սերմեր կ՚ընդունի, յարմար է եթէ ջուրն եւս համարինք իբրեւ հայր, որ կորբուցանէ և կը բեղմնաւորէ հողին արգանդ, որով կը ծնին այնչափ անհուն անհամար բուսականք։ Սկսիմ այդ ցանուած ջրարբի արտերուն վերայ խօսել, թէ ո՞րչափ խնամով պէտք է պատրաստել արտը, որ դիւրին ջրուի և լիապէս ջուր խմէ։ Գարնան անձրեւակարգն անցնելէն յետոյ, բնական է կը սկսին ջրարբի արտեր ծարաւել և սորա նշանն է, երբ մութ կանաչ գոյն կը ստանան. էն ժամանակ պէտք է գիտնաս որ սաստիկ ծարաւած են ջուր կ՚ուզեն։ Եթէ ջուրդ առատ է, պէտք է երկու աւելի ջրկալ բռնես և ջուրը բաշխես ուրիշ ծարաւած արտերուն վերայ, պէտք է լաւ հսկես ջըրկալ բանւորներու վերայ, որ խնամով ջրեն արտ, հաւասարապէս ջուրն արտին ամէն մասերը պէտք է չօշափէ, չը թողուն որ տեղ մի չոր ու ցամաք մնայ, կամ տեղ մի աւելի ժողովելով ջուրը լճանայ, զի այդ եւս վնաս է բոյսերուն։ Վնաս է նաեւ որ թողուի ջուրեր արտի վարի կողմերէն ողողելով դուրս վազեն, այնպէս որ արտին երեսի հողերը դուրս քշեն և բոյսերու արմատներ բանան, ո՛հ, բոյսերն էն ժամանակ արմատահան լինելով կը խըլուին մայրենի ծոցէն և հետեւապէս կը թօշնին և կը չորնան։

Մեր Արճակ գիւղի արտեր բնականապէս պատրաստուած են առանց աշխատութեան, այնչափ հաւասար և դուրան են, որ մի ջրկալ մի ջաղացի ջուր կապելով արտին վերայ, կարող է կառավարել և մի աւուր մէջ մի

քիլա ահղ կը ջրէ, և այնչափ դիւրութիւն ունի որ գիշերն եւս կարող է աշխատիլ։ Միայն արտին հաւասարութիւն բաւական չէ, կարեւոր է նաեւ արտին դիրքին, յարմար կորիններ քաշել ջրատարձի թումբեր կապել, որով ջրկալին աշխատութիւնն՝ առաւել եւս կը դիւրանայ։

Ձգիտեմ, Թոռնիկ, տեսար և դիտեցի՞ր վարագայ վանից արտեր թէ ջրելու ժամանակ ո՞րչափ դժուարութիւն ունին, և ո՞րչափ օրավարձք կ'առնեն ջրկալներ, Դորա պատճառ գիտե՞ս, նախ որ մեծ մասամբ արտերը անհաւասար և դարուվար են, երկրորդ առանց կորի քաշելու կը ջրեն, երրորդ կ'ասեն հողմ արտրան է ջուր չի բռնիլ եւայլն։ Այս ամէն թէ պատճառանք են և թէ նախապաշարմունք, սակի մեծ պատճառը չմտածել եւ աշխատութիւն չը սիրելն է, վասն զի դաւիվար և ջրատար արտեր, տակաւ տակաւ պարզ աշխատութեամբ կարելի է այնպէս կարգադրել, որ երբէք այդ դժուարութիւններ չ'ունենայ, որոց վերայ առանձին պիտի խօսիմ։

Երկրագործ երբ սակի առատ ջուր ունի, նա պէտք է ոչ միայն ցանուած արտերուն ջուրը հոգայ, այլ շատ օգտակար է նաեւ հին խոտավայրեր և խոզան արտերն եւս ջրէ, որ կրկնակի օգուտ ունի. Թէ առատ՝ ինքնաբոյս խոտերով անասնոց արօտ կը մատակարարէ, և թէ արտին զի իւր խոտաբոյսերով ինքն սնունդ կ'առնու, Թէ խոտի Թափուած տերեւներէն, որ կը փտի աղբ կը լինի, և Թէ նոյնիսկ խոտի արմատներէն այժ կը սատնայ, սորա համար է, որ գիւղացիք արտը երկու տարի երեք տարի կորդ կը Թողուն որ հողն ուժոմլնայ, այլ չգիտեն Թէ ինչո՞վ է որ կ'ուժոմլնայ։ Այո՛, խոտաբոյսերն են, որ այժ կուտան արտին։ Դու չես զարմանար, Թոռնիկ, մեր ցանած հատաբոյսեր, յայտնի է որ հողին այժը կ'առնուն, իսկ հողին ինքնաբոյսերն փոխանակ առնելու՝ ուժ կուտան։

Այսպէս նաեւ այս ինքնաբոյս խոտերուն հետ՝ ջուրն եւս իւր առանձին յատկութիւններ ունի ուժ տալու, վասն զի իւր մէջ ով գիտէ ինչ պարարտացուցիչ հիւթեր կը պարունակէ։ Գիտե՛մ Թոռնիկ, դու հետաքրքիր կը լինիս հողին և ջրին բնական յատկութիւններ իմանալ, բայց մտածէ որ Պապիկդ չինական է, համալսարանէն չի

գար, որ իրրեւ բնագէտ ամէն բան բացատրէ քեզ։ Պէտք է, բաւական համարես պարզ դասերու։

Երկրագործութեան համար ջուրին պէտք չատ է և չատ բախտաւոր է այն գիւղ, որ առատաբուխ աղբիւրներ և գետակներ ունի, յայտնի է որ այն գիւղի արդիւնագործութիւն կրկնապատիկ կը լինի։ Բայց այն գիւղեր, որոց բնական աղբիւրներ նուազ են, կամ թէ ունեն գետեր և գետակներ, որք բարձրէն կուգան դաշտերու մէջէն անցնելով կ'երթան կը թափին ծովակներու մէջ, և կամ մեծ գետերուն կը խառնուին, ոչինչ օգուտ չեն ընծայեր խոտաբոյս դաշտերուն և մշակեալ արտերուն։

Ահա քեզ օրինակ մի տամ Թոռնիկ, որ աչքիդ առաջն է, մեր Սրճակ և Խարակոնիս գիւղի միջավայրէն մի գետ կ'անցնի, գրեթէ գարնան սկիզբէն մինչեւ երկու ամիսն աւելի այդ գետին ջուր ընդունայն կ'երթայ, կը թափի մօտ եղած ծովակ, ոչ մեզ և ոչ յիշեալ գիւղի մարդիկ չեն մտածեր այդ գետի ջրէն օգուտ քաղել, վերի կողմերուն արուեստական փոքր փոքր լճակներ կազմել; և դորա համար ո՞րչափ բնական յարմարագոյն տեղեր ունիմք, որոց դիրք վոս և ծոցաւոր է, բաւական է որ չրջապատ հողէ թումբեր քաշուին, և միայն ջրանցի բերան քարուկիրէ մի ակն չինել և գարնան միջոցին գետի ջուրը մէջ թոզ տալով պահել մինչեւ արտօրէից ջրելու ժամանակ։ Մեր նախնիք մեզմէ աւելի խելացի, աշխատասէր և հոգացող միտք ունեցեր են, ժամանակին այդպիսի լճակներ չինած են, որոց աւերակներու տեղեր այժմ կ'երեւին և մեք երբէք հոգատարութիւն չունիմք, գոնէ նորոգել աւերակ լճակներ։ Վանայ արեւելեան լեռներու չրջափակին մէջ մի ընդարձակ հովիտ կայ, որոյ չուրջ բիւրաւոր աղբիւրներ կան որ կը վազեն հովտին ծոցը և կը լճանան։ Էն ժամանակ վանայ կողմեր մի բարի և ճարտար քահանայ կը լինի, որ իւր պաշտօնէն դուրս ժողովրդի արտերու ջուրն էլ կը մտածէ. ուստի հովտին վարի նեղ բերան մի քարուկիր թումբ չինելով, այդ լիճ պատրաստած է. սորա համար տեղացիք Քեհիս կեօլ կ'անուանեն։ Այս լճին ջուր այնքան առատ է որ վանայ չրջապատի արտօրայքը կ'ոռոգէ որ չատ ընդարձակ են, նմանապէս նորատունկ այգեստաններ, որոց ար-

դիւնաչատ պաղաքերութիւն կը պարտին այդ քահանայի մեծագործութեան, որ իր հոգեւորական անտեսութեան հետ՝ հացի անտեսութիւն ևս հոգացեր է, իր անուն մեզ անյայտ է, բայց իր արդիւնական յիշատակով կ'օրհնուի այսօր ժողովուրդին։ Կան չատ ուրիշ գաւառներ, որոց դաշտամէջէն կ'անցնին մեծ և փոքր գետեր առանց ոմն մի ջուր տալու ինչպէս Մշոյ դաշտի Եփրատ և Մեղրագետ։ Այժմ կը տեսնուի Եփրատ գետի վերակոչմամբ մի մեծ ջրանցքի հետք, զոր ժամանակաւ բացած է կ'ասեն մի հոգացող սիրապետ, որ Մշոյ դաշտի բաւական մի մեծ մասն ոռոգած է։ Ափսոս որ ժողովուրդ չունի հոգածութիւն պահել ու բանալ այդ մեծ առուն և ջրել այնչափ անջրդի մնացեալ արտեր։ Դրախտի գետ կ'անցնի կ'երթայ մինչ ջուր կը խնայէ՞ իր չուրջ բնակած քնիկ ժողովուրդին, ո՛չ, ժողովուրդ ծոյլ ու յոյլ է, ամէն բան ինքնապատրաստ կ'ուզէ, ինչպէս երկնքէն անձրեւ կը տեղայ նոյնպէս պէտք է եւս գետերուն ջուր ինքնին վազէ և ջրէ իր արտերը։ Հոգացող Աստուած չատ բան նախապատրաստած է մարդոյն համար, բայց փոքրիկ աշխատութեան բաժին մի եւս մեզ համար թողած է, որպէսզի կատարուի իր սիրական անյեղլի վճիռն և մարդ իր ճակատի քրտանց վաստակով իր հաց ճարէ։

Դու գիտես, Թոռնիկ, ջուր մեծ կարեւորութիւն ունի գիւղական ժողովուրդին համար, և կը տեսնես արտերը ջրելու ժամանակ որքա՞ն կապ և կռիւ կը հանեն, և մինչեւ անգամ արիւն ջուրին հետ կը խառնուի, ասոր համար ես ուզեցի որ ազատ լինիմ այդ սոսկալի կռիւներէն, ես առանձին ինքնաչխատ, իմ ձեռքովս երկու փոքրիկ լճեր պատրաստեցի մեր արտերուն համար որ բաւական կը լինի։ Այժմէն պատուէր կուտամ քեզ Թոռնիկ, միշտ աշխատես այդ լճակներու ծուծերը հաստատ պահել, և ջրատար տեղեր ամէն աշնան վերջերը նորոգել· որով թէ արտերուդ առատ ջուր կուտաս, առատ արդիւնք կը քաղես, և թէ գիւղացւոց կռիւ կռիւներէն ազատ կը մնաս, և միանգամայն գեղացի դրացիներուն մի օգտակար օրինակ ցոյց կուտաս, որ նաքա եւս հետեւելով ձեր օրինակին, իւրաքանչիւր առնուաէր իր արտերու համար աշխատի նոյնպիսի լճակներ պատրաստել, որոյ շա-

հնկան արդիւնք բազմապատիկ է, վասն զի արուեստական լճակներ ոչ միայն ջուր կը մատակարարեն արտօրէից, այլ և մարգագետին դառնալով լճատեղիները առատ խոտ կը բուսանին, և միանգամայն կանաչաթոյս արօտատեղի կը լինին անասնոց։ Տակաւին շատ զանազան կերպեր կան ջրամբարներ պատրաստելու համար, այսքանս միայն բաւ է, կ'անցնիմ այժմ արտօրէից բաժանման և կարգադրութեան վերայ խօսիլ, որ խիստ կարեւոր է և կապակցութիւն ունի այս գասիս հետը։

Թ.

ԱՐՏՕՐԷԻՑ ԲԱԺԱՆՈՒՄՆ

ԵՒ ՀԱՒԱՍԱՐ ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ

Լաւ ուշադիր եղիր, Թոռնիկ, զի այս գասը հրկրագործին համար շատ կարեւոր մի գաս է, որ նա գիտնայ իւր արտեր բարեւոք կարգադրել և բաժնել։ Նախ և առաջ պէտք է իւրաքանչիւր արտերու սահմանը իրարմէ որոշել, և արտամէջ տեղեր թողնել որ գոնէ հրեք կանգուն չափ լայնութիւն ունենայ։ Այս արտամէջ տեղեր որ առանց հերկելու միշտ պէտք է կորդ մնան, չէ թէ միայն ճանապարհի համար է որ սայլեր դիւրութեամբ քալեն պինդ գետնի վերայ, այլ առուել խոտաբոյսերու համար շատ կարեւոր է. եթէ մեզ համար ցորենաբոյս մեծ պիտանութիւն ունի, հապա աշխատող անասնոց համար ո՞րչափ պէտք են խոտաբոյսեր, երբ արտերուն եզերք գտնուելով իբրեւ պատրաստի արօտատեղ կը լինին տաւարներուն, որ գութանէն արձակուելով՝ անմիջապէս արածելու տեղ կը գտնեն հարկ չի մնար հեռաւոր տեղեր տանելու։ Հին ժամանակ որ ես տեսած եմ ընդարձակ արտամէջեր կային, զի մեր նախնիք շատ հոգացող եւ խղճմտանքով մարդիկ էին, անասնոց վերայ կարեկցութեամբ, գութ և խնամք ունէին։ Բայց արդի ժամանակ այդ առաքինութիւն բարձուած է գիւղական ժողովուրդի սրէն, որ միայն իւր հաց մտածել գիտէ, իսկ խեղճ անասնոց համար ոչինչ փոյթ չունի։

Այժմ կը տեսնա՞ս, Թոռնիկ, թէ ինչպէս արտ արտի

կցուած և ոչ քայլ մի անգամ միջոց մնացած է։ Եթէ յաջողի մի արտի տէր իր դրացիէն յառաջ լծել գութան, նա կը ջանայ արեւուն առաջ յայտնի կերպով քանի մը ակօս գողնալ դրացիի արտէն, և խառնել իր արտին և այսպէս առանց խղճի գողնալով ընկերոջ բաժնի հողէն մեծ անիրաւութիւն կը գործէ, որուն հետեւանք կը լինի անվերջանալի կագ ու կռիւ երկու դրացիներու մէջ։

Սորա համար շատ և շատ կարեւոր է, որ ամէն արտատէր՝ իր արտին շրջապատ թումբ քաշելով որոշէ ճըշտութեամբ իր արտին սահմանն. որով ոչ միայն իր սեփհականութիւն կ՚ապահովի, այլ աւելի ուրիշ օգուտ ևս ունի արտին շրջափակ թումբ, որ արտը ջրուած ժամանակ ջուրն արտէն դուրս չի վազեր ողողելով և հեղեղատներ բանալով յորդ անձրեւներու ժամանակ, մանաւանդ երբ արտը հաւասարութիւն չունի դար ու փոս է։

Արտերու բարեկարգութեան մասին մի պայման էլ այն է արտին փոս տեղեր հաւասարել, այնպէս որ արտին տարածութեան մակերեւոյթ մէկ ծայրէն միւս ծայր հաւասար և չիտակ լինի, և այդ շատ դիւրութեամբ կը լինի, ոչ միայն ձեռքի աշխատութեամբ, այլ նա և թէ անձրեւ և թէ ջուրը բնականապէս դարերուն հողերը ողողելով փոս տեղեր կը լեցնեն և ինքնին կը հաւասարին։ Միայն թէ բաւական չէ արտին շրջափակ թումբ, պէտք է արտին մեծութեան և դիրքին համեմատ թումբեր քաշուին, պարզ օրինակով բացատրեմ քեզ, Թոռնիկ, որ լաւ ըմբռնես։

Եթէ մի արտ ունիք, որ երկու հարիւր կանգուն երկարութիւն ունենայ և հարիւր կանգուն լայնութիւն, և այդ արտ երկարութեան վերի ծայրէն սկսեալ մինչեւ վարի ծայր աստիճանաբար դարուվար լինի, ի՞նչպէս պէտք է հաւասարել։ Շատ դիւրութեամբ կը հաւասարի եթէ արտի լայնութեան կողմէն մինչեւ միւս լայնութեան եզր թումբեր քաշուին երկու կամ երեք տեղ ի նկատի առնելով առապարին բարձրութեան և ցածութեան դիրք. եթէ խիստ առապար է, պէտք է յիսունական կանգուն չափել և թումբ քաշել. իսկ եթէ առապար այնքան զառիվար չէ, բաւական է եօթանասուն և հինգ կանգունին մի թումբ քաշել, որով արտը չորս կամ երեք մասի

կը թամնուի։ Թումբեր պէտք է քիչ քիչ քաշուին, ամէն տարի գարնան և աշնան աշխատելով, պիտի տեսնաս որ երկու և երեք տարուան մէջ արտը հաւասարութեան տափձան գտած է։

Կ՛ Թոռնիկ, գիտեմ պիտի ասես թէ արտը իւր ամբողջութենէն բաւական կը կորսնցնէ այդ թումբերուն համար։ Ո՛չ, այդ հաշիւը սխալ է Թոռնիկ, ոչ միայն չէ կորսնցնէր այլ մեծապէս կը շահի, վասն զի արտին պտղաբերութիւն կրկնապատիկ ըլլալով՝ կորսնցուցած տեղերուն հաշիւը կը լեցնէ։ Եւ միթէ այդ թումբեր իրենց շահն և օգուտ չունի՞ն, ցանէ անոնց վերայ առուոյտ սերմն, տես ինչպէս պտտուական կը լինի, թէ իւր արմատներով թումբ կ՚ամրացնէ և թէ առատ և զօրաւոր խոտ կը ստանաս ձմերան համար։

Այժմ խօսիմ, Թոռնիկ, արտերու մաքրութեան մասին, որ երկրագործին աշխատութեան մի գործ պէտք է լինի, միշտ ամենայն խնամով արտերէն դուրս հանել մաքրել, եթէ կան իւր մէջ այնպիսի քարեր, որ հերկագործութեան և հնձելու ժամանակ արգելք կը լինին։ Թո՛ղ արտին երեսը երեւցած քարեր, կը գտնուին նա և հողին տակ խոշոր քարեր, որք հերկուած ժամանակ գութանի խոփին զարնուելով կը կոտրեն զայն. գութան կը դադրի մինչեւ խոփը քաղաք տարուելով շինուի, որով բաւական ժամանակ պարապ կ՚անցնի։ Ուստի լաւ է որ այդ պատահած քարերը փորելով գետնի տակէն հանեն և արտէն դուրս վարեն։ Փորձուած է, գութանի խոփերն ուրիշ պատճառներով էլ կը կոտրին. սորա համար կարող երկրագործ նախահոգ լինելով պէտք է ուրիշ պատրաստ խոփ մի ես ունենայ, որ ի դիպել հարկին գործածէ, և չթողու որ աշխատութեան օրը պարապ անցնի։

Քարեր մաքրելէն յետոյ, կարեւոր նա և բարձրաբոյս դաժան փշեր և ուրիշ մոլախոտեր արմատահան անելով մաքրել։ Դու յիշէ այստեղ Թոռնիկ Աւետարանին առակը, թէ փուշեր կը խեղդեն սերմերը և անպտուղ կը լինին։ Աւելի հոգ տանելու է որոմնաբոյս խլել արտէն երբ ցորենին հետ կ՚աճի և կը բարձրանայ, էն ժամանակ շատ դիւրին է որոմ ցորենաբոյսէն ժողովել։ Կը ցաւիմ որ Վանայ երկրագործներ շատ անհոգ են այս մասին, կը

թողուն որ որոմն ցորենին հետ հնձուելով խառնուի, և ի միասին կասելով կը ժողվեն շտեմարանը. և գիտե՞ս որչա՞փ դժուարին է յետոյ ցորեն մաղելով որոմներ ջոկել, կան շատ գաւառներ որ ցորեան լուանալու մեծ հանդէս կ'ընեն, բոլոր ընտանիք կ'երթան ջրաղաց, և այնտեղ օրերով մնալով մեծ խնամով կը լուանան ցորեն, ոչ միայն որոմն՝ այլ և մանր քարեր և ուրիշ օտար սերմնահատեր ամբողջովին կը մաքրեն և ապա կ'աղան, որով հացն անխառն և շատ մաքուր կը լինի։

Բայց որմնաբոյսեր ցորենէն զատելու համար աւելի դիւրին միջոց այն է որ, կանխապէս դէռ արտ չը հնձուած արտի մէջէն քաղել, երբ որմն փունջ փունջ կը բարձրանայ ցորենաբոյսին հաւասար և կըսկսի հասկ կապել։ ինչպէս տեղեկացած եմ, սորա օրինակ կուտան մեզ Խարբերդու մրաջանկ ընտանիք, որ ժամանակին կը թափին արտերու մէջ և որմի փնջեր ամբողջ դուրս կը քաշեն, որով ցորենի աճումն աւելի եւս կը զօրանայ, վասն զի ամէն ինքնաբոյս խոտեր, որչափ շատ բուսնին մի արտի մէջ այնչափ աւելի մեր ցանած սերմի աճումն կը ճնշեն և կը ջլատեն։ Զարմանալի է, Թոռնիկ, որ այդ ինքնաբոյս անմշակ խոտեր աւելի կը զօրանան, և կը յօրանան, Առակ է այս, որ կը խօսին իմաստուն մարդիկ թէ ինքնածին բոյսեր իբրև հարազատ զաւակ կը համարուին մայր հողին, զորոնք աւելի կը սնուցանէ իւր կաթով և հիւթով, իսկ մեր ցանած սերմն իբրև խորթ զաւակներ կը համարուին։ Բայց մայր հողին բնական զօրութիւն անխտիր և հաւասար է ամէն բոյսերուն համար, նա հնազանդ է Աստուածադիր բնական օրէնքին, աշխարհիս մարդկանց մայրերուն չի նմանիր որ հարազատ զաւակներ միայն կը սիրեն և խորթեր ատելով կ'ատեն։

Հետաքրքիր կը լինի՞ս, Թոռնիկ, թէ ի՞նչ է բնական պատճառ և թէ ինչո՞ւ համար կ'ուզեմք օտարաբոյս խոտերը քաղհանք անել մեր մշակած երկրէն։

Երանի՜ թէ կարենայի գիտնականապէս բացատրել քեզ դորա պատճառ, բայց ժողովուրդ փորձով հասկցած է, որ ինքնաբոյս խոտերը մեր ցանած սերմնաբոյսերուն բնաւոր թշնամի են, վասն զի իրենք աւելի աճելով ու զօրանալով կը նուաճեն և կը խեղդեն մեր բոյսերը. չեն

թողուր որ աճին և զօրանան, ուստի քաղհանք անելով արմատով դուրս կուտան, էն ժամանակ կը տեսնես որ ընտանի բոյսեր չուտով կը սկսին աճել։

Սրվիր, Թոռնիկ, թէ ինչպէս է սորա ներքին և բնական պատճառ, ինձ կը թուի որ բոյսեր որչափ ցանցառ լինին, այնչափ աւելի ուժով և չուտով կը զօրանան, որովհետև աւելի հիւթ և սնունդ կ'ընդունին մայր հողէն, և քաղհանք եղած բոյսերուն քաժին հիւթը իրենք կը ծծին և կ'աւճանան։ Ժողովուրդին մի խօսած առածը պարզապէս կը հասկցունէ այս միտքը. թէ «սոխին ցօր գլուխ կը ձգէ»։ Միթէ չունի՞մք աւելի բնական օրինակ, մեր մայր երք երկաւորեակ ծնի, նորա ամինքներուն կաթը քաժին կը լինի երկու զաւակաց, այլ երք մի հատիկ զաւակ ծնի, երկու առանց կաթը միանգամայն քաժին կը հնայ նորածին մանկան, որով կաթնկեր մանուկն աւելի առատ ծծելով աւելի կը զօրանայ։ Այս չափս հերիք է արտերու մաքրութեան մասին, կարգն է այժմ, որ խօսիմ հողին պարարտութեան վերայ, որ կատարելու երկրագործին չունն ու վատտակ, եթէ գիտնայ ի գործ դնել ամէն այն միջոցներ որ հողին ուժը և պարարտութիւն կուտան։

Ժ.

ՄԱՅՐ ՀՈՂԻՆ

ՏԿԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԶՕՐՈՒԹԻՒՆ

Փորձ ինքնին իրրեւ վարժապետ կ'ուսուցանէ մեզ, Թոռնիկ, երբ յաճախ առանց հանգիստ տալու մի արտ կը վարեմք և կը ցանեմք, կը տեսնեմք որ առաջի տարին մեծ արդիւնք կուտայ, հետեւեալ տարին կը սկսի նուազիլ երրորդ տարին քոլորովին սկարանալով ապարդիւն կը լինի։ Գիւղական ժողովուրդ ի վաղուց անտի փորձելով գիտէ այս բան. ուստի երկու կերպ միջոցներ ի գործ կը դնէ, վերատին սկարացած հողին ուժ տալ, կամ թող կուտայ, մի քանի տարի որ արտը ինքնին հանգչի և ուժ առանալով պարարտանայ. կամ ազբ տալով արտին պակասած ուժին տեղ լեցնելով կը մշակէ, և այսպէս արտը

պարապ չի թողուր, ամէն տարի կը վարէ կը ցանէ և արդիւնք կ'առնայ, միայն թէ գիտնայ սերմն փոխել, այսինքն եթէ առաջի տարին ցորեն ցանած է, յաջորդ տարին պէտք է խոտ ցանէ և կամ արտն աղբելով բանջարեղէն մշակէ, և աշնան վերջ բանջարեղէնք կը վերնան կարող է արտը վարել և ցորեն ցանել, որով կրկնապատիկ արդիւնք կ'առնայ հետեւեալ տարին։ Վանայ քաղաքացի երկրագործներ շատ լաւ գիտեն մշակութեան այս կերպ։ Իսկ մեր գիւղական ժողովուրդ իւր արտերուն ուժ տալու համար մեծ միջոցներ ունի իւր ձեռք, չեմ ասեր որ այնչափ տգէտ է, որ չգիտէ, զի քաղաքացի երկրագործաց օրինակ իւր աչքին առաջն է. այլ աւելի պէտք է ասել թէ ծոյլ է և աւելի աշխատութիւն չի սիրեր, և ինչպէս նախորդ դասերուս մէջ խօսեցայ, մի մեծ պատճառն ես այն է, որ չափէն աւելի հողեր ունի իւր ձեռք կը թողու անվար, որ միայն կորդ մնալով ուժովնան։

Կը տեսնա՞ս, Թոռնիկ, ահա մեր գիւղը աչքիդ առաջն է, որչա՞փ մոխրակոյտեր կան, որ ամէն մի տան առաջ մեծ մեծ բլուրներ կազմեր. թող մոխրակոյտներ շատ աւելորդ կուլեր կան աստ անդ փողոցներու մէջ, ոտքի տակ հող կը դառնան, մեր ապուշ երկրագործներ չգիտեն գործածել այդ պիտանի և պարարտացուցիչ աղբերու կոյտեր։ Միթէ դժուարի՞ն է ի գործն և աշնան փոքրիկ սայլակներով աղբակոյտ փոխադրել արտերը, որով հողին սպառած ուժը վերստին իրեն տալով՝ հողն արդէն կը նորոգի և կը սկսի նոյն առաջին արդիւնք տալ։ Գիտե՞ս, Թոռնիկ, այս մի բնական օրէնք է. հողն ևս մարդոյն պէս իւր կեանքն ունի, եթէ զայն չարունակ գործածելով վարես, ցանես, առանց երբէք ուժ տալու, գիտես թէ՝ կը ծերանայ ամուլ կը դառնայ, և կը դադրի իւր պտղաբերութենէն։ Կ'ասեն թէ ,Եւրոպիոյ աշխարհին հողերը, վերջին աստիճան ծերացած են։ Բայց ի՞նչ կ'անէ այդ ժրագործ արուեստագէտ ժողովուրդը. այնչափ միջոցներ գըտեր է հողին ուժ տալու, որով այդ ծերացած հողը երիտասարդ կը դառնայ և բազմածին պտուղներ յառաջ կը բերէ։ Մարդ կը զարմանայ, երբ կը լսեմք թէ Ամերիկայի հեռաւոր աշխարհէն նաւերով աղբ կը փոխադրուի յԵւրոպայ։ Կը տեսնա՞ս դու, այդ մեր աչքին անարգեալ

ազգն ևս վաճառականութեան կարգն անցած է, զի երկրագործին համար չատ պիտանի և թանկագին է աղբ, քան թէ ադամանդ, որ թէպէտ այդ պատուական քարն ազնուականաց համար մեծ վայելչութիւն է, սակայն երբ սովալլուկ լինի մարդ ադամանդ կը ծախէ և հաց կը ճարէ։

Աւա՛ղ կարդամ մեր ծուլութեան, և առաւել մեր ապշութեան, Թոռնիկ, մեր աղբ Ամերիկայէն չի գար, այլ մեր տան դռներու առաջ դիզուած է լեռնաչափ, և մինք անձմեռ լինելով կը դժուարիմք մինչև արտ փոխադրել։ Ոչ միայն պէտք էր մտածէինք մեր արտերու պազարեցութեան համար, այլ և պէտք է խորհէինք գիւղի հրապարակին և փողոցներու մաքրութեան համար։

Է՛, Թոռնիկ, կարծեմ քիչ մի աւելի խօսեցայ և դառնացի, միթէ չինական ժողովուրդ առանց կրթութեան կարո՞ղ է մաքրութեան գաղափար և ճաշակ ունենալ։ Արդարութիւն չէ առանց կրթութեան մեղադրել գիւղական ժողովուրդ, որ մոլ ագիտութիւն, կեանքի բազմադիմի ցաւերով պաշարուած է, մի կողմէն և խոր նախապաշարմունք կաշկանդեր կապեր է նորա բնական միտք։ Եթէ ասես, Աղբէր կիրակոս, ձեր դրան առաջ այնչափ աղբեր դիզուած են, ինչո՞ւ չես կրնար թափեր արտերուդ մէջ։ Է՛, կը պատասխանէ էդ մի աւելի աշխատութիւն է, ինձ համար տարին քանի մի արտ պէտք է, կը վարեմ կը ցանեմ, մնացեալները կը թողում կորդ թող երթան ինքնին ուժոմլան, մեր նախնիք առանց աղբի կը մշակէին, մինչ հաց չէի՞ն վաստակեր, վկայ կը բերեմ բանիս բոլոր յաւիտենական մոխրակոյտեր, որ ի նախնեաց անտի դիզուած են, հո մինք չը դիզեցինք։ Ահա քեզ չինական փաստաբանութիւն, այնպէս մտածելով ու խօսելով՝ նա կը մնայ անշարժ իր մտած պաշարման մէջ, և մոխրակոյտն ևս իր տեղ կը մնայ։ Դեռ սպասել պէտք է ուրեմն ժամանակին և կրթութեան որ գան և չարժեն չինական ժողովուրդին միտքը դէպ յառաջդիմութիւն, նա յայնժամ ինքնին կը ճանչնայ աղբին պիտանութիւն և այժմեան գիւղի աղբակոյտերը՝ բոլոր պիտի կրնն տանին թափին իրենց արտերու մէջ, կառնելով և յափշտակելով իրարու ձեռքէն։ Բաւ է, որ նորա արդիւնաբերութիւն միան-

գամ փորձով տեսնան, և համոզուին թէ որչա՞փ շահեկան է աղբն արտին համար։ Այժմ պէտք է խօսիմ աղբին պատրաստութեան մասին, թէ ինչպէս պէտք է ժողվել և պատրաստել զայն, որ առաւել օգտակար լինի։

Եթէ գիւղին մէջ իւրաքանչիւր տնէն գոյացած աղբեր հասած տեղթափուելով միան այնպէս, ինչպէս այժմ և լինին մէկ մէկ հողաբլուր, ոչինչ օգուտ չունին. նախ՝ որ արեւուն ջերմութիւն աղբերուն հիւթական զօրութիւն կը քաշէ, երկրորդ, տեղատարափ անձրեւներ գալով կ'ողողէ աղբանոցը և անոնց մէջ եղած հիւթն և զօրութիւն կ'առնու կը տանի, այլ եւ աղբակոյտն ցամքելով իւր հիւթական զօրութենէն, անպիտան և անշահեկան կը դառնայ։ Ուստի գիւղացւոց իւրաքանչիւր տներ, պէտք է առանձին առանձին իրենց համար յատուկ աղբանոցներ պատրաստեն ուր որ յարմար, նախապէս գիտնալով թէ որչափ աղբ կը գոյանայ տարուան մէջ, նոյն քանակութեան համեմատ երկար քառակուսի փոսեր պէտք է բանան, գոնէ երկու կանգուն խորութեամբ, այնպէս որ եթէ անձըրեւի, և թէ հալած ձիւներուն ջրերը երբէք աղբանոցի փոսերէն դուրս չը վազեն։ Կարեւոր է գիտնալ նաև թէ աղբանոցի մէջ թափուելիք նիւթեր ի՛նչ են, և օ՞րչափ զանազան բաներէ կը բաղկանայ աղբ։ Թոնրի մոխիր, կոյանոցներու աւելորդը, փտած յարդեր և խոտեր, տան աւելցուքներ, կալատեղէն մնացած խոշոր խզուզի յարդեր, որ անասուն չուտեր, մսուրներու մէջի կրծոն աւելուցք և այլն։ Ահա այս ամէն բաներ աղբանոցին համար նիւթ կը լինին, մոռացած ցիչելու աւրուած պտուղի ժամիկներ, և նման բաներ, որք առհասարակ աղբանոցին նիւթ կը կազմեն, որք մէկ տեղ խառնուելով կը փտին, կը խըմորին և կը թթուին, մի զօրաւոր նիւթ կը դառնան երկրին պարարտութեան համար։

Խօսիմ արդ, թէ ինչ ժամանակ յարմար է արտերն աղբել։ Թէ սկիզբն գարնան և թէ աշնան վերջ ճիշդ ժամանակն է. բանջարեղինաց պարտէզներ սովորաբար գարնան ցանելու ժամանակ կ'աղբեն, նմանապէս գարնանացան սերմերու արտեր թէ ցորեն լինի, թէ գարի և կամ ուրիշ հնդեղէն բաներ։ Բայց աւելի լաւագոյն և օգտակար է աշնան ժամանակ աղբել այն արտերը, որոնք աշնան

հերկուած են, և գարնան դարձեալ հարօրավար պիտի լինին ցանելու համար. գիտե՞ս, Թոռնիկ, և ես փորձած եմ որչա՞փ չահեկան և արդիւնաւոր կը լինի, եթէ աշնան ադրուին և հաւասար տարածուին արտին երեսը։ Նախ անձրեւ և ապա ձիւնը գալով ադրին զօրութիւն ամբողջապէս կը թափանցի հողին, և մինչեւ ի գարնան հողն ադրին ուժով կը պարարտանայ, մինչդեռ գարնան ադր նոյն ազդեցութիւն չունի հողին վերայ, վասնզի եթէ անձրեւ պակաս լինի, արեւուս ջերմութիւն ադրին կազային զօրութիւն կը քաշէ ի վեր, որով այնչափ արդիւնաբեր չի լինիր ադրուած արտը։ Թո՛ղ այս, երկրագործը աշնան աւելի ժամանակ կ'ունենայ ադր կրկել արտը, քան թէ գարնան որ ցանքի և այլ աշխատութեան օրեր են։ Նոյն իսկ ձմեռան օրերը երբ տակաւին այնչափ ձիւն և ցուրտ արգիլք չի լար, ժրագօտի երկրագործ կարող է ադրեր կրկել արտը և ամիջապէս ցրուել։

Ադրին պիտանութեան վրայ, այսչափս միայն խօսելով, քեզ կը թողում, Թոռնիկ, որ գործնական փորձով դու ինքնին իմանաս նորա արդիւնաբեր չահեկանութիւն և չթողուս որ ամէն մի ադրանիւթ բաներ՝ ընդունայն տեղ վատնուին։

ԺԱ.

ՀՈՒՆՁԲ

Երկրագործին համար որչա՞փ ուրախութիւն այն օրը, երբ նա կ'երթայ տեսնել իր արտորայք թէ հասա՞ծ են, և երբ կը տեսնայ որ հասկաւորիակ ցորենաբոյսեր չիկակարմիր գոյներով կը ծածանին մեղմաշունչ հովերէն. վա՛շ, կ'ասէ, հնձելու ժամանակ հասած է լի ցնծութեամբ ի տուն կը դառնայ տեսիս կուտայ բոլոր ընտանեաց. խնկոյն կը պատրաստուին, տան աշխատաւոր կարիճ երիտասարդներ, և թէ բաւական չը լինին երբեմն օրավարձով մշակներ ևս կը բռնեն, և այսպէս արտերուն հունձք կը սկսի։

Մի քարի սովորութիւն կար ի նախնեաց անտի գիւղական ժողովուրդին, որու արտ որ չուտ հասնէր, դրա-

ցիք և բարեկամք կ՚երթային յօգն, նախ նրա արտ կը քաղէին և ապա փոխադարձաբար ինքն ևս կ՚երթար անոնց արտը կը քաղէր, և այսպէս իրարու օգնելով համաշխատ կերպով, բովանդակ գիւղացւոց արտերը ամբողջապէս կը քաղուէին, թէպէտ այս գեղեցիկ սովորութիւն այժմ շատ նուազած է, աստի յայտնի է, որ ընկերական ոգւոյ եռանդն ևս պակսած է։

Աշխատիր, Թոռնիկ, որ դու, քո արտ քո ձեռքով քաղես, ուրիշի օգնութեան չը կարօտիս։ Սորա համար ես քեզ մի առակ խօսիմ, որ շատ տեղ գրուած է։ Արտուտիկ Թռչուն մի կայ որ բնականէն խելացի և անաես է, իւր բոյն արտերուն մէջ կը դնէ, ուր որ կուտ ու հատիկներ պակաս չեն։ Սա իւր ձագերուն ապագայ վտանգ գիտնալով առաջուց խրատ կուտայ, որ մտիկ անեն ձագեր և պատմեն իրեն, երբ արտին տէր հնձելու ժամանակ մօտենալով կուգայ տեսնել թէ արտ հասած է։ Առաջին անգամ գալով կ՚ասէ, տղաս, արտ հասնելու մօտ է, գնա խօսիր մեր բարեկամաց թող մեզի յօգն գան արտը քաղենք։ Մտադիր ձագեր այս բան կը պատմեն իրենց մօր. մայր կ՚ասէ, անհոգ եղիք ձագեր, քանի որ տանուտէր բարեկամաց պիտի սպասէ, արտ չի քաղուիր։ Միւս անգամ կուգայ հնձոց տէր կը տեսնայ որ արտ հասեր է բոլորովին, կ՚ասէ, տղաս բարեկամներ չեկան գոնէ մեր դրացիներուն լուր տուր թող գան օգնեն մեզ փոխադարձաբար, ի՞նչ կը լինի, մենք էլ կ՚երթանք անոնց կ՚օգնենք, ուշիմ ձագերն այս խօսքեր կը պատմեն իրենց մօրը։ Մայր դարձեալ նոյն բան կ՚ասէ, ապահով եղիք ձագերս արտ չի քաղուեր քանի որ բարեկամներու օգնութեան մնացեր է բանը։ Երրորդ անգամ կուգայ տանուտէր, կը տեսնայ որ հնձելու ժամանակ անցե՛ր և ցորենաբոյսեր չորցեր ու կծղեր են՝ ո՜հ, կ՚ասէ տղաս, խաբուեցանք, այլևս ոչ բարեկամներէն յոյս կայ և ոչ դրացիներէն, գնա շուտով առ բեր մանգաղներ, մենք մեր արտ քաղենք։ Այժմ կը հաւատամ ձագերս, որ արտ պիտի քաղուի, եկէք զքեզ փոխադրեմ ուրիշ տեղ։

Այս առակ թող քեզ խրատ լինի, Թոռնիկ, երբէք մաքէդ չը հանես և յուսախաբ չը լինես. ժիր երկրագործ իւր վարած ցանած արտը պէտք է իւր ձեռքով քաղէ,



ՏԵՍԱՐԱՆ ՄԸ ՎԱՆԱՑ ԾԸՎԸՍՏԱՆ ԳԻՒՂԷՆ
Կ Ա Լ Ը

Դու հարցո՛ւր, Թոռնիկ, այս անխիղճ եւ անիրաւ վաճխառուներու ձեռքեն մեր գիւղացի ժողովուրդն ե՞րբ պիտի ազատուի, որ թող կալի ցորեն, մեր արտերն եւս կը գրաւեն, որ մեր կեանքն ու ապաւէն է:

Միայն անբան եզներ չեն, որ ակօս կը ծռեն, ո՞րչափ ակօս ծռող մարդիկ կան, որոնց գործն ու կեանք երբէք ուղղութիւն չ'ունին. այդ ակօս ծռողներուն երեսէն է, որ աճխարհի բան ծուռ կ'երթայ, նոյնիսկ մեր գիւղի մէջ ո՞րչափ ակօս ծռողներ կան:

Արդար է այն մարդ, որ միայն իւր հրացն հացով կ'ապրի. անիրաւ է այն մարդ, որ առանց աշխատութեան ուրիշի հրացն հաց կ'ուտէ:

վասն զի գուցէ օգնող դրացւոյն արտը քո արտին հետ հասնի ի հունձ, միթէ կարելի՞ է, որ նա թողու իւր հունձքը և գայ քո արտը հնձէ։ Աշխատիր որ հնձոց ժամանակ չանցնի, որով թէ դժուարաւ կը քաղուին և թէ հասկեր թափուելով մեծ վնաս կը լինի։

Եւ երբ հնձոց ժամանակ օրավարձ սարակներ կը բըռնես, լաւ խնամ տար նոցա, թէ հացով թէ կերակուրով. կան ոմանք որ չարաչար կը վարին աշխատող մշակներուն հետ, որք ուժէ լքուած վաստակաբեկ կը լինին։ Երբ կէսաւուր հաց կ'ուտեն հնձող մշակներ, ո՞րչափ բարեսիրտ կը լինիս Թոռնիկ, եթէ թողուս այն կէսաւուր չոգին, խոնջած աշխատաւորներ դէզերուն հովանեաց տակ ցորենի խուրձեր բարձր անելով գոնէ մի ժամու չափ անուշ քուն քաշեն, յետոյ ելնեն մանգաղներ սրեն և սկսեն քաղ։ Շատ ուրիշ գաւառներ այս սովրութիւն ունին, միայն Վանայ գաւառն է, որ անխիղճ կը վարուի մշակներու հետ։

Եւ գիտե՞ս դու Թոռնիկ, որ մեր հնձողներ շատ ախորժակով կուշտ հաց կ'ուտեն. ո՞րչափ վնասակար է մարդոյ առողջութեան, երբ այնպէս առանց միջոց տալու ելնեն և լիք փորով ծռին և մանգաղ քաշեն, թող այս արտեսապէս էլ վնաս է տանուտիրոջ, վասն զի հնձող մշակն որդէն խոնջած է, և հաց ուտելով աւելի եւս կը ծանրանայ։ Բնական է որ նա անմիջապէս գործի սկսելով, նա չի կարող ջանքով աշխատել։ Բայց երբ նա փոքր ինչ քնով կազդուրուելով կ'ուժաւորի, ստամոքսի ծանրութիւն կը թեթեւնայ, տես դու այն ժամանակ ո՞րչափ աշխուժով մանգաղ կը շարժէ, այնպէս որ, նա մի ժամուայ քնոյ տեղ կրկնակի աշխատութեամբ կը լեցնէ։

Նախորդ դասերուս մէջ կը յիշե՞ս, Թոռնիկ, հարեւանցի կերպով խօսեցայ, որ գերանդին՝ շատ մեծ առաւելութիւն ունի մանգաղէն, միայն թէ կանխես և ցորենի եղած ժամանակ հնձես, որ այլեւս հատիկներ չեն թափիր, և աւելի այն արտերը գերանդիով հնձելու է, որ խիտաբոյս, խոտախառն և բարձրահասակ են ցօղուններ։ Իսկ այն արտերն, որոց բոյս ցանցառ է և կարճ, պէտք է մանգաղով քաղել։ Երանի՜ թէ, Թոռնիկ, երթայիր տեսնայիր Մշոյ, մանաւանդ Հացեաց գաւառի քաջաբազուկ մշակներուն հնձելու հանդէս, նոքա չ'գիտեն մանգաղ, ամենայն

ինչ գեանի երեսէն բուսածները գերանդիով կը սրբեն, ոչինչ փոյթ չունին թէ հատիկներ գետին կը թափին. վասն զի այնպիսի չնաչխարհիկ հոգեր ունի, որ ինկած հատիկներ մէջ թաղուելով, և աչնան անձրեւ վրան գալով կը սեւնայ որ հնձուած արտը նորէն կանաչեր է, որով առանց աչխատութեան կրկնակի արդիւնաբեր լինելով, հետեւեալ տարին նորէն կը քաղուին։ Հնձելու, և մեծ մեծ խուրձեր կապելու վարժութեան մէջ արդարեւ Մշեցի երկրագործ գերազանց է, թէեւ հողագործութեան ուրիշ մասերում չատ յաջողակ չէ։

Համառօտ կերպով աւարտելով արտօրէից հնձելու դասը, միտքս եկաւ այն բանը, զոր Տէր Աստուած Մովսէսին պատուիրած է, ճառաքաղ չառնել թէ այգին և թէ արտը, զի փոքր ճիւղեր և թափուած հասկեր՝ որբերուն և աղքատներուն բաժինն են։ Աստուծոյ այս գթութեան պատուէր ծերուկն Պապիկ, Թոռնիկիդ կ'աւանդէ որ բարեսիրտ և գթասէր լինիս։ Մենք այգի չունի'մք, բայց արտեր ունիմք, հնձոց ժամանակ պէտք է թողումք որ դիւղի ապքաաներ, այրիներ, որբեր գան ժողվեն թափուած հասկեր ու հայթայթեն իրենց կեանքի պարէն։ Նոքա մեր գիւղի չքաւոր մասն են, վարուցան չունին, հապա ինչո՞վ պէտք է ապրին՝ պէտք է աչխատութեան բաժին տալ այնպիսիներուն, որ կարող են աչխատել և օրավարձք առանալ. իսկ կան այնպիսիներ, որ ծեր ու պառաւ են կամ փոքրիկ տղէքներ են, ոչինչ աչխատութիւն չենք կարող պահանջել իրենցմէ իրրեւ փոխարինութիւն։ Բրիատոս յատկապէս այսպիսեաց համար խօսած է. «Տուք փոխ այնմ, ուստի ոչ ակն ունիցիք առնել»։

ԺԲ.

Կ Ա Լ

ԵԻ ԿԱԼԱՏԵԼ

Արտօրայք հնձելու ժամանակ, երկրագործ մեծ փութաչանութիւն պէտք է ունենայ, մի կողմէն քաղուած ցորենի դէզերը սայլերով կրել ի կալատեղ։ Այս աչխա-

տուբիէն չատ կը դիւրանայ, եթէ կանխապէս սայլի ճամբաներ հարթուած ու պատրաստուած լինին. յայտնի է ամէն գարնան ժամանակ յորդ անձրեւներէն և ջրավազ տեղերէն, ճամբաներու վերայ հեղեղատներ կը բացուին և մեծ արգելք կը լինին սայլերու ընթացքին։ Նկատէ ու տես Թոռնիկ, թէ ո՞րչափ անհոգ է գիւղական ժողովուրդ, որ երբ այդ բնական ճամբաներ կը խանգարուին, նա կը մտածէ յայնժամ ուրիշ նոր ճամբու գիծ մի բանալ, որով հին բնական ճանապարհ կ'ամայանայ։ Իսկ նոր ճամբան թէ երկար լինի և պատյաններ ունենայ, ոչինչ փոյթ է իրեն համար, որ գիւղացին չգիտէ հաշուել ժամանակի կորուստ թող դժուարութիւններ։ Ուստի, երկրագործին աշխատութեան մեծ դժուարութիւն կը լինի, եթէ տարուէ տարի նորոգուին գոնէ խանգարուած գլխաւոր ճամբաներ։ Դեռ հունձքեր ի կալատեղ չը բերուած չատ կարեւոր է կալատեղի պատրաստութիւն, և կատելու համար պէտք եղած գործիքներ, կամնասայլ, ջառջառ եւայլն։ Վանայ արեւելեայ և հիւսիսակողմն եղած գաւառներ չատ գիւղեր կան, որ երբէք կալատեղի պատրաստութիւն պէտք չունին, վասն զի գիւղերուն մօտ խիտ և մանրաքոյս մարգեր կան, որ գետնին երես ծածկած են իբր մի կանաչազարդ փռոց, ինչպէս մեր Արճակ գիւղին կալատեղը, որք բնական են և պէտք չունին պատրաստութեան։ կը տեսնա՞ս Թոռնիկ, օրանն կատուիլէն յետոյ մեր ցորենաչեղջներ ո՞րչափ մաքուր և անխառն են, ոչ հող, և ոչ քար ունին իրենց մէջ, իսկ այն կալատեղեր, որ անբոյս լերկ հող են, երկրագործ կը պարտաւորի ամէն տարի կալի ժամանակ չինել ու պատրաստել։ Կալի տեղ երեսէն փորելով ջուր կը թողու վերայ, եւ անհարթ տեղեր բահով հարթելով կ'ուղղէ գետնին մակերեւոյթ, ջուրը ցամքելէն յետոյ յարդ կը ցանուի վերայ, և կը սկսին բահի քամակով ծեծել և հարթել։ Այս կերպ չինուած կալատեղեր դարձեալ խորդ ու բորդ կը լինին, և ազատ չի մնար ցորեանն աւազախառն հողերէ։ Լաւագոյն կալատեղ այն է որ միանգամ սալայատակ լինի, և իբր չրջապատը գոնէ կէս կանգուն բարձրութեամբ թումբ ունենայ՝ որպէս զի օրան կրակ սայլ նորա եղերք կենայ և չը մտնայ կալատեղ, զի սայլին անիւներն, կալատեղին յատակ կը խանգարեն։

Մեր Վանայ գիւղերուն օրան կասելու կերպ, և գործիքներ բաւական յաջող են, թէ կամնասայլ և թէ ջառջառ ի միասին բանեցնելով մեծ գործ կը տեսնան, աւելի կասող և մանրող է ջառջառ գործիք, որ փայտէ մի գլանակ է երկու կանգուն երկար, որոյ վերայ շարուած են ոլոր ձեւով երկաթէ սուր ուրագներ, որ անուաձեւ դառնալով կը կտրատէ կալի օրանն։ Մանաւանդ, երբ ձիեր լծուած լինին ջառջառին արագապէս դառնալով կամնասայլէն շատ աւելի գործ կը տեսնան։

Հարցուր, Թոռնիկ. թէ աղքատ գիւղացիք ինչպէ՞ս կալ կ'անեն, երբ այդ գործիքներ չունին։ Է՜, Թոռնիկ, աւելորդ է այդ հարցումն, քանի որ աղքատն արդէն հողատէր չէ, միթէ կարող է վարուցան անել։ Ա՜, տես մեր գիւղի աղքատ Ղազար կալ, որ ժամանակաւ գեղին առաջին հարուստ համբան է, այժմ հազիւ մի քանի սայլ ցորեն ունի կասելու։ Մի եզ և մի կով ունի, լծած է մի մաշած անատամ կամնասայլի, իւր փոքրիկ կալիկ անով կը կասէ։ Ես վաղուց կը ճանչնամ աղքատ Ղազար, որ երբեմն տանուտէր էր, դուռը բաց, և այժմ այդ վիճակին հասաւ, թէ արտեր թէ իւր ծառաստաններ պարտատէր գրաւեց, թէ իրաւ թէ անիրաւ, այդ չը գիտեմ, միայն այս գիտեմ, որ պարտատէր թէ աշխարհին օրինաց առաջ թէ իւր խղճին առաջ ինքն չքմեղս եղաւ եւ կարդաց բանաստեղծին այս տողերը.

«Հետեւելով միշտ օրինաց աշխարհի.
Ես կեանքումս մարդոց վնաս չի արի»։

Միջանկեալ բան պատմեցի քեզ, Թոռնիկ, որ պարտք անելէ զգուշանաս, ապա թէ ոչ դու ևս աղքատ Ղազար կը դառնաս։

Դու չես տեսեր, Թոռնիկ, բայց ես տեսած եմ ի Պոլիս, պատմեմ քեզ։ Եւրոպիոյ արուեստագէտ մարդիկ այժմ կալ կասելու համար մի մեքենայ հնարած են, որ ահագին բան է. մեծ սայլի պէս չորս անիւներու վերայ հաստատուած, որու մէջ զանազան մանր ու խոշոր երկաթաթել մաղեր, և այլ կասող և մանրող սուրեր զետեղուած են, որ մեզ պէս չինականի խելք չի հասներ։ Այս մեքենայն կրակով կը դառնայ, երկու մարդ մեքենային առնիս կեցած չարունակ խուրձեր քակելով կը

ձգեն ընդունարանի ծակէն ներս, որոնք փշրուելով, մեքենայի երկու ծակերէն դուրս կը վանուին թէ ցորեան և թէ յարդ։ Այս մեքենային միայն դէզերուն քով կը հաստատուի, որովհետեւ դիւրութիւն ունի սայլի պէս վարել տանել ուր որ լինի։

Կը տեսնա՞ս, Թոռնիկ, թէ գիտութիւն ո՞րչափ դիւրացուցեր է մարդոց աշխատութիւն, այն ինչ մենք ամիսներով կալ կ'անեինք, և չատ անգամ ձիւներուն տակ կը մնան, նաեւ կը սպասենք մեզմաչուչ հովերուն, որպէս զի էրան անելով ցորեն յարդէն հանենք։ Երկու անգամ մաղերէ անցուներմք եւայլն։ Առանց այս բոլոր աշխատութեան մեր մի ամսուան գործը, մեքենայն մի քանի աւուր մէջ կը լրացնէ։ Եւ այնչափ մաքուր կը զատէ ցորեան, որու վերայ մարդ կը զարմանայ թէ ինչպէս իսպառ ի մի կողմ անջատուած են քարեր, հողեր, և օտար հատիկներ. որով այլեւս հարկ չի մնար ցորեան կրկին մաղելով մաքրել, և ապա տանել չրագոյց ազալ։

Գիտե՞ս, Թոռնիկ, թէ աչնան կալերու ժամանակ ո՞րչափ կ'աճապարեն գիւղացիք, որ անձրեւակարգ չսկսած կալեր ժողվեն, զի երկրագործը կալի ժամանակ անձրեւ չուզեր, այլ միայն արեւ և յաջող քամի։ Բայց այս մեքենային մեծ օգտակարութիւն այն է որ ամէն ժամանակ կարող է բանել։

Սորա համար Եւրոպիոյ մեծ ագարակատէրեր, ցորեանն առանց կասելու չատ ժամանակ դէզերով կը պահեն և երբ պէտք լինի, մեքենայն դէզի առաջ տանելով, կը կաեն։ Վասն զի փորձուած է, թէ ցորեն աւելի լաւ կը պահուի երկար ժամանակ դէզերուն մէջ իրենց հասկերով ու պատեաններով, քան թէ չտմարանին մէջ, որ չատ անգամ կը տաքնայ, կ'ոչլոտի եթէ երբեմն խառնելով չի զարձնես։ Մեր աղքատ կալեր մեքենայի պէտք չունին, մեր մեքենան ժրագործ աշխատութեան բազուկներն են։ Միթէ կարո՞ղ եմք այդ թանկագին մեքենայն բերել մեր աշխարհ, որ մի հատ հազար լիրայի արժէք ունի, ինչպէս չատ անգամ կրկնած եմ Եւրոպիոյ երկրագործական աշխատութիւն գիւղական ժողովուրդին չատ դիւրացուցած են, նա պէտք չունի մեքենայ ստանալ, վասն զի կան այնպիսի ընկերութիւններ, որ յատկապէս այդպիսի մեքենաներ կը գործածեն, գիւղացին վարձք տալով

միայն իրենց ամբողջ ունեցած ցորենագէզեր կասել տալ։ Եւ գիտե՞ս, ո՞րչափ դիւրութեամբ այդ դժուարաչարժ մեքենան գիւղէ ի գիւղ կը տարուի, միայն երկու ձի լծելով, հարթուած պատրաստուած ճամբաներուն չնորհիւ։ Ով գիտէ, անշուշտ կուգայ ժամանակ և մի օր, որ այդ մեքենայն քալելով կուգայ մեր աշխարհ, ես կը մեռնիմ, և դուն կը տեսնաս ու կը յիշես Պապկէդ գուշակութիւնս։

Կալի և կալատեղի դասն աւարտելով, այժմ պէտք է խօսիմ չեմարանի պատրաստութեան վերայ, որ կարեւոր է երկրագործին համար։

ԺԹ.

Շ Տ Ե Մ Ա Ր Ա Ն

Յանկարծ միտքս եկաւ Թոռնիկ, ինչ գուգադէպ մի օր է այսօր, վաղը մեր վարագայ Խաչի տօնն է։ Ի նախնեաց անտի սովորութիւն եղած է, բոլոր վասպուրականի աշխարհ վաղը հարիսայ կը դնէ, գիւղական ժողովուրդին համար աւելի ցնծութեան օր է, մինչ այս աւուր կալի կորկոտ կ'ասենք, վասնզի կալիր կը վերջանան. կալի երախայրիքէն գիւղական տանտիկիններըը յատկապէս ճերմկահատ ցորեններէն կորկոտ կը պատրաստեն հարիսայի համար, բոլոր գիւղի տներըը ամէն մէկ իրենց չափով հարիսայ կը դնեն։ Էր մի ժամանակ որ գեղի մեծ մեծ ճամբաներ մէկ մէկ եզ կը մորթէին հարիսայի համար, իրենց մեռելներըը յիշելով հոգւոյ հաց կը պատրաստէին, բոլոր գեղի ժողովուրդ, աղքատներ կ'ուտէին կուշտ կուշտ և կ'օրհնէին տանուտէր։ Գնա՛ց, Թոռնիկ, այն առատութեան ժամանակ, Թող եղն, բաւ է Թէ կարենան ուղ մի մորթել։ Ի հնուց հարիսայի համար սա երգեր կան, բայց ես նորէն մի երգ խօսիմ քեզ։

«Էս օր, գիտե՞ք քէ ի՞նչ օր է
Մեր վարագայ խաչի տօնն է,
Եւ մենք կ'ասենք կալի կորկոտ,
Հարիսայի մեծ տօնն է։
Բոլոր աշխարհ վասպուրական
Հարիսայի տօն կատարէ,
Է՛, տաս տիկին, քոնիր վառէ

Դիր մեծ պղինձ եւ պտուկներ,
Մենք մորթեցինք մեր պարարտ եզն,
Միսն ու կորկոտ պատրաստ է, տե՛ս։
Բոլորեցէք շուրջ պղընձին
Բոլոր գեղի կըտրին աներ,
Հարէք ըզ սա ուժգին հարէք,
Կ՚ասէ մեր Հայր Լուսաւորիչն։
Ընպէս հարէք մինչեւ հալին
Ոսկորն ու միսն ի միասին,
Հալին խառնին հետ կորկոտին
Այն է նշան լաւ հարիսին։
Զոէք, մանկտիք, թախսին վերայ
Սփռոց չուզեր, շինական եմք,
Լից տան տիկին ըզ հարիսան
Լին լին արա եղն ի վերայ։
Տան հարսներ եւ աղջիկներ
Շուտ շուտ բերէք ըզ թափթափան
Թոնրէն ելած տաք տաք հացեր,
Ի՞նչ անուշ է հարիսի հետ։
Առէք այն կոպիտ անտաշ
Խոշոր խոշոր մեծ դըգալներ,
Կերէք կերէք անուշ լինի
Վաստակաւոր մշակներ։
Օրհնեալ լինի մեր տան տիկին
Լաւ է եփեր ըզ հարիսան,
Օրհնեալ լինի Լուսաւորի՛չն
Որ տուաւ մեզ լոյս հաւատ,
Հետ հաւատին մեզ աւանդէ
Հարիսային այս յիշատակ։
Օրհնեալ լինի իւր յիշատակ
Պահենք պահենք այս յիշատակ,
Մինչ յիշենք ու չը մոռնանք
Մեր փրկութեան մեծ օրն էր այն»։

Պատմեմ քեզ, Թոռնիկ, հարիսային աւանդութեան և յիշատակ, որ մեր Լուսաւորչի օրէն եկեր է մեզ հասեր է։

Ես էլ իմ Պապկէս լսած եմ որ այսպէս կը պատմէր, թէ երբ սուրբ Գրիգոր Լուսաւորիչ խոր վիրապէն ելաւ եկաւ Վաղարշապատ, վաթսուն օրը ամբողջ քարոզ խօ-

անց հնթանոս Հայ ժողովուրդին. բիւրաւոր մարդիկ մահկ կ'անկին։ Անշուշտ անոնց մէջ աղքատներ կային, Լուսաւորիչն ուզեց աղքատներուն համար մի ճաշ պատրաստէ. բայց այս ճաշը Յիսուսի պէս հրաշքով չը պատրաստեց, հրամայեց որպէսզի հարստաւոր գեղացիներուն որ շատ հզ ու ոչխար ունին, զանոնք մորթել տուաւ, մեծ մեծ կաթսաներ կրակի վերայ դրին. միսերը մէջ լեցուցին, կորկոտան եւս վերան։ հրամայեց որպէսզի հաստատագոյն կարիճ ներիտասարդներուն և ասոց հարեւ բուռ, որով այս կերակուրի անուն մնաց հարիսա։ Այս կերակուր հայկական մի պատուական կերակուր է, Հայրիկ շատ կը սիրէր հարիսան, միշտ ուխել կուտար վարագայ վանքուն։ Եւ երբ նա իր պանդխտութեան մէջ կարօտ կը քաշէր հարիսային, միանգամ նամակ գրած էր վարագայ միաբանութեան, էդ նամանին խօսքեր միտքս պահած եմ։

Երջանի՛կ միաբանութիւն վարագայ, որ կը քնակիք Աւագ Սուրբ Նշանի թեւին տակ, արդեօք կը յիշե՞ք պանդուխտ Հայրիկ, ա՛խ, ես զձեզ կը յիշեմ. կը յիշեմ վարագայ Խաչին ասն որ մօտ է. կը յիշեմ վանքին այն պատուական հարիսան, և դուք առանց. Հայրիկին կ'ուաէք հայրենաւանդ կերակուր։ կերէ՛ք մեզ անուշ լինի, և կշտապինդ կերէք և խմեցէք վարագայ սարի ծոցէն բխած պաղուկ պաղուկ աղբիւրներուն ջուրը։ Իսկ Հայրիկ իր պանդխտութեան մէջ ա՛խ կը քաշէ հարիսային դէմ։ Ի՞նչ կը լինի, որ յիշէք Հայրիկը և մի ճլօր հարիսայ Ամբակումայ հրեշտակին յանձնէք, որ բերի ի Բաբիլոն, ուտեմ և օրհնեմ զձեզ։ Ողջ եղիք։

Է՛, Թոռնիկ, բա՛ւ է, թողունք այս աւանդական հարիսայի բան, դառնանք մեր դասին կարգ։

Գիւղական անտեսութեան մէջ շաբաթաթանի պատրաստութիւն շատ պարզ ու նախնական է։ Սովորաբար գիւղացիք իրենց ցորեն, գարի և այլ հատիկէն բաներ մի մարդաչափէն աւելի հոր փորելով կը հորեն ի գետին, թէև հորին կողերը խոտով կամ յարդով կը շրջապատեն, բայց շատ անգամ կը վնասին, խոնաւութիւն առնելով՝ հացը գէշահամ կը լինի։ Եւ որովհետև այս ցորենի հորեր բացօթեայ տեղեր են, կը պատահի շատ անգամ անձրեւէն և ձիւներէն ջուր առնելով կը փտաի ցորեն։ Այնպէս կը թուի,



ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Ախտրակաց Երուսաղեմի մէջ 1891, ուր գրեց
«Պապիկ եւ Թոռնիկ»ը։



ՎԱՐԱԳԱՅ ՎԱՆՔԸ

Երթա՛ս բարեաւ, Արծո՛ւի, ասացէք, Գնա՛ գտիր Վարագ քու սիրած խուցն ու գրիչ եւ սակաւիկ մի թանապուր: Հո՛ն մնացիր, զի նաւ խռովեալ փութայ ի Նաւահանգիստ:

Երջանիկ միաբանութիւն Վարագայ, որ կը բնակիք Աւագ Սուրբ Նշանի թեւին տակ, արդեօք կը յիշէ՞ք պանդուխտ Հայրիկ, ա՜խ, ես զձեզ կը յիշեմ. կը յիշեմ Վարագայ խաչին տօն որ մօտ է, կը յիշեմ...



ՎԱՐԱԳԱՅ ՎԱՆՔԸ ՄՈԽԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԱՄԱՅԻ ԵՒ ԱԻԵՐԱԿ

Հայրենի՛ տուն, հաւատա՛ որ մահիս յետոյ
Քու աւերակներուդ սեւին վրայ, իմ հոգիս,
Պիտի գայ, որպէս տատրակ մը տարագիր,
Իմ դժբախտի երգը եւ արցունքը լալու...:

Բայց ո՛վ պիտի բերէ, ո՛վ պիտի բերէ, ըսէ՛,
Քու սրբազան մոխիրդ ափ մը մոխիր,
Մահուանս օրը, իմ տեսում դագաղիս մէջ,
Հայրենիքս երգողի իմ անիւնին խառնելու...:

Ափ մը մոխի՛ր անիւնիս հետ, Հայրենի տուն,
Ափ մը մոխի՛ր քու մոխիրդ, ո՛վ պիտի բերէ,
Քու յիշատակի՛դ, քու ցաւե՛դ, քու անցեալե՛դ,
Ափ մը մոխիր... իմ սրտիս վրան ցանելու...:

ՍԻԱՄԱՆԹՕ



ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ
ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏԻՆ ՄԷՋ

Աշխարհահռչակ Հայազգի ճկարիչ ծովճ. Այվազովսկիի իւղանկարեճ լուսանկարուած:

Թոռնիկ, որ հին հին ժամանակներ գիւղացիք իրենց ցորեան ապահովութեամբ պահելու համար՝ գետնի տակ կը պահէին, ինչպէս նաեւ ուրիշ շատ բաներ։ Զարմանք է որ այս ապահով ժամանակի մէջ ալ նոյն սովորութիւն պահած են։ Բայց այս բան անհոգութեան եւ ծուլութեան մի արդիւնք է։ Երբ գիւղացին իրեն համար տուն կը շինէ, անասնոց համար ախոռ, ոչխարներուն համար գոմ, միթէ դժուարի՞ն է որ իւրաքանչիւր տուն իրենց արմտեաց չափով շտեմարաններ շինեն։ Կան ոմանք որ գաղջին հողէ մեծ մեծ փեթակներ կը շինեն, որոնց մէջ մեծ քանակութեամբ արմտիք կը պարունակեն, փեթակներ շատ լաւ կը պահպանեն հատեղէն բաներ, միայն թէ փեթակներու տանիք լաւ պատրաստելու է, որ կաթիլներ չիջնան փեթակին մէջ։

Բայց միշտ լաւագոյն պէտք է համարենք շտեմարան, որ որչափ ուզենք կարող ենք ընդարձակ շինել, որպէսզի ամէն տեսակ հնդեղինաց որոշ անջրպետներ ունենայ իւր մէջ։ Ցորեն՝ ժամանակին խառնել դարձնել պէտք է որ օդ առնելով չի տաքնայ եւ օջլոտի։

Ա՛հ, Թոռնիկ, հոգիս կը հառաչէ, միթէ պարտական գիւղացի երկրագործին շտեմարան պէ՞տք է։ Ահա մեր բարեկամ Կիրակոս աղբօր կալ, կը չափեն, տե՛ս քան քիլանոց մի ցորենի շեղջ է. վաշխառու քաղքցիք եկեր պատրաստուեր են, չափեցին շեղջը, քան քիլա եղաւ։ Նախ Տէրութեան տասանորդին տուրք տրուեցաւ, վաշխառուներ ամէն մէկ իրենց տոկոսներու հաշւով չափեցին առին, ի՞նչ մնաց, միայն կալատակն, նորա վերայ եւս աղքատներ թափեցան կալեմասն առին սրբեցին կալատեղ։ Դու տես այժմ Կիրակոսին խեղճ վիճակը, նա տխուր երես կախած, առաւ կալին ցախաւել, թիակ, հեծանոց եւայլն, գնաց տուն, տանտիկին հարցուց, ծօ մա՛րդ, այդ անաքին կալէն մեզ բաժին չը մնա՞ց, ի՞նչ պիտի ուտեն մեր ճժեր ու պժեր։ Տանուտէր պատասխանեց, տարեկա՛ն, տարեկա՛ն (հաճար), գարին արդէն գնացող եկող հիւրերուն հազիւ բաւէ։ Տանտիկին ձեռքեր կցեց ու լացաւ, ա՛հ, Աստուա՛ծ, դու տեսար, բարկ թոնրին դիմաց տարին բոլոր հաց թխեցի, կերակուր եփեցի, մըշակներ հոգացի, ի՞նչ դատաստան է այս Տէ՛ր, ես ու իմ

ճմերս կարօ՞տ պիտի մնանք ցորեն հացին։ Է՛, տանտիկին դու չ'գիտե՞ս, ցորեն քաղքցոց, գէր գէր մսացուներ դարձեալ քաղքցոց, իսկ գեղացւոյն բաժինն է, տարեկան, կորեկ, և թանապուր։ Այս ես բաւական է, դու փառք տուր Աստուծոյ, կնիկ, մեզմէ աւելի զրկեալներ կան, զի Մշոյ գիւղացին կլկլով միայն կ'ապրի, որ տարեկանէն և կորեկէն շատ չնչին է։

Դու հարցո՛ւր, Թոռնիկ. այս անխիղճ և անիրաւ վաչխառուներու ձեռքէն մեր գիւղացի ժողովուրդն ե՞րբ պիտի ազատուի, որ թող կայի ցորեն, մեր արտերն ես կը գրաւեն, որ մեր կեանքն ու ապաւէն է, և մեր Արճակ գիւղի գիւղացւոց սեփհական հողեր գրեթէ բաւական մասն գրաւած են։ Այս բան երկրագործ ժողովուրդին մի սպանման խնդիր է։ Եւ սորա միակ ճարն ու դարման հոգացող՝ տէրութեան արդար օրէնք, և իշխանական ձեռք միայն կարող են կարճել վաչխառուներու ձեռք, որ ծանրացած է երկրագործ պարտապան ժողովուրդին վերայ։

Արդէն քանի տարիներ յառաջ տէրութեան հոգածութիւն դարձաւ այս բանին վերայ։ Ուստի գաւառագլուխ քաղաքներու մէջ փոխատուութեան սնտուկներ հաստատել տուաւ խիստ չափաւոր տոկոսով։ Որպէս զի երկրագործ ժողովուրդ թողլով վաչխառուներ, փոխատուութեան կեդրոնին դիմէ։ Միայն թէ այդ սնտուկներ բաւական պիտի լինի՞ն այն ահագին անհաշիւ պարտուած գումարներուն դէմ, որ այսօր բեռնաւորուած է Տէրութեան երկրին ընդհանուր ժողովուրդին թիկանց վերայ։ Կալն ու շտեմարան առիթ տուին ինձ, Թոռնիկ, այսքան միայն հարեւանցի կերպով խօսեցայ և բաւ է, թողունք այս խնդիրը մեծ անտեսագէտներուն, թող մեծ մեծ հատոր գրքեր շարադրեն երկրին անտեսութեան մասին, որ երկրին բարգաւաճման կեանքն է, զի հացով կ'ապրի Տէրութիւն և տէրութեան հպատակ համայն ժողովուրդ։

Ժ.Գ.

Ձ Մ Ե Ռ Ն

ԵՒ ԱՆԱՍՆՈՑ ԴԱՐՄԱՆ

Երբ կը վերջանան կալեր, աշուն կ'երթայ, ձմեռը կուգայ, ձիւներ կը պատեն դաշտեր ու լեռներ. այնուհե-

տեւ կը դադրին մշակութեան դաշտային գործեր, բոլոր անասուններ ախոռներու մէջ կը կապուին մսուրներու առաջ՝ երբեմն երեք ամիս, և երբեմն մինչեւ չորս ամիս և աւելի ևս այնպէս կապուած կը մնան և պէտք է դարմանենք զիրենք յարդով ու խոտով, որ իրենց աշխատութեան դուզնաքեայ բաժինն է, իսկ պատուական մասն մեզ կը մնայ, ցորեան, կաթ, մածուն, պանիր, իւղ եւ այլն։

Բայց գիտե՞ս, Թոռնիկ, ձմեռը նախապէս լեռներուն գլուխներէն կը սկսի, մի առաւուն երբ վեր կ'ելլենք, կը տեսնանք, որ լեռներու գագաթներ ձիւնով ծածկուած են, և այդ մի նշան է, ցոյց կուտայ մեզ թէ ձմեռը մօտ է. լեռնէն պիտի իջնայ դաշտ, պէտք է էն ժամանակ գիւղական ժողովուրդ իւր ձմերան պատրաստութիւններ տեսնայ։

Դու գիտես, մեր գիւղացւոց տներ և ախոռներ, խախուտ և անհաստատ շէնքեր են, ամէն տարի աշնան պէտք է նորոգուին։ Կը կարծե՞ս, Թոռնիկ, որ գիւղական ժողովուրդ լաւ հասկցած է աշխարհիս ունայնութեան կեանք, սորա համար երբէք չ'ուզեր հաստատուն բան շինել։ Ո՛չ, այդպէս մի դատեր, նախ որ իւր անկած ու մշակած փայտ չունի, եթէ գոնէ՝ դրամ չունի, եթէ չինէ՝ շինելու կերպ չի գիտեր, և այս ամենուն դարձեալ պիտի խօսիմ իւր տեղը։

Մեր բնակած երկրի ձմերան սաստիկ կլիման է, որ պատճառ տուած է անասնոց համար ախոռներ շինել։ Այս մասին անաշխատ և ազատ են հարաւային ջերմին գաւառներ, ուր ոչ ցուրտ կայ, և ոչ ձիւն. երկրագործ ժողովուրդին աշխատութիւն շատ պակաս է, ձմերան անասնոց դարմանին համար ոչինչ հոգ ու մտածութիւն չունին, տարին տասն երկու ամիս անոնք անասուններ կ'արածեն։ Ուստի երբէք պէտք չունին, ոչ ախոռ շինելու և ոչ անասնոց համար դարման պատրաստելու, ոչ խոտ և ոչ յարդ. ուստի խոտ մշակելու, քաղելու և դիզելու երբէք պէտք չունին. ինքնաբոյս խոտ այնչափ առատ կը բուսնի, մանաւանդ Կիլիկիոյ լայնածաւալ խոպադաշտ (չուգուր օվայ) որ աշնան ժամանակ կրակ տալով կը վառեն, որով աւելի կ'ուժովնայ հողը, և հետեւեալ տարին խոտաբոյսն կրկնապատիկ կը զօրանայ։

Բայց մեր երկրի ձմեռան ցուրտ եղանակն կ՚ատիպէ մեզ, անասնոց համար ախոռ և գարման պատրաստել։ Դուն կը տնտնաս, Թոռնիկ, ի՞նչ են մեր ախոռներ և ի՞նչ պիտի լինի անոնց պատրաստութիւնն, եթէ առիթի մի քանի գերաններ փտած են՝ պիտի փոխուին, եթէ մըսուրներ քանդուած են՝ պէտք է չինուին, նոյնպէս եթէ ախոռին յատակներ դարուփոս եղած են, պէտք է սալարսով հարթել եւայլն։

Շինական երկրագործ միայն այսքան կարող է պատրաստել իւր անասնոց ախոռ, նա որ իւր բնական խըրճիթին համար հոգ չունի, միթէ անլեզու խեղճ անասնոց համա՞ր պիտի մտածէ. և իրաւունք ունի, զի մարդ իւր կեանքի չափով կը չափէ ամէն բան։

Թողունք ախոռ, Թոռնիկ, խօսինք անասնոց գարմանին վերայ, և թէ գիտես, մեր խեղճ անասնոց գարման՝ չոր յարդն է, խոտ միայն ոչխարներուն կը պահեն, թեթեւս երբեմն գարնան մօտ գոմէշներուն և եղներուն առանձին՝ օրը միանգամ խոտ տան։ Իսկ մատակ գոմէշներ, կաթնատու և յղի կովեր, արժանի չեն խոտ ուտելու, ահա քեզ մի զրկանք. կովերն, որ կաթ և իւղ կուտան մարդոց սնունդին համար, հորթեր կուտան, որ եզ կը լինին երկրագործին համար, ոչինչ նշանակութիւն ունին մեր վանայ գիւղացւոց մօտ. գուցէ ուրիշ գաւառի գիւղացիք այսպէս չեն վարուեր։ Դուն տեսեր ես, Թոռնիկ, գարնան ժամանակ մեր զրկեալ կովեր այն վիճակին կը հասնին, որ չեն կարող նստած տեղերէն վեր կենալ այլ պոչերէն բռնելով վեր կը հանեն, յղի կովեր չատ անգամ ծնելու ժամանակ դժուարութեան կը լինին։ Դուն տեսար այն ժամանակ տանտիկին խղճմտանքի կուգայ և մի ամանով լակ պատրաստելով կը բերէ. ծննդաբեր կովուն։ Ստոյգ է որ կիներ աւելի կ՚ուզեն չահել ու գարմանել կովերը, որպէս զի աւելի կաթ առնեն, մածուն չինեն, թանապուր եփեն, որ գիւղական կերակուրն է։ Խեղճ կովեր ի՞նչ կ՚ուտեն որ կաթ տան չոր յարդ ուտելով միայն կարո՞ղ են կաթ տալ։ Մի սակաւ յարդ մի քաշ կաթի հիւթը հազիւ ունի, և այս փորձած են վերլուծելով բնագէտ երկրագործք։

Կարգն եկաւ, պատմեմ քեզ, Թոռնիկ, ես լսած եմ որ

Եւրոպիոյ երկրագործներ յարդ չեն կերցուներ տաւարներուն, այլ ամէլի խոտ և ուրիշ բուսական բաներ։ Հնարամիտ մարդերով այնպիսի գիւտեր գտած են անասուններ գիրցնելու համար, մարդ երբ լսէ կը զարմանայ և չի հաւատար, թէ մի եզ կամ կով մինչեւ ութամսուն, ութսուն լիտր կշռէ, այն ինչ մեր գերցած եզեր և կովեր շատ շատ հազիւ քսան կամ քսանհինգ քաշ կաթ կուտայ, դու մտածէ, թէ ինչ կ'ուտեն, և օրը ո՞րչափ քանակութեամբ բան կ'ուտեն, ուրկից քսան քաշ միայն կաթի հիւթ կը գոյանայ։ Զարմանալին այն է, որ այդ կովեր թէ ամառ թէ ձմեռ ախոռին մէջ կապուած կը զարմանուին, կը թուի թէ այդ աշխարհ ամբողջ մշակուած երկիր է արօտավայրեր չի կան։ Է՛, Թոռնիկ, ուրեմն մեր անասուններ գոնէ ամառան շատ երջանիկ են, որ հովասուն լեռներուն վերայ, ծաղկալից հովիտներուն մէջ, կանաչազարդ մարգերուն վերայ ճեմելով կը կայտռին, հապա այն պաղուկ պաղուկ ջուրեր, որ կը խմեն, իրիկուն կը լինի գիզի նախիր դաշտէն տուն կը դառնայ, կովեր ծիծերնին լցած ծանր ծանր, հպարտ հպարտ շորորալով, պոռալով կը քալեն. ամէն մէկ իրեն տիրոջ տունը կ'երթայ. տանտիկին հարսներ կթոց կ'առնեն կը վազեն, կովը հանդարտ կը կենայ, և կը սկսին կթել, խղճմտանքով տանտիկին գիտէ կթելուն չափը բաւական բաժին կը թողու հորթկան համար. բայց կան անխղճմտանք կիներ, որ խիստ ճմլելով կը քամեն կովուն պտուկներ այնպէս, որ խեղճ հորթկան շատ նուազ բաժին կը թողուն։

Երբեմն, ծուռ կարմիր կովեր կան, որ շատ ուղիղ դառնան կ'անեն երբ տանտիկին խստութեամբ կը ճմլէ պտուկներ. կովը կը զայրանայ, կը զարնէ կը թափէ կաթըն, կթոցն էլ հետ կը կոտրէ, և այսպէս կը տեսնայ իր գրկուած հորթին դառնալուն։ Երանի՛ թէ մարդիկ օրինակ առնելով ծուռ կովու չափ դառնալուն տեսնային։ Դու կը տեսնաս և գիտես, Թոռնիկ, այնչափ առատ առատ արօտներուն մէջ արածելուն, որչափ կաթ կուտան, հազիւ օրական մի քաշ, կամ շատ շատ երկու քաշ։ Իսկ ձմեռան երբ սոսկ յարդով կ'ապրին, խիստ կը նուազի իրենց կաթը, ճորով հորթեր կը կշտացնեն։

Անշուշտ, Թոնիկ, հետաքրքիր կը լինիս իմանալ, թէ երբ մեր կովեր դրախտի երկրին մէջ ամենազան ծաղիկներով և խոտերով կը պարարտին, ինչո՞ւ համար Եւրոպայի կովերուն պէս կաթնաբեր չեն, և կամ անոնց չափ միս չեն կապեր։

Խօսիմ քեզ, Թոնիկ, նախ որ մեր կովեր ազնիւ ցեղերէ չեն, կը տեսնաս դու, փոքրիկ և գաճաճ բաներ են, մինչդեռ Եւրոպիոյ անասնապահ ամէն ջանք և հնարամիտ փորձեր ի գործ կը դնէ, ոչ միայն կովերուն, այլև ամէն տեսակ անասնոց ցեղերը ազնուացնել. մենք ոչ այդ խելքն ունինք և ոչ այնչափ հոգ. մենք այնպէս կը հաւատամք թէ այդ մի բնական բան է որ մեր երկրի կովեր գաճաճ լինին։ Երկրորդ՝ արուեստագէտէ լսած եմ թէ արօտական շրջող անասուններ ինչպէս են կաթընտու կովերը անդադար շրջելով, ծիծերուն աւելորդ կաթը ուրիշ որակութեան կը փոխուի կամ ջուր կը դառնայ։ Արդեօք, եթէ սովորութիւն լինէր, ինչպէս ոչխարներ կէս աւուր պէրանեղ կուգան և կը կթուին, նոյնպէս կովերն էլ կթուին, գուցէ ծիծերուն մէջ լցուած կաթ պարպելով մինչև իրիկուն կրկին անգամ լեցուէր եւ նորէն կթուէր։ Սորա փորձ շատ դիւրին է, բայց մեր անդադար աշխատաւոր գիւղական ընտանեաց վերայ. այս նոր աշխատութիւն ևս կրնա՞նք բարդել։

Թողունք այս, եթէ ասենք մեր գիւղացւոց, որ կթան կովերն ախոռին մէջ պահեն, գարնան կանաչ խոտ քաղելով կերցունեն և ամառն չոր խոտ։ Լաւ կաց, Թոնիկ, եթէ այսպիսի մի բան խօսենք բոլոր գիւղացիք կը խնդան մեր վերայ, քանի որ այնչափ ընդարձակ խոտաւէտ լեռներ, հովիտներ ունիմք, որ անմշակ մնալով միայն արօտական տեղեր են. յիմարութիւն չէ՞ այդ պատուական արօտները թողնել, զորս անասուն ինքնին իւր բերնով կ՚արածայ առանց մեր աշխատութեան, ելնել գարնանէ խոտ կերցունել կթան կովերուն, քանզի խոտ միայն ձմերան պաշար է։ Գիւղացւոց այս դատաստան շատ իրաւացի է, եթէ Եւրոպացի անասնապահ իւր կովեր այդ եղանակաւ կը պահէ նա պատճառներ ունի, նախ որ արօտատեղ չունի, երկրորդ՝ կովերու առատ կաթէն մեծ շահավաճառութիւն ունի, ամէն օր անհագին քանակու-

թեամբ կաթ կը վաճառէ, իսկ մեր գիւղացիք եթէ ունենան առատ կաթ ո՞ւմ պիտի վաճառեն, թէեւ կարող են իւղ շինելով քաղաքացւոց վաճառել, բայց այդ իրենց համար մի չնչին շահ է, և դու կը տեսնա՞ս, Թոնիկ, շինականին խելքն ու հաշիւ, այն ինչ պարտուր և փթիր, գեղէն բառնալով կը տանի քաղաք կը ծախէ և մեծ շահ կը համարի։

Դառնանք մեր առաջի նիւթին վերայ, Թոնիկ, կաթընտու կովերու վերայ բաւական շատ խօսեցայ, և միտքըս այն է որ ցոյց տամ քեզ, թէ մեր գիւղական ժողովուրդ անասնապահութեան մասին շատ ետ մնացած է. նա չի գիտեր, որ անասնաբուծութիւն երկրագործութեան մի կարեւոր ճիւղն է. ուրիշ շահաւոր և արդիւնաւոր, որոց փախլոյն և գործմանին համար այնչափ տաժանելի աշխատութիւն պէտք չէ ինչպէս հոգածութեան, իր շահն եւս թերեւս հողագործութենէն աւելի է։ Ահաւասիկ քեզ մի կարճ հաշիւ տամ Թոնիկ, որ աւելի լաւ համոզուիս։

Եթէ ունենամք հինգ կով, հինգ մատակ գոմէշ, հինգ ձի և հինգ էշ մատակ, ամբողջ կը լինին քսան հատ չորս տեսակէն, հաւանական է միշտ որ քսանէն տասն և հինգ հատ ծնին, և երեք տարիէն յետոյ՝ գործածելու կամ ծախելու վիճակին կը հասնին, և ամէն տարի ետեւէ ետեւ ծնելով ո՞րչափ կը բազմանան, նոյնչափ շահն եւս կը բազմապատկի։ Ստոյգ է որ առջի տարիներ այնչափ մեծ շահ ցոյց չի տար այս փոքր դրամագլուխ, բայց այնպիսի ինքնաճուն դրամագլուխ մի է որ երթալով կ՚աճի, և քանի աճի իր շահ կը բազմապատկէ։ Չկայ բնաւ աշխարհիս վերայ ուրիշ կերպ շահավաճառութեան այնպիսի շահ, որ հաւասարի տաւարաբուծութեան շահուն։ Օրինակ և ապացոյց կ՚ուզե՞ս, Թոնիկ, տես մեր դրացի քիւրդեր, որքան զմեզ սրամիտ են այս մասին, և աւելի անասնապահութեան ոյժ կուտան քան սոսկ հողագործութեան, զի փորձով հասկցած են անոր արդիւնք։ Տե՛ս հօտերներով ոչխար կը պահեն, հարիւրներով սեւատաւար, բազմաթիւ ելխի բուռած ձիեր եւայլն։ Մենք կը տեսնամք, ոչ կը զգամք և ոչ կը հաշուենք թէ կարգ մի ցեղապետ քիւրդերուն հարստութիւն՝ անասնապահութեան երեսէն է։ Ասա, Թոնիկ, նոքա հովասուն ընդարձակ արօտատեղեր

ունին և ի տոկալ հարկին կարող են պաշտպանել իրենց անասունները թշնամի հրոսակներէն, այո՛, Թոռնիկ, այդ ևս մի կարևոր դիտողութիւն է, բայց ես կը խօսիմ սկզբունքի վերայ միայն, թէ անասնոց բուրդ աւելի շահաւոր է։ Այդ ձեր ներկայի դիտողութիւն գուցէ այսօր կայ և վաղը կը վերջանայ. զի ժամանակ կ՚երթայ և ժամանակ կուգայ, և կը բերէ իւր հետ խաղաղութիւն և ապահովութիւն շնորհիւ մեր աշխարհաշէն տէրութեան։

Է՛, Թոռնիկ, այս դասը շատ երկար եղաւ, շատ տեղեր որոշ նիւթեր իրար խառնուեցան, այժմ պիտի խօսիմ քեզ ոչխարի շահաբերութեան և դարմանի վերայ։

ԺԵ.

ՈՉԽԱՐ

ԵՒ ԻՒՐ ԱՄԵՆԱՇԱՀ ԱՐԴԻՒՆՔ

Աշխարհի բոլոր ընտանի կենդանեաց տեսակին մէջ, ամենէն շահաւոր կենդանին ոչխարն է, որ մի տարուան շրջանին մէջ գրեթէ իւր գնոյն հաւասար արդիւնք կուտայ՝ մի մաքին մեր երկրի միջին գնով կ՚արժէ յիսուն դահեկան։ Մաքին կուտայ տարին մի գառն, որ կ՚արժէ քանէն մինչեւ քսան և հինգ դահեկան, երկու քաշ պանիր, երկու քաշ իւղ կուտայ, այն ևս կ՚արժէ տասն և վեցէն մինչեւ քսան դահեկան, մի քաշ ևս բուրդ կուտայ, էն էլ հինգ դահեկան հաշուելով ամբողջ ի միասին կը լինի քառասուն և մէկ դահեկան, թէ որ ժամիկն էլ հաշուեմ կը հասնի մինչեւ քառասուն հինգ դահեկան։

Ոչխար, շատ օրհնեալ, հեզ, ընդասուն և անմեղ կենդանի է. անապատի ճգնաւոր Յովհաննէս Մկրտիչ, երբ տեսաւ զՅիսուս Աստուծոյ գառն կոչեց զինքն։ Հայր Աբրահամ երբ Իսահակ կապելով դրաւ սեղանին վերայ, որ պիտի մորթէր, հրեշտակ կանչեց զինքն, Աբրահամ դէպի վեր նայեցաւ, տեսաւ որ պատուական մի խոյ կախուած է Սաբեկայ ծառէն, Աստուած ղրկեր էր այդ խոյ որ Իսահակի փոխան՝ զոհ լինի և Իսահակն ազատուի։

Ոչխար շատ զարմանալի աճուն կենդանի է, որովհե-

տեւ փոքր և հանդարտ բնաւորութիւն ունի․ հազարներով կարող ես պահել մէկ տեղ։ Ոչխար թէ փափուկ և թէ դիմացկուն մի կենդանի է, սակայն շոգէն շատ կը նեղուի մանաւանդ երբ իր արօտատեղ դաշտավայր լինի, իսկ հովասուն լեռներ և լեռնադաշտեր՝ ոչխարի համար արքայութիւն է։ Այն գիւղեր որ դաշտավայրի մէջ շինուած են, և ընդարձակ մարգագետին ունին, ինչպէս մեր գիւղ շատ յարմարութիւն չունին ոչխար պահելու համար․ մանաւանդ ջրոտ մարգագետիններ մի տեսակ հիւանդութիւն կը պատճառեն արածող ոչխարներուն և այս տեսակ հիւանդութեան «ճեափանակ» կ'ասեն, որ կարծեմ քիւրդերէն պէտք է լինի։

Իսկ լեռնային գիւղերն, որ ընդհանրապէս քիւրդերուն բնակավայրն է, ոչխար պահելու շահեկան շատ ընդարձակուած է․ վասն զի քիւրդեր այս մասին մեզմէ աւելի խելացի են և շահադէտ։ Հազարներով ոչխար կը պահեն և գիտեն քաջ դարմանել։ Նախ որ իրենց արօտավայր տեղեր շատ լայնածաւալ են, խոտաւէտ լեռներ, ծաղկաբոյս հովիտներ, աղբիւրաշատ ձորեր՝ մեծ բաժին եղած է իրենց, ուր ամռան կ'արածեն ոչխարներ, և ձմերան համար, որչափ ուզեն կարող են խոտ քաղել պատրաստել մեծամեծ դէզերով, և միայն այն ժամանակ խոտ կուտան ոչխարին երբ ձիւն սաստիկ կուգայ, և կը ծածկէ բոլոր լեռներ և արեգդէմ պառեկներ, իսկ երբ ձիւն այնչափ շատ չի լինէր և քամին արեգդէմ լեռներու ձիւներ կը տանի, ոչխար կարող է արածել և կշտանալ, գիշերն ևս ոչխարներ լեռներուն ծոցաւոր տեղեր կը մնան, ուր որ հով չի բաներ և արեգդէմ է։ Այս բացօթեայ ջերմին տեղերուն քիւրդեր ճաւշի կ'ասեն։ Ժամանակ կը լինի որ ոչխարի հօտեր, մինչեւ երեք օր կարող են անօթի մնալ հաւշիններուն մէջ մինչեւ որ ձիւնաբուք քամին անցնի։ Սորա համար ասի քեզ թէ ոչխար ամրան շոգին չի դիմանար, բայց ձմրան ցուրտերուն դէմ կը մրցի։ Տէր Աստուած հոգալով՝ այդ խեղճ կենդանին թանձր բուրդով նորա քամակ պատսպարեր է․ միթէ այդ օրհնեալ կենդանւոյն բուրդով մեր թիկունք չի՞ տաքնար։

Իսկ մենք գիւղացիքս, որ մէն մի տան սակաւաթիւ ոչխարներ ունիմք, ձմերան գոմի մէջ կը պահեմք, եւ

ցորեկներ դուրս հանելով ձեռն վերայ խոտ կուտամք և նորէն կը գոմնենք։

Ոչխարի գոմ իւր քանակութեան չափով պէտք է ընդարձակ լինի, այնպէս որ առանց նեղուելու նաեւն, կագնին տանիքէն և պատերէն պէտք է երդիք ունենայ, վասն զի ոչխարին համար չատ պէտք է մաքուր օդ, նա սովորած է լեռներուն հովատուն օդ ծծել միշտ։ Ոչխար մաքրութիւն և չորութիւն կը սիրէ, պէտք է միշտ գոմին յատակ չոր և մանր վայելն պարզել, զոր պէտք է ամրան հաւաքել ու պահել։ Նմանապէս հոգատարութիւն պէտք է գոմին տանիքին համար, զի կաթիլք չատ վնասակար են ոչխարին։

Գարնան, Ապրիլ ամսոյ կիսուն, կը սկսին ոչխարներ հետզհետէ ծնիլ, երբ դուրս եղած կ'արածան նորաբուսիկ և հին խոտերով։ Նոր ծնած գառներ և ուլիկներ հովիւ իւր իշուկին բառնալով իրիուան գիւղ կը բերէ։ Մայիս ամսուան մէջ երբ արօտներ կը զօրանան, կը սկսին ոչխարներ կթել։ Կէսօրին հովիւ ոչխարներ կը բերէ պետեղ. կը տեսնաս որ գիւղի հարսներ և աղջիկներ կաթի կժեր և կթոցներ առնելով կուգան պէրատեղ, ամէն մէկ իւր ոչխարներ կը կթէ։ Էդ երջանիկ կթուհներ գարնան գոյնզգոյն ծաղիկներով կը զարդարեն իրենց գլուխ և կաթի կժերուն բերան, կը չալկեն, ուրախ ուրախ երգերով գիւղ կը դառնան։ Եւ երբ կաթն կը լմընայ, գառնարածն որ գառնուկներ և ուլեր առանձին տեղ պահած է թող կուտայ, դու տես էն ժամանակ մի զուարճալի տեսարան, ոչխարներ կը բառաչեն, գառներ կը մայեն, կը թուի թէ մայր ոչխար իւր գառնուկին հետ կը խօսի և գառնուկ մօր հետ. հարիւրաւոր ոչխարներ գառներ կը խառնուին իրարու հետ. մինչեւ գտնեն գառներն իրենց բուն մայրեր, բուն մայրը երբէք օտար գառն չի ընդուներ իւր տակը։ Այս զարմանալի է հովուին ճարտարութիւն, երբ գառն կը մոլորի, չի կրնար գտնել իւր մայրն, հովիւն իսկոյն կը բռնէ գառնուկն և կը յանձնէ իւր մօր։ Եւ ինչպէս կը ճանչնայ գիտե՞ս, բաւական է որ նա ծնած ժամանակ տեսնայ մի անգամ, գիտես թէ լուսանկարի պէս նորածին գառն և մօր պատկեր էնպէս կը տպաւորի նորա անմշակ մտքի մէջ, որ նա կարող կը

լինի հարիւրաւոր ոչխարներու դառներն՝ առաջ և ետքը ծնած գոյնով իրարու նման սրատես աչքով որոշել իրարմէ։ Այսպիսի հովիւներ չատ հազուագիւտ են, և պատահ կը կոչուին, որ սրատես և ճարպիկ ասել է։

Ըմռնանք այս տեղ, Թոռնիկ, թէ հովուին համար չատ կարեւոր են գամբռ հուժկու գայլասեղդ չներ, չատ ճիշտ է թէ որ ասենք հովուին թիկնապահ և յառաջապահ պինդաոտներ են, որ հօտին առաջ երթալով կը դիտեն չորս կողմն։ Եթէ մի գայլ տեսնեն հեռուստ, տես դու ինչպէ՞ս խմբովին կը յարձակին, մինչև հալածեն։ կը պատահի երբեմն եթէ հասնեն բռնեն գայլ և խեղդեն, այն օր հովիւն իւր քաջարի չներուն մեծ ճաշ կուտայ, Որ կը պատրաստուի հացով և իւղով, որուն ճմուռ կ'ասեն։ Իսկ չներու սովորական կերակուրն է կաթ, որ մի մեծ փայտէ կօտի մէջ կը լեցնէ հովիւն ազատօրէն, գարէ հացն էլ մէջ կը բրդէ, էդ քաղաքավար չներ չուրջ կը բոլորին և կուտեն առանց կռուի։ Միթէ քաղաքի փողոցի անօթի շնո՞րն են, որ ոսկորի վերայ կռուեն։ Հովուի չներ գիտես թէ մի վեհանձն բնաւորութիւն ունին, ոչինչ տեղ չեն հաշիւ, բայց հօտին մօտ անծանօթ մարդ տեսնեն իսկոյն կը յարձակին։

Վերջապէս, Թոռնիկ, գամբռ չներ չատ պիտանի են ոչխարի հօտին համար, եթէ չը լինին գայլերէն չատ վնաս կը հասնի ոչխարներուն և հովիւ միայն կարող չէ պաշտպանել հօտն։ Մանաւանդ մշուշ եղած ժամանակն չգիտեմ, գրքեր հովուին անուն չատ կուտան. չներն ինչո՞ւ չեն յիշեր, որ հովուին օգնական զօրավիգն են։ Մեր ոչխարի չներուն լաւ նայէ, Թոռնիկ, եթէ ակարանան, ուժաթափ լինին այլևս կարող չեն գայլեր հալածել, նմանապէս հովուին հետ լիովին վճարել և աւելի հոգայ ու երբեմն պարգեւներ տուր պապօր հովուին։ Գիտե՞ս դու, ոչխարի հովիւ ժողովրդի հովուին չի նմանիր, որ առանց վարձքի ժողովուրդ հովուէ ու համբերէ։ Ինչպէս մեր գիւղերու քահանաներ։

Մոռցայ խօսել, Թոռնիկ, թէ ոչխարներուն ժամանակին աղ տալու է, ոչխարներ չափազանց աղ կը սիրեն, եթէ աղ չուտեն, իրենց ոչ կաթին և ոչ մսին մէջ համ կը լինի։ Թէպէտ այն գիւղեր որ վանայ կամ Արճակու

ծովուն մօտիկ են՝ աղի տեղ ծովու ջուր կը խմցունեն, որ վնասակար է, վասն զի այդ ծովերուն ջրեր աւելի բորակ ունին իրենց մէջ, և ոչ թէ զուտ աղ, թող այս երբեմն ևս չափազանց խմելով կը վնասուին, ուստի աւելի լաւագոյն և օգտակար համարուած է աղն։

Հովուական կեանք շատ անմեղ և երջանիկ կեանք է, Թոռնիկ, թէև մարդիկ կը կարծեն, թէ հովիւներ ապերջանիկ մարդեր են, մարդոց ընկերական կեանքէն զըրկուած, անբան անասնոց հետ կ՚ապրին, միշտ ամայի լեռներուն վերայ կը շրջին, շատ տխմար ու բթամիտ կը լինին։

Այս կարծիք շատ սխալ է, հովիւներ իրենց արուեստին հմտութիւն քաջ գիտեն, ոչխարներու ամէն կերպ հիւանդութիւններ կը ճանչնան, գիտեն դեղն ու դարման, լեռներու մէջ, դեռ անծանօթ մնացած ամէն ծաղիկներու, բոյսերու արմատներուն զօրութիւն փորձով գիտեն։

Հովուական կեանք հին նահապետաց կեանքի մի պատկերն է, ուր կը տեսնամք ոչ միայն այր մարդ, այլև աղջիկներ ոչխար կ՚արածէին՝ ինչպէս Ռեբեկայ, Ռաքել եւայլն։

Այդ լեռնասուն հովիւներ, այո՛, միշտ երջանիկ են, երբէք հիւանդութիւն չը գիտեն, զի նոքա ամենամաքուր օդ կը ծծեն, և ի՞նչ է իրենց բնական ու սովորական կերակուր, գիտե՞ս՝ մաքիներ կը կթեն, այն փրփրուն անխարդախ կաթին մէջ կը բրդեն հաց, պաղ աղբիւրի մէջ կը դնեն, դգալով կ՚ուտեն. նոքա ուտելու ժամ ու ժամանակ չեն որոշեր. երբեմն գիշերապահուն կաթ կթելով կը դնեն պաղոց մինչև առաւօտ, կը նայես որ այդ կաթին երես մի մատ սեր կապած է, էդ էլ հովուին առաւուան նախաճաշիկն է։ Հովուին խմած ջուրն, այն սառն ստակ աղբիւրներու զուլալ ջրերն են. հովուին շունչ ամենազան ծաղիկներու բուրումն է և իւր ռնգունք նոցա հոտով կը զմայլի։ Հովուին գիշերուան քուն շատ անդորր և անուշ է. նա չունի կակուղ անկողին, նա կը պառկի գետնախշտի, մի քար գլխուն բարձ կը դնէ, եւ իւր թախսէ կափանակ վերան կը քաշէ, նա կը քնանայ և շներ պահապան կը լինին հօտին։ Հովուին քուն շատ թեթև ու կարճ է. նա գրեթէ կիսարթուն կը ննջէ, զի

մինչ իր սրտին մէջ կասկած և երկիւղ ունի, թէ գայլեր գիշերուան պահուն յանկարծ կը յարձակին հօտին վերայ։ Զարմանալի է երբեմն՝ հովիւ երգի մէջ գայլոց գիշերուան պահուն յանկարծ կը յարձակին հօտին վերայ։ Զարմանալի է երբեմն՝ հովիւ երգի մէջ գայլոց վոհմակներ կը տեսնայ, նա կը սկսի քունին մէջ ինքնախօս լինել և շներ քշքշել և մերթ եւս իսկոյն վեր կը ցատկէ շփոթուած։

Հովիւ գեղարուեստի դպրոցէն ելած չէ, Թոռնիկ, բայց ինքն բնական երաժիշտ է. նա իր հովուական փողն առնելով կը նստի բարձր քարի վերայ՝ կը սկսի փչել, և գիտե՞ս, որչափ քաղցր և անոյշ է այդ հովուական փող։ Մերթ եւս հովիւն իր փողով իբրև զօրավար մի հրամանատարութիւն կ'անէ իր հօտին, ցրուածներ կը ժողվէ և իր մօտ կը կանչէ. մանաւանդ աղ տալու ժամանակ, ի՞նչպէս հօտն միահամուռ կը դիմէ դէպի աղն, որոյ կարօտութեան դէմ հոգի կուտան ոչխարներ։

Ահա հովուին կեանքն ու գործն, շատ համառօտ նկարագրեցի քեզ, Թոռնիկ. բայց խնդիր մի կայ, մենք որ հովուին կեանք երջանիկ կը համարինք, բոլորովին ազատ աշխարհի աղմուկներէն, բայց տեսնանք, թէ հովիւն էլ ինքզինքը երջանիկ կը համարի՞ և իր կեանքէն գո՞հ է։ Սորա համար խելացի մարդոց մի առակ միտքս կուգայ, խօսիմ քեզ, ուշադրութեամբ մտիկ արա։

Մի հարուստ հովիւ որ շատ ոչխարներու և տաւարներու տէր եղած է, մի օր ծովուն մօտիկ մարգագետնի վերայ, երբ իր անասուններ կ'արածայ, աչքն դէպի ծով կը դարձունէ, կը տեսնայ ծով մեղմաշունչ զեփիւռէն ծածանելով կը ծիծաղի, վաճառականաց նաւեր առագաստներ պարզած ու լցուած դէպի նաւահանգիստ կուգան։

Մեր անփորձ հովիւն հրապուրուելով այս բաղդին տեսարանէն, մի ա՛խ կը քաշէ և կը սկսի իր բաղդէն դժգոհալ. երանի՛ ես էլ մի վաճառական լինէի, ծովով ու ցամաքով աշխարհէ-աշխարհ ճամբորդէի, լսէի, աշխարհի բաներ հասկնայի, պատուաւոր վաճառական լինելով անուն հանէի։ Ի՞նչ է այս իմ կեանք. գիշեր ցորեկ անասնոց հետ կեանք կը վարեմ, աշխարհ բոլոր քաղաքակրթութեան ետև կը վազէ. ես դորա համ ու հոտ չգիտեմ, իրաւ է որ տունս ամենայն բարութեամբ լի է, կը վա-

յիշեմ Աստուծոյ տուած բարիքներ, ոչինչ կարօտութիւն չունիմ։

Բայց միթէ մարդոյն համար միայն ուտել խմել բաւակա՞ն է — հարուստ եմ՝ այլ ինչ օգուտ, որ անծանօթ մնացեր եմ, իբրև մի սովական հովիւ, թէ մեռնիմ՝ յիշատակս էլ կը կորնչի. ո՛վ է տեսեր որ հովուի գերեզմանին վերայ կոթող մի կանգնեն. ես կ՚ուզեմ որ անունս արձանագրուի աշխարհի մեծագործ մարդոց հետ, ապագայ սերունդ կարդայ և յիշէ զիս։

Այս խաբուսիկ երևակայութիւնէն խաբուեցաւ մեր հովիւ. գնաց վաճառեց իւր բոլոր անասուններ, մեծ գումար մի եղաւ. տուաւ գնեց բազում ապրանքներ, տարաւ նա, որ երթայ օտար աշխարհ վաճառէ։ Այս մեր անգիր, անհաշիւ հովիւն ուրախ-զուարթ նստելով նաւուն վերայ՝ ինքնին մտաւորական հաշիւ կ՚անէր, այսպէս առի և այսպէս բարձր գնով պիտի ծախեմ, և այս առաջի անգամին այսքան պիտի շահիմ։

Մինչդեռ հովիւն իւր այս հաշւով կը զուարճանայր, ծովն էլ իւր բնութեան հաշիւն սկսեց. սոսկալի փոթորիկ հանեց, նաւն տարաւ զարկաւ մի ցամաքի ապառաժներուն, խորտակեցաւ նաւ և բոլոր ապրանքներ թափեցան ի ծով, խեղճ հովիւն մի փրկութեան տախտակ գրկելով հազիւ ազատեցաւ, ելաւ ցամաք, և յետոյ մի ուրիշ նաւով դարձաւ եկաւ տուն՝ մերկ կողոպուտ։ Առաջ տէր էր, յետոյ վարձկան ծառայ դարձաւ, և հետզհետէ անասնոց տէր եղաւ, հասաւ իւր առաջի վիճակին։ Մի օր գնաց դարձեալ այդ ծովեզրի արօտատեղն տեսաւ որ ծովն առաջուան պէս դարձեալ կը ծիծաղի իւր դէմը և նաւեր բարձուած կուգան։

Մեր հովիւ խելաբերելով կ՚ասէ. է՛, անիրաւ ծով, այլևս քո ծիծաղին չեմ հաւատար, տունս քանդեցիր։ Բայց ես էլ բան հասկցայ քո փորձանքէն, թէ հովիւ վաճառական չի կրնայ լինել, և պէտք է այսուհետև իմ վիճակովս գոհ լինիմ և փառք տամ Աստուծոյ։

Տեսա՞ր, Թոռնիկ, այս առակ թող քեզ խրատ լինի, չի լինի դու էլ մի օր ունայն երևակայութիւնէն խաբուելով ասես. ոչխարներս ծախեմ, որ գութան տաւարներով ծախեմ, բոլոր արտերս ծախեմ, որ կը լինի մեծ

գուժար, երթամ ի վան վաճառական լինիմ, թողնեմ գեղացիութիւն, եղնիմ քաղքի. գեղեցիկ տուներ չինեմ, երբեմն եւս երթամ Ըստանպոլ՝ գամ, մեծ վաճառականի վարկ ու համբաւ առնեմ եւայլն։ Դու չ'գիտես, թոռնիկ, դեռ անփորձ ես, թէ քաղաքային կեանքի փորձանք ծովու փորձանքէն էլ աւելի կործանիչ է, թէ նիւթապէս և թէ բարոյապէս։ Հեռո՜ւ, հեռո՜ւ քաղաքէն և քաղաքացւոց կենցաղավարութենէն։ Ապահով կեանք գիւղն է, և արդար վաստակ մշակութիւն է, հողագործ՝ վաճառական չի լինիլ, մանկալն էլ ծովու նաւապետ կամ ղեկավար։ Ինամակալ Աստուած ամէն մարդ իւր տեղ դրած է, որ աշխատին. քաղքին ի քաղաք, գիւղացին ի գիւղ, նաւապետն ի ծով, մանկալն ի դաշտ։ Մարդիկ երջանիկ կը լինին, եթէ գոհ լինին իրենց գանուած վիճակէն և չ'ձգտին այն բանին, որ իրեն, ուժէն և չափէն վեր է, և չեն կրնար հասնիլ։ Այնպէս չի հասկնաս, թոռնիկ, երբ դու յառաջդիմիլ կ'ուզես, ես քար կը դնեմ ոտքիդ առաջ, որ անչարժ մնաս ուր որ ես։ Ո՛չ, իմ միտքս այն է, որ գիւղական կեանքի մէջ յառաջդիմես, տանուտէր լինիս, ագարակի տէր լինիս, հազար-հազար ոչխարներ ունենաս, բայց չը թողուս գիւղն ու դաշտ և միշտ յիշելով մեր առակ՝ ծովեզրին չը մօտենաս։

Աւարտելով այս երկար դաս, զոր խօսեցայ քեզի, ոչխարների խնամոց և գարմանի վերայ, այժմ պիտի խօսիմ անասնոց հետ դիւրութեամբ վարուելու մասին։

Ժ.Զ.

ԳԹԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԸՆՏԱՆԻ ԱՆԱՍՆՈՑ ՎԵՐԱՑ

Գիտէնք, թոռնիկ, և սուրբ Գիրք կը պատմէ մեզ, թէ Տէր Աստուած երբ ստեղծեց բոլոր անասուններ, մի հանդէս կազմեց, բոլոր կենդանիներն բերաւ Ադամ Թագաւորին առջեւէն կարգ-կարգ անցուց, ցոյց տալով թէ այս ամէն քո իշխանութեան ոտքի տակ դրած եմ։ Ինչպէս Դաւիթն էլ կը խօսի. «Զամենայն ինչ հնազանդ արար ի ներքոյ ոտից նորա ոչխարն՝ և զարջառ և զամենայն ինչ»։

Այս անասնոց մի մասն ընտանեցած են մեզ, և մեր բոլոր աշխատութեանց մէջ կը ծառայեն, կը հնազանդին ինչպէս որ ուզենք։ Մի մասն էլ կայ, որ ազատ և ապըստամբ են մարդոյն դէմ. զի մարդէն աւելի հզօր և պատառող գազան են, որ հեռաւոր անապատներ և աւելի անտառներու մէջ կը բնակին՝ և ստեղծող Աստուած չի մոռնար անոնց, կերակուր կուտայ։ Առիւծի կորիւններ կը մռնչեն, Աստուծմէ իրենց կերակուր կը խնդրեն։ Եւ ի՞նչ է իրենց կերակուր. տկար կենդանիները, զորս պէտք է աշխատութեամբ որսան, ուտեն և ապրեն։ Այս աշխարհի մի բնական օրէնքն է, որ տկարներ ուժովներուն կերակուր լինեն։ Թողունք ցամաքի աշխարհ, ծովու աշխարհին մէջն էլ այդ օրէնք կը տիրէ. կը տեսնաս որ փոքրիկ ձկներ, մեծ ձկներուն միշտ կերակուր կը լինին։

Բայց չը կարծես, Թոռնիկ, թէ այդ անընդել և անզուսպ գազաններ բոլորովին ազատ են մարդոյն տիրապետութենէն. ո՛չ, մարդ իւր ճարտար հնարամտութեամբ կարող կը լինի որսալ այդ կատաղի գազաններ և վանդակներու մէջ փակել, և այն աստիճան կրթել զանոնք, որք իբրև մանուկ մի կը հնազանդին իրենց կրթող տիրոջ։

Իսկ մեր ընտանի անասուններ այնչափ ընտելացած են մեզ, որ մեզ հետ կ'ապրին, գրեթէ ընտանեկից կը համարուին, և մեր բոլոր թէ մշակական աշխատութեան և թէ ուրիշ բաներու մէջ աշխատակից են։

Թէպէտ մենք մեր անասնոց տէր և իշխան ենք, կը ծեծենք, կը չարչարենք և անպատիժ կը մնամք, թէև երկրին օրէնք անասնոց չարչարելու համար սահմանեալ պատիժ ունի։ Թող օրէնք, Եւրոպային մէջ յատկապէս անասնոց պաշտպան ընկերութիւն կայ, որ կարգուած պաշտօնեաներ ունի, ոստիկանաց պէս կը հսկեն, եթէ տեսան մէկն որ անգթութեամբ կը վարուի ոե՛ւիցէ անասնոց դէմ՝ իսկոյն կը բռնուի և իւր պատիժ կը կրէ։ Եթէ տեսան որ կառավար մի իւր ձիերուն դարման խնայելով վատուժ և տկար պահած է, այնպիսին իսկոյն պատիժ կը կրէ և կը տուժէ, իսկ այն որ իւր բեռնատար ձին այնչափ լաւ դարմանած է, որ անհագին պալեաններ բարձուած մի սայլի՝ միայն կը քաշէ, պաշտպան ընկերութիւն՝ այնպիսի

կառապանաց պարգեւ և մրցանակ կուտայ։

Մեզ համար այդ բան չկայ՝ ոչ պատիժ և ոչ մրցանակ, բայց մեր մրցանակ կամ պարգեւ մեր չահն է, վասն զի մենք մեր աշխատասէր անասուններ որչափ լաւ դարմանենք, առոյգ և ուժեղ պահենք, այնչափ աւելի չահ կը լինի մեզ նոցա կրկնապատիկ աշխատութենէն։ Իսկ երբ մեր անասուններ տկար և անուժ լինին, մեր վարուցան և ամէն ինչ տկար կը լինի, այդ շատ յայտնի բան է, երբ գործիչներ տկար լինին, գործն էլ հետեւապէս տկար կը լինի։ Օրինակ աչքիդ առաջ է, Թուռնիկ. այն գութաններ, որ ուժեղ գոմէշներով ու եզներով լծուած են, որչափ աւելի սեղ կը վարեն, քան այն գութան, որոյ անասուններ նիհար և ուժաթափ լինելով, մի օրավար տեղն հազիւ երկու օր կը վարեն։

Եթէ միայն մեր չահ նկատելով դարմանենք անասուններ, այդ մի առաքինութիւն չէ, այլ արդարութիւն կը պահանջէ որ բնականապէս գութ ունենանք անասնոց վերայ, վասն զի անասուններն էլ աշխարհիս վերայ մեզի պէս ցաւակցութիւն ունին, կարօտ են մեր օգնութեան։ «Արդարն ողորմի անասնոյ իւրում, սիրտ ամբարշտաց անողորմ են», կը խօսի սուրբ Գիրք։ Տէր Աստուած սուրբ անասուններ տուաւ մարդոց, որ մորթին եփեն ուտեն, բայց օրէնքով կ՝արգիլէ, որ չզեներուն զգառն ի կաթն մօր։ Երբ նորա մայր իւր նորածին գառնուկին վերայ կը գորովի, ո՞րչափ անգթութիւն է կաթնկեր գառնուկին արիւնն կաթին հետ խառնել, որով խեղճ մայր բնական գթով մորմոքելով կը բառաչէ և գառնուկ կը կանչէ։ Անասնոց բնական գութ ժամանակաւոր է. այնչափ կը տեւէ՝ մինչեւ նորածին գառնուկներ և հորթիկներ կաթէն կարօտին, իսկ մարդկային ծնողական գութ մինչեւ ի գերեզման կը տեւէ։ Եւրոպիոյ քաղաքակիրթ աշխարհ այդ հաշիւ չունի, կաթնկեր գառն էլ, հորթն էլ, ի միասին կ՝ուտէ. ոչ Մովսէսին մտիկ կուտայ և ոչ բնական գթոյն։ Բայց զարմանալի է, երբ օրէնք կը դնէ որսորդներուն համար, որ թռչուններուն ձագ հանած ժամանակ որսորդութիւն չ՝անեն։ Այդ ինձի էնպէս կը թուի, այնչափ գթութեան համար չէ, որչափ այն հոգածութեան համար թէ վաղիւն գինչ կերիցուք, մի գուցէ այդ համադամ թռչնոց կերակուր պակսի ագնուականաց սեղանէն։

Գթութիւն այնչափ մեծ առաքինութիւն է, Թոռնիկ, որ ոչ միայն զգալ կուտայ մեզ խնայել և գթալ մեր ընտանի անասնոց վերայ, այլեւ նոյնիսկ պատուող գազանաց վերայ անգամ կը չարժէ մարդոյն սիրտ։ Այդ մտքին յարմար մի սիրուն առակ խօսիմ քեզ, որ գթասիրութեան մի ճիշտ օրինակ է։

Մի մատաղ հղնիկ, իւր բնակած այրին մէջ ծնած ժամանակ, չգիտեմ ինչպէս կը լինի՝ իւր ձագեր կը մեռնին, խեղճ հղնիկ կը թողու իւր մեռած ձագերն, կ'ելնէ կը չորչի լերան անտառին մէջ, մի որչի պատահելով՝ կը տեսնայ որ երկու հատ գայլու նորածին լակոտներ անօթի նուաղած ինկած են։ Գուցէ իրենց մայր ոչխար ուտելու երթալով՝ չնեցէն խեղդուած էր, լակոտներ անմայր մնացեր էին։ Գթասիրտ հղնիկ մայրենի գորովով խղճալով գայլու լակոտներուն վերայ, ի՞նչ կը լինի ասաց, որ ես այս անտէր լակոտներ անուշանիմ, քանի որ ծծերս կաթով լեցուած են, մինչեւ որ մեծնան։

Էդ անտառի մէջ մի դրացի ճգնաւոր կար, գիտես, Թոռնիկ, ճգնաւորներ ոչխարհէ հեռացած աղօթասէր մարդիկ են, բայց ծնողական գթոյ քաղցրութեան չատ ճաշակ չունին։ Է՛, անխելք հղնիկ, կ'ասէ ճգնաւոր. կը զարմանամ, դու ի՞նչպէս այդ գայլոյ լակոտներ կը անուշանես, չի՞ս գիտեր, որ դոքա մեծնան գայլ կը լինեն և գուցէ առաջին անգամ ձեր արիւն ծծեն։ Էդ բան ես չեմ մտածեր, այլ կը մտածեմ միայն բարիք մի անել, կը պատասխանէ բարեսիրտ հղնիկ, ի՞նչ անեմ, ես կաթ ունիմ, ձագ չունիմ, այս խեղճեր մայր չունին կաթի կարօտ են, պէտք է մայր լինիմ, հոգամ զիրենք։ Է՛, ճգնաւոր եղբայր, միթէ՞ մարդոյ ծնածներն ամէնք բարի կը լինին, և երբ մեծնան գայլէն աւելի չարագոյն չե՞ն։ Այս մի առակ է, Թոռնիկ, ուրիշ մի եղած բան պատմեմ քեզ, զոր ես աչքովս տեսայ, և դու տես թէ ինչպէս գթասիրութիւն երբեմն զմարդ ծայրայեղութեան կը տանի, գիտենք, թէ մարդ մարդոյ վերայ կամ ընտանի անասնոց վերայ գթալ սովորած է, բայց չենք տեսեր թէ մարդ գայլոյն գթութիւն անէ, որ միշտ ոչխարներ կը գիշատէ։

Հայրիկ, երբ Հովիւ ընտրուեցաւ Մշոյ վիճակին, վարագէն Ս. կարապետ երթալու ժամանակ, ես էլ հետն էի,

գնացինք հասանք Զիարէթ գիւղ, որ քիչ հեռու է Գլա-
կայ վանքէն։ Էդ գիւղի մարդիկ չատ պատիւ արին Հայ-
րիկին, մեղրով սեր, մեղրով կարագ, խորոված գառն
կերանք ու կերանք, երնէ՛կ էն աւուր։

Ճաշէն յետոյ տեսանք էդ գիւղի կարիճ երիտասարդ-
ներ, մի ողջ գայլ բռնած են, բերնին ու ոտքերուն մէջ
փայտ գնելով պիրկ կապած՝ էնպէս բերին ձգեցին Հայ-
րիկին առջի։ Է՛, Հայրիկ, սուրբ մեր բախշիշ տուր, այս
միջոցին էդ խեղճ գայլ աչքեր դարձուց դէպի Հայրիկն,
էն ժամանակ ես տեսայ որ Հայրիկն չատ դժար եղաւ,
և չատ զգացուեցաւ, հարցուց թէ ո՞ւր տեղ բռնեցիք այս
գայլ, ասին թէ գիղին մօտեր, եկեր էր, պահուըտեր էր
գոմին պատի մի քունջ, որ գիշեր ելնէր ոչխար գողնար
ուտէր։ Հայրիկն ասաց. միթէ՞ ոչխար ձեզի համար հա-
լալ է, գայլու համար հարա՞մ է. Աստուած գայլն էլ ոչ-
խարին հետ ստեղծեր է և իւր գըմաթ տուեր է. դուք
ազատ կերպով ոչխարներ կը մորթէք կ'ուտէք, ի՞նչ կը
լինի որ այդ խեղճ լերան աղքատին էլ բաժին տաք,դուք
զրպարտութիւն կ'անէք այս գայլուն վերայ, նա չէր ե-
կեր ոչխար գողնալ, այլ լսեր էր թէ գեղ խաչ օգնեա մա-
տաղ գայ, եկեր էր մատաղ ուտելու ո՛վ գիտէ քանի՞ օր
անօթի մնալով ուժէ ինկած, հազիւ ինքզինք ձգեր է գե-
ղըն, դուք վերան հասնելով բռներ էք, և որպէս թէ
մեծ քաջութիւն արած էք, բախշիշ կ'ուզէք։ Մեծ բախշիշ
կուտամ ձեզ, արէք գեղէն դուրս արձակեցէք խեղճ գայլ,
թող երթայ իւր բանին։ Այս որ լսեցին գեղացիք, սկսե-
ցին մռմռալ իրարու հետ, ծօ մարդիկ, էդ Հայրիկ հովիւ
եղած է մեր երկրին՝ մեր ոչխարներ գայլերո՞ւն պիտի
տայ, մենք հազար ճարով գայլ մի բռնեցինք, նա կ'ասէ
արձակեցէք։ Հայրիկն այս տրտունջն լսելով՝ սկսեց իւր
գայլու առակներ։ Մտիկ արէք գիւղացիք, ձեզ մի առակ
խօսիմ։ Մի գայլ եօթն օր եօթ գիշեր սոված ձորեր չըր-
ջելով բան մի չինկաւ ձեռք. տեսաւ որ անօթի պիտի
մեռնի, ասաց ուչիկ ուչիկ երթամ մօտի գեղն, գուցէ
Աստուած մի գըմաթ տայ ինձ։ Խեղճ գայլ խելամաղ ի-
րիկուան մութին կը հասնի մի գիւղ, մի գոմի պատի
տակ կը կծկուի։ Էդ գոմի պատի ճեղքէն գայլ դէպի ներս
կը նայի, որ ճրագներ կը վառուին, ոչխարներ կը մոր-
թուին, շներն էլ մի կողմ չնթռկած և աչքերնին անկած
իրենց բաժինին կը սպասեն,

Այսօրեղ գայլուն սիրտ դառնացաւ և սկսաւ ինքնին ասել, է՛, անիրաւներ, այդ բան եթէ գայլն անէր, ի՞նչ վայնասուն կը հանէիք. դուք, հովիւներ չնորով բրերով զայն պիտի հալածէիք, ես արդ զրկուած ու նուաղած աչքով կը դիտեմ ձեր այդ արածներն, գայլու անուն եւած է, ոչխարներ դուք կուտէք, դուք յիրաւի կերպարանքով մարդ էք, այլ բարքով մարդագել էք, դուք չէք տեսնար այն մեր դրացի մարդագելներ, որոնք խուժդուժ կը յարձակին և ձեր ոչխարի հօտեր պըռ անելով կը տանեն, ձեր և ձեր չնորու քաջութիւն միայն խեղճ գայլերու վերայ կը փորձէք, որոնք չատ սակաւապէտ և ձեզմէ աւելի խղճմտանք ունին։

Գայլու այս գանգատն ու դատաստան չատ իրաւացի է, սիրելի գիւղացիք, գայլերն էլ պիտի ապրեն աշխարհիս վերայ, դուք կ'ուզէք նոցա սերունդ հատցունել, պէտք է գիտնաք որ գայլեր ձեզ համար չատ օգտակար են, եթէ գայլերուն ահ չը լինի, դուք երբէք ձեր ոչխարներ չէք պաշտպաններ։

Հայրիկին առակ և այս խօսքեր բաւական դպաւ գիւղացւոց սրտին։ Երիտասարդներ ասին, Հայրիկ, ինչպէս կ'հրեւայ՝ դուք չատ կը գթաք այս կոպուած գայլուն վերայ. մենք քո խաթեր համար կ'արձակենք, ազատ կը թողունք, մեր բախչիշ տուր։ Առին զբախչիշ, խարեցին զՀայրիկ, խեղճ կապուած գայլն տարին գեղէն դուրս, չներ թող տուին վերան խեղդեցին, գայլու փոստիկ հանին։ Շատ լաւ արին գիւղացիք, Հայրիկ եւեր է ներողութեան ճառ կը կարդայ գեղի ոչխար ուտող գայլուն։

Այս պատմութիւն արի քեզ, Թոռնիկ, բայց դու զգոյշ կաց, ճիշդ խրատ առնելու օրինակ չէ. միայն պատմեցի քեզ, որ լաւ հասկնաս թէ գթասիրութիւն որչափ կը սիրէ մարդոյն սրտին վերայ, որ պատառող գազան անդամ խնայել կ'ուզէ։

Հապա մեր ընտանի աչխատաւոր անասուններ որչափ արժանի են մեր գթասիրութեան։ Խստասիրտ և անողորմ են այն երկրագործներ, որ անասուններ չարչարելով տանջելով հաց կը վաստկին. սորա համար է որ այնպիսիներ կուշտ հաց չեն ուտեր, միթէ անասնոց աղաչակն ու հեծեծանք չի հասներ երկինք, դու մի կար-

ձեր թէ անասուններ իբրեւ ոչինչ և չքոտի գումարուած են Աստուծոյ առաջ։ Դու չե՞ս կարդացեր Յովհան մարգարէի գիրք. Տէր Աստուած ամբարիշտ Նինուէացւոց խնայած ժամանակ անասնոց էլ խնայից հաւասար այնչափ տղայոց, որ չգիտէին աջն ու ձախն։

Խիստ կը գորովիմ Թոռնիկ, գութս կը չարժի, երբ կը տեսնամ, որ մեր գիւղական մշակ ժողովուրդ չատ անխիղճ և անխնայ կը վարուի իւր ընտանի լծկան անասնոց հետ, միշտ խարազանակոծ կը տանջէ, այնպէս որ անմռունչ անասնոց քամակներու վերայ հարուածոց գծեր շերտ-շերտ կ'երեւան։ Եթէ բազամու խօսուն իշու պէս Աստուած հրաշքով բանար անասնոց լեզուն, ի՞նչ աղաղակ ու գանգատ պիտի բառնային մարդոց անգթութեան համար։ Այլ միթէ նորա անմռունչ հնծութիւն ու բառաչն մի աղաղակ չէ՞։ Հնձող մշակին զրկանաց բողոքն կը հասնի երկինք, մշակին աշխատակից զրկեալ հարուածեալ անասնոց բողոք երկինք չի՞ հասներ։

Երբեմն կը տեսնամ, խեղճ անասուն ուժաթափ լինելով լուծն ի վզին այնպէս ակօսին մէջ կը թաւալի, տես դու էն ժամանակ ո՞րչափ խարազան պիտի ուտէ, հարուածին չը տոկալով՝ ճարահատ կը կանգնի, քիչ մի տեղ կ'երթայ և դարձեալ կը թաւալի։ Անգութ հերկագործ չի մտածեր՝ պահ մի թողում այդ խեղճ անասուն, թող երթայ արածայ հանգստանայ և ապա երեկոյ լծեմ։ Անգութ մարդիկ էլ կան, որ խարազանի կամ դալար ճիպոտի տեղ, չոր փայտ կը գործածեն. էն ժամանակ ոչ միայն կաշին ու միս, այլեւ ոսկորներ անգամ կը ջախջախուին անլեզու անասնոց։

Զիպան կամ իշպան մարդիկ եւս չատ չարաչար կը վարուին այդ բեռնատար անասնոց հետ, երբեմն ծանր բեռներ կը բառնան իրենց ուժէն վեր։ Եթէ պատահի որ խեղճ անասուն բեռան տակ ճարահատ լինելով նստի, կամ դիպուածով իյնայ, ի՞նչ կ'անեն, գիտե՞ս. անգթաբար կը ծեծեն բեռան տակ, որ ծանրութեան տակ ճնշուած անասուն ինքնին կանգնի, այս պատճառաւ թշուառ անասուն կը վտանգուի կամ մէջքէն և կամ ոտքէն։

Կը տեսնա՞ս, Թոռնիկ, թէ մարդոց անգթութիւն ո՞րչափ կը ծանրանայ խեղճ անասնոց վերայ, պաշտպան ու

վատատեսն չունի, միայն խիղճ ու գթասիրութիւն է ա-նասնոց պաշտպան, այդ եւս չատ հազուագիւտ է մարդոց սրտին մէջ։

Հայրս կը պատմէր ինձ, Թոռնիկ, թէ ժամանակաւ մի կառավարիչ ուներ է ի վան. էդ մարդ բնականապէս մեծ գթասիրութիւն ուներ անասնոց վերայ. եթէ տեսնար մի մարդ որ չարաչար կը վարուէր անասնոց հետ՝ իսկոյն կը պատժէր զայն և յանցանքին համեմատ ղուարճալի պատիժներ կուտար։

Մի օր քաղաքէն ելնելով դէպի Արտամետաւ ատեն կ'երթայ, կը տեսնայ որ երկու ձիապաններ մի աղբիւրի դլուխ հանգիստ նստած հաց կ'ուտեն, իրենց ձիեր էնպէս բեռան տակ կեցած են, իսկոյն հրամայեց կ'անէ որ ձիերուն բեռներ վար իջեցնեն, էդ բեռներն էլ գարի են ու-ղեր, ձիերու տոպրակներ բաւականին լեցնելով, կախել կուտայ ձիերու գլխէն, էդ բեռներն էլ մէկ-մէկ թակ մարդոց կռնակ կը դնէ և կ'ասէ մինչեւ ձիեր իրենց գարին ուտեն, դուք էլ պէտք է ոտքի վերայ կենաք էդպէս։

Մի օր եւս քաղաքի դռնէն դուրս ելած ժամանակ, կը տեսնայ որ երկու մարդիկ մէկ ձիու վերայ նստած դէպ Այգեստան կ'երթան, այս բան կառավարչի աչքին չատ արտառոց կ'երեւայ, հրամայեց կ'անէ երկուքէն մէկն ձիէն վար իջնայ և իսկոյն կը ղրկէ բանտ. միւսին կ'ա-սէ, դու ծեր ես, քեզ խնայեցի, գնա լուր տուր ընկե-րիդ համար թէ բանտ տարին և տասն օր իւր պատիժ պիտի կրէ։

Մի օր դարձեալ քաղաքէն դուրս չրջած ժամանակ, կը տեսնայ մի մարդ, մի տոպրակ թեւին վերայ ձգած՝ կ'երթայ, բայց չատ կը զարմանայ, երբ այդ տոպրակէն կատուներու ձայներ կը լսէ, մօտենալով կը հարցնէ, ի՞նչ կայ այդ տոպրակին մէջ, մարդն կը չուարի ժխտել, ո-րովհետեւ կատուներու ձայներ կը լսուին։ Ապա, կ'ասէ, գող կատուներ են, պիտի տանիմ ձգեմ քաղաք։ Ա՛յ ան-պիտան մարդ, կ'ասէ կառավարիչ, ես գողեր քաղաքէն դուրս կը հալածեմ, դու կատուներ քաղաք կը տանիս։ Հրամայեց կ'անէ խեղճ կատուներ տոպրակէն դուրս հանեն և այդ տոպրակ անցուցնել կուտայ մարդուն դլուխ, մի ոստիկան ձեռքէն բռնելով դէպի բանտ կ'առաջնորդէ. ես

խայտառակութիւն կը տեսնան անցնող դարձող մարդիկներ. միայն թէ գլուխն առպրակի չնորհիւ չեն կարող ճանչնալ։ Իսկ ազատուած կատուներ ուղղակի դէպի տուն կը դառնան, լուր կը տանին անոնց, թէ իրենց տէր քանտ տարին։

Բայց դու հարցո՛ւր, Թոռնիկ, թէ այդ գթասէր մարդ միայն չարչարուած անասնոց վերայ գութ ունէր և այդպէս անաչառ դատաստան կը տեսնար, չէ՞ նոյն գութ և անխտիր դատաստան զրկեալ մարդոց համար էլ ի գործ կը դնէր։

Այո՛, Թոռնիկ, երբ մարդ անասնոց վերայ գութ ունենայ, չատ բնական է, որ իւր համացեղ ընկերին վերայ աւելի եւս կը զգայ և գթասիրութիւն կը չարժի։ Այլ ով գիտէ, աշխարհ է, գուցէ կան այնպիսի մարդիկ էլ, որ արտաքուստ բարեսիրտ ձեւանալով, կատուի դատաստան կը տեսնան, որպէս զի ցոյց տան թէ արդարասէր են, իսկ բողոքող զրկեալ մարդու դատաստան ի բաց կը թողուն։ Ինչպէս Քրիստոսի ժամանակ կեղծաւոր փարիսեցիներ ուզան կուլ կուտային և մժղուկներ գինու երեսէն կը քամէին. այսինքն Աստուծոյ օրինաց արդարութիւն զանց կ'անէին և փոքրիկ աննշան բաներն արդարութիւն կը համարէին։

Մարդիկ կը կարծեն, Թոռնիկ, որ դատաւոր Աստուած միայն զրկեալ մարդոց համար վրէժխնդիր կը լինի։ Ո՛չ, ես լսած եմ, և գրքերու մէջ եւս կարդացեր եմ, թէ անխօս անասնոց բողոքն եւս կը հասնի Աստուծոյ առաջ և Աստուած դատաստան տեսնա վրէժխնդիր կը լինի։

Ասորի սուրբ Եփրեմ խուրին ինքնին կը խոստովանի իւր ազայութեան յանցանք, որ գրած է իւր վարուց պատմութեան մէջ։

Կ'ասէ թէ ես պատանեկութեանս ժամանակ չատ ատեհակ անհանդարտ և չարաճճի մի պատանեակ էի, մի օր դաշտի մէջ մի յղի կով տեսայ, որ նստած էր, պիտի ծնէր. ես քարաձգութեամբ հալածեցի խեղճ կով, չը թողի որ նա հանգիստ ծնէր իւր հորթիկ. այնչափ վազեցի հետեւէն, մինչեւ տարի անտառին մէջ։ Կովն իւր հորթ նետեց և չնչասպառ ընկաւ գետին. մնաց այնպէս, գազաններ գիշեր կովն էլ հորթն էլ կերան։ Էդ կով մի աղ-

քաոի կով էր. բանը ծածուկ չը մնաց, իմացուեցաւ, պիս տարին բանտ դրին. էդ բանտին մէջ ուրիշ յանցաւորներ էլ կային, որ իրենց մեղքեր իրարու կը պատմէին. մէկն կ'ասէր, ես մի անմեղ մարդ սպանեցի. միւսն կ'ասէր, ես մեծ վաճառական մը կողոպտեցի և պինքն սպանեցի եւայլն։ Ջիս էլ հարցուցին, տղա՛յ, քո մեղքն ի՞նչ է. ես պատմեցի կովու անցքը. օ՛, ասին, էդ էլմե՞ղք է։ վերջապէս ոճրագործ մարդոց դատաստան տեսնուեցաւ տարին կախեցին։ Իսկ իմ տղայութեանս խնայելով զիս մահապարտ չդատեցին, բայց լաւ մի ծեծելով արձակեցին բանտէն. յիսուի քանի ամիսներ բանտին մէջ չարչարուեցայ։ Երբէք քուն չունէի, միշտ հալածեալ կովու պատկեր աչքիս առաջ կուգար։

Մտածեցի որ աղքատի կովու համար պէտք յսուիտեան ապաչխարիմ. ուստի Թողի տուն, հայր, մայր և ամէն ինչ ասի երթամ սար ճգնաւոր լինիմ, անգթութեան ու զրկանաց մեղքերս քաւիմ։ Եւ ես այս փորձանքով զգաստացայ և խելամուտ եղայ Աստուծոյ դատաստանին, որ անասնոց համար էլ վրէժխնդիր կը լինի, երբ մենք անգթութեամբ վարուինք անխօսուն կենդանեաց հետ։

Այս պատմութիւն Թող խրատ լինի քեզ, Թոռնիկ, երբէք մատչէդ մի հաներ, և միշտ յիշէ Սուրբ Եփրեմի պատմութիւն և հալածեալ կովու դատաստան. գիտնալով և հաւատալով թէ Արդար Աստուած հաւասարապէս դատաւոր է ինչպէս մարդոյն՝ նոյնպէս և զրկեալ անասնոց։

ԺԲ.

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ ԾԱՌԱՏՆԿՈՑ

Սիրելի Թոռնիկ, եթէ ասի հազար-հազար տարիներ առաջ ծնած լինէինք, պիտի տեսնայինք այս մեր բնակած երկրագունդ բովանդակ անտառներով զարդարուած։ Եւ ո՛վ էր տնկեր. Արարիչ Աստուած, որ ասաց և եղաւ, ոչ միայն ծառեր, այլեւ ամենազան բոյսեր ինքնին երկրի ծոցէն վեր բուսան։ Տես այն մթագոյն լեռներ և այս ընդարձակ դաշտեր, հովիտներ, ձորեր, գուցէ ժամանակով խիտ անտառներով լցուած էին։



Գ Ա Ր Ո Ւ Ն — *Նկար՝ Մ. ՍԱՐԵԱՆԻ*

* * *

Շող ու շռայլ այս աշխարհում, հրաշքներում, հմայքներում,
Սրտիդ խորունկ խորքում ընկած՝ քո Հայաստան աշխա՛րհն եմ ես։

Շքեղ լեզուով ինչքան կանչեն ու կախարդեն շռայլ խոսքով,
Քո վշտին՝ քոյր, քո ցրտին՝ հուր — քո մայրենի բարբառ՛ն եմ ես։

Ինչքան գերեն քեզ ոստաններն ու պալատները մարմարի,
Պահած մեր ոճն ու մեր ոգին՝ Հայոց ազնիւ խաչքար եմ ես։

Հազար գետ կայ, հազար ծովեր, ովկիանն՛եր կան հզօրաշունչ,
Թէեւ փոքրիկ, բայց խո՛րն ու վեր՝ քո մաքրաջուր Սեւանն եմ ես։

Ո՛ւր էլ լինես, ում գրկի մէ՛ջ, գիտե՛մ, կը գա՛ս, իմ հեռաւոր,
Չէ՞ որ դարձիդ ճամբին նայող, խոր կարօտած քո վա՛նն եմ ես...

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

կը թուի թէ, հին նախատարու մարդիկ, որ միայն վայրենի որսորդութեամբ կ'ապէին, գուցէ մոռցած էին մեր Նախահօր մշակութեան արուեստ, որուն Տէր Աստուած գործել ձերկիր ու պահել։ Էն ժամանակուան վայրենի մարդիկ որ վաղուան համար հոգալ չգիտէին, սկսեցին անխնայ կերպով ջարդել, վառել անտառները։ Բայց նախապէս հոգացող Աստուած այս մեր երկրագնդին չատ տեղեր երկրաշարժով վեր ի վար չրջեց, անթիւ անհամար անտառներ գետի խորութեան տակ պահեց ինչպէս մի անսպառ գանձ՝ մարդոց ապագայ սերունդին համար։ Ներկայ խելացի սերունդ երկրագունդ քրքրելով և կրկին խոր ծոցեր բանալով՝ գանձը գտաւ, և ի՞նչ է այդ գանձը. գիտե՞ս, Թոռնիկ, ոչ ոսկի է և ոչ արծաթ, այլ սեւացեալ քարածուխ, որ ոսկիէն աւելի պատուական և չահեկան է։ վասն զի աշխարհիս յառաջդիմութեան մեքենաներ չոգիի զօրութեամբ կը գործեն, և չոգին ջրէն կը գոյանայ վառուած քար ածուխի բորբոքող կրակէն,

Այսպէս երբ տեսան մարդիկ, որ Աստուծոյ տնկած հնադարեան անտառներ հետզհետէ կը սպառին, այնուհետեւ սկսեցին ամենայն աշխատութեամբ ձեռատունկ անտառներ հասցունել և այսօր արեւմտեան Եւրոպիոյ աշխարհ մշակուած անտառներով լցուած է, որ լիովին փայտ կը մատակարարէ՝ թէ չինուածոց համար, թէ այնչափ անհամար փայտաչէն նաւերու համար, և թէ չոգեկառքերու հարթուած ճամբաներու պատրաստութեան համար։

Իսկ մեր արեւելեան աշխարհ անտառներու հարստութենէն չատ աղքատ է. եթէ կան սակաւ ինչ բնական անտառներ, այն ևս անկանոն և անխնայ կտրուելով սպառելու վերայ են։ Ուստի պէտք է աշխատինք մեր հողագործութեան հետ նաեւ ծառատունկ անտառներ հասցունել։ Եւ գիտես թէ ո՞րչափ ընդարձակ սահմաններ ունի գիւղական ժողովուրդ անտառի մշակութեան համար, թէ դաշտագետին և թէ փխրահող բլուրներ։ Երկրագործին համար փայտին պիտանութիւն այնչափ կարեւոր է, որչափ հաց իւր կեանք պահելու համար։ Եթէ անշուք խըրճիթ մի չինէ, որպէս զի իւր ընտանիք ծուարին նորա մէջ՝ փայտ պէտք է. հապա այն մեծ նահապետական ընտանիք, որոց թիւ կը հասնի մինչեւ քառասուն և յի-

սուն։ ո՞րչափ ընդարձակ շէնքերու պէտք կ'ունենայ։ Թողունք մեր տուներու շինութիւն, որոց համար բարտի, կաղամախի և ուռի փայտեր պէտք են։ Իսկ մեր մշակական աշխատութեան համար ուրիշ այլ և այլ տեսակ ամուր փայտեր պէտք են։ հացի փայտ պէտք է գութանի կոր եւին և առասամի համար. բեզի փայտ պէտք է սայլերու մածան կազմելու և սռնակի համար. Թողունք այլ և այլ փոքր գործիքներ, որ առհասարակ պինդ փայտերէ կը շինուին։ Եւ ինչպէս գրեցի յառաջ, երկրագործ գիւղացին այս տեսակ փայտեր ձեռք բերելու համար ո՞րչափ պարապ ժամանակ կ'անցունէ, մինչեւ հեռաւոր տեղեր երթալով գտնէ, բերէ, շինէ և գործի սկսի։

Թողունք այս ամէն, Թոռնիկ, դու կը տեսնաս թէ ծառատունկ ունեցող գիւղեր ո՞րչափ գեղեցիկ և զուարճալի են, և միանգամայն գիւղին տեսարանին մեծ շուք կուտան։ Դու գնացեր ե՞ս Արտամետու այն ճոխագոյն ծառաստան և մրգաստան, ուր թո՛ղ անտառային անպըտուղ ծառեր, ո՞րչափ զանազան պտղատու մրգաբեր ծառեր կան թէ խնձոր, թէ տանձ և թէ այլ բազմատեսակ անուշահամ պտուղներ, որոց մէջ ամենէն ազնուագոյն կը համարուի համով, հոտով և գունով շնաշխարհիկ կարմիր խնձոր, և այնչափ առատ, որ բովանդակ Վասպուրական երկրին բաւական կը լինի։

Գիւղի համար ծառատունկ ուրիշ օգտակարութիւն և հաճոյական քաղցրութիւններ ունի։ Ցամարան արեւու տօթագին հովանին տարածելով, իսկ ի ձմերան հիւսիսի սաստկաշունչ քամիէն կը պատսպարէ։ Հապա ո՞րչափ քաղցր կը լինի գիւղական ընտանեաց համար, որք պարապոյ ժամեր՝ իրենց մանկիկներով՝ ծառերու շուքերուն տակ նստելով՝ ձեռագործներով աշխատին և զբօսնուն։ Սոխակն ու սարեակ ծառաստանէն երգեն, մանկիկներ վարէն խաղալով ճլվլան, և երբ գառնուկներն եւս կայտռին ու մային, վա՜շ, քանի՞ անուշակ ձայնակիցներ ներդաշնակութիւն կը կազմեն գիւղական պարզ կեանքում։

Ծառաստանք ոչ միայն՝ մարդոց համար իբրեւ վայելք և օգուտ են կեանքի պիտոյքներու մասին, այլ և շատ կարեւոր են անասնոց համար, վասն զի ծառերու տակ միշտ թարմ կանաչներ կը բուսնին, ուր միայն պէտք

է արածեն, նորածին կովերու, հորթեր և մատակի ձագեր և ամառան տօթաժամուն այդ մատաղածին անասնիկներ հովասուն ծառերուն տակ կը հանգչին կանաչներու վրայ։

Բայց, Թոռնիկ, բաւական չէ որ ծառաստանք միայն գիւղի շրջապատներ զարդարեն, երանի՛ թէ մեր դաշտեր անդաստաններն եւս ծառատունկերով զարդարուին, ուր որ ջրի գնացքներ կան և աղբիւրներ կը բխին․ ո՛չ, քանի դիւր և հանգստաւէտ կը լինեն թէ աշխատաւոր մշակներուն և թէ լծատար խոնջած անասուններուն, որ այն ինչ կէսաւուր տօթաժամուն լծերէն կը քակուին, իսկոյն այդ հովանուտ ծառերուն տակ կը սկսին արածել և յետոյ կը նստին և կ՚որոճան, իսկ ջրասէր գոմշուկներ, որ անչափ տաքութեան չեն դիմանար, լծէն արձակուելուն պէս դէպի ջուր կը վազեն, և թէ ջուրն առատ է՝ մէջ կը նստին, ճօտաղ լու մի կը լուանայ և ապա կը բերէ արօտատեղ։ Այդ պահուն խոնջած մշակներ կը նստին աղբիւրի գլուխ ծառի հովի տակ, և կը սկսին հարցնել իրարու, արդեօք էս օր տանտիկին ի՞նչ է եփեր մեզ համար․ դու գիտես մեր մշակներ շատ սիրահար են իւղալի ճաշին և փիլաւին, և տապակով քամած մածուն։

Կը տեսնան, որ հացբեր կորիճ աղջիկ շալկուրեր կուգայ շալակ վար կը դնէ, կը բանան, կը տեսնան, որ ճիշտ իրենց ուզածին պէս է կերակուրներ։ Մշակին սեղան կանաչազարդ գետինն է, ուր կը փռեն մեզար, կը չարեն վերան թազէ հացեր, կը բանան մածնի տապակ, հողէ կամ փայտէ կոսին մէջ կը հարին զմածուն աղբիւրի պաղուկ ջրով, յետոյ կ՚առնեն դգալներ, մի դգալ փիլաւ մի դգալ մածնէ թան․ ո՛խ, Թոռնիկ, կերեր ես, դու գիտես թէ ո՞րչափ ախորժանօք կ՚ուտեն այդ անօթի մշակներ, կ՚ուտեն և կ՚օրհնեն զտանտիկին։

Կէսաւուր ճաշէն յետոյ, գլուխնին կը դնեն հով ծառին տակ, անուշ քուն կը քաշեն, այնպէս որ իշխան իւր ապարանքին մէջ փետրալից անկողնոյ վերայ կարող չէ այն հանգիստ և անդորր քուն ունենալ․ դորա պատճառներ այժմ չ՚գիտես դու, Թոռնիկ, բայց յետոյ կ՚իմանաս երբ տակաւ զարգանալով աշխարհի բաներուն հետաքըրքիր լինիս։

Այսպէս, մտացի Թոռնիկ, լաւ ուշադիր եղար թէ, ծառատունկեր ո՞րչափ պիտանի և չահաբեր են գիւղական ժողովուրդին համար։ Ուրեմն աշխատիր որ տարուէ տարի միշտ տնկելով և խնամելով՝ մեր տան սեփհական ծառատունկեր չատցունես։ Ես արդէն ի վաղուց մի դրան արտ ցանկապատելով գեղեցիկ ծառաստան մի հաստեցած եմ, դու պէտք է որ իմ տնկած ծառերով չը պարծենաս, այլ աւելի քաղցր է, որ դու եւս նոր ձեռատունկեր տընկելով՝ մշակելով անով պարծենաս։ Գիտե՛ս, ծառատունկն եւս իրենց առանձին-առանձին խնամքներ ունին տնկելու, ջրելու, կտրելու եւայլն։ Ծառեր դարմանելու մասին չատ երկար դասեր պէտք չեն քեզ, դու կը տեսնաս թէ ինչպէս Պապիկդ մի սղոց և մի կօտ դանակ առնելով կը մնայ ծառաստան, միշտ չորցած և աւելորդ ճիւղեր կը կտրէ, որպէս զի մնացեալ ճիւղեր աւելի աճեն։ Պէտք է մրգաբեր ծառերուն տակն երկու կամ երեք տարին անդամ փորուին. այս աշխատութիւն եւս իւր չահն ունի, նախ որ գետինն խրխրուելով ծառերուն արմատներ աւելի կը զօրանան, երկրորդ՝ գարի կամ այլ հնդկէն բաններ ցանելով՝ ծառէն և ծառատակէն միանգամայն արդիւնք կը ստանաս։

Կը յիշե՞ս, Թոռնիկ, քանի տարիներ առաջ վանեցիք թթենիի մշակութիւն սկսեցին, սկզբան չատ յաջողութեամբ յառաջ տարին։ Այսպէս վերահաս դիպուած մի եղաւ, որ վանեցիք մի քանի տարի միայն չերամի հունտ ծախելով մեծ չահեր ունեցան, այնչափ բարձրացաւ վանայ հունտի գին, որ ոսկիին հետ հաւասար կշռելով կ'առնէին, վասն զի ուրիշ երկիրներուն հունտեր բոլոր աւերուեցան չերամի որդերուն մի կերպ հիւանդութենէն։

Յաւալի է, եթէ պատմեմ քեզ, Թոռնիկ, թէ ինչպէս վանեցիք այդ չահաբեր ձեռնարկութիւն բոլորովին ի բաց թողին, քանզի նոքա ի սկզբան այնպէս կարծեցին ու պաչարուեցան, թէ միայն չերամի հունտ ծախելով պիտի չահին, չի կրցան գուշակել թէ այդ մի բաղդի դիպուած էր և անցաւ, չի կրցան նաեւ ըմբռնել թէ չերամի մշակութիւն սոսկ սերմի վերայ չէ, այլ առաւել խոզակներուն վերայ է, վասն զի թթենիի մշակութեան բուն արդիւնք խոզակն է, կամ պէտք է ժամանակին խոզակ ծախել եւ

կամ խողակներէն թել քաշելով ապրշում ծախել։ Եւ որովհետեւ ապրշում ինքնին թեթեւ բան է, բայց գին ծանր, այս բան շատ ձեռնտու էր Վանեցւոց շահավաճառութեան համար, հեռի լինելով ծովեզերեայ նաւահանգիստներէն։

Կը թուի ինձ, Թոռնիկ, որ Վանեցիք բարակ ձանձրալի և խնամոտ աշխատութիւններ չեն սիրեր, մի կանգուն խորութեամբ հողը շրջելով թթենի տնկել, ամէն տարի ծառատունկեր փորել, շերամատուն շինել, որդերուն աշխատութեան պատշաճ սեղաններ պատրաստել, ամէն օր թթենի տերեւներ բերելով որդեր կերակրել, իբրեւ բժիշկ սուր աչքով որդերուն վիճակ քննելով՝ հիւանդներ առողջներէն զատել, և երբ կը սկսին որդեր խողակներ հիւսել, դոցա փոքրիկ-փոքրիկ ծառի ճղիկներ պատրաստել եւայլն, եւայլն. հապա խողակներ կապելէն յետոյ՝ պէտք եղած սերմն առնել, մնացեալ խողակներ կամ այնպէս վաճառականին ծախել և կամ թել քաշել և կաժկաժ անելով զուտ ապրշում հանել և կապել. օ՜խ, ի՞նչ ձանձրալի երկարատեւ աշխատութիւն, տրտնջալ կը սկսի ծոյլ, անձմեռ Վանեցին։

Տե՛ս, Թոռնիկ, շերամատածութիւն ձանձրալի և երկար աշխատութիւն կը համարի Վանեցին, որ շատ-շատ երեք ամիս հազիւ տեւէ բոլոր աշխատութիւն և արդիւնք կը ստանայ, այն ինչ այգի տնկելով եօթը տարի ամբողջ կը սպասէ և ապա տնկած այգւոյն երախայրիք կ'ընդունի։ Բայց միթէ Վանայ սոյն բազմաշատ ու հնատունկ այգիներ արդի սերո՞ւնդ տնկած է. ո՛չ, Նոյ Նահապետին հարազատ այգեսէր զաւակներ՝ մեր նախնի Պապիկներ տընկած են և մենք այսօր կը վայելեմք, ինչպէս ես մի այգի տնկած եմ, ես մեռնիմ դու պիտի ժառանգես ու վայելես՝ է՛, գուցէ յետոյ պարծենաս ու ասես թէ այս այգին ես տնկեցի։

Այժմէն պատուէր կուտամ քեզ, Թոռնիկ, որ ուրիշ ծառատունկերու մշակութեան հետ չմոռանաս նաեւ թըթենիի մշակութիւն, որոյ համար շատ նպաստաւոր են մեր գիւղի շրջապատի հողեր, զի թթենիի տունկ աւազախառն հողի մէջ շատ կը յաջողի։ Բայց պէտք է գիտնաս, Թոռնիկ, որ մեր երկրագործութեան սովորական

աչխատութիւն չատ բազմազբաղ է։ Ուստի դու երբ ծառատնկոց մշակութիւն յառաջ տանիլ կ'ուզես, լաւ է որ բուն հոդագործական կամ սերմնացանութեան մշակութիւն, զոր օրինակ ցորեն, գարի եւայլն, չսիրաւորես, որպէս զի կարենաս ծառատնկոց մշակութիւն աւելի արդիւնաւորել։

Բաւական ընդարձակ խօսեցայ, Թոռնիկ, ծառատունկի մշակութեան մասին, դու գիտես պապիկդ ծառն ու աղբիւր չատ կը սիրէ։ Երբեմն աշխատութենէն յոգնած կ'երթամ կը նստիմ մի ծառի հովանոց տակ. կռնակս ծառի բնին կռւտամ կը հանգչիմ, ծերացած եմ, Թոռնիկ, այլեւս ինձ համար ծերութեան ցուպ և յենարան պէտք է։ Յաւերժ Նահապետ իւր մէկ սիրած որդին ցուպ ծերութեան կը կոչէր, ես էլ կ'ասեմ քեզ թէ իմ ծերութեան ցուպն ես, մինչեւ հասնիմ վերջին հանգստարան։

ԺԸ.

ԳԻՒՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ

ՏՈՒՆ ԵԻ ԿԵԱՆՔԸ

Սիրելի Թոռնիկ, դու կարդացեր ես Աստուածաչունչ, և գիտես որ հին-հին նահապետներ հաստատ տուն և բնակարան չունէին, այլ նոցա տուն չարժական մի վրան էր, այսօր այստեղ, վաղն ուրիշ տեղ։ Եւ դեռ այսօր Արաբական ցեղեր նոյն կեանքով կ'ապրին։ Մեզմէ չատ հեռու չէ, հարաւային կողմն կան չատ վրանաբնակ ցեղեր, որ ազգաւ քիւրդ են և կէօչար կ'ըսուին, որոց ձմերան բնակութեան տեղեր Նինուէի և Բաբիլոնի սահմանին ընդարձակ ջերմին դաշտերն են, ուր ոչ այնքան ձիւն կը տեղայ և ոչ սաստիկ ձմեռ կը լինի։ Իրենք վրանին տակ կը բնաւեկն և իրենց անասուններ միշտ բացօթեայ կ'արածեն։

Իսկ ամառն երբ ջերմութիւն կը զայրանայ, այդ բոլոր վրանաբնակ ցեղեր, իրենց ոչխարներու բազմաթիւ հօտերով կը չուեն դէպի հիւսիսակողմ կորդուաց և Տաւրոսի հովասուն լեռնաշղթաներ, ուր չատ աղբիւրներ և

անբաւ արօտավայրեր կան։ Երբ չորս ամիս այդ լեռնաստան ազատ կեանք վայելելով, յաշնան վերջ դարձեալ կը չուեն դէպ հարաւ ջերմագոյն խորադաշտեր։ Ասոր համար այդ վրանաբնակ աստանդական ցեղերն բազմաթիւ ոչխարաց հօտեր և այլ անասնոց ջոլիրներ ունին, որոց համար ոչինչ հոգածութեան պէտք չկայ, ոչ ախոռ, ոչ գոմ, և ոչ ձմերան դարմանի պատրաստութիւն, հետեւելով միայն տուարածութեան, այս մասին գիւղական ժողովուրդէն աւելի կը հարստանան։ Եւ միանգամայն կը վայելեն բնական կեանքի ամենաքաղցր անդորրութիւն։

Հետաքրքիր կը լինի՞ս, Թոռնիկ, թէ նախադարերու մարդիկ տուն, բնակարան շինել և նորա մէջ բնակել, ձմեռը ցուրտէն և ամառ արեւու տաքութենէն պատսպարուել ուստի՞ ուսան կամ օրինակ առին։

Կ՚ասեն թէ մարդիկ թռչուններէն և անասուններէն սորվեցան տուն շինելու արուեստ և ճարտարապետութիւն, տեսան որ թռչուններ ծառերու վերայ բոյն կը դնեն, ծիծառն իւր կաւակերտ բոյն կը շինէ տան հեծանի կողմի վերայ, արծիւ որ բարձր սարեր կը սիրէ, իւր որջն ունի. և կոյր խլուրդ, որ գետնի տակ իւր բոյն շինելով դուրս տուած հողը բլուրիկ մի կը ձեւացնէ. հապա մրջիւն, այն նախահոգ չքոտի կենդանին, որ ոչ միայն տուն, այլև համբարանոց կը շինէ իւր բունիկին կից, ուր կը ժողվէ ձմերան պաշար։ Իսկ զարմանագործ մեղուն ինչպէս համաչափ բջիջներ կը աղէ մոմի հիւթով, չգիտենք իւր համար բոյն, թէ մեղրատուն կը շինէ, այնչափ խնամով, առ որ կը զարմանայ մարդկային իմաստութիւն։

Այո՛, Թոռնիկ, բանաւոր մարդիկ չքոտի անբաններէն կ՚ուսանին շատ բան. այդ ի բնութենէ արուեստաւորներ մեզ վարժապետ կը լինին, կը տեսնա՞ս այն չարաճճի սարդ, որ կռուան անելով պատին անկիւն՝ անդադար կը ճգնի, բարակաման թելեր կը հանէ իւր բերնէն և ուռկան կը հիւսէ, ճանճեր բռնելու համար, աստի մարդիկ սորվեցան ոստայնանկութեան կամ կտաւագործութեան արուեստ։ Միթէ սոխակի դայլայլիկէն և այլ քաղցրախօս թռչուններուն ձայնէն, ծովու մանչող ալիք-

ներէն, ջրերու հոսանաց ձայնէն, անտառներու համաչուռնչ սօսափէն, բան մի ասի, բան մի անտի առնելով՝ երգահան մարդիկ չ'խմբագրեցի՞ն երաժշտութեան այնչափ հիանալի եղանակներ և դասեր։

Է՛, Թոռնիկ, դարձեալ մոլորեցաւ պապիկդ, թողլով մեր դասին բնական կարգ, քննել կ'ուզէ թէ մարդիկ ուստի՞ սորվեցան տուն չինել երգել եւայն, դառնանք գիւղական տնակներ։

Գիտես, Թոռնիկ, ամէն մի կարգ ժողովուրդ իւր պարզացման համեմատ կ'ապրի աշխարհիս վերայ։ Ֆազաքացի ժողովուրդ, որ մեզմէ աւելի զարգացած է և զարդանալով ճաշակ բացուած է, գիտէ թէ ինչպէս պէտք է բարեկեցիկ կեանք վայելել, ուստի իւր ճաշակին համեմատ չափով կը չինէ։

Իսկ գիւղական ժողովուրդ, որ զարգացումն չունի, ճաշակ փակուած է, նորա համար բաւ եւ չատ են իւր տնակներ։ Բայց մինչ այնքան բթացա՞ծ է չինական ժողովուրդին ճաշակ, որ նա չէ կարող գոնէ մի փոքր ինչ իւր տնակներ կանոնաւորութեամբ չինել, բայց տես դու՝ թէ նա ինձ կը պատասխանէ, այո՛, ես էլ մարդ եմ, փոքր ի չատէ ճաշակ ունիմ, կը տեսնամ քաղաքացւոց գեղեցիկ տներ, հոգիս չուզո՞ր որ ես էլ գեղեցիկ տուն ունենամ. այլ երբ կը մտածեմ թէ աղքատ եմ, պարտապան և աղքատին համար խրճիթ չատ է եւայլն։ Իսկ հարուստ տանուտէր խելացի անտեսութեամբ կը մտածէ, եթէ ընդարձակեմ տունս, հիւրեր կը չատնան, ծախքերս կրկնապատիկ կը լինին եւայլն։ Շինական տանուտէրոջ այս առարկութիւնն իրաւացի է. բայց կայ դարձեալ հիմնական պատճառ, ինչպէս որ վերը բացատրեցի, աղքատութեամբ հանդերձ գիւղական ժողովուրդ տգէտ և անճաշակ է, վասն զի կան այնպիսի թեթեւ կարգադրելի բաներ, որ երբէք ծախս չեն պահանջեր, այլ միայն փոքր աշխատութիւն։ Որպէս զի զգալի և չօշափելի կերպով ցոյց տամ քեզ, Թոռնիկ, որ աչքով տեսնաս ու ընկատես թէ մեր գիւղական ընտանիք ի՛նչ դառն ու չարաչար դժուարութեամբ կը տառապին առանին աշխատութեան մէջ՝ մի օրինակ բերեմ։ Դուն կը տեսնաս միշտ և չես զգար. աչքդ սովորած է. գուցէ կը կարծես, որ

գիւղական ընտանեաց վիճակ պէտք՞է այդպէս լինի կամ նորա ճակատագիրն է այդ։

Ե՛լ ուրեմն, Թոռնիկ, երթանք ի միասին մեր բարեկամ Կիրակոս աղբօր տունը։ Ճիշտ գեղի թոնիրները վառուած ժամանակն է, ահս ահա թոնրի տուն մխով ծուխով լեցուած է, թոնիր կը վառուի, խաչերկաթին վերայ դրուած են թանապուրի և ճաշի պուտուկներ, տան մի կողմ երկու օրօրոց դրուած են, խեղճ երախաներ ծուխէն խեղդուած կուլան, մայրեր կը կարծեն թէ կաթ կ՚ուզեն, տան մի անկիւն եւս դող-տաքցաջէն բռնուած պառկած է մի պառաւ կին։ Թոնիրն իջաւ, ծուխ քաշուեցաւ. տան տիկին ձգեց դընթեկ, նստաւ թոնրին չուրջ, տան մի հարսն եւս թոնրի սալի վերայ խմորի գնդեր բանալով՝ տան տիկնոջ կուտայ, նա էլ մաջրակայով թոնրին կողը կը փակցունէ։ Այս միջոցին տան պահապան գամբռչուն դրան մէջ թաթիկ պարզելով չնթռկեր է, աչքն դէպի տան տիկին կը սպասէ, որ թոնրէն ելած կուտն իրեն տայ։

Կէս օր է, կ՚ասէ աղջիկ մօր. ժամանակ եկաւ մայրիկ, մշակներուն հաց պիտի տանեմ, հացն ու կերակուր կը պատրաստուի, ժիր աղջիկ շալակուորած կ՚երթայ դաշտ։ Ահա ներս կը մտնայ գեղի գզիր, տանտիկին հիւր եկաւ, նա մի օֆ քաշելով հրաման կ՚անէ հարսին, որ մի քանի հաւկիթ կոտրէ ձուաղեղ եփէ հիւրին համար։

Կը տեսնաս, Թոռնիկ, գեղացիի տունը նահապետական մի վրան է, դուռը միշտ բաց է. կը սկսին եռեւէ եռեւ գիւղի աղքատներուն չարքը, եկաւ ցուպ ի ձեռին դողդոջուն մի պառաւ, տանտիկին, հոգւոյդ մեռնիմ, թաղա հացի հոտն առի եկայ, որբիկ թոռնիկներս անօթի կուլան, մի հաց, քիչ մի ապուր տուր տանեմ ճժկներուս, պառաւն առաւ ինչ որ ուզեց, օրհնելով գնաց։ Եկաւ ուրիշ մի էն էլ առաւ գնաց, այսպէս չատեր էկան առան ու գնացին։ Վերջին անգամ էկաւ մի աներես աղքատ, որ մի հացով գոհ չէր լինել. բարկացաւ տանտիկին, առաւ Թորվան սեւ անօրոց տուաւ ասոր կռնակին, տնէն դուրս հանեց։ Տեսա՞ր, Թոռնիկ, հացարար տանտիկին մինչեւ հաց լրացուց՝ հացին կէսն գնաց։

Այժմ դառնամ խօսիմ այս Թորվան տան վերայ, զոր

չատ դիւրին բարեփոխել, կը տեսնա՞ս, Թոռնիկ ատեն մէջտեղ չինուած է. առիք միայն մէկ երդիք կայ մուխ ելնելու համար, թէպէտ ատեն դուռը բաց լինելով մուխն անկից էլ դուրս կ'ելնէ։ Եթէ այս թորվան տեղը փոխենք և ատեն յարմար անկիւնի կողմն դնենք, էդ անկիւնի վերայ լայն պուհարիկ մը կապենք, և այս պուհարիկ չատ դիւրին կը լինի երկու սիւնակներ անկեն. կակուղ ուռենիով հիւսենք և միջոցներն յարդակաւով ծեփենք, նմանապէս առնիքի վերայ եւս նոյն ուղղութեամբ պուհարիկ մի լինելով գոնէ կանգուն կէս բարձրութեամբ, տես դուէն ժամանակ մուխն ինչպէս վեր կը քաշուի և տունն բոլորովին ազատ կը մնայ ծուխէն։

Է՛, Թոռնիկ, դու ատա դատաստանով խօսիր այս փոքր բարեփոխութեան համար ի՞նչ դժուարութիւն և ծախք կը լինի։ Բայց ինչո՞ւ չի մտածեր գիւղացին, չգիտե՞ս մինչ դու դուրս պատճառ, ինչպէս չատ անգամ ատած եմ, դարձեալ նոյն կը կրկնեմ, գիր ու կարդալ չգիտնալն է, գիրն ու գիրքն է, որ կը բանայ մարդոյն միտք և մտածել կը սորվեցնէ։

Սակայն դու մի զարմանար, մի մեղադրեր անգիր գիւղացին, երթանք քաղաք, տես ատա բովանդակ վաճառոց տանտուներ բաւական բարձր են, ոչ միայն առիքէն, այլեւ պատերէն չատ երդիքներ ունի, ատեն մուխ դիւրութեամբ դուրս կը քաշուի։ Բայց դարձեալ առիք սեւ ու մրջոտած է. և երբ անձրեւն ատեն կաթիլ սկսի, կը տեսնաս որ սեւ կաթիլներով ատեն չատակ և փուռուածքներ կ'ապականէ։ Երբեմն եւս աւելի հին-հին տուներ գարնան միջոցին առանց անձրեւի մուրջ կաթ կ'անեն՝ որ աւելի գէշ է, զի գետնի փոռոցներ, թորվան ծածկոց և ընտանեաց հագուստներ առ հասարակ կը մրջոտին և ո՞րչափ դժուարին է այդ մածուցիկ այս մրանկրկ լաթի վրայէն հանել ու ջնջել։

Ուրեմն չատես, Թոռնիկ, թէ քաղքցին, որ կարդալ գրել գիտէ, զարգացած է Պոլսոյ մայրաքաղաք տեսնելով, մաքրութեան օրինակ առած է, ինչպէ՞ս դարձեալ չգիտէ բան մի մտածել ու բարեփոխել իր տունն։ Եթէ

այսպէս, ինը առաւելութիւն կայ գրին ու անգրին մէջ. երբ կեանքի ընթացքի և անտեսութիւն նոյն կը մնայ։ Պատասխանեմ քեզ, Թոռնիկ, նախ պէտք է գիտնաս, որ ամէն գրել-կարդալ գիացող, անտեսագէտ չի լինիր, երկրորդ քաղաքացւոց նոր սերունդ թէեւ արդի դպրոցներում անկատար ուսուցին ընդունած է. այդ երբէք բաւական չէ մեր կեանքի բարւոք անտեսութեան համար, վասն զի այդ կիսակատար հարեւանցի ուսումով մինք կարող չեմք մեր միտքը այնպէս մշակել, որ հին արմատացած նախապաշարումներ ի բաց խլուին։ Տակաւին ինչպէս գիւղացին, նոյնպէս և քաղաքացին պիտի բնակին մրջոտած տուներու մէջ և պիտի ասեն մեր հայրեր, մեր պապեր այս տուներու մէջ բնակած են, մենք էլ կը բնակիմք, նոցա համար փոյթ չէ թէ ընտանիք կը տառապին մուխին եւ ծուխին մէջ և մերթ ևս աչքերնին ափսաւար կը լինի։

Ես երբ կ'ասեմ թէ քաղքցիք պարգացած են, դու այնպէս մի հասկնար թէ իրօք և տիրապէս պարգացած և լուսաւորուած են, դոցա մտաւորական լոյս եթէ ամփոփես մի աղօտ ճրագի չափ լոյս չուննի, միայն թէ գիւղական անգիր ժողովուրդին հետ համեմատելով փոքր ինչ առաւելութիւն ունին։

Թոռնիկ, թէ քաղաքացւոց և թէ գիւղացւոց մտաւորական աչք դեռ բժժոտած եւ մթարմով ծածկուած է, մինք աչխարհին բաներ ճիշդ և ուղիղ չենք տեսնար, Յիսուսի կուրին պէս մինք էլ չրջող մարդիկ ծառի պէս կը տեսնեմք։ Ուստի ծառն ու մարդ որոշելու համար լոյս և պայծառ տեսութիւն պէտք է, որ միայն կրթութեամբ կ'առացուի, և քանի որ մինք կրթութեան ու գիտութեան լուսատու չնորհք չունիմք, մեր անտեսական կեանք այսպէս կը մնայ։ Գիտութիւն մեզի համար արժան տեսեր է խաւարտչին ու չմրջոտած տուներ, մինչեւ դայ ժամանակ ժողովուրդին մտաւորական աչքը բացուի, լոյս տեսնէ, կարենայ ճանչնալ ու որոշել մարդն ու ծառ։ Էն ժամանակ ահա եթէ ողջ մնացինք այս մրջոտած տներէն դուրս կ'ելլիմք դէպի լոյս և յառաջդիմութիւն, ու կ'ազատուինք ապիտութեան ան խեղդիչ մուխէն ու ծուխէն։

Այսչափ միայն, Թոռնիկ, գիւղական անչուք չենքերու վերայ խօսեցայ, բայց չինական ժողովուրդին առանին կեանք չատ ընդարձակ է և ուրիշ բազմազան բաներ

ունի։ Արդէն Թուռնիկ, դու գիւղական կեանքի մէջ ծնած ես, քեզ կը թողում նորա կեանքի նկարագիր, դու ինքնին փորձառութեամբ ուսումնասիրես, այժմ պիտի խօսիմ գիւղական եկեղեցւոյ, քահանային և ժողովուրդին վերայ, որ քեզ համար մի հոգեւորական դաս է։

ԺԹ.

ԳԻՒՂԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ՔԱՀԱՆԱՅ

Մեր գիւղական անշուք կեանքի համեմատ, մեր եկեղեցի ու տաճարն եւս նոյն անշուք անզարդ ու խղճուկ պատկերն ունի։ Եթէ ի հին նախնիքներէն մնացած է մի գեղեցիկ տաճար քարաշէն և հաստատուն, այդ մի բաղդ է գիւղացւոց համար։ Կան այնպիսի գիւղեր, որոց կից է վանքը, ինչպէս Ռշտունեաց գաւառին մէջ Նարկայ վանք, Թիմարայ գիւղերուն մէջ Աստուածածնայ հռչակաւոր վանք և այլ ուրիշ տեղեր։ Այսպիսի վանքեր իրրեւ եկեղեցի և աղօթատեղի կը համարուին մերձակայ գիւղերուն, որ այդ եւս իրենց համար մեծ մխիթարութիւն է։

Իսկ ընդհանրապէս վասպուրականի երկրի գիւղական եկեղեցիներ հողակերտ ու փայտաշէն են. պատերը խառն աղիւսով չինուած, առիք ու տանիք հողով ծածկուած, միայն խորան և սեղան մեծ քան է՝ եթէ քար ու կրով չինուած լինի։ Դու մի զարմանար, եթէ միայն գիւղացւոց եկեղեցիներ փայտաշէն են, այլ աւելի պէտք է զարմանաս, որ վանայ նման հռչակ ունեցող մի քաղաքի եկեղեցիներ գրեթէ ամբողջ փայտաշէն են. միայն մի քանի եկեղեցիներ կան՝ որոց տաճարներ բաւական հնաշէն և հոյակապ են, ինչպէս քաղաքամիջի Սուրբ Պօղոս եկեղեցին։

Այգեստանեայց մէջ Այր-յարոյց եկեղեցին մի հնաշէն և պատուական տաճար ունէր. այդ եկեղեցւոյ փայտաշէն գաւիթ քանի տարի յառաջ նորոգելով, հնաշէն տաճար գաւթին հետ խառնեցին, ուզելով որ իրենց եկեղեցին պոլ-

սոյ եկեղեցիներու նմանեցնեն, կարծելով թէ Պոլսոյ եկեղեցիք բուն հայկական տաճարներուն հնութեան ձեւն ու պատկերն ունին։ Ափսո՜ս, հազա՜ր ափսոս, որ այդ հնութեան տաճարներուն մնացորդներ հետզհետէ կը քանդուին և օտար ձեւերով եկեղեցիներ կը շինուին և սեղաններ կը կազմուին անվայելուչ ու անճաշակ խաչկալներով։

Թողունք այս, Թոռնիկ, դառնամ՛ք միայն մեր գիւղի եկեղեցւոյ նկարագիր հանեմ՛ք. բաւական է՝ դու այդ նկարագրով իբրեւ մի պատկեր աչքիդ առաջ տեսնաս։

Մեր գիւղի եկեղեցին դարձեալ հողակերտ ու փայտաշէն է, որ մի քանի տարի յառաջ հազիւ հազ՝ նորոգուեցաւ. տե՛ս, սեղան պարզ, անպաճոյճ, փայտակերտ, կոպիտ շինուած մի խաչկալ ունի. վէմ-քար ու մոմակալ աստիճաններ անշուք մրջոտած կաւով ծածկուած են. պատարագի ժամանակ հազիւ թէ երկու մոմ վառուին, ուրիշ ժամանակ բաւական է մի փայտէ եռոտանի ճրագակալ և վրան հողէ ճրագ բոլորովին ձիթոտած ու մըրջոտած. սեղանի տէրունական պատկեր տես ի՞նչ անձեւ և անարուեստ է։ Եկեղեցւոյ յատակ և սեղանի վերայ միայն փսիաթներ փռուած են։ Գիւղական եկեղեցիներ մեծ մասամբ վերնատուն չունին, այր մարդիկ առաջ կը կանգնին՝ կիներ ետեւի կողմ։

Թողունք այս նիւթական անշքութիւն, որ Աստուծոյ տիեզերական փառաց առաջ նշանակութիւն չունի, որոյ աթոռ երկինք է և ոտքին պատուանդան երկիր։ Գանք բարոյական մասի նկարագիր հանել։ Մի ծերուկ քահանայ ունիմ՛ք ցուպ ի ձեռին դողդոջելով հազիւ եկեղեցի կուգայ, աչքեր Իսահակայ նահապետին պէս վատատես եղած է վաղուց. բայց ինքն եկեղեցւոյ ժամերգութեան շատ բաներ բերան եղած է և կը կարդայ. ինքն երկիւղած, բարի և ժողովրդասէր մի քահանայ է։ Մի քահանայ էլ ունէինք, բաւական կրթութիւն ունէր. ժիր ու գործունեայ էր, բայց նա հպարտացաւ, թողեց գեղ ու քաղաք գնաց։ Կը թուի որ, գիւղական երէցներուն հարստանալ շատ լաւ բան չէ. վասն զի հարստութիւն զիրենք դէպի դիւրակեցութիւն կը մղէ. թէպէտ ուխտադիր է գիւղի եկեղեցւոյն վերայ քահանայ ձեռնադրուելով. բայց կը յաջողին այնպիսիներ իրենց ուխտին դէմ դըր-

ժել, ոչինչ և անհիմն առիթներ յառաջ բերելով։ Այլ ուղիղ խօսելով և դատելով՝ չատ անգամ ևս իրաւունք ունին գիւղական քահանաներ, երբ ժողովուրդ կը պլանայ իւր հոգեւոր պաշտօնէին հոգեւոր մատակարարութեանց իրաւունքներ տալու՝ ինչ որ նախնի եկեղեցւոյ սուրբ հայրերէն սահմանուած է։

Սորա ապացոյց անա մեր ժամանակի մէջ կը տեսնամք, որ ժողովրդին պէս քահանաներն ևս պանդխտութեան կը դիմեն, թողլով գիւղն ու եկեղեցին, որք՝ տարիներով կը դեգերին օտարութեան մէջ։ Ո՜հ, տեսնես դու, Թոռնիկ, Պոլսոյ գերեզմաններուն մէջ թափառելով կը սպասեն, որ մի մեռելթաղ լինի, կամ պանդուխտ ժողովուրդէն մէկ գայ, և իւր ննջեցեալի գերեզման օրհնել տայ։

Այսպէս, քահանայն կը թողու գիւղի կենդանի ժողովուրդին հովուութիւն, յորոց չկրնալով իւր ապրուստ հայթայթել, կ'երթայ մեռելոց գերեզմանէն գտնել իւր ընտանեաց հացն ու ճարակ։ Օրհնեա՜լ լինին այդ ննջեցեալոց յիշատակ, որք իւրեանց գերեզմանէն քահանային հաց կը հոգան։ Մեռելոց գերեզմանն ևս իւր պաղպեղրութիւն ունի, ուր հաւատով ու ջրիատոսի անուանով ննջեր ևն ի Տէր։

Այնպէս կը թուի ինձ, Թոռնիկ, որ գիւղական ժողովուրդն չ'ժողովուրդ համարուած է ազգի վարիչներու առաջ. նա արժանի չէ, որ բարեզարդ եկեղեցի ունենայ, արժանի չէ, որ ուսեալ բարեզգաց քահանայ լինի իւր հովիւ, նորա համար աւելորդ համարուած են դպրոց, ուսումն և կրթութիւն. նա չունի բաղդ, որ տարին գոնէ մի քանի անգամ վարդապետի քարոզ լսէ. գիւղական եկեղեցւոյ չեմ այցելութեան ոաքէն չատ հեռու է. վերջապէս նա ամէն հոգեւոր մխիթարութենէն զրկուած է։ Մարդ կարող չէ նորա անգնահատելի վիճակին նկարագիր հանել. Ամէն բան կեդրոնացած է քաղաքներու մէջ, ուր դրուած է աթոռը ընդհանուր վիճակի առաջնորդին։ Առաջնորդ քաղաքացւոց համար գիտես թէ մեծավաճառ է կամ վարձեալ մի հովիւ, որ միայն քաղաքացւոց կը վերաբերի, միայն քաղաքացի ոչխարներ պէտք է արածայ, դաշտի գիւղական ոչխարներ Թող գայլեր տանին։ Առաջ-

նորդ էն ժամանակ կը տեսնայ գիւղացւոյն երես, երբ նա մի խնդրոյ համար աղերսագէմ կը ներկայանայ իրեն։ Անձնիւր կեանքդ և փառասիրութիւն մեր հոգեւոր հովիւներու վոյթ ու եռանդ չիմացեր են, ես կը կարծեմ դորա պատճառ քաղաքացիք են և քաղաքային կեանք։

Գիւղական ժողովուրդին մի դուշնաքեայ մխիթարութիւն մնացած են վանքեր, մանաւանդ վաստրական գաւառին մէջ. վանական վարդապետներ մերթ ընդ մերթ կ'այցելեն թեմական գիւղերն, թէեւ վանքին իրաւունք և պաղին ժողվելու համար է այդ, բայց կան նորա մէջ այնպիսի ժրաջան վանականներ, որք ոչ միայն իրենց այցելութեան պարագ կատարելով հոգեւորապէս կը մխիթարեն ժողովուրդը, այլեւ գիւղական շատ այլ եւ այլ պատահական գործեր կը կարգադրեն և մերթ եւս կռիւներու և վէճերու համար հաշտարար դատաւոր կը լինին։ Ախտ՜ս, որ այսպիսի պարտաճանաչ վանականներու օրինակ շատ հազուագիւտ է։

Այս դաս շատ ընդարձակ նիւթ կուտար ինձի, բայց պապիկ մի աշխարհական հոդագործ մշակ լինելով՝ համաձայնութիւն չունիմ իմ հոդագործութեան դասերու շրջանէն դուրս ելնել, պէտք է հոգեւորական բան հոգեւորականին թողուլ, նոքա ժողովուրդի բժիշկներն են. միթէ կարող չե՞ն իրենց հիւանդութիւն բժշկել, հոգան, խօսին, գրեն ու ցոյց տան դէղն ու դարմանն։

Այժմ կ'անցնիմ խօսիլ, Թոռնիկ, թէ ի՞նչ են այն միջոցներ, որով գիւղական ժողովուրդ գոնէ փոքր ի շատէ կարենայ յառաջդիմել, իւր ներկայ վիճակն բարուքել ժամանակի ընթացքին համեմատ։

Ի.

ԳԻՒՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ

ՎԻՃԱԿԻՆ ԲԱՐԻՈՒԹԻՒՆ

Մարդ յուսահատ կը լինի, Թոռնիկ, երբ կը տեսնայ գիւղական ժողովրդի վիճակ, և նորա վարած դառնաշխատ կեանք. ինքնին մտածելով կ'ասէ. միթէ կարելի՞ է, որ

մեր դաշտաբնակ երկրագործ ժողովուրդին վիճակ փոխուի, կեանքն բարւոքի և ինքն եւս սկսէ ոտն առ ոտն յառաջդիմել։

Պէտք է գիտնաս, Թոռնիկ, որ աշխարհիս ազգերու և ժողովրդոց վիճակը յանկարծ չի փոխուիր, այլ բնական կարգով ու աստիճանաւ կը լինի։ Յառաջդիմութիւն արեւմուտքէն սկսաւ, դեռ նոր մտած է արեւելեան դուռը. շատ ժամանակ պէտք է, որ այդ դռնէն ներս մտնելով գայ հասնի մեր աշխարհն։ Յառաջդիմութիւն նախ քաղաքներէն կը սկսի և ապա կը մօտենայ գիւղերուն։ Բայց քաղաքներ դեռ նոր սկսած են այր ու բոն. բոլոր նախակրթարաններ բացուած են մատաղ մանուկներու համար, որ դեռ կարդալ—գրել կը սորվին. քիչ մի եւս քրիստոնէական դասեր քիչ մի հաչուել, և քիչ մի եւս աշխարհագրութեան խարթայի վերայ կը նային. մանուկ դեռ իր շրջապատի տեղեր չը գիտցած, դէ՛, Ամերիկա և Ճենաստանի մայրաքաղաք կը հասնի։

Վասպուրականի մէջ գտնուած գլխաւոր գեղերու մէջ արդէն ձեռնարկուած է նախակրթարաններ բանալ. փոքր ի շատէ սկսած են գեղացի մանուկներ կարդալ ու գրել սորվիլ։ Գիւղական դպրոցներ միայն ձմերան կրնան պարապիլ, իսկ ամրան գիւղացիի տաս տարեկան մանուկ իրեն համար շատ պիտանի է. հորթիկներ ու գառներ ո՞վ պիտի արածայ, թող այդ՝ փոքրիկ տղերք հօտաղութիւն կ՚անեն, մշակութեան ամէն բաներու մէջ գարուն է մինչեւ աշուն նորա ըրած ծառայութիւն չորս հարիւր դահեկանի վարձուց հաւասար է։ Մեր աշխարհի մէջ յառաջդիմութիւն, դեռ նոր ծնած մի երեխայ է, տակաւին շատ և շատ ժամանակ պէտք է, որ նա դպրոցի լուսաւորութեան աւազանին մէջ մկրտուի, օրըստօրէ զարգանայ և մարդ լինի։ Ջկարծես, Թոռնիկ, որ կրթութեան երեխան այնպէս շուտ կը մեծանայ, ինչպէս մայրերու ծնած զաւակ. բնական ծնունդի զարգացման համար եթէ միայն քսան տարի բաւական է, իսկ յառաջդիմութեան և կրթութեան զարգացումն երկար դարերու կը կարօտի։ Եւ գիտես դու թէ քանի՞ դարերէ յառաջ Եւրոպան սկսաւ և այսօր հազիւ հասաւ այս աստիճանին։

Սակայն մեր ժամանակի սերունդին համար մեծ

քախտ է. վասն զի Եւրոպան տաժանելի աշխատութեամբ մինչեւ զոհողութեամբ այդ յառաջդիմութեան ճամբան հարթեց ու բացաւ բովանդակ ուսման և գիտութեան տարերք պատրաստեց, ինչպէս սեղան մի դրաւ մեր առաջ։ Աւետարանին խօսք չատ յարմար է այս բախտին. «Այլք վաստակեցին և դուք ի վաստակս նոցա մտիք»։

Ջանա՞ ուրեմն, Թոռնիկ, այլևս ի՞նչ պէտք է մեզ աշխատութիւն, վաստակ, նախնք այդ պատրաստուած սեղանին վերայ և ճաշակեմք։

Այդ չատ սխալ դատողութիւն է. դու կարծեցիր որ մեր առնախինոջ եփած թանապուր և ճա՞շն է այդ սեղան, որ դպչելն առնելով նստինք ուտենք։ Ո՛չ, բազում ջանք, բազում վաստակ, բազում աքնութիւն և ճգնութիւն պէտք է, որ մենք կարենամք Եւրոպային պատրաստած սեղանին հացն ուտել. վի այդ հացը՝ դպրոցի անդաստանին մէջ կը մշակուին։ Դու ի՞նչ կ'ասես, Թոռնիկ, չ'վարենք, չ'ցանենք, չ'արմանենք, չ'հնձենք, չ'կասենք, ցորեն չ'աղանք, ալիւր չ'շաղենք, թոնիր չ'վառենք, հաց չ'թխենք, առանց այսչափ քրտնաթափ աշխատութեան՝ նստինք այնպէս դիւրութեամբ ու հանգիստ հա՞ց ուտինք։ Դու լսեր ես Աւետարանէն, որ ճնճղուկներ առանց վարելոյ, վաստակելոյ կը կերակրուին։ Է՛, ապո՛ւշ Թոռնիկ, դու երբէք չե՞ս նկատեր ճնճղկան աշխատութիւն, այդ նկուն թռչնիկ միթէ իւր չափով ճգնութիւն չունի՞. չե՞ս տեսանար, որ նա իւր սերունդ պահպանելու համար հազար անգամ կ'երթայ կը գառնայ չղիկներ բերելով իւր բոյն կը չինէ, ձու կ'ածէ, ձագեր կը հանէ, անդադար կ'երթայ կ'ուգայ, փոքրիկ որդեր գտնելով՝ ձագերուն կը բերէ, մինչեւ թեւիկներ բուսանին. դու տես էն ժամանակ թէ ո՞րչափ կ'աշխատի կրթութիւն տալ իւր ձագերուն, որ թռչիլ սորվին։

Կը տեսնա՞ս, Թոռնիկ, բնութեան մէջ բան մի չի կայ, որ չ'աշխատիր, թռչուն, անասուն, սողուն, ինչ որ կենդանի և շարժուն է, կ'աշխատի իւր կեանք պահպանել. թող ցամաքային կենդանիներ, ծովու ձկներ և բիւր տեսակ լողական կենդանիներ այդ ծովային աշխարհին մէջ կ'աշխատին, կը տքնին դարձեալ իրենց կեանք պահպանելու։

Տիեզերքի մէջ անխօսուն կենդանիներ ի բնութենէ մի անգամ սորված են, ստեղծող Աստուած իւր արարչա-

գործութեան դպրոցէն այնպէս դուրս հանեց, որ այլ անբան կենդանիներ առանց ուսնելու և կրթուելու կարենան իրենց կերակուր ճարել ու ապրիլ։

Բայց մարդ՝ որ բանաւոր կենդանի ստեղծուած, և կ՚իշխէ բոլոր կենդանեաց վերայ, նա առանց դպրոցի, առանց կրթութեան կարող չէ իւր հաց հայթայթել։ Թէպէտ մեր աշխարհի ժողովուրդ, որ ամենամեծ մասով տգէտ և անուս է, դառն ու տաժանելի կերպով իւր օրական պարէնն կը հայթայթէ, տառապանօք և նեղութեամբ կ՚ուտէ իւր հաց, բայց հրէշ կարելի չէ, որ նա գոնէ փոքր ի չատէ բարեկեցիկ կեանք ունենայ, գիտնայ իւր կեանքի անհեռութիւն, տուն և ընտանիք կարգով կանոնով կառավարել. գիտնալ աշխարհի բաներ, մարդոց կենցաղավարութեան պայմաններ, գիտնալ տիրապէս լաւն ու վատ. բարին ու չար, առաքինութիւն և մոլութիւն։ Գիտնալ ստուգապէս, որոշել ճշմարտութիւն և ստութիւն, արդարութիւն և անիրաւութիւն, պատիւ և անարգանք։ Եւ որ մեծն է գիտնալ նա և իւր պաշտած քրիստոնէական կրօն, Ս. Գրոց և Աւետարանի գերագոյն պատուէրներ, թէ ի՞նչ են քրիստոնէի պարտիքներ թէ՛ առ Աստուած, թէ առ ընկերս և թէ առ ընտանիս, առ եկեղեցին, առ ազգն, առ տէրութիւն։

Ահա այս ամէն, ամենակարեւոր հմտութիւններ դպրոցի կրթարան կ՚ուսուցանէ մեզ։ Ուստի գիւղական ժողովուրդի արդի վիճակ փոխելու համար՝ առաջին ու հիմնական պայմանն դպրոց և կրթութիւն է. Աստ դու, Թոռնիկ, կրթարան հաստատելու համար մարդ պէտք է, և մարդոյն հետ դրամ. ո՞ւր մարդ, ո՞ւր դրամ և ո՞ւր կրթիչ մանկավարժ, և կալո՞յ թէ ի հնձանէ։ Արդէն գիւղական ժողովրդի վիճակ յայտնի է. նա միտք չունի, որ մտածէ և ոչ իսկ կրթութիւն բառ կարող է հասկանալ. եթէ ասես թող քաղաքացին օգնէ, գի գիւղական ժողովըրդի չնորհիւ կը լինի իւր ամէն առհասուր և չահ։ Այո, քաղաքացին ոչ թէ նիւթապէս կարող չէ ձմեռնատալ, օգնել մշակ ժողովրդի կրթութեան, այլ բարոյապէս հեռ նորա ոգին ցուրտ և անտարբեր է նոյնիսկ իւր զաւակներու կրթութեան համար։ Ահա օրինակ մեզ մօտ է անուանի Վան քաղաք, հարցուր թէ վանեցին տարեկան ո՞րչափ

գումար կը ծախսէ իր դպրոցներու համար, այդ չեմ խօսիր, կը խնայեմ, միայն այսչափ կ՚ասեմ, որ Վանեցին մեծ մասամբ իր մանուկներ և աղջիկներ եկեղեցւոյ նուիրուած ղուզնաքեայ մոմագնով և իւղագնով կը կըրթէ․ կրթութեան համար թոշակ տալու սովորած չէ, և թէ ուզես՝ կը խոժոռի, եթէ սաստես՝ տղան դպրոցէն կը հանէ։

Բայց Թոռնիկ, մեզ չէ պիտոյ քաղքցոց օգնութիւն, չէն մնայ գիւղական ժողովուրդ, նա տէրութեան պարտքեր կուտայ, այնչափ երթևեկող հիւրեր կը հոգայ, միթէ կարող չէ՞ մի պարզ մանկավարժ պահել, որ շատ քիչ թոշակով կը բաւականանայ։

Մենք հաց ունիմք, իւղ ունիմք, պանիր ունիմք և այլ կաթնեղէն բաներ․ մեր վարժապետներ շատ սակաւապետ են, ժամկով անգամ գոհ կը լինին։ Միայն թէ հոգացող, կարգադրող հեղինակ պէտք է, որ յորդորէ, առաջնորդէ ռամիկ ժողովրդին դէպի կրթութեան ճանապարհ։ Ո՞ւր է այդ սեպուհ պարտիք, նախ վիճակաւոր Առաջնորդին և երկրորդ վանական վարդապետներին։

Այլ աւա՜ղ, Թոռնիկ, մեր արդի Առաջնորդներ՝ գիտես թէ մի քաղաքական պաշտօնեայ դարձած են․ բուն եկեղեցւոյ պաշտօնէութիւն դպրոց, կրթութիւն, ուսումն և այլն բարձի թողի եղած են։ Այս բանիս համար, ո՞վ է մեղաւոր, ժողովո՞ւրդ թէ Առաջնորդ։ Մենք այնպէս կը դատենք, որ Առաջնորդն է մեղաւոր, վասն զի՝ նա մի հովիւ է, Աւետարանի պաշտօնեայ է, և սոսկ մի հոգեւորական սպասաւոր է Քրիստոսի եկեղեցւոյն։

Բայց տես դու, ժողովուրդն իր Առաջնորդին հոգեւորական պաշտօն մոռնացուցած է։ Նա չի պահանջեր Առաջնորդէն, որ իր փակուած աչքեր հրաշքով բանայ և տեսնայ, թէ ի՞նչ բաներ կան աշխարհի վերայ, կամ իր հոգեկան հիւանդութիւններ բժշկէ․ այլ մի միայն մի հըրաշք կը խնդրէ, որ Առաջնորդ Յիսուսի պէս՝ հինգ նկանակն օրհնէ և հինգ հազար մարդ կերակրէ։ Եւ այսպէս, քաղցած ժողովրդի հացի խնդիրն յաղթահարած է Աստուծոյ կենաց բանին, որոյ քարոզիչ մատակարար Առաջնորդն է, որչա՜փ ողբալի է, Թոռնիկ, ժողովրդին անգիտակցութեան վիճակ, որով այնպէս կը թուի, որ ինքն

աւելի մեղաւոր է քան Առաջնորդ։ Այլ ո՞վ կարող է դատել գինքը, երբ ժողովուրդ իւր կեանքի խնդիրներով խեղդուած և անձկութեան մէջ պաշարուած, ամէն ճար Առաջնորդէն կը յուսայ։ Այո՛, պիտի յուսայ, քանի որ ժողովուրդ ագէտ է, ուսումն չունի, խօսել չ'գիտէ, երկրիս օրէնք չ'գիտէ, անչուչտ նա իւր դատին միջնորդ, փաստաբան՝ Առաջնորդ կը ճանչնայ։

Ուրեմն, Թոռնիկ, բան կը մնայ դարձեալ վանական վարդապետներուն վերայ, որոնք ազատ վիճակ ունին։ Մեծ պարտականութիւն ունին նոքա և երախտապարտ են գիւղական ժողովրդին համար ամենայն անձնուիրութեամբ աշխատիլ, այցելել գիւղէ ի գիւղ քարոզել, ուսուցանել, պարզ ու ընտանեկան ոճով խօսել այնպէս, որ հասկնայ ժողովուրդ և կարենայ ըմբռնել դպրոցի նշանակութիւն, մանուկներու կրթութիւն։

Այս կերպով, այցելու վարդապետ ո՛չ միայն կը յաջողի գիւղական դպրոցներ հաստատել, այլ նա կը յաջողի նաեւ գիւղի երիտասարդներ, այրական հասակով մարդիկներ և նոյնիսկ հնացած ծերուկներ կրթել, որոնց կըրթարան եկեկեցին է։ Եթէ վարդապետ յաճախէ իւր այցելութիւն, խօսի, կրկնէ իւր քարոզներ, կարդացած Աւետարանի միտքեր, բացատրէ, ցոյց տայ Աստուծոյ պատուէրներ, կենաց բանին ու հացին սեղան այնպէս պատրաստել ու դնել քաղցած ժողովրդին առաջ, որ նա ուտէ ու լիանայ։

Գիւղական ժողովուրդ թէպէտ քրիստոնէական կեանքի մէջ չատ ծեր է, բայց իւր արդի կեանքը նկատելով, նա մի նորածին կաթնկեր երախայ դարձած է, նորա կեանքի պատկեր տգիտութիւն և ամլկութիւն է։ Նորա ատամներ դեռ բուսած չեն և պէտք չեն նորա համար հաստատուն կերակուրներ, այսինքն նուրբ դասեր և քարոզներ. նորա համար միայն կաթնեղէն անուշդ պէտք է, որ նա կարենայ քաղցրութեամբ ճաշակել ու մարսել։ Իրաւ է, որ մանկութեան ուսումն չատ հիմնաւոր և հաստատուն է։ Երանի՛ թէ ես էլ բախտ ունենայի՝ մանուկ հասակով դպրոց մտնայի ու կանոնաւոր կրթութիւն ստանայի, ինչ որ գիտեմ և ինչ որ կը խօսիմ քեզ այս դասերը, չափահաս հասակէս սկսեալ սորված եմ, որ չատ

դուզնաքնաչ բաներ են, զի միայն լսելով և գրքեր կարդալով փոքր ի շատէ հմտացած եմ աչխարհի բաներուն։ Դիտե՛ս, Թոռնիկ, ամէն մի գիրք, մի-մի վարժապետ են կարդացողի համար. գրողներ մեռեր գնացեր են, գիրն կենդանի մնացեր է, կան այնպիսի գրքեր, որ անմահ են. թէ անցնին հազար-հազար տարիներ՝ դեռ պիտի խօսեն մեզ հետ։

Այս մի քանի տողեր գրելով՝ հասկցուներ կ՚ուզեմ քեզ, Թոռնիկ, որ հասակ առած մարդիկ կարող են փոքր ի շատէ կարևոր դասեր սորվել ու կրթուիլ, միայն թէ այդ դասախօս՝ պէտք է լինի մի անձնուէր մարդ, անձանձրոյթ, մշտախօս, անյուսահատ, յարատևող ու երկայնամիտ։ Սորա փորձն ու ապացոյց՝ ես աչքովս տեսայ, պատմեմ քեզ, Թոռնիկ։

Ատի գրթէ քսան և հինգ տարի առաջ, Պոլսոյ Գալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ հովանեաց տակ կրթութեան մի նոր օրինակ ձեռնարկութիւն եղաւ։ Այդ բանին սկզբնաւորող հոգինակ Գազարոս Քրիստոստուր անուն մի պատուական անխոնջ աշխատասէր մարդ էր. ափսո՛ս, նա մեռաւ երկու տարի առաջ, բայց իւր ձեռնարկութիւն անընդհատ չարունակեց մինչեւ ի գերեզման։ Եւ ի՞նչ էր իւր ձեռնարկութիւն.— կիրակնօրեայ մի լսարան բանալ՝ պանդուխտ բեռնակիրներու կրթութեան համար։ Այո՛, բացեց ու յաջողեցաւ։ Տեսնայիր կիրակի և տօն օրեր, թողլով սրճարան և ուրիշ զուարճութեան տեղերն՝ մեր պանդուխտ հղբայրներ լսարան կը թափէին. պարոն Քրիստոստուր անթոչակ վարժապետ, այբէն սկսելով իւր պարզ դասեր կ՚աւանդէր։ Նա մանկավարժ չէր, բայց այնպիսի դիւրին ոճով ու հղանակաւ կ՚ուսուցանէր դասերը, որ այդ թանձրամիտ կարծուած բեռնակիրներ ամենայն դիւրութեամբ կ՚ըմբռնէին նորա ասածներն։ Եւ ահա փոքր չրջանում՝ մեր բեռնակիրներ, գեհիկ չինականներ քնագէտ դարձան։ Սորվեցան բաւական հայերէն լեզուն, Քերականութիւն Սուրբ Գրոց պատմութիւն, Քրիստոնէական վարդապետութիւն և Աւետարանի դասեր, Թուաբանութիւն, տօմարական հաշիւներ եւայլն։

Դու գիտես, Թոռնիկ, ի՞նչ եղաւ այս արդիւնաւոր ձեռնարկութեան վախճանը. երբ բեռնակիր մարդ ուսման

ճաչակն առաւ, փոքր ինչ զարգացաւ նոր միտքն, նա զգաց ու ճանչցաւ իւր արժանիք, գիտցաւ թէ մարդն անասուն չէ, որ բեռ կրէ, Աստուած զմարդն իշխան առեղծեր է, որ անասնոց վարիչ լինի։ Ուստի բեռնակիր ձգից համեստ (սեմեր) իւր բրտացած քամակէն, գնաց իւր արժանիքին համեմատ գործերու պարապեց։ Այդ բեռնակիրներ մինչեւ անգամ մասնաւոր գրագրութեան պաշտօններ ընդունեցին, ոմանք եւս իրենց հայրենիք դառնալով՝ գիւղական դպրոցներու մէջ մանկավարժ եղան։

Երախտապարտ եմ յիշել ու խոստովանիլ, որ Պոլիս եղած ժամանակ՝ չարունակ կ'երթայի այդ անձնուէր մարդոյ մոկ անելու, մանաւանդ իւր խրատական և բարոյական դասեր չատ կրթիչ ու օգտակար էին գաւառացի պանդուխտներուն համար։ Հանգուցեալ հոգին մի անվեղար, անգաւազան քարոզիչ վարդապետ էր. նա չգիտէր մեթոտ, կամ ճարտասան լեզու գործածել, կամ համառօտ ու հարեւանցի կերպով ասել, անցնել. այլ այնչափ կը խօսէր, այնչափ կը վարէր բեռնակիր աշակերտներուն կորցուցած երկիր, մինչեւ խրխրէր նոցա միտքն, ցանէր ու սեղաւորէր իւր դասերու հասիկներ. իւր յիշատակն օրհնանա՛լ եղիցի, և Տէր Աստուած հատուցանէ այդ անխոնջ մշակին վարձք։

Այս ճշմարիտ իրողութիւն իբրեւ ապացոյց՝ պատմեցի քեզ, Թոռնիկ, որպէս զի դու և դիւղական ժողովուրդ համոզուինք թէ՝ չափահաս մարդիկ եւս կարող են կըրթուիլ, կարող են սովորիլ, միայն թէ անձնանուէր ուսուցանող լինի, մանաւանդ երբ ուսուցանէ և միանգամայն գործէ և իւր անձն իբրեւ օրինակ՝ ընծայէ ժողովըրդին։

Եւ ո՞ւր են այդ անձեր, և ո՞րչափ հազուագիւտ են չինական ժողովրդին համար, և ո՞ր աղէտն պիտի լինին դոքա յանկարծ, անսպատէ՞ն պիտի գան Յովհաննէս Մկրտչի նման, կամ Տէր Աստուած հոգալով իւր ժողովուրդ՝ հովիւներէն մարգարէ՞ պիտի հանէ իւր չնորհաց դպրոցէն, ինչպէս կը հանէր երբեմն Իսրայէլի ժողովըրդին համար։ Քանի որ հաստատեալ բարեկարգ կրթարաններ չունիմք, որ ուսեալ և կրթեալ ժառանգաւորներ հասնին, այսպէս կը մնայ ժողովրդին վիճակ։

Հունձք բազում և մշակք սակաւ, կ'ասէ Յիսուս։ Աղաչեցէք զտէր հնձոց, որ հանցէ մշակ ի հունձս իւր։ Սակայն ոչ կ'աղաչեմք և ոչ կը խնդրեմք, ինքնին Տէր Աստուած գթալով մեր խեղճութեան վերայ, երբեմն փոքրիկ մշակ, այցելու հովիւ կը հանէ մեր հունձերուն համար, ինչպէս Տէր Դանիէլ վարդապետ միաբան վարդայ վանից, որ տասն տարիներէ ի վեր ամենայն անձնանուիրութեամբ կը հովուէր ոչ միայն մեր Արճակ գիւղն, այլ և հեռաւոր չրջակայ գիւղեր նորա այցելութեան ատք հանգիստ չէր գիտեր, այլ անդադար կը չրջէր. այդ անխոնջ մշակ ոչ միայն Աւետարանի սերմեր կը ցանէր, բարոյական խրատներ կը խօսէր, այլեւ գիւղական անտեսութեան գասեր եւս կ'աւանդէր. այնպէ՛ս պարզ, յստակ, ու հասկանալի ոճով, որ մինք թանձրամիտ չինականներս կարող էինք ըմբռնել նորա ամբողջ խօսքեր։ Նա չինեց ու հաստատեց մեր Արճակու դպրոց, և միանգամայն նորա յարատեւութեան համար եկամուտներ կարգադրեց, նոյնպէս ուրիշ շատ գիղերու մէջ եկեղեցիներ ցինեց, դպրոցներ հաստատեց։ Դանիէլ վարդապետին կեանք բոլորովին պարզ և սակաւապետ էր, նա կը կերակրուէր չինականի սեղանէն, որ սովորաբար թանապուր և մածուն էր, անտրտունջ կ'ուտէր և կ'ասէր. կրօնաւորին համար՝ այսչափս բաւական և շատ է։ Իւր ոգին առընչասէր էր և ազատ ագահութեան ախտէն։ Դուռ ունէր, կը գորովէր խեղճերուն վերայ. կը սիրէր տալ՝ քան առնուլ. նա ունէր մի հաստատուն կամք, ինչ որ սկսէր ձեռնարկել՝ անվհատ ոգւով կ'աշխատէր յառաջ տանել. նախապաշարման կապէ արձակուած էր. նա թէեւ չ'ունէր այնչափ ուսումն և ընդարձակ զարգացած միտք, բայց շատ ընդունակ էր ժամանակի յառաջդիմութեան։ վերջապէս Դանիէլ վարդապետ միակ այցելու հովիւ էր գիւղական ժողովրդին համար, սորա համար ժողովուրդ գինքը կը սիրէր և ինքն եւս աւելի կը սիրէր գիւղացի ժողովուրդ։

Երանի՛ թէ չատնային եկեղեցւոյ այսպիսի անձնուէր մշակներ, մեր առատ հունձերուն համար. դու տեսնայիր, Թոռնիկ, էն ժամանակ թէ ինչպէս գիւղական ժողովրդին վիճակ կը փոխուէր ու կը բարւոքէր։

Վերջացնելով այս ընդհանուր դասեր, ժամանակ եկաւ

պիտի խօսիմ և յայտնեմ քեզ ա՛յն բան, որ առանձին քո կեանքին և մեր գերդաստանին կը վերաբերի։

ԻԱ.

Թ Ո Ռ Ն Ի Կ Ի Ն

ՀԱՐՍՆԻՔ

Է՛, Թոռնիկ, ես ծերացայ, մայրիկդ էլ պառաւած է, ո՞վ պիտի լինի տանուտէր և տանտիկին, որ չահէ ու պահէ մեր տուն։ Աւետիս տամ քեզ, որ ամուսնութեան ժամանակ հասած է. կարծեմ քսան տարին անցուցիր, դու գիտես գիւղացւոց հին նահապետական սովորութիւն, որ իրենց զաւակներ չուտով կը կարգին, որպէս զի տան աշխատաւորներ հասնին։

Դու կը տեսնաս, ես և դու միայն ենք, մեր հողագործութիւն բոլոր վարձկան մշակներով կը կառավարենք. լաւագոյն չէ՞, որ տնէն եւս աշխատաւորներ ունենանք։

Թո՛ղ այս, Թոռնիկ, թէ ես և թէ մայրիկդ կը ցանկամք չմեռած՝ տեսնալ քո թագն ու պսակ։ Պապերու, Հայրերու և Մայրերու միակ ցանկութիւնն այս է, որ տեսնան իրենց զաւակներ և թոռներ, որոնք Աստուծոյ օրհնութեան պտուղներ են, զի Աստուած երբ օրհնեց նախածնողներ Ադամ ու Եւայ, ասաց. աճեցէք ու բազմացէք և լցէք երկիր։ Բայց մեր տուն դատարկ է, Թոռնիկ, երեխայ մի չկայ, որ դղրդեմ ու սիրեմ, ընտանեկան ուրախութիւն ու բերկրանք՝ այն սիրուն և քնքուշ մատաղ տղայոց վերայ է. տղայք տան բնական երաժիշտներ են, կը խաղան, կը ճլվլան, կուլան, կը ծիծաղեն. այդ կենդանի փոքրիկ էակներ, անդադար կը շարժին, հանգիստ չը գիտեն։ Ո՞րչափ հրճուանք է որդեսէր ծնողաց համար, երբ նոքա սեղանին շուրջ կը բոլորին, ինչպէս կ՚ասէ Դաւիթ. «Որդիք քո որպէս նորատունկ ձիթենւոյ շուրջ զսեղանով քով»։

Գիտե՞ս, Թոռնիկ, ամուսնութիւն Աստուծոյ հաստատած մի օրէնքն է՝ մարդկային ահռ պահելու համար. Պապկի տան անուն և մեր ընտանիք կը ջնջուի, եթէ դու

չ'ամուսնանաք, և պէտք է որ ընդունիք կազմելով մեր ընտանեկան կեանքն ու գերդաստան կենդանի պահէք։

Իրաւ է, որ ամուսնութեան համար քաղաքացին չատ կը մտածէ, բայց չինական ժողովուրդ սովորած չէ մտածել, թէեւ լինի յետին աղքատ։ Մեր մէջ առած մի կայ, կը պատմուն թէ՝ մի աղքատ գիւղացի, որ միայն մի իշուկ ունէր, մի օր իւր կնոջ հետ խորհելով կ'ասէ. կնիկ, կը տեսնես մեր տղան հասաւ, ի՞նչպէս կարգենք։ Եւ որովհետեւ չատ բնական է, որ մայրեր աւելի հոգացող ու հակամէտ են իրենց զաւակ չուտով կարգելու, պատասխան կուտայ էրկան ու կ'ասէ. էշը ծախենք ու տղան կարգենք։ Ա՜հ, ի՞նչ կ'ասես դու, կնիկ, չ'գիտե՞ս մեր ուժմուտ — ապաւէն այդ իշուկն է, մենք վար ու ցան չ'ուենիմք, պարտուր ու ցախ բառնալով կը տանեմ քաղաք, կը ծախեմ և այդ իշով միայն մեր օրական պարէնն կը ճարեմք։ Ը՛օ, մարդ, դու էլ չատ կը մտածես, Աստուած ողորմած է. տղան կարգենք, նորա հացն Աստուած կուտայ, և գուցէ մեր տան բախտ բացուի, իշու տեղ՝ ձիու տէր լինիմք։

Օրհնեա՛լ է Աստուած, Թոռնիկ, մեր տուն բարիքներով լի է, էշ կամ գոմէշ ծախելու պէտք չ'ունիմք, ամէն բան տնէ է. մեր այն մեծ տահ եզը կը մորթեմք, հարիւսայ կը գնեմք, թող գիշով ուտեն։ կը յիշե՞ս Թոռնիկ, թէ ո՞ր եզն է. մի օր դու գուբեան արած ժամանակ ասիր, Պապիկ, ակօս ծուռ կ'երթայ, և ես ասի քեզ, գիտեմ, Թոռնիկ, ակօսին ծռութիւն մեծ եզնէն է. դեռ դու չ'գիտես աշխարհի բաներ, միայն անբան եզներ չեն, որ ակօս կը ծռեն, ո՞րչափ ակօս ծռող մարդիկ կան, որոց գործն ու կեանք երբէք ուղղութիւն չ'ունին. այդ ակօս ծռողներուն երեսէն է, որ աշխարհի բան ծուռ կ'երթայ։ Ջեմ խօսիր քեզ, միամիտ Թոռնիկ, նոյնիսկ մեր գիւղի մէջ ո՞րչափ ակօս ծռողներ կան։ Հիմի մեր եզը մորթելով կ'ազատուինք ծուռ ակօսի փորձանքէն, Աստուած աղաչենք, որ ազատէ զմեզ ծուռ մարդոց փորձանքէն։

Գիտեմ, Թոռնիկ, դու այժմ ինքնին կը խօսես մըտքիդ մէջ թէ Պապիկ նատեր է իմ հարսնիքի ճառ կը խօսի. կ'ասէ թէ հարսանեաց ճաշ պատրաստ է եւայն. բայց

չ՚ասիր թէ՝ ո՞ւր է իմ հարսանեաց հանդերձ, և ո՞վ է Թոռնիկին նշանած աղջիկ։

Անուշ Թոռնիկ, չե՞ս յիշեր դու աղջի գլուխ դասխ մէջ խօսեցայ քեզ թէ Ըստամպօլէն վերադառնալով մի ձեռք պատուական չուխայ լաթ ունէի, մինչեւ ցարդ սընդուկին մէջ պահած եմ, ահա այն պիտի լինի քո փեսայութեան հանդերձ․ միայն թէ երբ հարսնիք լրանայ, պէտք է հանես դնես սնդուկ և միայն տօնի օրեր հագնիս, դու հողագործ աշխատաւոր ես, չալէ շալվար կը վայելէ քեզ։

Իսկ նշանածիդ համար խօսիմ քեզ, որ սիրտդ հանդարտ լինի․ մեր գիւղի տանուտէր Մուրատ համբան կը ճանչնաս, ահա այն պիտի լինի մեզ խնամի, որոյ տուն նահապետական է և ամբողջ ընտանիք բարի և անմեղ մարդիկ են։ Տանուտէր Մուրատին մի աղջիկ կայ չափահաս Շուշան անուն, որ շատ պարկեշտ, անարատ և ժրագործ մի աղջիկ է, և դու անշուշտ շատ անգամ կը տեսնաս զինքը, մեր գիւղական ընտանիք Փռանգստանէն առաջ ալաֆրանկայ են. վասն զի գիւղական ժողովուրդի կեանք հին նահապետական կեանքի մնացորդ մի պատկերն է։

Ահա իմացուցի քեզ ամէն բան․ գուցէ քո մաքէն չէր անցներ, զի դու պարզամիտ և ուղղախոհ մի զաւակ ես․ Պապիկ սուր աչք քո վերան միշտ կը հսկէր, դու այժմ ժրացիր Թոռնիկ, ինչ որ կ՚ասեմ՝ շուտով կատարէ, միայն վեց օր է մնացեր, յառաջիկայ երկուշաբթի առաւօտ մեր գիւղի եկեղեցւոյ մէջ սուրբ սեղանին առաջ պատարագին դիմաց՝ Աւետարանով ու խաչով քո պսակի խորհուրդ պիտի կատարուի։ Դու այժմէն լուր տուր Եաղարաչի Մխոյին և զուռնաչի Մրդոյին․ գիտես որ մեր գիւղական հարսնիք առանց այդ բաներուն համ չ՚ունի։ Առ դու այժմ Թոռնիկ, մեր մեծ էշ և երկու տիկ, գնա շուտ Շահպաղի գիւղ մեր ծանօթ բարեկամէն տասներկու լիտր գինի առ և բեր, բայց նայէ որ ջուր չը խառնեն գինւոյն հետ․ Շահպաղեցիք մեզ պէս միամիտ չեն, քաղքցոց մօտ լինելով՝ խարդախել սովորած են․ ի՞նչ անեն խեղճեր, երբ քաղքցին տակառ աւելի կը բարդէ, էնոնք էլ ջուր կը խառնեն՝ երբ տակառին տեղ գինի տան։

Կարգն եկաւ, մի բան պատմեմ քեզ, որ զարմանաս։ Ես մի օր աշնան վերջ Վանայ Առաջնորդարան գնացի, տեսայ որ քաղաքացւոց և գիւղացւոց դատաստան կար։ Ես էլ նատայ մաիկ արի. էդ քաղքցին մի պոզիկ գինի բերած էր, մի դաւաթ լեցուց տուաւ Առաջնորդին. Հայր սուրբ, ասաց, խմէ՛ տես, այս գինի՞ է թէ ջուր. համտես արաց Առաջնորդ՝ եղբա՛յր ասաց, կ'երևի որ բաւական ջուր խառնուած է, պատմեց վաչխառու քաղքցին թէ ես այս ինչ գիւղացւոյն վերայ այսքան հազար դահեկան դը-րամ ունիմ, էդ պարտապան գիւղացին տոկոսին տեղ՝ եր-բեմն չիրայ կը բերէ և ես կ'ընդունեմ ի հաշիւ տոկոսին. այս տարի աշնան յիսուն լիտր չիրայ բերաւ, ես էլ միա-մտութեամբ լցի կարասներս։ Գիտե՞ս, Հայր սուրբ, ես գինի սիրող մի մարդ եմ, անհամբեր կը սպասեմ որ չի-րան եռից իջնայ՝ նոր գինի խմեմ, յաճախ կ'երթամ կը նայիմ կարասներուն, կը տեսնեմ որ չեն եռար. ի՞նչ բան է կ'ասեմ, նոր գինին անպատճառ պէտք է եռայ, յետոյ իմացայ թէ ի՞նչ պարզամիտ եղեր եմ, չինական զիս խաբած է և ջուր խառնած է չիրային հետ։ Ես գրոց մարդ չեմ, բայց իմացայ որ Ջրախառն չիրան չի եռար։ Ահա այս է իմ բողոք, կ'աղաչեմ Հայր Առաջնորդ, իմ դատաստանս ուղիղ տես։

Կանչուեցաւ գիւղացին և նա առջի անգամ այսպէս խոստովանեցաւ, թէ ես ջուր չեմ խառնած, կարելի է որ ջուրն ինքնին խառնուած է, որովհետև մեր չիրախանա-յի պատի տակէն ջուր կ'անցնի էդ առուէն, ջրծակ ու-նիմք չիրախանէն լուանալու համար, պատահմամբ բաց-ուած է և ջուր վազեր է չիրայի գուբին մէջ։ — Լաւ կը պատմես տղաս, բայց չիտակ չես խօսիր, ասաց Առաջ-նորդ. եթէ ջուրը ինքնին վազած է, անպատճառ բոլոր չիրան ջուր կը դառնար, բայց սա գինոյն մէջ ջուրն չափով խառնուած է. Թող այս, դու եթէ գիտէիր որ այդ-պիսի փորձանք եղած է, ինչո՞ւ համար Ջրախառն գինին բերիր քո աղային։

Հայր սուրբ, հոգւոյդ մեռնիմ մաիկ արա, որ մեղքս չիտակ խոստովանիմ և կ'աղաչեմ, որ դու էլ չիտակ դա-տաստան տեսնաս։

Անցեալ տարի ես յիսուն լիտր ալիւր բերի աղային,

ես արդէն ալիւր կշռած էի, գիտէք որքիւղերու կշիռքի քարեր բաւական ծանր են քաղաքի քարերու վերայ. մենք դիտմամբ այսպէս արած ենք, գիտնալով որ մեր բաներ քաղաք կ'երթայ՝ միշտ պակաս կը հանեն, ինչպէս մեր աղան, բակի մէջէն մի անորոշ և կոշտ քար մի բերաւ դրաւ կշիռքն, ինձ ասաց թէ այս մի լիտր է. դու գիտես պարզամիտ չինականներ քաղքցւոց չուտ կը հաւատան. աղան սկսեց կշռել ալիւր և ծանր ծանր կշռեց, և տես դու, անիրաւ կշիռք հինգ լիտր պակաս բերաւ. Աստծու սիրուն ասի, աղա, իմ ալիւրս լման յիսուն լիտր է. — ո՛չ, մինչէ ես քեզ անիրաւութի՞ւն կ'անեմ, այսպէս ասաց և քառասուն հինգ լիտր հաշուեց։ Այս անխիղճ ղրկանք ինծի սրտի ցաւ եղաւ, չի կրցայ մոռնալ, միտքս դրի որ սորա փոխարէն աղայէն հանեմ, ուստի ջուր խառնեցի չիրայինն և լաւ արի, դի մեր աղան գինին ջրախառն կը խմէ, որ գլուխ չի բռնէ։

Ահա Հայր դատաւոր, մեղքս ուղիղ սրտով խոստովանեցայ, դու էլ ուղիղ մտքով դատաստան արա. ո՞վ է մեղաւոր, ե՞ս թէ աղան. միայն անոր համար մեղաւոր եմ, որ ալիւրի խնդիր Ձեր առեանը չը բերի, դի փորձով գիտեմ, քաղքցին ու չինական երբ դատաստանի գան, ո՛վ չի գիտեր որ քաղքցին կը չահի դատը, և սորա պատճառներ դու լաւ գիտես, Հայր սուրբ, էլ ի՞նչ ասեմ։

Կը տեսնա՞ս, Թոռնիկ, որ գիւղացւոց աչքը սկսած է կամաց կամաց բացուիլ։ Բայց ես խրատ կուտամ քեզ, Թոռնիկ, մի՛ գուցէ դու էլ այս պատմութենէն օրինակ առնելով՝ հետեւիս ճարպիկ գիւղացւոյն, խարդախութեան դէմ խարդախութիւն ի գործ դնես, դի այդ չատ հակառակ է Աստուծոյ պատուէրին։ Թող այս, եթէ միանգամ խարդախել սովորիս, այլեւս կը լինի քեզ այն արհեստ և ունակութիւն. էն ժամանակ դու ոչ միայն խարդախին դէմ նենգել կը կարաս, այլ գուցէ նաեւ անխարդախ մարդոյն դէմն եւս այնպէս վարուիս։ Շատ է որ դու ղրկանք կրես և վնասիս, քան թէ ղրկես և վնաս տաս ուրիշին։ Բայց աւելի լաւագոյն է, որ արթուն և աչալուրջ լինիս, ոչ խաբես և ոչ խաբուիս։

Գիտեմ, Թոռնիկ, ես քեզ խրատ կը խօսիմ, այլ դու մտքիդ մէջ ինքնախօս կը լինիս, թէ Պապիկ մեր հարս-

Նիքի խնդիր մոռցաւ, գինու խնդիրէն ուրիշ խնդիր հաննց, երկար-երկար ճառ կը խօսի գլխուս։ Չէ՛, Թոռնիկ, չէ՛, ամուսնացողին չատ խրատ պէտք է, կարծես որ ծեր պապիկդ ծանծղեր է, դուցէ մոռցաւ հարսնիքի մեծ խընդիր։ Ո՛չ, այսօր չաբաթ է, դու էլ գինին բերիր հացուցիր, ուրեմն ամէն ինչ պատրաստ է։

Այս իրիկուն աղպաճսուում է, գեղի բոլոր նորահաս կարիճներ պիտի ժողուին, նոր փեսան իրենց մէջ առնելով՝ պիտի խաղան խնդան, ուրախութիւն անեն մինչեւ լոյս։ Առաւօտ կիրակի է, գեղի բոլոր ժողովուրդ մեծն ու փոքր, այր մարդիկ, կիներ, հարսներ, աղջիկներ, պառաւներ, իրենց ճժերով մեր հարսնիքի տուն պիտի լեցուին։ Գիւղացւոց հարսնիք էսպէս կը լինի, դուռ բաց է, քաղքցւոց հարսնիք չէ որ դուռ փակեն հարսնիք անեն՝ մկներ առիքը չիմանան։

Ինօր իրիկուան մօտ հարսի հետ պիտի երթամք, ես և գեղի բոլոր մեծ-մեծ համբաներ։ Հարս պիտի բերենք իջուցենք տուն, քոշ գլխուն թախթին վերայ պիտի նստի, հարսնքոյր իւր մօտ էնպէս, ինչպէս պահապան հրեշտակ։

Ժամհար կոչնակ զարնելուն պէս լուսամուտին՝ եկեղեցի պիտի գնամք բոլոր հարեւաններով մէկ տեղ, դու այնպէս պէտք է հաւատաս, որ եկեղեցին քեզ համար մի Ադամայ դրախտ է, ուր իջած է Աստուած, ձեր պսակ պիտի դնէ և օրհնէ քահանային ձեռքով. դու էնպէս համարի թէ մինչեւ ցարդ կեանքիդ մէջ քնած էիր, յանկարծ կը զարթիս, քնաթաթախ աչքդ կը բանաս, որ մի նոր Եւայ Շուշան ծաղիկ բուսած է կշտիդ, ձեռք ձեռքի կուտայ քահանան ու կ'ասէ. «Առեալ զձեռն Եւայի տըբեալ ի յաջն Ադամայ» եւայլն. դու եւս մտքիդ մէջ խօսիր մեր մեծ պապկին պէս։ «Այս այժմ ոսկր յոսկերաց իմոց և մարմին ի մարմնոյ իմոյ եւայլն։ կը սկսի քահանան ուրիշ խորհրդաւոր աղօթքներ կարդալ ձեր վերայ, ձեր ու հարսի բերնէն խոստումներ կ'առնէ, բոլոր ժողովուրդ վկայ կը լինի. դուք Աստուածադիր օրէնքով էնպէս պինդ կը կապուիք իրարու հետ, որ միայն մահ կը քակէ. աշխարհի ձեռք կարող չէ քակել։ Յիսուս իւր Աւետարանով աւելի ամրապնդեց Հօր Աստուծոյ կապն և

տաց, թէ «Զօր Աստուած զուգեաց մարդ մի՛ մեկնեսցէ»։

Պսակն աւարտելէն յետոյ՝ կ'ելնենք եկեղեցիէն, էն ժամանակ կարգ կուգայ ուրախութեան, կը սկսին զուռնան-նաղարան, մունետիկի պէս ձայն կուտան աշխարհին թէ Թոնիկ և Շուշան ամուսնացան, էս օր նոցա հարսանեաց տօն է, մեր կտրիճ երիտասարդներ կը սկսեն չոր փետ խաղ. է՛, Թոնիկ, հին պղպատէ վահանին տեղն՝ ամէն մէկ իւր ապան կամ կօստիկ կը փաթթէ մի ձեռքին վերայ, երկու-երկու իրարու հետ կը խաղան մինչև ի տուն։ Դրան առաջ ոչխար կը մորթեն. էտ մի մատաղ է փեսին ու հարսին արևշատութեան համար։

Միտքս կուգայ այստեղ, Թոնիկ, պատմեմ քեզ, քառասուն տարիէն առաջ, երբ Հայրիկ կ'ամուսնանար, ես էլ ինչպէս սովորութիւն է գիւղացւոց՝ իւղով բաղարջ, փոխինդ և մի գառնուկ առի գնացի հարսնիք. երբ փեսայ Հայրիկ եկեղեցիէն տուն կը դառնար, իսկոյն մտածեցի գառնուկս մատաղ անեմ իւր առաջ։ Գառնուկ գետին դրի որ մորթեմ, Հայրիկ ձիու վրայէն կանչեց, մի՛ մորթէք. այն օր Պապիկ խմեր գլուխ դարձեր, ծուռ չինական եղեր էր. քաշեցի դանակ, արիւն ցայտեց, բայց փոշման եղայ, տեսայ որ Հայրիկի աչք լեցուեցաւ, նա սկսեց աղու պէս լալ. ձիէն իջուցին տարին սենեակ, ուր սաստիկ յուզուեցաւ ու լացաւ. հարսնիքի տուն իրեն համար սգոյ տուն դարձաւ. այն օրէն ես հասկցայ թէ Հայրիկ ո՞րչափ գութ ունի անասնոց վերայ, և ո՞վ էր լեցուցեր նորա սիրտ այդչափ գորովով. ինքն կը խոստովանի այս բան իւր Խաչի ճառի մի ուղերձին մէջ, թէ իւր դաստիարակ հանգուցեալ հօրեղբայր Խրիմեան Խաչիկ աղան է, իսկ նորա սիրտն ո՞վ է լեցուցեր, — Աստուած զոր միշտ կը կարդար և ուրիշ գիրք չ'գիտէր։

Այժմ ճաշու ժամ է, հարսնիքին հարիսային ժամանակ հասաւ, հարսնեւորներ անօթի են, ձգեցէք թաղխաներ՝ թող նստին. երեխան մեծ ու պզտիկ, հարուստն ու աղքատ, վերի վարի կարգ չկայ, Պապկի տունն է այս. մեծ տանտիկին, հրաման արա հարիսան լեցնեն մեծ-մեծ մաթրաթներով, բերէք դրէք սեղան։ Իմ սիրելի դրացի բարեկամ գիւղի բոլոր ժողովուրդ, ձեր Պապիկ ձեզ ճառ կը կարդայ, տուէ՛ք ինձ մի բաժակ գինի, Պապիկ պար-

տական է խմել նախ այս բաժակ մեր երկրին տէր Թագաւորին կենաց համար, որ հոգայ, կառավարէ ու պահպանէ իւր հաւատարիմ հպատակ ժողովուրդ։ Խմենք ապա մեր Թոռնիկ Թագաւորին կենաց, որ այսօր Թագաւոր է եղեր և վաղը՝ մաճկալ պիտի լինի։ Չմոռնանք նաև մեր Շուշան հարսին կեանք, որ այժմ Թագուհի է եղեր, վաղ պիտի լինի Պապկի տան տնաչէն և ժրագլուխ հարս։

Մնաց ձեր կենաց բաժակ, սիրելի հարսնեւոր գեղացիններս, շնորհակալ եմ որ պատուեցիք Պապկի տուն ու փառաւորեցիք Թոռնիկիս հարսնիք։ Կ՚աղօթեմ որ աղպեն ձեր զաւակներուն ու Թոռներուն վերայ լինի։

Այժմ հարիսի ճաշ լմնցաւ, հարսնիքն էլ կը լմնայ, եկէք բակ, բռնեցէք ձեր ալանակեօնս. տղաք այդ մեր քարէ մեծ սանդ լի գինի լեցուցէք, հողէ մեծ կուռիկ վերան դրէք, թող սանդին շուրջ բոլորին, պար խաղան, երգեն մեր գեղի կարիճներ։

Պապի՛կ պապի՛կ աչքդ լոյս,
Թոռնիկ թագւոր է եղեր.
Մամի՛կ մամի՛կ, աչքդ լոյս,
Շուշան քեզ հարս է եղեր:
Այրին Շուշան եւ Թոռնիկ,
Եւ ծերանան ի միասին.
Ծըլին ծաղկին ինչպէս շուշան,
Զաւակներով եւ թոռներով:
Պապկի տուն բարգաւաճի,
Թոռնիկ լինի մեծ տանուտէր.
Եւ ումրշատ լինի Պապիկ.
Տեսնայ թոռան իւր ճետեր:
Նահապետաց չափ թող ապրի,
Ծաղկին ալիք իւր ձիւնի պէս.
Հասնի մինչեւ խոր ծերութիւն,
Մեռնի երթայ արքայութիւն:
Ուտենք վերջին իւր հոգեճաշն,
Յիշենք, օրհնենք իւր յիշատակ:

Շատ ապրիք և դուք իմ գեղացի քաղաքավար աղբարներս. հարսնիքի ճաշ կերաք, ի վերջոյ կ՚ուզէք իմ հոգեճաշն է՞լ ուտել։ Շատ իրաւունք ունիք. մեր քաղք-

ցի գիտնականներ կը կարծեն որ՝ չինականք իմաստասիրել չ՚գիտեն, ո՞րչափ բնական է ձեր հոգեճաշի տենչանք, վասն զի միշտ բնական հետեւանք է հարանիքի ճաշին։ Հարանիքի ճաշով մարդիկ կուգան յաշխարհ, հոգեճաշով կ՚երթան։ Աստուած թող էնպէս կամենայ, ինչպէս ձեր բարի ցանկութիւնն է։

Բայց Պապիկ ձեզ խրատ կուտայ, բարեկամներ, աշխատեցէք ձեր քրտինքով, որ ամէն օր ձեր ընտանեկան սեղանին վերայ լիապէս ճաշ ուտէք, հասնիքի ճաշ, մահուան հոգեճաշ՝ փոր չեն կշտացներ։ Թողէք հոգեճաշ խեղճ աղքատներուն և մանաւանդ քահանաներուն, որոց իրաւունք ըլլալով և չը տալով՝ միշտ ձեր հոգեճաշին կը սպասեն. չիտակ խօսելով՝ մեր քահանայք մեռելներու չնորհիւ աւելի կ՚ապրին, քան թէ կենդանեաց։

Է՛, սիրելի հարսնեւորներս, հարանիք աւարտեցաւ, ուտելու խմելու բաներն էլ լմնցաւ, գինու տակեր դատարկուեցան, տանտիկին լուր կուտայ թէ՝ տաշտին մէջ հաց չը մնաց, և ամանին մէջ իւղ. միայն հարսի պղնձի մէջ տակուց մնացեր է, էն էլ աղքատներու բաժին է։

Այժմ ամենայն քաղաքավարութեամբ՝ նկէք ծերունի Պապկի ձեռք համբուրեցէք, Թոռնիկիս ու Շուշանին առեչատութիւն մաղթեցէք և մնաս բարով ասելով՝ գնացէք ձեր տներ։ Գիտեմ, անքուն մնացիք և չատ էլ խըմեցիք, տեսէք ահագին սանդի գինին պարպեցիք. հարսնիքէն գացող՝ կ՚ասեն թէ մահմուտ կը լինի. այս գիշեր հանգիստ քուն եղիք, առաւօտ մութ լուսնալուն պէս դէպի դա՛շտ, դէպի դա՛շտ։

Մտածեցէք, եթէ չ՚աշխատիք վարուցանով և դաշտի արդիւնք չ՚բերէք տուն, ձեր հասած զաւակներ կարող չէք պահել, մինչէ դատարկ տնով հարսնիք կը լինի՞։ կ՚աղօթէ Պապիկ, որ Աստուած ձեր աշխատութիւն արդիւնաւորէ, և ձեր տներ բարութեամբ լեցնէ, որ դուք եւս հարսնիքներ անէք և ձեր որդիքներու և թոռներու թագն ու պսակ տեսնաք և մխիթարուիք։

Ահա՛ Թոռնիկ, հարսնեւորներ ցրուեցան, մնացինք հս և դու, մամիկ, և նորեկ հարս Շուշան, մեր փոքրիկ ընտանեկան թռոյն վերայ մի հատիկ աւելցաւ. Աստուած այդ մի հատիկն իբրեւ մի ցորենահատ ցանեց մեր ընտանեկան անդաստանին մէջ, դու պիտի տեսնաս, Թոռնիկ,

թէ այդ մի հատիկ մայրենի սերմէն, ո՞րչափ մանկահատիկներ պիտի բուսանին. մի օր կը տեսնաս, որ տունն լցուած է լաճկրով, աղջիկներ, որոնք թռչնոց ձագերուն պէս՝ ճիւ-ճիւ ձայն հանելով, բերան բացած՝ պիտի աղաչակեն. պապօ՛, հա՛ց կ'ուզենք, հա՛ց։ Իրաւ է, որ մարդիկ կը հաւատան ու կ'ասեն թէ՝ Արարիչ Տէր իւր ստեղծածին գըսմաթ կուտայ։ Այո՛, կը հաւատանք այդպէս, բայց Տէր Աստուած գըսմաթ և հաց նախապէս պատրաստեց. և ապա մարդն ստեղծեց. և այդ գըսմաթ այս մեր քնակած երկիր և հողն է, որոց համար ասաց գործել ու պահել։ Ուսուի առանց գործելու, առանց աշխատութեան, առանց վարուցանի մարդոյն համար ոչ հաց կայ և ոչ գըսմաթ։

Պատրաստուիր ուրեմն, Թոռնիկ, աչնան գութանի ժամանակ չ'անցնի, վաղն առաւօտ պիտի երթամք դաշտ ականք մեր աշխատութիւն։ Այժմ դու հան այդ վեհասյութեան չուխայ լաթեր, հագիր մշակութեան չալէ չալվար. Շուշանն էլ թող իւր հարսանեկան զարդեր հանէ, մամկի հրամանով աւել ձեռք առնէ, տունն խորդէ, աւլէ, մաքրէ, ամէն բան իւր տեղ դնելով կարգադրէ։ Այսպէս, Թոռնիկ ի դաշտ՝ Շուշանն ի տան, երէք աշխատին՝ Աստուած հաց կուտայ։

ԺԲ.

ՊԱՊԿԻ ՊՄԱԿ

Ի ԴԱՇՏ

Սիրելի՛ Թոռնիկ, ես նորէն և կրկին զքեզ պիտի պըսակեմ. դու մի՛ կարծեր, որ եկեղեցւոյ կամ քահանայի պսակ քեզ բաւական է։ Այո՛, հոգեւորապէս և Աստուծոյ օրէնքով բաւական և չատ է։ Բայց երէք պապիկ այդ պըսակին վերայ իւր պսակ չ'դնէ՝ դու անօթի կը մեռնիս։ Ահա աղօթարան բացուեցաւ. հրաման արա մշակներուն, թող գութան սարքեն, տանին գեղի մօտի խոզան աւազարտ. պէտք է այժմէն վարենք, աղբենք այն արտն, և գարուն բանջարեղինաց պարտէզ անենք։

Լծեցէ՛ք գուբաթն, դու տես հիմի, Թոռնիկ, թէ ի՛նչպէս պիտի պատկեմ զքեզ։ Գնա՛ նախ գոմշուկներուն և եզներուն ճակատներ համբուրէ, ար՛ի գուբաթին մաճին քով խոնարհիր գետին՝ մայրենի հող համբուրէ, ձեռքս մաճին վերայ դրած եմ, համբուրէ Պապկի ձեռք և մաճը. ահա քառասուն տարուան մաճկալ Պապիկ, այսօր քեզ կը յանձնէ մաճկալութեան վսեմագոյն պաշտօն, զոր Տէր Աստուած Ադամայ մեր մեծ Պապկէն տուաւ, որ գործէ երկիր և պահէ։

Յորենաբոյսէ հիւսուած մի սիրուն, գեղեցիկ, բոլորակ պատկ չինեմ իմ ձեռքովս քեզ համար. բեր գլուխդ Թոռնիկ, դնեմ այս իմ պատկ. և այս պատկն, Պապկէդ պատկն և յիշատակն է, երբէք չը վերցնես գլխէդ մինչեւ մահուանդ օր։ Եւ երբ դու էլ կը ծերանաս Պապկի պէս, այդ պատկ քո անդրանիկ որդւոյդ գլուխ դիր, և այսպէս որդւոց որդի Թող չարունակի. այդ պատկին խորհուրդ բացատրեմ քեզ, որ լաւ ըմբռնես և անեղծ պահես այս աւուր յիշատակ քո մաքին մէջ։

Ազնի՛ւ Թոռնիկ, իմ խորհրդաւոր պատկիս նշանակութիւն այս է. քահանան զքեզ կը պատկէ հողին հետ, գուբաթին հետ, դաշտի մշակութեան հետ. և ինչպէս Շուշանին հետ, դաշտի մշակութեան հետ. և ինչպէս Շուշանի հետ կապեց զքեզ քահանան, և դու տէր ես մինչեւ ի մահ, կարող չես զինքն Թողուլ, այնպէս եւս Պապիկն զքեզ պատկելով կը կապէ մայրենի երկրին հետ, որ յաւիտեան չը պիտի Թողուս՝ որ մեր հայրենի Պապկենական սեփհականութիւն է։ Ադամն ասաց և մարդիկ կ՚ասեն, Թէ՝ կին մարդոց կեանքն է. միթէ հողն էլ մարդոց կեանք չէ՞, մարդիկ աշխարհիս վերայ հացով կ՚ապրին։ Շուշան քեզ զաւակներ պիտի բերէ, հողն էլ ձեզ հաց պիտի տայ, դաշտի մէջ արածող կովիկ ու ոչխար՝ ձեզ առաս-առաս կաթ պիտի տան. կաթէն իւղ ու պանիր կը չինէք. այս ամէն բարիքներուն վայելք հողէն չէ՞։

Այժմ, Թոռնիկ, ասա մշակներուն՝ առնեն գուբաթն և տաւարներ, դառնանք երթանք ի տուն, մայրիկիդ և Շուշանին պէտք է յայտնեմ դաշտի պատկի խորհուրդ։

Մտիկ արէ՛ք որ խօսիմ ձեզ, բարի տանտիկին և Շուշան։ Ես այսօր, նոր փեսայ Թոռնիկ տարի դաշտ. գուբաթն լծել տուի, մաճը Թոռնիկին ձեռք տուի, ձեռքս

գլխուն վերայ դնելով՝ նահապետական օրհնութիւն կարդացի, և զինքն կրկին անգամ հողագործութեան հետ պսակեցի, հողին և գութանին հետ կապեցի, և գիտէ՞ք դուք, որ Պապկի պսակն անքակտելի պէտք է լինի. Թոռնիկ այժմ երկու կին ունի, իմացէք, մի կինն Շուշանն է, որու հետ պսակուեցաւ սուրբ ամուսնութեամբ. մի կինն էլ հայրենատուր ժառանգութեան հողն է, որու հետ ես կապեցի Հայր Աբրահամու օրհնութեամբ։ Շուշանն զաւակներ պիտի բերէ Թոռնիկին համար, հողն էլ հաց պիտի տայ բոլոր ընտանեաց համար։ Կ'աղօթեմ, որ Աստուած պահէ Շուշանն և շա՜տ ապրի, բայց Շուշանն մահկանացու է, թէ մեռնի, Թոռնիկ մի ուրիշ Շուշան էլ կը գտնէ։ Իսկ եթէ հողն մեռնի, էն ժամանակ բոլոր Պապկի տանն ընտանիք ի միասին կը մեռնին։ Եւ ի՞նչպէս կը մեռնի հողն, որ Ադամէն մինչեւ էս օր կայ ու կը մնայ անմահ։ Խօսեմ ձեզ թէ հողն ի՛նչպէս կը մեռնի. այն անբախտ օրն, երբ Թոռնիկ ձեռք մաճէն քաշելով՝ հողագործութիւն չի շարունակեր, կամ հարստանալով կը բարձրամտի՝ այլեւ ամօթ կը համարի գիւղին մէջ, կամ գիւղական ընկերութեան հետ ապրել. կը թողու գիւղն ու հող՝ կ'երթայ քաղաքացի կը լինի։ Եւ կամ դժբախտ օրեր կը հասնին իւր վերայ, երբ յուսալով թէ շատ հողեր ունի, պարտք անելով իրարու վերայ կը բարդէ. պարտատէր հողեր կը գրաւէ, ո՛հ, Թոռնիկն անհող կը մնայ։

Ահա այն օր հողն Թոռնիկին համար կը մեռնի, գրաւողին համար կենդանի կը մնայ։ Այն օր, այո՛, Պապկի տան ճրագ կը մարի, Թոռնիկ տանուտէր՝ վարձւոր մշակ կը լինի։ Աւա՜ղ, Պապկի հարս, նազելի Շուշան՝ պիտի երթայ հացթուխ լինի գեղին մէջ, իրիկուան մի քանի հաց գոգնոցին մէջ դնելով՝ բերէ իւր ճժիկներուն։ Թոռնիկին մայր, բարի տանտիկին, դու Պապկի ետեւէն մեռիր, որ չը տեսնաս այն օր։

Զ'ասե՞ս, Թոռնիկ. ա՛հ, Պապիկ, ի՞նչ չար գուշակութիւն կ'անես Թոռնիկիդ վերայ, բերանդ բարի բաց։ Ո՛չ, Թոռնիկ, Աստուած չ'ընէ որ գուշակութիւնն ձեր վերայ կատարուի։ Ես կ'աղօթեմ որ դուք այն սեւ օր չը տեսնաք. սորա համար այն սեւ աւուր տխուր կեանքի պատկեր նկարեցի ձեր աչքի առաջ։ Որպէս զի տեսնաս

ու յիշես Պապուդ հեռատես գուշակութիւնն, յամենայն զօրութեանէ աշխատես հողն ձեռքէդ չհանել. ոչ միայն հողն քեզ պէտք է, որ հաց կուտայ քեզ, աշխարհիս վերայ կ'ապրիս, այլեւ նորա համար Աստուած չատ արեւ տայ քեզ. երբ մեռնիս՝ գերեզմանիդ համար էլ երկու կանգուն հող պէտք է, չ'գիտե՞ս դու, մարդիկ գերեզմանի հողին վերայ էլ կը կռուին. վա՛յ անոր, որ կը մեռնի և թաղուելու տեղ չ'ունի, զի գերեզմանի հողն եւս մարդոյն համար մի սեփական իրաւունք է։ Ասել կ'ուզեմ, Թոռնիկ, մարդ իր ծնած օրէն հողով կ'ապրի, և երբ մեռնի, դարձեալ հող պէտք է, որ նորա տակ թաղուի։

Այսպէս, Թոռնիկ, հողն պէտք է կենաց և մահու օր, սորա համար Պապիկն զքեզ հողին հետ կապեց ու պատկեց, որ պինդ գրկես զհողն. չ'ըսողուս որ ուրիշներ ձեռքէդ յափշտակեն, դու անհող մնաս, սարսուռ լինիս, երթաս ուրիշի դռներ վարձկան մշակ դառնաս, և են ժամանակ ձեր վերայ կատարուի Պապկի կախարդ գուշակութիւն. և դու խելաբերելով յիշես, աւա՛ղ, հա տանուտէր էի, նահապետ Պապկէս խրատներուն մտիկ չ'արի, այժմ անառակ որդւոյն պէս՝ վարձկան մշակ եղայ, թողլով իմ ոչխարաց հօտ, ուրիշներու նախիր կ'արածեմ. և չարաթ մի անգամ գոնէ դուռ չրջելով նախրահաց ժողվեմ։

Այո՛, Թոռնիկ, երբ գեղի տանուտիրոջ բախտին անիւ դառնայ, այնչափ նուաստանայ՝ որ նոյն գեղին նախրորդ լինի, դու մի կարծեր թէ այդ վիճակ կարի դառնագոյն մի վիճակ է, վասն զի գեղի նախրորդ վարձաւոր մի մըշակ է, չալակներով հաց կը տանի իւր տուն. կթան կով ունի, գոնէ մի քանի հատ ոչխար, այծ ունի և իւր ընտանիք լիութեամբ կ'ապրին։

Բայց երբ այդ անկեալ տանուտէրին ձեռք նախրորդութիւն չ'իյնայ, նա ինքնին իւր նախկին վիճակ յիշելով ասէ. Ես տանուտէր էի, ի՞նչպէս կարող եմ վարձկան մշակ լինել գիւղին մէջ, լաւ է որ թողում գեղ, երթամ քաղաքներ և իբրեւ անծանօթ մի չքաւոր մարդ, խառնուիմ փողոցի աղքատներուն հետ՝ լինիմ մուրացկան։ Իսկ եթէ իբրեւ հարստութենէ ինկած «ѕкоվկѣрѕкѣ ѕիւѕկիւն»

յաջողիմ վիճակի Առաջնորդէն մի վկայական առնել, այդ ինձ համար մի մեծ բախտ կը լինի. կ'երթամ աշխարհէ աշխարհ, եկեղեցիներուն, հարուստներուն կը դիմեմ, և այսպէս ժողովք անելով՝ դառնամ գամ պարտքս տամ և պահիմ իմ ընտանիքս։

Ահա, Թոռնիկ, դժնդակ և դառնագոյն վիճակն այս է. երբ տանուտէր մուրացկանութեան կը դիմէ, հաւատալով թէ այդ անարդ և անպատիւ մուրոդութեամբ կարող կը լինի բաւական դրամ հայթայթել ու վերստին կանգնել իւր կործանեալ տունն։ Դու կը հաւատա՞ս, որ հողագործին կործանեալ տուն մուրացկանութեամբ կանգնի։ Բովանդակ ծերութեանս կեանքի մէջ ես այդպիսի բան չը տեսայ։ Վասն զի տանուտէր գեղացւոյն տան հաստատուն հիմն հողագործութիւն է. երբ տանուտէրն հողն ու հողին վաստակ թողու, նա արդէն կործանուած է և յաւիտեան կանգնել չ'ուներ. նա չքաւորութեամբ պիտի ապրի մինչեւ մեռնի։

Է՛, սիրելի՛ Թոռնիկ, բաւական հղաւ, աւարտենք դաշտի պատկ և դաշտի դասերս։ Ես պէտք է պատմեմ նաեւ գեղի էրէցուն և գեղացւոց, թող աշխարհ իմանայ, թէ Առճակու Պապիկ էսպէս մի տարօրինակ բան արած է. իւր Թոռնիկ նոր վեհան տարեր է դաշտ, հողին ու գութանին վերայ պատկեր է. մարդ չի գիտեր ի՞նչ պատկ է այդ, որ առանց քահանայի, առանց խաչի և Աւետարանի ու ժողովրդի վկայութեան՝ դաշտի մէջ կատարուեր է։

Թող մեր գիւղացիք այսպէս դատաստան անեն. Թոռնիկ, բաւական է, որ դու լաւ հասկցար այս պատկին խորհուրդն. ես կը մեռնիմ, դու ողջ կը մնաս՝ կը տեսնաս, յետոյ գեղացին էլ կը հասկնայ և ողորմիս կուտայ Պապկի հոգւոյն։

ԻԳ.

ՄԵՌԵԼՈՑ ԴԱՇՏ

ԵՒ ԳԵՐԵԶՄԱՆԱՑ ՅԻՇԱՏԱԿԱՐՆԵՐ

Պահ մի թողուն, Թոռնիկ, մեր կենդանի դաշտ, արի երթանք մեռելոց դաշտին այցելութիւն անենք. գիտե՛ս,

մահ տակաւ-տակաւ կը մօտենայ Պապկին, կ'ուզեմ վերջին անգամ քանի կենդանի եմ, ատքովս երթամ չըլլիմ մեռելոց ննջարանն, մինչեւ այն օր, երբ պիս ցաւին վերայ դրած ԲԱՆԴ ԱՍՏՈՒԱԾ ասելով կը բերեն, կը դնեն գերեզման, ես էլ կը հանգչիմ մեր պապերուն ծոցը։

Գերեզմաններն էլ մեզ համար մի խօսուն դասարան են. խաչաքարեր և մեռելոց յիշատակներ դեռ կը խօսին մեզ հետ. տեսնանք թէ հին և նոր ժամանակի մէջ ի՛նչ մարդիկ ծներ, եկեր են աշխարհս. պրեր, գործեր են թէ բարի և թէ չար, և դարձեալ թողեր են այս աշխարհ, արեւն ու կեանք, տուն և ընտանիք, մեր ծածկուեր են մեռելոց այս մութ աշխարհին մէջ։ Ամէն քրիստոնէի գերեզմանին վերայ մի-մի խաչաքար անկուած է, վերան գրած են մեռնողին անունն և կեանք, որ տեսնող կարդայ և ողորմիս տայ։

կարդանք ուրեմն, Թոռնիկ, այդ հին ու նոր յիշատակարաններ, տեսնանք թէ ինչ հարուստ տանուտէրեր և այլ աշխատաւոր և նշանաւոր մարդիկ եղած են գիւղական ժողովրդի դասէն, որոց անցեալ կեանքն առաքինութեան դասեր են մեզ համար։ Գիտե՞ս, կան այնպիսի մեռեալներ, որ մինչեւ ի կատարած աշխարհի կը խօսին մեզ հետ։ Գրքերով կը խօսին, անմահ յիշատակներով կը խօսին, գերեզմանի քարերով կը խօսին։

Տկսիր Թոռնիկ, կարդա՛ այս տապանագիրն.

«Այս է տապան Առճակցի տաճուտեր Օհանջանից, որ ութսուն տարի ապրեցաւ, ոչ գիւղեն, ոչ տճեն հեռացաւ, երբեք չթողուց ձեռքեն գութանի մանճ մինչեւ օրս մահուան։ Նա ճորոգեց մեր գիւղի փլած եկեղեցին եւ մի արտ յիւսատակ տուաւ եկեղեցւոյն»։

«Ասացեք Աստուած ողորմի իւր հոգւոյն»։

կարդա՛ տորա կշտի խաչաքարն։

«Ես Միրզոյենց Մարխաս, որ առաջ աղքատ ու վարձկան մշակ էի, թիզ մի հողի կարօտ, աշխատեցայ եւ Աստուած յաջողեց իմ հալալ վաստակովն բաւական հողեր գնեցի, հարստացայ եւ տաճուտեր եղայ, կտակ արի յետնամեաց զաւակներու, որ տարուան հինգ տաղաւարի մեռելոց օրեր մատաղ անելով աղքատաց կերակուր բաշխեն։ Ասացեք Աստուած ողորմի Մարխասի հոգւոյն»։

Երթանք, Թոռնիկ, այն մեծ խաչքարի գրեր կարդա՛։

«Այս է հանգիստ մեծ տանուտէր Աղամին, որ շատ հողատէր էր, երեք խոփով զութան կը լծէր, քառսուն մշակ ունէր. մեր գիւղի մեծ նահապետական տունն էր, իւր ընտանեաց թիւ մինչեւ եօթանասուն կը հասնէր. երբ հոգեհաց տար կամ մատաղ անէր, հազար հազար մարդ կը կերակրէր. Նա շատ առաքինի մարդ էր, մեռաւ հարիւր տարեկան. բոլոր գիւղացիք լացին նորա մահուան վերայ. Նա կտակ թողուց, որ Վարագայ եւ Առնակոյ վանքերուն իւր կալուածներէն չորս արտ տան եւ իւր ձիթահանէն գիւղի եկեղեցւոյն շարունակ լուսաւորութեան ձէթ տան։ Որ հանդիպիք ասացէք Աստուած ողորմի մեծ տանուտէր Աղամի հոգւոյն»։

Մի՛ անցնիր, այդ մօտի փոքրիկ խաչաքարի գրեր կարդա՛։

«Ես եմ Նաղարաչի Մարգօն։ Այս խաչաքարի տակ հանգիստ պառկեր եմ. բոլոր կեանքս ուրախութեամբ անցուցի. ձմեռն հարսանիքներով եւ ամառ պահեզ դնելով։ Ամէն գարնան կուգայի Առնակ գիւղ պահեզ կը դնէի, առատ սեխ ու ձմերուկ կը հանէի, ցորնի, գարւոյ, եղի, պանրի, ժաժկի հետ կը փոխէի, տունս առատութեամբ կը լեցնէի, աշխատութեամբ շատ երջանիկ ապրեցայ. երբ տեսայ թէ պիտի մեռնիմ, կտակ արի որ զիս քաղաք չի թաղեն, այլ տանին Առնակ գիւղ թաղեն. Աստուած շէն պահի այն գիւղ, որ շէն պահեց իմ տուն։ Ասացէք Աստուած ողորմի Նաղարաչի Մարգօյի հոգւոյն»։

Կարդա՛, Թոռնիկ, դորա կշտի միւս տապանաքար, որու վերայ մի հաւու պատկեր կը տեսնուի։

«Ես եմ հաւպան Մարկոս, գեղեցի էի, բայց հող չ'ունէի. մտածեցի թէ ի՛նչ անեմ, որ ապրիմ. մի գիշեր երազի մէջ շատ հաւեր ու հաւկիթներ տեսայ, ասի սա իմ բախտն է. առաւօտ ելայ, երազիս մեկնութիւն կատարեցի. առա՛ջ մի փոքրիկ հաւնոց շինեցի, տասն հատ հաւ դնելով թուխս դրի, մի քանի տարուան մէջ հաւերուս թիւ հասաւ մինչեւ երեք հարիւրի, միս հաւ ու հաւկիթ կը ծախէի գեղի հիւրերուն եւ քաղաքացւոց. ես եւ իմ ընտանիքս լաւ ապրեցանք հաւու մսով եր ձուզեղով։ Աղուէսներ եւ կուզեր, որ շատ թշնամի են հաւերուն, ես անոնց համար որոգայթ շինեցի. ամէն տարի ձմեռան բաւական աղուէս եւ կուզ բռնելով՝ նոցա մոր-

թերէն բաւական շահ կ'անէի։ Հաւքանութեան շնորհիւ որ-սորդութիւն էլ սորվեցայ. վերջ մեռնելուս ժամանակ կտակ արի զաւակներուս, որ հաւնոց ու հաւեր երբէք ձեռքէն չը թողուն, որ միակ իրենց հացն ու ապրուստն է։

«Ասացէք Աստուած ողորմի հաւպան Մարկոսի հոգւոյն»։

Քիչ մի հեռու կ'երեւի մի գերեզմանաքար, որուն գրեր մամռոտած են Թոռնիկ, և վերան մեղուի փեթակի նշան կայ. կարդա՛ տեսնանք ով է։

«Ես եմ մեղուապահ մշակ Պետօն. փոքրիկ տնակս ի զատ ոչինչ բան չ'ունէի մտածեցի մտածեցի, գնացի պարտք արի, հինգ փեթակ առի, պզտիկ մեղուանոց մի շինելով մէջ դրի. Աստուած յաջողեց, մեղուներս բազմացան մինչեւ հարիւր փեթակ եղաւ, որք շատ առատ մեղր ու մոմ կուտային, թէ քաղաք տանելով դրամով կը վաճառէի, եւ թէ գեղի մէջ հացի ու եղի հետ կը փոխէի. ընտանիքս մեղրով ու կարագով կը պահէի. մեռնելուս օր, խրատ տուի անդրանիկ որդւոյս, որ չը հեռանայ մեղուանոցի դռնէն եւ մեծ խնամով պահպանէ մեղուներ, որ մեր ժրաջան անվարձ մշակներն են. կտակ արի նաեւ որ ամէն կիրակի եւ պատարագի օրեր գեղի եկեղեցւոյ սեղանին վրայ մոմ վառեն եւ քահանայն յիշէ զիս իւր աղօթքով։

Ասացէք Աստուած ողորմի մեղուապան Պետօյի հոգւոյն»։

Սորա քով մի անտաշ խաչաքար կայ, կարդա՛ տեսնանք թէ որո՞ւ գերեզման է։

«Ես եմ նախրորդ Նազար, երեսուն տարի նախրորդութիւն արի, Շէն մնայ Առնակ գիւղ. երկու հազար տաւար էր իմ նախիր, ամէն շաբաթագլուխ շալակ շալակ նախրահաց կը ժողովէի, տանս մառան հացով կը լեցուէր, մեր տանտիկին խմոր շաղել, հաց եփել չը գիտէր, մեր գիւղացիք կը կարծեն որ նախրորդութիւն բան մը չէ. ոչ, նախրորդութիւն էլ գիւղական մի աշխատութիւն է. ես երբէք զանգատ չ'ունիմ, մինչեւ մահուանս օր հացի կարօտութիւն չի քաշեցի։

Ասացէք Աստուած ողորմի նախրորդ Նազարի հոգւոյն»։

Թոռնիկ, դու լսեր ես, գեղացիք միշտ գանգատ կ'անեն ու կ'ասեն. թէ՝ գեղի գզիրներ շատ անիծած և հայհոյիչ մարդիկ կը լինին, բայց ես լսեր եմ, որ ժամանակաւ մեր գիւղն մի բարի գզիր եղած է. շատ բարեսէր ու



ԽԱՉՔԱՐ

Կաց այնպիսի մեռեալներ, որ միևչեւ ի կատարած աշխարհի կը խօսին մեզ հետ: Գրերով կը խօսին, անմահ յիշատակներով կը խօսին, գերեզմանի քարերով կը խօսին:

խոհեմ, երբէք զրկանք չէր աներ, հիւր տալու կարգն ճչտուբեամբ կը պահէր, և միշտ կը ջանար աղքատներ խնայել, մինչեւ ցայսօր գեղացին այդ բարի գզրի անունն կը յիշէ։ Ահաւասիկ նորա գերեզման, զարմանք, Թոռնիկ, Առճակու գզիրն էլ իւր գերեզմանի խաչքարն և յիշատակն ունի, կարդա՛։

«Առճակու շեն գեղի գզիր կազօն եմ ես, օ՛խ, ի՞նչպէս հանգիստ պառկած եմ հողին տակ, ականջներս դնջացեր է գեղացւոց հայհոյանքից, զուր եւ անիրաւ անէծքից, հապա այն խստաբարոյ անհամբեր պահանջող հիւրերու ձեռքից ի՞նչ ճաբեցի, ծեծ կ՛եռայ, չարչարուեցայ, զզուեցայ բամպակի պես. սորա համար անուս գզիր դրած են, կարծելով թէ ես ուրիշներ կը գզեմ։ Աստուած հոգիս առեց, մեռայ,, ազատուեցայ։ Աղէտս ապրեցայ, աղէտս մեռայ, ոչինչ բան չունիմ կտակելու. միայն խրատ կուտամ ձեզ, գեղացի աղէտներ, գեղի գզիր մի լինիք, գացէք հողագործութեան մտակ եղէք, հազար անգամ լաւ է հողի մտակ, քան գեղի գզիր, վասն զի, գեղի գզրութիւն չար մտակութիւն է։

Ասացէք Աստուած ողորմի գզիր կազօյի հոգւոյն»։

Թողունք այս փոքրիկ մարդոց փոքրիկ խաչաքարերն, թէեւ փոքրիկ կարծուածներն էլ իրենց չափով նշանակութիւն ունին։ Շրջենք, Թոռնիկ, գտնենք այն մեծ խաչաքարերն, որոց տակ կը հանգչին այնպիսի հոգիներն, որք մեր գիւղին փառք և պատիւ եղած են. ժողովուրդ չի մոռնար, կը յիշէ նոցա բարերարութիւն և յիշատակ։

Գեղէն բաւական հեռու մի բլրակ կ՛երեւի, կը տեսնա՞ս Թոռնիկ, այդ բլրակին գագաթ մի մեծ խաչաքար կայ. այն տեղն է մեծ-մեծ կտիր ոչխարներու տէր հովիւ Յակօյի գերեզման. այդ բլրակից արդէն մի աղբիւր կը բղխի և այդ աղբիւրին Յակօյի աղբիւր կ՛ասեն, ուր Յակօյի կթան ոչխարներ կուգային պէր տալու։

Յակօ հովիւ, թէպէտ իբրեւ հողագործ տանուտէր չէր մեր գիւղին մէջ, բայց իբրեւ հովիւ խաչնարած մեծ տանուտէր կը համարուէր, վասն զի չորս կտիր ոչխար ունէր, ամէն մի կտիր հազար հաս էր. կ՛ասէին քառասուն հոգի վարձկան հովիւ և գառնարած ունէր, բոլորն էլ ամուսնացուցեր էր։ Աղջիկներու թիւ չեմ գիտեր, իւր

տունն թոռներով լցուած էին, ինքն չատ գթասէր, առատաձեռն մարդ էր. իր օրհնեալ տունն աղքատներուն ապաւէն էր։ Ոչխարաց կտուրի ժամանակն՝ բուրդը կը բաչխէր աղքատներուն։ Յակո հովիւ Յովթայ պէս կարող էր ասել թէ աղքատներուն մերկացած թիկունք՝ իմ բուրդովս կը ջեռնուէին։ Նմանապէս կաթէն՝ կաթ, պանրէն՝ պանիր, իւղէն՝ իւղ բաժին կը հանէր կարօտեալ գեղացի ընտանեաց։ Յակո հովիւ անխտրապէս կը մատակարարէր, նա չէր ուրոշեր իր չրջապատ եղած անընտանի օտարացեղ ազգերու կարօտեալներն. ով որ դիմէր, ով որ խնդրէր՝ նա կուտար և չէր խարեր։ Սորա համար իր անուն և համբաւ չատ մեծ էր նոյնիսկ դրացի պայազատ քիւրդ ցեղապետներուն առաջ։ Մի անգամ Պարսից կողմի Քչնամի քիւրդեր զարկին Յակոյի ոչխարներու կէսն տարան. մեր Յակօն Աբրահամ նահապետին պէս՝ առաւ իր կարիճ լաճեր և գիւղի քաջ տղամարդեր, գնաց կռուեցաւ և իր Թալան դարձուց։

Հովուական պարզ կեանք չատ երկար կեանք տուին մեր նահապետ Յակոյին, նա ապրեցաւ մինչեւ հարիւր քսան տարի, իր բոլոր կեանքի մէջ նա վերջին անգամ հիւանդացաւ, ինքն զգաց և իմացաւ թէ պիտի մեռնի, կանչեց ժողվեց իր մահճին չուրջ, բոլոր զաւակներ, թոռներ և տան ընտանիք. նահապետական բերնով օրհնեց զամէնքն, համբուրեց իր հովուական ցուպն ու վոզ, զոր դրած էր կշտին, դողդոջուն ձեռքով առաւ ու տուաւ Ապրսամ անդրանիկ որդւոյն։ «Ձեզ կը յանձնեմ, որդեակ, ասաց, իմ հովուական և տանուտէրական իրաւունքս, կառավարէ ինչպէս ես կառավարեցի, պահպանէ մեր տուն և ոչխարի հօտեր. մի մոռնար գիւղթիւն և կարեկցութիւն, ոչխարաց արդիւնքէն միշտ բաժին հան գիւղի աղքատ և չքաւոր կարօտեալներուն, իբրեւ անջնջելի կտակ՝ կ'ուզեմ քեզ որդեակ, որ տարուան հինգ տաղաւարաց մեռելոցի օր, քսան ոչխար պէտք է մատաղ անէք, աղքատներուն լիապէս հաց և կերակուր տաք, գիւղի քահանայն իր պատարագին մէջ բոլոր մեռելոց հոգիներուն հետ յիշէ նաեւ հովիւ Յակոյի հոգին։ Որդեակ իմ Ապրսամ, օրհնելով կ'ապսպրեմ քեզ եղբայրներ սիրէ, ընտանիք սիրէ, ոչխարաց հօտեր սիրէ, որ մեր հարստութիւնն գանձերն են. աչխատիր որ հովուական այդ մեծ նահապետա-

կան անուն չ'վերնայ հովիւ Ցակոյի տնէն։ «Այլեւս չ'կարեմ խօսիլ, հրեշտակն եկաւ, հոգիս պէտք է տամ» ասաց ու աւանդեց հոգին։ Բոլոր գեղացիք լացին ու սգացին նորա մահուան վերայ, և ինչպէս ինքն կտակած էր՝ հանգուցեալոյն մարմին բերին թաղեցին այս բլուրին ծոց։

Կը պատմեն թէ Ցակոյի թաղման օրը գեղի բոլոր ժողովուրդ թափեր էր այս բլուրին վերայ. հովիւներն Ցակոյի երկու հազար կթան ոչխարներ բերեր էին պէրատեղ։ Ապրսամ անդրանիկ որդին հրաման կ'անէ, որ այն աւուր ոչխարի ամբողջ կաթ ժողովուրդին և աղքատներուն տան. Վանեցիք գինի կը տանեն և գերեզմանին վերայ կը բաշխեն աղքատներուն. իսկ Ցակոյի գերեզմանի վերայ գինւոյն տեղ կաթն էր. բոլոր ժողովուրդ փայտէ կոտիկով նոր կթուած փրփրուն կաթ խմեցին, աղքատներն էլ իրենց ամաններ լցին և ողորմիս տալով՝ օրհնեցին հանգուցեալոյն գերեզմանն։ Իսկ հովիւներ գիտե՞ս ինչ արին, Թոռնիկ. կը խօսին թէ՝ հովիւներն էլ մէկ-մէկ մեծ ամանով կաթ բերին թափեցին Ցակոյի գերեզմանին վերայ։ Ի՞նչ քաղցր և խորհրդաւոր է այս բան. մեծ տանուտէր Ցակո հովիւ, կաթ կերաւ, և երբ մեռաւ՝ իւր գերեզմանն էլ կաթ ծծեց։

Ապրսամ որդին՝ մի մեծ խաչքար տնկեց իւր հօր գերեզմանին վերայ, որոյ վերայ գրուած է իւր բարի յիշատակ. կարդա՛, Թոռնիկ։

«Այս է տապան մեծ տանուտէր հովիւ Ցակոյին, որ ինչպէս կտակ արած էր զինք այս բլուրին վերայ թաղեցին, իւր յիշատակն օրհնեալ լինի:

Ասացէք Աստուած ողորմի մեծ տանուտէր հովիւ Ցակոյի հոգւոյն»:

Դառնանք, Թոռնիկ, աստի, երթանք մեր աւերակ Աստուածածնայ վանք, որոյ տաճար միայն ողջ մնացած է. էդ տաճարի դուրսի պատի տակ, ուր մի աղբիւր կը բղխի Տաճարի հիման տակէն, և աղբիւրին մօտ մի հաստաբուն ուռենի ծառ տնկուած է. աւանդաբար կ'ասեն թէ այդտեղ մի անյիշատակ գերեզման կայ առանց խաչաքարի, և այդ գերեզման աշուղ Մուշօյին է։ Աշուղներ աշխարհիս վերայ աննշան համարուած աղքատ մարդիկ են, ո՞վ պիտի նոցա հոգին հոգայ, կամ յիշատակն պատ-

ուէ, մի խաչաքար տնկէ նոցա գերեզմանի վերայ, բայց երջանիկ է աշուղ Մուշօն, զի իւր գերեզմանաքար Աստուածածնայ փոքրիկ տաճարն է, որոյ հովանեաց տակ կը հանգչի արդար հոգի Մուշօն։

Ինչպէս լսած եմ, մեր գիւղի հին ծերուներաց պատմուբեններէն, պատմեմ քեզ Թոռնիկ, Մուշօյի կեանքն ու վախճանն և դու լաւ ուշադիր եղիր, տե՛ս ո՞րչափ խորհրդաւոր և հետաքրքրական է։

Այրդ Մուշօն բնիկ մեր գիւղի զաւակն է, և աշուղ Զիչակին աշկերտ եղեր է, որոյ գերեզման ցոյց կուտայ այսօր Խարակոնիս գիւղի սուրբ Թորոս եկեղեցւոյ գարի վրան։

Գիտէ՞ք Թոռնիկ, աշուղներ ազատ կեանք սիրող մարդիկներ են, տնաշէն չեն. իրաւ է, որ շատ սիրահարական երգեր ունին, բայց իրենք ամուսնանալ շատ չեն սիրեր։ կան աշուղներ ալ, որ աւելի բարոյական խրատներ ունին և գեղեցիկ բանաստեղծական գովասանքներ կը չինեն սուրբերուն վերայ։ Մեր աշուղ Մուշօն այս կարգէն էր։ Յիսուս առաքելոց պատուիրեց որ ցուպ և մախաղ չ'առնեն ի ճանապարհին, աշուղներ ճիշդ կը պահեն այս պատուէրն, անտուն, անընչասէր, թափառաշրջիկ մարդիկ են։ Միայն մի սաղ ունին, կը ձգեն թևերնին և կը շրջեն գեղէ ի գեղ. ուր հարսնիք, հոգեճաշ լինի, անհրաւէր, ազատ կերպով կ'երթան. գիտեն պարագային յարմար՝ ուրախական և ողբական երգեր ու խաղեր կանչել։ Ամեն ժամանակն իրենց համար չատ նպաստաւոր է. երբ գիւղացիք դաշտային աշխատութեններէն կը դադրին, տաք ախոռներ կը քաշուին. մանաւանդ երբ լսեն թէ աշուղ հկեր է գիւղ, ամէն տեղերէ կուգան, կը հաւաքուին։ Երգահան աշուղ կը սկսի իւր խաղն ու հէքիաթն։ Տեսնաս դու, Թոռնիկ, ո՞րչափ զմայլելով մտիկ կ'անեն մեր անգիր ու պարզամիտ ժողովուրդ, նոցա համար աշուղ՝ տիրացուէն չատ գերազանց է, վարդապետի քարոզէն աւելի՝ հէքիաթն անուշ է։

Մեր Մուշօյի համար մի զուարճալի բան կը պատմեն։ Լսելով թէ մօտակայ գիւղ հարսանիք կայ, գիշերանց այնտեղ կ'երթայ, եղանակ ձմեռն է, սաստիկ էլ ձիւն կուգայ, ճանապարհին քանի հատ անօթի գայլեր զինքն

կը պաշարեն։ Մուշօն ճարպիկ էր, գայլեր խաբելուն կերպ լաւ գիտէր. իսկոյն մէջկապ կը քակէ և ծայրը քաշ գետին կը ձգէ. գայլեր կը սկսին ծայրին հետ խաղալ, մի կողմէն եւս իւր քէման կը զարնէ։ կը թուի թէ Մուշօն փորձով գիտէր, թէ գազաններն էլ ականջ և ճաշակ ունին երաժշտութեան դէզարուեստին։ Այսպէս սիրտ դող աշուղ Մուշօն կ'երթայ կը հասնի մի մեծ ծառի մօտ, որ դեղձն քիչ հեռու էր, իսկոյն արագութեամբ Մուշօն ծառի վերայ կ'ելլէ և կը չարունակէ գայլերուն սիրած եղանակը նուագել, ծառին բոլորտիք չարուելով կը նըստին՝ մտիկ կ'ընեն։ Գիւղի հարսնաւորներ քէմանի ձայն առնելով կը հասկնան որ Մուշօն է կուգայ, դուրս կ'ելլեն դիմաւորելու, խեղճ գայլերու քօնսէրն հարամ կը լինի։ Մուշօն ազատուելով կը մտնայ հարսնեատունն և կը սկսի նոյն քաղցր եղանակ զարնել։ Աշուղ Մուշօն գայլեր ոտքելով կրթեց, որ մարդ չ'ուտեն, իրենց բաժին կերակուր միայն ոչխարն է։ կը թուի ինձ Մուշօյի միտքըն այն էր, որ գայլեր կրթելէն յետոյ՝ կ'ուզէր գեղացւոց բրտութիւնն էլ կրթել, որ իրարու միս չ'ուտեն, ոչ թէ անոր համար՝ որ արհնակից եղբայր են, այլ առաւել Յիսուսի պատուէրին համար, որ կ'ուսուցանէ թէ դուք ամենեքեան եղբայր էք։

Մուշօն միայն գիւղական ժողովուրդին աշուղն էր. նա չէր սիրեր երբէք քաղաք երթալ, նա կը սիրէր աւելի գիւղեր, դաշտեր, լեռներ, ծաղիկներ, կարկաչահոս աղբիւրներու ջուրեր։ վերջապէս նա չատ սիրահար էր Արարչին ձեռքով նկարուած բնութեան պատկերին։ Սորա համար նա երբեմն, գիւղէն անհրաւոյթ կը լինէր։ Իւր սիրական ընկեր սազն էր, կը ձգէր թեւ, կ'երթար մանկուգար դաշտային ու լեռնային վայրեր, նա ամէն տեղ իւր փոր կշտացնելու համար հաց կը գտնէր։

Մեր գիւղացի աշուղ Մուշօն, չատ մեծ անուն ունէր, իւր սազին ու քէմանին հետ՝ ձայնն էլ չատ քաղցր և ազդեցիկ էր, իւր բնաւորութիւն՝ ուրախ զուարթամիտ մի մարդ էր նա։ Թող այս, նա խիստ ջերմեռանդ հաւատք ունէր դէպի Սուրբեր, ամէն տարի Մշոյ սուրբ կարապետ ուխտի կ'երթար. իւր սազ գերեզմանին վերայ դնելով կ'աղօթէր. «Ո՛վ մուրատատուր Ս. կարապետ, որ ֆրիս-

տոսին քաւոր եղար, քո ծառայ Մուշօյին երգելու չնորհք տուր»։ Աչուղներ էնպէս կը հաւատան, որ այդ անապատին լռակաց ճգնաւորն՝ իրենց փիրն է։ Զարմանալի է, որ լարախաղացն էլ նոյն հաւատով իւր ճարպիկ արուեստին համար դարձեալ նոյն չնորհ կը խնդրէ։

Մուշօն Սուրբ կարապետէն դառնալով՝ սովորութիւն արած էր, կուգար Աչտիչատ՝ կը մտնար Սուրբ Սահակայ մատուռն, գլուխ գերեզմանին վերայ դնելով՝ կուչ կուգար։ Զգիտեմ, էտ մարդ ոչ գիր գիտէր, ոչ պատմութիւն, ո՞ւր տեղէն սովորած էր Սահակայ Պարթևի մեծութիւն և նշանակութիւն, կը թուի թէ այդ երգախօս աչուղներ մեր եկեղեցւոյ Շարականաց երգիչներն կը ճանչնան։

Աչտիչատէն կելնէր կ'երթար Առաքելոց վանք, իւր ուխտ կատարելէն յետոյ՝ կ'անցնէր տաճարին արեւելեան կողմ, ուր թաղուած են Սուրբ Թարգմանիչներն, կը համբուրէր նոցա գերեզմաններն, և վաստակած լինելով՝ պահ մի կը նստէր էն տեղ և սազն ձեռք առնելով՝ կը չարունակէր իւրնոյ ծերունոյն ողբերն։ Ինքն կ'երգէր, ինքն կուլար. իւր ողբոյն արձագանգն միայն իւր գգայուն սիրտն էր։

Մուշօն լացով մխիթարուելէն յետոյ, Ծովասարէն կ'իջնար, կը հասնէր մի ձորաբերան տեղ, ուր հնուց ի վեր մի ջրաղաց կար չինուած, և ջաղցպան Մուշօյին ծանօթ բարեկամն էր, վասն զի աչուղներ չատաչրջիկ լինելով՝ ամէն տեղ ծանօթ ունին։ Մուշօն բարեւ տալէն յետոյ՝ հարցուց. աղբեր Մխօ, ջաղի կլօճ ունի՞ս, չատ անօթի եմ։ Ո՛ւ, ի՞նչ կը հարցնես, բարեկամ Մուշօ, չե՞ս տեսնար, ջուր էկաւ ջաղաց տարաւ, ալուր, թոնիրն էլ հետ տարաւ. հս ո՞ր տեղէն տամ քեզ ջաղցի կլօճ։ Մուշօն տեսաւ, որ ջաղացպան ջաղցի աւերակին մէջ բան կը փնտռէ, կը հարցնէ թէ՝ ի՞նչ կը փնտռես այս ջրատար ջաղցին մէջ. ջաղացին չախչա՛խ կը փնտռեմ, չախչա՛խ, կը պատասխանէ ջաղացպան։

Մուշօն իսկոյն սազն թեւէն վար կ'առնէ, կը նստի մի աւերակ թումբին վերայ և կը սկսի իւր ողբաձայն երգն.

Է՛, ջաղացպա՛ն, ջաղացպա՛ն,
Արի, ցուցիր, էեզ սազ ացեմ.
Մխիթարուիր, ով բարեկամ.

Ջուրն եկեր ջաղաց տարեր,
Դու ելեր ես մուրիկ-մուրի՛կ,
Կը փրնտռես fո ջախջախիկ.
Ի՞նչ տի անես անպէս ջախջախ,
Երբ ջաղցի ցիցն ու կամրջակ,
Կեցնայ fարեր, գունդն ու փառեր.
Յորնի ուղումն եւայլն ամէն,
Գլորեր տարեր է հեղեղն.
Երբոր գոռաս երկնուց երես
Մրրկալից սեւ սեւ ամպեր,
Եւ երբ բացուին գարնան դրռներ,
Շնչեն ջերռs անուշ հովեր.
Վերէն թափին կուժ-կուժ անձրեւ,
Վարէն հալին ձիւնակոյտեր.
Տես դու էն ժամ մեծ ջրհեղեղ.
Որ գայ Ցեղյ վիշապի պես.
Ուժգին թափով ինչպէս հիւսի,
Գլորէ բալ-բալ գոմեաfարեր.
Չինչ կայ առաջ fանդէ գլորէ,
Գեղն ու fաղաf վերան կ'աճէ.
Ո՞ւր կը մնայ fո խեղճ ջաղաց.
Որ դիմացայ հեղեղին դեմ:
Փորձ ու խրատ ա՛ռ, ջաղացպան,
Փող ջաղացի այդ աւերակ.
Այսուհետեւ դու fո ջաղաց՝
Էլ մի շինիր ձորի բերան:

Լաւ կ'երգես ու կը խօսիս, Մուշօ բարեկամ. Ջաղացպան չես, որ Ջաղցի բան գիտնաս. Միթէ կը կարծե՞ս, որ Ջաղացպաններ անուս մարդիկ են, գիր ու կարդալ չգիտեն, երբ Սուրբ Կարապետի վանքի դպրոց կարդացեր եմ, բայց բախտն զիս Ջաղացպան արած է. է՛, ինչ կը լինի, ես տեղ մի կարդացեր եմ, թէ Աթէնքէն դարձող Մովսէս Խորենացին՝ վերջ-վերջ Ջաղացպան եղեր է, երբ նա իւր վաստակած իմաստասիրութիւն մախաղին մէջ դրած՝ իբրեւ անծանօթ կը չրջէր մեր աշխարհին մէջ, ոչ ոք ծախու կ'առնէր նորա վաճառներ, ո՛վ գիտէ, գուցէ նա այս չրատար Ջաղցի մէջ Ջաղացպանութիւն արած է:

Հիմի մտիկ արա՝ որ խօսեմ քեզ, Մուշօ, Ջախջախ

մեծ նշանակութիւն, զոր կը փնտռեմ ես։ Օրհնեալ լինի այդ փայտի կտոր չախչախ, որ զիս ազատեց, ապա թէ ոչ ես էլ չաղացի հետ չրատար կը լինէի։ Գիտես դու, չախչախ չաղցի աքաղաղն է. բայց զարմանալի է մեր աքաղաղ, երբ ձայն հանէ, խօսի, ես անհոգ, անուշ կը քնանամ, իսկ երբ ձայն կտրէ, իսկոյն կը զարթնամ, կը տեսնամ, որ չաղաց դադրած է։ Ո՛հ, այս անգամ հեղեղ զարկաւ, չաղցի չրտուն քակեց, չախչախ ձայն կտրեց, դուրս եկայ չաղցէն, Աստուած զիս ազատեց։

Էտ քո չաղցի աքաղաղ չախչախ՝ իրաւի հրաշալի բան է եղեր, ասաց Մուշօն. աշխարհ ձէն տալէն կը զարթի, իսկ չաղացպաններ միայն երբ չախչախի ձայն կտրի, էն ժամանակ կը զարթին։ կը խոստովանիմ, որ էդ չախչախի նշանակութիւն չատ մեծ է, չատ բան կ'արժէ այդ չախչախ, փնտռէ որ գտնաս։

Մուշօ՛ սիրելի, Աստուածաշունչ գիրք կարդացի՞ր ես. հին Իսրայէլի ազգին մէջ ձայն տուող չախչախ մարգարէներ կային, Յակովբայ տան չաղաց կը բանէր, և երբ այդ Աստուածախօս չախչախներ իրենց ձայն կտրեցին, չուր տարաւ Յակովբայ տան չաղաց և մինչեւ այսօր էլ դեռ աւերակ մնացեր է։ Մենք էլ ունէինք երբեմն մեր վարդապետ չախչախներ. երբ լռեց նոցա ձայն, իմացանք թէ չուրն եկաւ մեր չաղացն էլ տարաւ։ Էյ, Մուշօ բարեկամ, հասկացա՞ր այժմ չախչախի նշանակութիւն. կ'աղաչեմ, որ խաղ մի չարաղբես այս չախչախին վերայ, միշտ չրջես ու կանչես այս խաղն՝ միթէ աչուղի խաղն ու սազ մեր չախչախներ չե՞ն։

Թողնենք չախչախ, դու մի ուրիշ խրատ էլ կուտաս ինձ, Մուշօ, որ թողնեմ ձորաքերնի չալցի աւերակն ես ուրիշ տեղ չինեմ իմ չաղաց, բայց ո՞րտեղ չինեմ, Մուշօ բարեկամ, դու չգիտե՞ս, որ ամէն տեղ իւր տէրն ունի. այդ չաղաց իմ հօրենական ու պապենական մի ժառանգութիւն մնացել է ինձ. ես չեմ թողուր, որ այդ չաղաց անչէն աւերակ մնալով՝ կորնչի մեծ պապերուս յիշատակ. պէտք է դարձնել պարտք անեմ, ճար անեմ, չինեմ իմ չաղաց, որ միակ իմ ընտանեաց յոյս և ապաւէն է. արտ չունիմ, լծկան չունիմ, միայն չաղացով կ'ապրիմ։



ԵՐԿՈՒ ԴԱՐԱՒՈՐ ԿԱՂՆԻՆԵՐ ԿՌՆԱԿ— ԿՌՆԱԿԻ

Երգահան աշուղ կը սկսի իր խաղն ու հէքիաթն: Տենաս դու, Թոռնիկ, ո՞րչափ զմայլելով մտիկ կ'անեն մեր անգիր ու պարզամիտ ժողովուրդ, նոցա համար աշուղ՝ տիրացուէն շատ գերազանց է, վարդապետի քարոզէն աւելի հէքիաթն անուշ է:

Ուրեմն, ասաց Մուշոն, երբ Աստուած կը յաջողէ, Չաղացդ կը չինես, այժմէն քեզ խրատ տամ, որ ձորաքերան հեղհեղատին կողմն մի հատ ամուր քարուկիր պատ քաշես, էն ժամանակ քո չաղաց կ'ապահովի։

Ո՜ւ, բարեկամ Մուշօ, չաղացպանին հալ չը գիտես, մեծ մեծ կը բրդես։ Ես այդչափ ծախս ո՞ւր տեղէն ճարեմ, հին պապիկներս այդ բան չը մտածեցին, ե՞ս պիտի մտածեմ, իմ չաղաց ինչպէս տեսայ, էնպէս պիտի չինեմ ես. այդ քո ասած բան անօթի, աղքատ մարդու բան չէ։ Դիտե՞ս, Մուշօ, էս չաղաց չորս դիր եղաւ, որ չրատար կը լինի. ո՛վ գիտէ, գուցէ Աստուած գթութիւն անէ խեղճուկ աղքատիս, հեղեղներու երեսէն պահպանէ այս անգամ իմ չաղացն։

Այս որ լսեց Մուշօն, լուռ կեցաւ, պահ մի մտածեց և յետոյ ասաց. շատ իրաւունք ունիս բարեկամ, էս մեր աշխարհի գործերն պէտք է խոհեմութեամբ յառաջ տարուին, լաւ է որ ամէն մարդ իւր չափով գործէ, չաղացպան իւր չափով, Մուշօն էլ իւր սազով։

Է՛, չաղացպան, ինձա բարով, ես կ'երթամ, դու չինէ քո չաղաց, չաղցի չախչախ մեծ նշանակութիւն ունի. այժմ հասկցայ, որ Մուշօն էլ իւր սազով չաղացի չախչախ է։

Մուշօն դարձաւ Մուշէն Արճակ գիւղ, շատ մալուլ էր. օր կիրակի էր, Մուշօն գնաց եկեղեցին, մտաւ Աւետարանն, կանչեց քահանան, խոստովանեցաւ և նոյն օր Ս. հաղորդութիւն առաւ. իրիկուան դիմաց խունկ ու մոմ առեց գնաց Աստուածածնայ վանք, մտաւ Ս. Տաճար, իւր խունկ ծխեց ու մոմ վառեց, չոքեց սեղանին առաջ, մի երկար աղօթք մրմնջաց. ապա համբուրեց խաչը ու Աւետարան։ Տաճարէն դուրս ելաւ, եկաւ այս ծառին տակ աղբիւրին գլուխ, քիչ մի բաղարջ և փոխինդ ուներ հետ. գիտես թէ այդ իւր վերջին ընթրիքն էր, որ շատ ախորժանօք կերաւ, և գինւոյն տեղ խմեց պաղ աղբիւրին ջուր, յետոյ սազ ձեռք առաւ սկսեց երգել, իւր այս երգ շատ սրտառուչ ու ողբական էր, ուրիշ ժամանակ Մուշօն ուրախ և զուարթ կ'երգէր, իսկ այս վերջին անգամ գիտես թէ կարապ թռչունի նման իւր մահուան ողբերգութիւն կը դաչնակէր, իւր ամպոտ աչքերէն կա-

Թիլներ կը թափէին․ չընկուռի թրթռուն թելերուն վե-
րայ։ Ինձ կը թուի թէ Մուշօն Խորենացւոյ ողբ բերան եղած կ'երգէր, զի Ջրատար ջաղացն ու ջախջախ շատ ազդեցին իւր որդւոյն վերայ։ Մուշօն իւր մահուան կարգն ու «դատաստան» աւարտեց, սազն գլխուն դրաւ, պառկեցաւ հով ծառին տակ, այնպէս անուշ քնացաւ, որ էլ վեր չելաւ․ հրեշտակ կը սպասէր, Մուշօն հոգին աւանդեց։

Նոյն իրիկուն պառաւ ջերմեռանդ կին, որ սովորութիւն արած էր՝ ձէթ ու խունկ կը բերէր Աստուածածնայ տաճարին, տեսաւ, տեսաւ որ Մուշօն ծառին տակ պառկած է․ ասաց երթամ ձայն տամ, գիշեր չը մնայ այս տեղ․ կանչեց, Մուշօ՛, Մուշօ՛․ Մուշօն ձայն չը տուաւ, մօտ գնաց ձեռքով էրէրցուց, տեսաւ որ Մուշօն փայտ դարձեր է․ վա՜յ, ասաց, Մուշօն մեռեր է։ Պառաւ գնաց գիւղ, քահանային իմաց տուաւ․ իսկոյն Մուշօյի մահ տարածուեցաւ գիւղին մէջ․ տէրտէր, ժամկոչ և ողջ ժողովուրդ թափեցաւ Աստուածածնայ վանք։ Քահանայն ծանուցումն արաց, յայտնեց Մուշօյի կտակն․ ասաց թէ՝ լուսահոգի Մուշօն ինքն զգացած էր թէ պիտի մեռնէր, այս առաւօտ եկաւ եկեղեցի, խոստովանեցաւ, Սրբութիւն առեց։ Այժմ յայտնեմ ձեզ Մուշօյին կտակ․ նա երդումով խնդրեց՝ ասաց․ «Տէր Հայր, ես անտուն, անբնակ շրջող մի մարդ եմ, կ'աղաչեմ, ուր որ կը մեռնիմ, այնտեղ թաղէ զիս․ չմոռնաս, իմ սիրական սազն էլ հետ ինձ թաղէ»։ Ես էնպէս կը յուսամ ու կը հաւատամ, որ երբ դատաստանին օր Գաբրիէլ իւր փող փչէ, Մուշօն իւր սազով պիտի երթայ արքայութիւն և հրեշտակներու հետ փառաբանէ զԱստուած։ Միթէ այդ ազատ աշխարհին մէջ, ազատ հոգիներու համար, երգիչ աշուղներ պէտք չե՞ն։

Ժողովուրդն լսեց այս ծանուցումն, սիրով ընդունեց Մուշօյի կտակն, իսկոյն Տաճարի պատին տակ փորեցին գերեզման, թաղեցին Մուշօն․ ժողովուրդն Աստուած ողորմի ասելով Մուշօյի հոգւոյն՝ դարձան գիւղն։

Այսպէ՛ս մեռաւ, Թոռնիկ, ժողովուրդին սիրական աշուղ Մուշօն։ Մենք էլ նոյն ողորմիս տալով դառնամք գիւղի եկեղեցւոյ Տաճարին մօտ՝ մի ուրիշ գերեզման կայ, ուր հանգչած է գրեթէ երեսուն տարի յառաջ՝ Մահտեսի Ագրիպպաս, Հայրիկին մտերիմ և անձնուէր բարեկամ։

Տե՛ս, Թոռնիկ, մի անտաչ քար ձգուած է գերեզմանին վերայ, անգիր՝ անյիշատակ։ Այժմ պատմեմ քեզ, Թոռնիկ, թէ ո՛վ էր Տըպաղեան Ագրիպպաս, բնիկ Վանեցի, ու Հայրիկի տան դրացի։

Այս հանգուցեալ բարի անձն, ես էն ժամանակէն կը ճանչնամ, երբ Հայրիկ առաջին անգամ պանդխտեցաւ ի Պոլիս, որ դեռ վարդապետ չէր, այլ Մկրտիչ վարժապետ։ Իրրեւ հայրենակից և մտերիմ բարեկամ, այդ բարեսիրտ և զուարթամիտ անձն, միշտ ապաքինական կը լինէր Հայրիկին. նորա ամէն անձկութեան կը հասնէր և դիւրութիւն կուտար։ Սորա կարգին՝ չեմ մոռնար յիշել պարոն Գրիգոր Ջրբաշխեան, որ գիրք ու կարդալ սիրող մարդ էր. առանց դպրոցի ու քերականութեան, անսխալ կը հասկըներ լեզուն, և յաճախ կարդալով՝ վարժուած էր գրոց բառերու ուղղութեան։ Երբ առաջին անգամ Հրաւիրակ Աւարատեաց կը տպագրուէր, շատ անգամ սխալ տեղեր Հայրիկին ցոյց կուտար։ Դեռ կենդանի է ինքն, և այժմ իրրեւ անվեզար վարդապետ կ՚ապրի Վարագայ վանուց մէջ, պարապելով նոյն ընթերցասիրութեան։ Սա եւս իրրեւ մանկութենէ ծանօթ, մտերիմ բարեկամ էր Հայրիկին, զոր միշտ կ՚ընդունէր իւր պանդխտավայր յօթեւանն։

Իսկ երբ Հայրիկ տպարանով վերադարձաւ ի վան և հաստատեցաւ ի Վարագայ վանք և սկսաւ իւր ձեռնարկութիւններ, յիշեալ Մ. Ագրիպպաս՝ անձնուէր հոգով օժանդակ և աջակից էր Հայրիկին. նա միայն սոսկ խօսքով քաջալերը չէր կարդար, երբ տեսնար Վարագայ վանուց անձկութիւն, պէտք եղած դրամ փոխ կուտար առանց տոկոսի, և մերթ եւս պարտամուրհակներուն ամէն վստահութեամբ կ՚երաշխաւորէր։

Հանգուցեալ հոգին մեր գիւղին էլ բարերար եղած է, Թոռնիկ, նա թէպէտ արուեստով դապաղ էր, բայց կը սիրէր գիւղական կեանք և մշակական աշխատութիւն. սորա համար մեր գիւղացւոց հետ յարաբերութիւն ունէր, եւ միշտ կ՚երթեւեկէր։ Առաջին անգամ նա պատճառ եղաւ մեր գիւղի մէջ դպրոցի հաստատութեան։ Նա ձեռնարկեց Էրմանց գիւղի սահմանին մէջ գտնուած Առճակու լճին քանդուած թումբն վերստին շինել, որով առատ ջուր մեր դաշտի արտերուն վերայ գալով, ցանքերու արդիւնաբերութիւն բազմապատիկ կը լինի։

Աստի իբր երեսուն տարի յառաջ, մի օր իրիկուան առջի գիշերապահուն՝ չարաչուք աւազակներ Աղտաղու կամ Արտաղու դաշտի մի ձորակի մէջ քաշելով՝ չարաչար հարուածներով սպանեցին այդ անմեղ անձն, Մահտեսի Ագրիպպաս։ Էն ժամանակ Հայրիկն Մշոյ Ս. կարապետի վանքն գնացած էր. վարագայ դպրոցի ուսուցիչ Մանուէլ վարժապետ մի ողբերգութիւն գրեց այդ անզուգական բարեկամին մահուան վերայ, որ մինչեւ ցայսօր վանայ երգեցիկ մանուկներ խիստ սրտառուչ եղանակով կ'երգեն։ Հայրիկն էլ մի ողբերգութիւն գրած է վաղուց իւր մահրիմ բարեկամին վերայ, և ես ընդան արած եմ այդ սըրտառուչ ողբերգութիւն, խօսիմ քեզ։

Անցել էր առաւօս, կէս օր,
Մօս էր վերջինճ իրիկուն.
Ես ի՞նչ գիտէի թէ այն օր
Իմ վերջին օրն էր։
Պառաւներուն կախարդ ագռաւ
Տանիէն կանչեց կա՛ռ, կա՛ռ,
Հասկցայ ես իւր լեզուն,
Կ'ասէր կա՛ց, կա՛ց, մի՛ գնար։
Ասի ես չեմ հաւատար
Խաբեբայ այդ չար գուշակին
Որ խաբեց մեր Նոյ նահապետ,
Գնաց էլ չի դարձաւ ետ։
Տանէն ճեծայ ես իմ ձին,
Ձին հնպէ՛ս ցայեց ինձ ողորմ,
Ասի խլէ՛, խլէ՛, իմ ճերմակ.
Ճակատագիր է մարդոյն։
Եկայ մտայ ես ի դաշտն Արտաւու,
Դաշտէն առի ո՛հ, արեան հոտ.
Փռնկտացի ցնցեցաւ գլուխս,
Զարզանդ եկաւ վերէս,
Ձիս առեց աճ ու դող։
Մեր արեւ ժողվեց իւր լոյս,
Գնաց մտաւ անուշ քուն.
Սար ու ձոր մթնեց վերէս,
Ձիս պատեց գիշերն աղջամուղջ։

Դեռ նոր նորեր էր լուսնակ,
Կայեր էր ոսկեշար մանեակ.
Եղջերիկներէն կախուած էին
Ցոլ աստղունք հազար-հազար:
Ասի թէ կրնաս լուսինիկով
Ես կ'երթամ իմ ուղիղ ճանապարհ.
Ոհ, այն էլ ծածկեց աչքէս
Վիշապագլուխ մի սեւ ամպ:
Ուրուականք հասին ետեւէս,
Զարաշուք ոսոխ ոգիներ
Զարկին թիկանց կուսէ ուժգին,
Պայթեցաւ գլուխս եւ ուղեղս:
Տապալեցայ ես ձիէն գետին,
Այնպէս անշունչ կիսամեռ.
Ոտքէս քաշէ քաշ տարին
Թալեցին մի ձորակի մէջ
Եւ այլ շատ վէրքեր դրին վերէս,
Զիս արին անշարժ կոճղի պէս:
Ասին թէ՝ մեռա՛ւ, մեռա՛ւ.
Զիս թողին էնպէս ու գնացին,
Միայն իմ սրտիս խորին մէջ,
Կը բըրբըփար իմ հոգիս:
Երիֆոյլի ճամբորդն էի ես,
Ինկած աւազակաց ձեռք.
Ո՛հ, չկ՝ար ինձ համար մարդասէր,
Այն գթած Սամարացւոյն պէս:
Անցի՛ր սեւ ամպ, անցի՛ր,
Բաց լուսնակին աչք.
Թող տեսնէ վկայ լինի,
Իմ անպարտ արեանս:
Գիտեմ, ո՛վ լուսնակ,
Երկնակամարէս
Զես ուզեր տեսնալ,
Մարդոց քիրտ եղեռն:
Այո, չես կամիր,
Կապոյտ երկնքէն,
Որ գայ սըփռի լոյսդ,
Սեւ դաշտի վերէն:

Անցիր գնա՛ եւ դու լուսնակ,
Խաւարաւ աչերս
Էլ չեն պիտոյ ինձ ո՛ն,
Ոչ լուսին ոչ արեւ:
Սակաւ մի եւս մեռանիմ ա՛ն,
Մրնում է իմ կենաց լոյս արեւ.
Հով, դու որ ընչես
Վարագայ սարեն,
Գուժ տար ի Տարօն.
Լուր բեր ինձ Արծուեն.
Հասիր սեր իմ Արծուի,
Դեռ ոգորի հոգիս.
Տամ եզ յետին ողջ-մնաս,
Ապա տամ հոգիս:
Թռաւ հոգի Արծւոյն,
Իջաւ մսեու դաշտ
Տեսաւ իւր սիրելին,
Ինկած մեռուցակ:
Թաւալած ի գետին,
Արեան մէջ լողար.
Գարուն էր եղանակ,
Ծաղիկներ բացուած:
Ո՛ն, անմեղ զոհին
Արիւնով ներկուած,
Դեռ տաք էր արիւն.
Հողըն ծծէր փըրփրէր:
Արեան պղպջակներ
Զայն տային Արծուոյն,
Հոգին հոգւոյն հետ
Խօսէր անլեզու:
Եկի՛ր, Հայրիկ, տես
Մահ ես սիրելւոյն.
Զեռ անագորոյն,
Թափեց իմ արիւն:
Բա՛ռ ասի, մի բողուր,
Դիակս իմ ապաժոյժ.
Մի տանիր գաղաւ,
Տար զիս Առնակ գիւղ:

Փորել տուր գերեզմանս
Եկեղեցւոյն մօտ.
Մի հանէք անձնէս՝
Իմ արնոտ շապիկս:
Կարմիր պատանքով
Թաղէ զիս, Հայրիկ.
Երբ գայ Տէր դատաւոր,
Նստի դատաստան:
Ես բողոք տի հանեմ՝
Նորա մեծ ատեան.
Թող վկայ լինի ինձ,
Իմ արնոտ պատան:
Մի՛ լուանաք մարմինս,
Մի՛ սրբէք վէրքերս արիւնոտ.
Դրէք զիս ենպէս անլուայ,
Գերեզմանին փոս:
Կնքէ Հայրիկ, շիրիմս,
Քո ձեռաց խաչով.
Որ անշարժ մնամ ես՝
Մինչեւ վերջին օր:
Խաչ մի տնկէ վրաս,
Գրէ յիշատակս.
Թէ աստ կայ ի հանգիստ՝
Ագրիպպաս նահատակ։
Ողջամբ մրնաս, Հայրիկ.
Թէ երթաս Վարագ,
Յիշէ զիս, մի՛ մոռնար.
Յորժամ առնես պատարագ:
Ասաց թռաւ հոգին,
Գնաց առ ԱՍՏՈՒԱԾ:

Մենք էլ յիշենք, Թոռնիկ, լուսահոգի հանգուցեալն, տանենք Աստուած ողորմի իր հոգւոյն. այլեւս հերիք է, աւարտենք այստեղ գերեզմանի մեռելոց յիշատակներն. այժմէն կը զգամ, Թոռնիկ, թէ մահս մօտ է, իմ յիշատակս էլ պիտի խառնուի ասոնց հետ։

ԻԴ.

ՊԱՊԿԷ ԿՏԱԿ ԵՒ ՄԱՀ

Սիրելի Թոռնիկ, ժամանակս հասած է, անցեր կեանքիս գուարթ առաւօտ. անցեր է կէսօրն, վերջինք և իրիկուն մօտ է. պէտք է քնանամ, հանգչիմ էնպէս, որ էլ վեր չելնեմ։ կը տեսնաս ուժէ ընկած եմ, քայլերս կը դողդողին, ցուպն էլ օգուտ չունի. ձեռներս աշխատութենէ դադրած են. ո՛հ, աչքերս էլ խաւակ նահապետին պէս վատառես եղած է. բոլոր մարմնովս անպիտանացած եմ, էլ ոչինչ օգուտ չունիմ , ոչ քեզ՝ ոչ աշխարհին։ Ին մարդ, որ աշխատութենէն կը դադրի՝ նորա կենդանութիւն չատ աւելորդ է. թէ մեր ընտանիքին և թէ գիւղացւոց համար ես մի բեռ եմ. ձեռքով չ'վարած, չի ցանած և չի հնձած հաց ուտել, ո՞րչափ դառն է, և հակառակ Աստուծոյ այն պատուէրին, որ կ'ասէ թէ՝ երեսիդ քրտինքով պէտք է ուտես քո հաց։ Մարմինս չոր ոսկոր դարձած է. էլ իմ ճակատէս քրտինք չի ծնծնար, վասն զի քրտինքն աշխատութենէն կուգայ։

Թէպէտ գաւակներ ու թոռներ մեծ պարտականութիւն ունին, իրենց ծերացած հայրերն ու պապեր մեծ խնամով անտրտունջ դարմանել ու պահել մինչեւ մահուան օր։ Ծերոց ներկայութիւնը տան ու ընտանիքին համար մի օրհնութիւն է։ Սորա համար կ'ասէ Սուրբ Գիրք. «Ծեր ի տանէ քումմէ մի' պակասեցի»։

Բայց ես տեսեր ու լսեր եմ, Թոռնիկ. չատ անգամ ընտանիքներու մէջ, երբ ծերացած հայրեր, պապեր ու պառաւներ, երկար ժամանակ կը տառապին մահիճներու մէջ, էն ժամանակ նոյն իրենց սիրելի ընտանիքներն՝ կը սկսին տրտունջ բառնալ. օ՛հ, չը մեռաւ որ ազատուէինք, ի՞նչ է այս մեր քաշած։ Նոքա կը մոռնան, չեն յիշեր իրենց ծնողաց և պապերուն սէրն ու գորովանք, հայրական ու մայրական երախտիք, որոց խնամով իրենք մեծացած, մարդ եղեր են։

Թողունք այս, Թոռնիկ, դու դեռ չ'գիտես մարդոց ընտանեկան կեանքի մէջ ի՛նչ բաներ կան. երբեմն մի ընտանեանց հայր, որ չատ հարուստ է, և իր անուշկներ լիք են ոսկիներով, բայց երբ ինքն քնաւորութեամբ սաս-

տիկ ագահ և կծծի է, ամենախիստ ժլատութեամբ կը տընտեսէ իր տան ծախքեր, և կ'ապրի չքաւոր աղքատի պէս, դու լսեր ես թէ այդ ագահ մարդու ընտանիք ի՛նչ կ'աղօթեն, Աստուած առ սորա հոգին, մենք ազատուինք սորա խստասիրտ տնտեսութենէն։

Երբեմն Աստուած կը լսէ այդպիսի աղօթքն և կ'առնէ ագահ տանտիրոջ հոգին. պահ մի կուլան ընտանիք, մինչև կատարուի թաղման մեծ հանդէսը, երբ կը փակեն ագահին մարմին գերեզմանին մէջ, այնուհետև կը բանան ոսկելից սնտուկներն, չռայլութիւն, մսխանք, պերճութիւն կուգայ կը տիրէ ագահին տան վերայ, շատ չի տևեր, չռայլութեան ժամանակ կարճ է, շուտով կը դատարկուին ոսկւոյ սնտուկներն, կ'երթայ չռայլութիւն՝ կուգայ կը տիրէ մշտնջենաւոր աղքատութիւն։

Ուրախ եմ, Թոռնիկ, դու բարի զաւակ ես. չես ըսպասեր պապկիդ մահուան, պապիկդ ագահ մարդ չէ. չինական ագահ չի լինիր, քանի որ իր դուռ բաց է. դու որբ մի տղեկ էիր, վարդի պէս պահեցի զքեզ։ Ոսկւոյ սնտուկներ չունիմ որ ասես, ի՛նչ լաւ կը լինէր, եթէ մեռնէր Պապիկս, ոսկիներուն տէր լինէի և ուզածիս պէս կեանքս վարէի։

Իմ ժառանգութիւնս, որ կը թողում քեզ, ոսկի չէ, այլ ոսկիէն շատ աւելի թանկագին ու շահաբեր է։ Ի՞նչ է ոսկին որ տեղ մի չի կենար, այլ ժիպակի պէս կը ցըրուի կ'երթայ ու կը չքանայ, շատ անգամ էլ ճարպիկ գողեր ական բանալով կը գողանան ագահին դիզած գանձերն։

Ես կը թողում քեզ մեր հայրենի ժառանգութիւն, դաշտերը ու հողեր, որ միշտ իր տեղն անփոփոխ, հաստատուն է, կը թողում քեզ գութան երկու խոփ տավարներով, կը թողում կթան կովեր ու հարիւրաւոր ոչխարներ։ Էսոնք են ահա պապկէ կարմիր ոսկիներ. միայն թէ աշխատիս հաշիւ պահել ու մշակել, անասուններ դարմանել էնպէս, ինչպէս որ դաս տուեցի քեզ, երկար-երկար, պարզ և ընտանի կերպով բացատրեցի քեզ հողագործութեան արուեստին համար։

Խօսիմ քեզ, Թոռնիկ, դարձեալ ես ինքնին կը զգամ թէ մահս մօտեցած է, մահու հրեշտակ եկեր է Պապկէ դու-

ռըն կը զարնէ. եթէ հազար նիգ ու սողնակ ձգեմ դրան ետեւէն, ոչինչ օգուտ չ'ունի, պատուհանէն կ'անցնի, զի հրեշտակներ թափանցիկ զօրութիւն ունին, որ պողպատի պէս կարծր մարմիններէն կ'անցնին. թէ ասես երթամ Ովկիանոս ծովուն խոր անդունդի մէջ պահուիմ, մահու հրեշտակ էն տեղն էլ կը հասնի մարդու ետեւէն։

Վաղ կիրակի է, Թոռնիկ, մտիր թեւս, տար զիս եկեղեցին. ես էլ Մուշօյին պէս պէտք է խօսիմ, խոստովանիմ, աղօթեմ, վերջին պատարագ տեսնամ, սուրբ հաղորդութիւն առնեմ, այն է իմ վերջին թռչակս. կը հաւատամ, որ այդ Քրիստոսի ետանդած կենաց հացի թռչակով արժանի կը լինիմ սուրբ արքայութեան։ Ժամէն դառնալով, Թոռնիկ, թաղէ մահիճս ձգել տուր, պառկեմ հանգըստանամ, գլուխս չատ ծանրացած է, սիրտս սկսած է բաբախել, ոտներս էլ սառած են. գիտեմ այդ սառն կամաց կամաց դէպի սիրտս պիտի գայ, որ մարմնոյս կեդրոնն է, էն ժամուն բոլոր մարմնովս պիտի սառիմ և յանկարծ պիտի տեսնաք, որ Պապիկ մեռա՜ւ և իւր կեանքի ճրագ մարեցաւ։ Ես կ'աղաչեմ Աստուծոյ, որ մի քանի օր ինձ կենդանութիւն տայ, մինչեւ կտակս աւարտեմ։

Առաջին ընտանեկան կտակս այս է, Թոռնիկ։ Այրի քո ծնող մայրիկիդ, որ այսօր մեր տան տանտիկին ու տնտեսն է, պէտք է ամենայն ակնածութեամբ պատուես իբրեւ ծնող մայր, ինչպէս Սուրբ Գիրք կը պատուիրէ. «Պատուեա՛ զհայր քո և զմայր, զի բարի լինիցի քեզ». հայրդ մեռած է, միայն մայրիկ մի ունիս՝ որուն դու մէկ հատիկ մխիթարութեան զաւակն ես. կը տեսնաս թէ ինչպէս կը գուրգուրայ ձեր վերայ։ Իւր ծերութեան ժամանակ ամէն խնամք պէտք է տանես նորա վերայ, զգուշացիր որ երբէք չը տրտմեցնես զինքն որեւիցէ կերպով, այլ աշխատասէր տանտիկին ու տնտեսն է. մեր տան ներքին բոլոր կառավարութիւն նորա ձեռքն է, նա միայն պիտի հրամայէ։

Իսկ դու Շուշան, հարսնութեանդ մեծ պարտիք հնազանդութիւն է, ամենայն սիրով հլու, հնազանդ, կամակատար հարս պէտք է լինիս զկեսրոջդ առաջ։ Նա չատ բարի կին է, իբրեւ մայր մի գորովանօք կը սիրէ զձեզ։ Գուցէ լսած էք թէ՝ կան այնպիսի կեսուրներ, որ կանար-

գին և կը տանջին իրենց հարևաններն, ով գիտէ, թերեւս իւր հարևաներն էլ շատ պակասութիւններ ունին։ Բայց դու որ քանի տարուան հարս ես, մի օր լսեցիր ու տեսա՞ր, որ կեսուրդ մի դառն խօսք խօսեց, կամ անարդ կերպով վարուեցաւ քո հետ։ Յիշէ Շուշան, որ դու էլ մի օր կեսուր կը լինիս, ինչ որ անես, այն կը գտնես. Պապակի այս խրատներ մի մոռնար։

Կ'աւանդեմ քեզ, մեր նահապետական տան պատկառանքն ու պարկեշտութիւն. պէտք է անեղծ պահես այդ տոհմական առաքինութիւն։ Կարդա՛ միշտ Սուրբ Գրքի մէջ նահապետներու պատմութիւն, ուր նկարագրուած է նոցա կեանքի պատմութիւն և անմեղութիւն։

Տէր Աստուած սուրբ պսակով քեզ Շուշան ծաղիկ մի տուաւ. Շուշանին համար էլ մի Թոռնիկ, չը կայ քեզ համար մի ուրիշ Թոռնիկ մինչեւ օրն մահուան։ Կ'օրհնեմ զձեզ, որ շատ ապրիք և սիրով ապրիք. ձեր սուրբ ամուսնութեան ծառն միշտ նորանոր զաւակներով պըտղաբեր լինի, Յակոբ նահապետի տան պէս բազմազան որդիքներդ։

Բայց գիտցիր Թոռնիկ, որ բազմածին զաւակներն այնչափ պարծանք չեն իրենց ծնողաց, եթէ անկիրթ մնան, անտեսակ լինին։ Գիտե՛ս այդպիսի զաւակներ ո՞րչափ նախատինք կը լինին իրենց ծնողաց։ Աշխատիր մանուկ հասակի մէջ լաւ կրթութիւն տալ զաւակներուդ, երբ նոքա դեռ դալար ճղիկ են, և մոմի պէս կակուղ. եթէ թողուս որ հասատանան ու պնդանան, այլեւս կը դժուարի կրթութիւն. վասն զի ամէն բան իրեն համար ժամանակ ունի. նայէ, որ չը թողուս անցնի ժամանակի պատեհութիւն։

Կեանքդ ու վարքդ ուղիղ պահէ, Թոռնիկ, չիտակ քալէ, որ որդիքներդ էլ քեզ հետեւին. չը լինի որ խեչափառին պէս միակողմանի քալելով, խրատ տաս ձագերուդ թէ՝ ուղիղ քալեցէք։ Գիտցիր, որ նոքա պատասխան պիտի տան քեզ. «Հայրի՛կ, մենք կը տեսնամք թէ ինչպէս կը քալես»։

Ուխտիւ կը պատուիրեմ քեզ, Թոռնիկ, կեանքիդ բոլոր գործերու մէջ ուղղութիւն պահէ. պէտք է գիտնաս, որ ուղղութիւն կը յատկէ քեզ ժողովուրդին վարկ եւ վստահութիւն, որով բարի համբաւ և պատիւ կը տանաս ժողովուրդին առաջ։

Ամենամեծ բարոյական հարստութիւն է քեզ համար, Թոռնիկ, եթէ կարենաս ժողովուրդին սէրն ու համակրութիւն գրաւել դէպի քեզ. աշխարհի բովանդակ ոսկին՝ դորա հետ չի հաւասարիր։ Դու առանձին մի գիւղի մէջ կ'ապրիս, մի՛ ասիր թէ առաքինութեանս չրջանակ չատ նեղ է։ Բաւ և չատ է քեզ, Թոռնիկ, եթէ նախ մի գիւղի ժողովուրդին սիրելի ու յարգելի լինիս. բարի համբաւ թեւ ունի՝ գիւղէ գիւղ կը թռչի, կը հասնի մինչեւ ի վան և կը տարածի բոլոր վասպուրական աշխարհին մէջ։ Յիշէ հովիւ Յակոբին և մեր գիւղի մեծ տանուտէրներուն համբաւ, թէ ինչպէս բոլոր գիւղերու մէջ հռչակուած էր։

Հարցո՛ւր այժմ, Թոռնիկ, թէ ի՞նչ են բարոյական միջոցներ և բարի գործեր, որով մարդոյն արժանիք և անուն կը բարձրանայ ժողովուրդին առաջ։ Այդ միջոցներն են՝ սիրել, բարերարել, գթասիրտ լինել, քաղցեալին ոչ միայն հաց տալ, այլեւ թանապուրին մէջ ձեռքով հաց բրդել, անկեալ ու դժբախտ ընտանիքներուն ձեռքէն բռնել, զրկեալ անձինքներն պաշտպանել եւայլն։ Աւետարան կարդալով, Թոռնիկ, կը յիշէք, որ Յիսուս դատաստանին օր թողլով բարեգործ մարդոց ուրիշ այլ եւ այլ բազմադիմի առաքինութիւնները, աւելի կը յիշէ ողորմած մարդոց գթասիրութիւն, որ փողոցին մէջ մնացած՝ անտուն, անճարակ օտարներ ժողվեր են, որ ապքատ, անօգնական հիւանդներուն տես գնացեր են, որ բանտարկեալներուն այցելութիւն արած են, որ քաղցեալին հաց, և ծարաւին ջուր տուեր են։ Ողորմած մարդոց գթասիրութեան այս բարիքներ ո՛վ է ընդուներ ողորմածներէն. յայտնի է թէ ժողովուրդին նեղեալ, չարչարեալ դասն ընդունած է, որ չէ կարող փոխարէն վճարել իւր բարերարներին։ Սորա համար աղքատին պարտք Քրիստոս կը վճարէ. և ի՞նչ կը վճարէ, գիտե՞ս, երկնից արքայութիւն՝ կտոր մի հացի և բաժակ մի ջրի տեղ։

Բայց պէտք է գիտնաս, Թոռնիկ, որ ժողովուրդ ձրի մարդ չի սիրեր, և բան չ'առած՝ չնորհակալութիւն չի տար։ Միթէ դրան աղքատն առանց հացն առնելու, օրհնութիւն կուտա՞յ, կամ բարերարեալ մի՝ առանց բարիքն ընդունելու, երբեմն կը բանա՞յ չնորհակալութիւն տալ։ Աշխարհիս վերայ ամէն բան փոխարինութիւն է։

կան, այո՛, բերաններ, որ միշտ անչնորհակալու են, և շատ անգամ եւս բարերարութեան դէմ ապերախտ կը գտնուին. Թերեւս չար և անգգամ լինելով՝ չարիք էլ կը փոխարինեն, և կը կապին բարերարին ձեռք, որ սարչանայ և չը բարերարէ։

Սակայն դու այս հաչիւներ թող, Թոռնիկ, Աւետարանին մոխիկ արա՛, որ կը պատուիրէ ատելիներուն բարի անել, որք թէպէտ անարժան լինին, բայց դու չի՞ս տեսներ, որ մեր երկնից Հայրը, իւր անձրեւ հաւասար կուտայ մեր դաշտերուն, չի խտրեր չարն ու բարին, նմանապէս իւր լուսատու արեւ հաւասար կը ծագէ բոլոր աշխարհիս վերայ։ Բարերարութեան արդիւնք և ազգեցութիւն շատ գօրաւոր մի դեղ է, չարերու ոգին կ՚ամոքէ, և սրտի դառնութիւն կը փոխէ, երբ կը տեսնայ, որ իւր չարութեան դէմ բարիք կ՚ընդունի, և այդ բարիք կրակի պէս կը վառէ նորա ներքին խիղճն։ Սորա համար Պօղոս կ՚ասէ, թէ «Այս անելով կրակի կայծեր կը թափես նորա գլխուն վերայ»։ Լաւագոյն միջոցն այս է, միշտ բարութեամբ չարին յաղթելը։ բարութիւն ջուր է, որ կը շիջուցանէ բորբոքուած կրակ։

Բարերարութիւն ընկերասիրութեան և քրիստոնէական մարդասիրութեան մի կամաւոր պարտք է, որ մարդ իւր նիւթական կարողութենէն բաժին կը հանէ ժողովուրդի կարօտեալներուն, բայց սա չէ միայն, որով ժողովուրդ գինքն կը սիրէ և բարերար կը ճանչնայ, այլ քուն անձնական արժանիք և առաքինի կեանքն եւս բարերար մարդոյն փառք կը՛յաւելուն ժողովուրդին առաջ։ Ահաւասիկ, Թոռնիկ, կը դնեմ ձեր առաջ, թէ ի՛նչ են այդ հոգեկան առաքինութիւնք։

Հայրենի եկեղեցւոյ հաւատք, երկիւղած և անկեղծ Աստուածապաշտութիւն, հեզ և բարեհամբոյր բնաւորութիւն, սէր, որ իւր ընկեր անձին պէս հաւասար կը սիրէ, արդարութիւն, որ իւր և ընկերին բաժին հաւասար կը բաշխէ, բարի խղճմտանք, որ երբէք ընկերին վնաս կամ զրկանք չաներ. աւելի կը սիրէ զրկանք կրել, քան զընկել. ժողովրդասիրութեան ոգին, որ միշտ ժողովրդին բարին ու չահ կը մտածէ, գուարթամիտ առատաձեռնութիւն, որ շատ սիրելի է ժողովուրդին, մեծագործ ձեռ-

նարկութիւնք, որ հասարակաց համար կը լինի, այսինքն եկեղեցի, դպրոց, հիւանդանոց, աղքատանոց, որբանոց, զանազան նուիրատուութիւնք, կատակ եւայլն՝ ինչ որ ժողովուրդի կեանքին եւ յառաջդիմութեան համար պէտք են։

Հապա այն անձնուէր մշակներն, թէ եկեղեցական լինին թէ աշխարհական դասէն, երբ անձնատուր են ժողովուրդին համար, ոչինչ չը խնայել, ամէն բան զոհել և նոյնիսկ անձն ի սատիկ հարկին. էն ժամանակ ժողովուրդ չի բաւականանար միայն սիրել, այլեւ պաշտել կ'ուզէ իւր անձնուէր մշակներն։ Եթէ մեռնին եւս, չեն մոռցուիր, ժողովուրդ նոցա անունն յաւերժական արձան կը կանգնէ։

Ահա Թոռնիկ, այս է ժողովրդասիրութեան արդիւնք, աշխատիր այդ արդիւնք և փառք ձեռք բերել, որ մեռնելէն յետոյ անմահ մնաս, ժողովուրդն զքեզ յիշէ և քո յիշատակն օրհնէ։

Սիրելի՛ Թոռնիկ, դեռ քեզ հետ պիտի խօսիմ, բայց կը ցանկամ որ այսօր մեր գիւղի քահանաներ, տանուտէրներ և համբաներ կանչես. Պապիկ պարտական է իւր վերջին մնաս բարով տալ գիւղի ժողովուրդին, որոց հետ այսչափ ժամանակ ապրած եմ, և վայելած եմ չատ նոցա յարգանքն ու պատիւ. ինչպէս քեզ, գիւղացւոց համար էլ կատակի պատուէրներ ունիմ։

Բարի եկաք, իմ սիրելի և աչքի լոյս գիւղացիք, կը տեսնաք Պապիկ պառկեր է, էլ վեր եկնելու յոյս չկայ, զձեզ կանչեցի, որ իմ վերջին ողջ-մնայք ասեմ ձեզ և երթամ իմ ճանապարհ, որ չիտակ դէպ երկինք կը տանի. այնպէս կը հաւատայ Պապիկ ծառային, որ իւր Տիրոջ տեսոյն պիտի լինի։

Կը յիշէ՞ք Թոռնիկին հարսնիքին օրն, երբ կերաք հարսանեաց ճաշն, խմեցիք Շահպաղու գինին, սկսեցիք ուրախական խաղեր կանչելով, թէ կերանք Թոռնիկին ճաշն, բարով ուտեցէք Պապկի ճաշն, եկաւ ահա հասաւ այն օրն, որ պիտի ուտէք իմ հոգեճաշն։

Սիրելի՛ գիւղացիք, անուշ ուտէք. բայց պէտք է Պապկի վերջին խրատներն էլ ճաշի պէս ուտէք։ Անշուշտ դուք կ'իմանայիք, որ քանի տարիներէ ի վեր ես իմ

Թոռնիկիս չատ դասեր ու խրատներ տուի, թէ գիւղական երջանիկ կեանքի համար և թէ հողին ու հողագործութեան արուեստին յառաջդիմութեան համար. վերջին անգամ Թոռնիկիս իբրեւ կտակ ապագրեցի, որ ինքն էլ նոյն դասերը ձեր զաւակներուն աւանդէ։

Իսկ այժմ կենդանի բերանով իբրեւ կտակ կը թողում ձեզ, Պապիկ իւր մահուան մահճին մէջ պառկած դեռ խօսել կ'ուզէ ձեզ հետ։ Լսեցէ՛ք, ինչ որ կը խօսիմ, բարեմիտ գիւղացիք։

Տէր Աստուած աշխարհիս վայելչութեան լաւագոյն մասն գիւղական ժողովրդին բաժին հաներ է։ կը տեսնա՞ք, ձեզ տուած է հողագործութեան ընդարձակ դաշտերը, լեռները, հովիտներ, գետեր, աղբիւրներ, Աստուծոյ մշակած բիւրազան բոյսերով և ծաղիկներով զարդարուած։ Դուք ճիշդ բնութեան դրախտի մէջ կը բնակիք և կը վայելէք նոյն բնութեան տուած առատ ու անսպառ բարիքներն այն ինչ քաղաքացիք այս դրախտէն դուրս կ'ապրին. նոցա վայելչութիւն իրենց ձեռագործ մեծամեծ չէնքերն են. նոցա ամէն պերճանքներն, միշտ վաղանցուկ և փոփոխական են, այսօր կան և վաղիւն ոչ. իսկ ձեր պերճանք, զոր նախախնամութիւն վաղուց ի վեր պատրաստած է, կան ու կը մնան, միշտ անփոփոխ դաշտեր, լեռներ, բոյսեր, գետեր, աղբիւրներ, միշտ նոյն կը մնան. միայն թէ բնութեան պատրաստած այդ ճոխագոյն բարիքներն՝ մարդ պէտք է գիտնայ թէ ի՞նչպէս վայելելու է։

Ինչ որ Տէր Աստուած Ադամայ ասաց, նոյն մինչեւ ցայսօր կը խօսի Ադամայ զաւակներուն, այն է՝ գործել զերկիր և պահել։ Դուք փորձով գիտէք թէ արտն՝ առանց ցորեն ցանելու, ցորեն չի բուսանիր, առանց տնկելու և ջրելու՝ ծառ չի աճեր. առանց հողագործական աշխատութեան՝ ոչ ոք կարող է երկրէն արդիւնք հանել ու ժողվել իւր ամբարն։ Հողագործ մարդու կեանք միայն աշխատութեամբ կ'արդիւնաւորուի, հողագործ հողով կ'ապրի և երջանիկ կ'ապրի, ինքն ապրելէն յետոյ, քաղաքացի ժողովուրդին էլ հաց կուտայ։

Ուրեմն դուք ձեր հողերով, ձեր դաշտերով, ձեր լեռներով, ձեր կաթնատու կովերով ու ոչխարներով, և այլ

պիտանի անասուններով՝ չատ ու չատ հարուստ էք քաղաքացիներէն։ Իրիկուն գիղացի, փորձառու Պապիկ խրատ կուտամ ձեզ, չը լինի՛, չը լինի՛, որ գիղ թողուք, հող թողուք և երթաք քաղաք բնակիք, գիտցէք որ թշուառ կը լինիք։ Երբ հողն կորսնցնէք, ձեր կեանքն էլ հողին հետ կը կորսուի։ Կարօտութիւն և թշուառութիւն կը հասնի ձեր վերայ և էն ժամանակ դուք յուսահատ վիճակի մէջ կը պաշարուիք, էլ ուրիշ ոչինչ յոյս չի մնար ձեր առաջ, այլ միայն պանդխտութիւն, ձգելով ընտանիք, զաւակներն անտէր, երթալ յօտարութիւն, չարաչար աշխատութեան մէջ տառապիլ, թողլով հողագործութեան քաղցր ու ազատ աշխատութիւն, ո՜հ, երթալ բեռնակի՞ր լինել. թողլով գիւղի կանաչ դաշտավայրերն, մաճն ու լծկաններն, ծառն ու ծաղիկ, հովասուն լեռներն, անմահական աղբիւրներու ջրերն, քաղցրաչունչ առողջարար օդն, կաթն ու մածուն, սերն ու կարագ և այլ չատ բնական ու նահապետական բարի վայելքներն, զորս մայրենի երկիր կը պարգեւէ իր զաւակներուն։ Պապիկ չատ փորձառու է պանդխտութեան դառն կեանքին, ձեզմէ չատերն էլ նոյն փորձն առած են. աշխատեցէ՛ք, աշխատեցէ՛ք, որ այդ օտարութեան կեանքի դառնութիւններ չի ճաշակէք. ես էլ կ՚աղօթեմ ձեզ համար, իմ հայրենակից գիւղացիք, որ պանդխտութեան երես չի տեսնաք, ձեր հացն մայրենի երկրին մէջ գտնէք։

Բայց գիտէ՛ք, բարեպաշտ գեղացիք, թէ մարդիկ միայն հացով չեն ապրիր. կ՚երթաք ժամ, Աւետարանին մտիկ կ՚անէք, լսեցէք ի՞նչ կ՚ասէ Յիսուս թէ «Մարդ միայն հացով չի ապրիր, այլ և Աստուծոյ բանով պէտք է ապրի»։ Վասն զի ևթէ մեր մարմին հացով կ՚ապրի, հոգին էլ պէտք է ապրի, և հոգւոյ կեանքն ու հաց Աստուծոյ պատուէրներն են, և պատուիրաններու գլուխ ներն է. ուստի մարդիկ սիրով կ՚ապրին և իրաւմով կ՚ապրին։

Ձեզ պարզ օրինակ տամ. մէկ լծով գութան չի լինիր, մէկ մարդով չաղացի քար, կամ ձիթահանի գերան կարելի չէ տանել իր տեղն դնել. աշխարհիս ամէն դըժուար բաներն մարդիկ սորված են ընկերական միացած ուժով գործել։ Դուք փորձով գիտէք, երբ որ մեր գիւղի



ՄՀԵՐԻ ԴՈՒՌԸ

Ապա դառնացալով աշխարհից ոճրահեղձ՝
Ցանձնեց իրեն բարայր մութ Ագռաւու Քարից,
Որ մի օր դուրս ոսցնէ եւ կործանէ Չարից։

ՍԱՂՈՄՈՆ ՏԱՐՕՆՑԻ

համար մի ծանր բան լինի, բոլորս կը միանանք և այնպէս կը գործենք, կը յիշէ՞ք քանի տարի յառաջ՝ քիւրդեր մեր գիւղի ոչխար գարկին տարան, էն ժամանակ գիւղի բոլոր կարիճներ հաւաքուեցան, որն ձիով, որն ոտով, գերանդիներ սուրի տեղ առին՝ գնացին Թալան դարձուցին։ Հիմի դուք ասէք, մի մարդ գեղի ողջ Թալան կարո՞ղ էր դարձնել։

Հասկցաք այժմ, որ մարդիկ իրարու օգնելով կ'ապրին, հարցուցէք, թէ ինչո՞ւ համար իրարմով կ'ապրին։ Մտիկ արէք, պարզ կերպով խօսիմ ձեզ։ Որովհետև աշխարհիս վերայ ամէն տեղ գեղն ու քաղաք մարդոց կեանք անհաւասար է, որն հարուստ է, որն աղքատ է, որն իշխան է, որն հասարակ ժողովուրդ է, որն տէր է, որն ծառայ է, որն տանուտէր է, և որն միակ է։ Ահա այս անհաւասարութիւն է, որ մարդիկ իրարու հետ կը կապէ և մի ընկերութիւն կը կազմէ. ժողովուրդ իշխանին հետ կը կապէ, ծառայն տիրոջ հետ, աղքատն հարուստին հետ, ինչպէս մեր գիւղի աղքատ մշակներն՝ հարուստ տանուտէրներուն հետ կապած է։

Ի՞նչ կ'ասէք դուք, եթէ այդ մշակներն աղքատ չը լինէին, յանձն կ'առնէի՞ն մտնել ծառայութեան ծանր լծին տակ։ «Աղքատութիւն զայր խոնարհեցուցանէ», կ'ասէ Սուրբ Գիրք. ապա թէ ոչ, մարդ եթէ զգայ իւր անձին արժանաւորութիւն, երբէք չի խոնարհիր ծառայութիւն անելու։ Բայց միթէ լա՞ւ կը լինի, եթէ ամէն մարդ հաւասարապէս ազատ լինի, հարուստ լինի, աղա լինի։ Ո՛չ, էն ժամանակ աշխարհիս կարգ կը խանգարուի. հայոց առած մի կայ՝ կ'ասէ. «ես աղա, դուն աղա, մեր աղուն ո՞վ կ'ագայ»։ Այո՛, ծառան և չաղացպան պէտք է ալուր պատրաստեն, որպէս զի աղան կարենայ առանց չաղաց երթալու հաց ուտել։

Աշխարհիս ժողովուրդին ամենամեծ մասն՝ բանուոր, գործաւոր, մշակ և ծառայ են, որոց թափած քրտինքին արդիւնքն է, որ աշխարհ կը կերակրէ. նախախնամութեան յաւիտենական օրէնք մարդկային ընկերութեան կեանքն այնպէս կարգադրած է, որպէս զի մարդիկ իրարմով ապրին։ Դուք կը տեսնաք ձեր աչքով և փորձով գիտէք, որ մեր գիւղական կեանքն էլ անհաւասար է. զի

մէկ մասն հոգատէր ու տանուտէր է, մասն մի եւս վարձական մշակ է, որ իր դառն քրտանց աշխատութիւն՝ խիստ սակաւ վարձքի հետ կը փոխարինէ։ Ըլլի որ ձեր մշակներու վարձ կարէք, կամ ձգձգէք այսօր չէ վաղն. Տէր Աստուած կը պատուիրէ, որ վարձկան մշակին վարձն մինչեւ իրիկուն չի մնայ, այսինքն, օրն չանցնի վրան, վասն զի հնձող մշակներու բողոքն մինչեւ երկինք հասնելով, Աստուած Եսայի մարգարէին բերնով կը յանդիմանէր Իսրայէլի հոգատէր տանուտէրեր։ Զարհուրելի խստութեամբ մի վարուէք մշակներու հետ։ Ես տեսայ որ ոմանք չափն աւելի կը տանջէին, կը հայհոյէին և կը կռիւէին գիրենք, գրկանք եւս հասցնելով, գիտէք, թէ մշակներուն տէր դուք չէք, Աստուած է, որ վրէժխնդիր կը լինի և գրկեալներուն դատաստան կը տեսնայ։ Որչափ քաղցրութեամբ ու արդարութեամբ վարուիք հոգագործ մշակներուն հետ, այնչափ լաւ և շահաւոր է ձեզ համար. էն ժամանակ նոքա աւելի սիրասէր ու հաւատարիմ կը լինին, և սրտի մտօք կ'աշխատին, որով հոգագործութեան արդիւնք՝ շատ շահաբեր կը լինի տիրոջ համար։

Տանուտէր եղբայրներ, չի լինի որ դուք ազատ աշխատաւոր մշակներն իրեւ անարգ ստրուկ համարելով՝ արհամար կերպով վարուիք նոցա հետ. դուք եկեղեցի կ'երթաք, Աւետարանին մտիկ կ'անէք, միթէ չ'գիտէ՞ք և չէ՞ք հասկցեր, որ Յիսուս իր բոլոր հաւատացեալներ մեծ ու փոքր, հարուստ ու աղքատ, իշխան և ժողովուրդ, տէր և ծառայ, ամէնքը հաւատարապէս մի սիրոյ եղբայրութիւն կազմելով, ասաց այս բան. «Դուք ամէնքդին եղբայր էք»։

Այս խօսքով չէ թէ Յիսուս մարդկային ընկերութեան իրաքանչիւր դասակարգի կամ աստիճանի պատիւն ու յարգանք կ'եղծանէ. ո՛չ, Պօղոս Առաքեալ Քրիստոսի այս խօսքն բացատրելով կ'ուսուցանէ մեզ, որ մենք իրաքանչիւր մարդոց աստիճանին համեմատ՝ տանք մեր պատիւն ու յարգանք և բարոյապէս։ Աւետարանի սիրոյ պարտք անխտիր է, պէտք է իրաքանչիւր մարդ ինչ դիրքի և աստիճանի մէջ կը լինի՝ թող լինի, պարտաւոր է հատուցանել իր ընկերին։ Բայց արտաքին պարտքերու համար էլ Յիսուս վճռաբար ասաց ու կատարեց, «Տուք

պկայներն կոյներ և գԱստուծոյն՝ Աստուծոյ»։

Կարգն եկաւ, խօսիմ ձեզ, գիւղացի եղբայրներ, պարտաճանաչ եղէք, և միշտ հաւատարիմ կացէք ձեր պարտքեր վճարելու, ուր որ կը լինի։ Սակայն առաջին անհրաժեշտ մեծ ամենակարեւոր պարտք հպատակ ժողովուրդին համար՝ տէրութեան պարտքերն են որուն պարտականէ երկրին ժողովուրդ, քաղաքացին և գիւղացին վճարել ճշդութեամբ և հաւատարիմ երկիւղածութեամբ։ Յանցաւոր է այդ մարդ, ոչ միայն երկրին օրինաց առաջ, այլ նաեւ Աստուծոյ յայտնած պատուէրներուն առաջ, եթէ ննջէ ու խարդախէ այս պարտուց մէջ։

Աշխատեցէք միշտ տէրութեան տրոց պարտքերն ճըշդութեամբ վճարել, և ժամանակին վճարել. մի թողնէք որ դիզանայ և ծանրանայ ձեր վերայ, և յետոյ պարտաւորիք ինչ որ ունիք ծախել ու վճարել տուրքն։ Եւ ի՞նչ ունիք դուք, հող և լծականներ. եթէ ծախէք՝ ձեր կեանք կը ծախէք, և կենդանւոյն կը մեռնիք թշուառութեան մէջ։

Մեր գիւղի աղքատներ ձեզ կը յանձնարարեմ, բարեսիրտ տանուտէրներ, տէրութեան տրոց բաշխումն ուղիղ և արդար արէք, թեթեւ դրէք չքաւոր տներուն բեռն. գուք որ կարող էք, ձեր վերայ առէք աղքատներուն բեռն. գիտցէք, ով որ ընկերին բեռն բառնայ, կը կատարէ նա սիրոյ պատուիրանին մեծ օրէնք։

Տէրութեան տրոց պարտքէն յետոյ, գիտեմ, քաղաքացւոց էլ շատ պարտք ունին մեր գիւղացիք. շատ անբախտ են նոքա, որք հողեր ծախելով իրենց պարտքեր վճարեցին, և ոմանք էլ արտեր գրաւ դնելով՝ պարտք պարտքի վերայ կը յաւելուն ծանր-ծանր տոկոսներով, որոց վախճան շատ ձախորդ ու դառն է, պի վերջ-վերջ չը պիտի կարողանան վճարել և էն ժամանակ պարտապահանջ իրաւունք պիտի ունենայ գրաւել ձեր արտերն։

Ուստի խրատ կուտայ ձեզ Պապիկ, աշխատեցէք նախ, որ պարտք չ՚անէք. իսկ երբ նեղութիւն և անձկութիւն կը տիրէ ձեր վերայ, և դուք անճարակ կը լինիք և պարտք կ՚անէք, աշխատեցէք չուտով վճարել քիչ պարտքըն, քանի չէ էվելցեր։ Պարտուց գործին մէջ միշտ հաւատարիմ եղէք, թէ առնելու և թէ տալու ժամանակ բըռնաւ նեղութիւն մի գործէք, ուղղութեամբ վարուեցէք

և ուզիղ արէք ձեր հաչիւները, գիտցէք որ, գիւղացի ժողովուրդին վարկ ու պատիւ իւր հաւատարմութեան վերայ է. ով որ նենգէ և ուրացութիւն անէ, էլ այնուհետեւ նորա վարկն ու պատիւ կը մեռնի քաղաքացւոյն առաջ. ուստի որ դիմէ և աղաչէ՝ կարող չէ փոխառութիւն անել։ Ասացէք, Պապիկ, դու չե՞ս ճանաչեր քո գեղացին, որ գիր ու հաչիւ չի գիտեր. ինչպէ՞ս կարելի է իւր հաչիւ գիտնալ ու պահել. նա միայն անգիր, անթուղթ մտահաչիւ ունի. սորա համար չատ անգամ կը մոռնայ և ուրացութեան կը դիմէ։

Շատ ըղորդ է այդ բան, կը խոստովանիք դուք ձեր բերնով. ես էլ կը վկայեմ ձեզ հետ, որ գիւղացւոց տուն քանդող և միակ մեծ պատճառն այն է, որ ինքն գիր ու հաչիւ չը գիտէ։ Մեր կեանքի տնտեսութիւն՝ պէտք է գրով ու հաչիւով լինի. որովհետեւ մարդոյս միտք մոռացկոտ է, այս աւուր բան վաղը կը մոռնայ. գիրն ու հաչիւ հնարուած է, որ մեր մտքի բան անմոռաց պահէ։ Ով որ գիր ու հաչիւ չուներ, նորա տնտեսութիւն խանգարուած է, և ինքն իւր բոլոր առեւտուրի մէջ միշտ կը վնասի։ Շատ անգամ խօսած եմ ձեզ և այսօր վերջին անգամ՝ իբրեւ կտակ կ'աւանդեմ ձեզ իմ խրատներս։

Մեր գիւղի դպրոցին հոգ տարէք, որպէս զի ձեր տղաք կրթուին, գիր ու հաչիւ սորվին, դուք արդէն մանկան անցուցած էք, անհաչիւ ապրեցաք, անհաչիւ պիտի մեռնիք, գոնէ ձեր տղաքներն կրթուելով՝ բանգէտ լինին, գիտնան իրենց կեանքի տնտեսութեան գործերն։ Երբ քաղքցին ամէն բան գրով ու հաչուով կը գործէ, ինչո՞ւ համար գիւղացին էլ քաղքցուն պէս հաչիւ չի գիտնայ։ Ո՞րչափ ամօթ է գեղացւոյն համար, երբ խաբուի, սկսի տրտնջալ ու ասել թէ՝ քաղքցին զիս խաբեց եւայլն։ Միթէ գիւղացին մարդ չէ՞, բանականութիւն չունի՞։ Այո՛, մենք էլ մարդ ենք, այլ մեր բանականութեան աչք՝ տգիտութեամբ փակուած է։ Մենք աչք ունիմք և իբրեւ կոյր կը չրջիմք աչխարհիս վերայ, սորա համար քաղքցին զմեզ անբան, անխելք կը համարի. ո՛հ, երբեմն աւելի նախատելով՝ յիմար էլ կ'անուանէ։ Այս անտանելի նախատինք յաւիտեան չի բարձուիր մեր վրայէն, քանի որ մենք կրթութիւն և ուսում չունիմք. և

քանի որ մեր մտաւորական աչք բացուած չէ, մենք մոլորուած պիտի լինիմք աշխարհիս մէջ, և գիտէք դուք թէ մոլորուած մարդու կեանքի ճանապարհ թշուառութեան փչերով լի է, և վախճան դէպի կորուստ կը տանի։

Ուրեմն, սիրելի՛ գիւղացիք, այս կորստեան ճանապարհէն ազատուելու համար, պէտք է մեզ համար անխոտոր ուղիղ ճանապարհ, և ի՞նչ է որ չիտակ ուղին կը բացայ մեր աչքին առաջ, այդ չէ թէ ցորեկուան արեւն է, գիշերուան լապտերն ու ճրագ է. ոչ, այդ աշխարհի լոյսեր բաւական չեն մեր կեանքին համար, եթէ մենք մտաւորական լոյս չունենամք, որ է ուսուցն և կրթութիւն, զոր կը ստանայ մարդ իւր մանկական հասակէն։ Ուստի կրթեցէք ձեր մատաղ մանուկներն, որ մեծնան մարդ լինին, թող բացուի նոքա մտքին աչքը՝ իբրեւ կոյր չը շրջին աշխարհիս վերայ. կրթեցէք նաեւ ձեր աղջիկներ, որ խելացի տնտես և բարի մայրեր լինին, պէտք է գիտնաք որ տան չինութիւն, կարգաւորեալ տնտեսութիւն միայն կիներուն ձեռքով կը լինի։ Մի՞թէ կիներ մարդ չի՞ն, հոգի ու միտք չունի՞ն։ Տէր Աստուած՝ կին իբրեւ ամուսին տուաւ այր մարդուն, ոչ թէ միայն զաւակ ծըննելու համար, հապա իբրեւ ընկեր և օգնական տուաւ, որ աշխատութեան մէջ գործակից լինի. մարդ դաշտին մէջ աշխատի, կինն էլ տան մէջ։ Դուք տեսե՞ր էք որ մէկ հզով հարօր բանի, այր և կին զոյգ լծակիցներ են. եթէ լաւ նկատենք, աշխատութեան մեծ բաժին կիներուն վերայ ծանրացած է. խեղճ կիներ իրենց ծնած զաւակներ անուշանելէն յետոյ, որչափ ծանր ու դժուարին է առտնին տնտեսութեան այնչափ բաներ հոգալ. մտիկ արէք, որ մի առ մի չարիմ ձեզ գիւղացի կնիկներուն աշխատութեան գործերն։ Ամէն օր լմոր չաղղել, բարկ Թոնիրին դիմաց հաց եփել, կերակուր պատրաստել, դաշտի մշակներուն հաց տանել, իրիկուն առաւօտ մատակներ, կովեր կթել, երթալ պէրատեղ ոչխարներ կթել, կամնարարութեան գործեր տեսնալ, ծծում կամ տիկ զարնել, իզ և պանիր չինել, հիւրեր հոգալ. չատ անգամ ախոռներ մաքրել, փթիր թխել, ամրոց չինել՝ ձմրան համար վառելիք պատրաստել, բուրդ գզել, մանել, գուլպայ, թաթպան հիւսել և ուրիշ չալէ բաներ գործել, լուածք, կար

ու կարկատ անել, երթալ դաշտեր, լեռներ ներկի ծաղիկներ ու արմատներ ժողվել, նախշուն կապերտներ գործել. էլ ո՞ր մէկն ասեմ. կան տակաւին ուրիշ չատ գործեր, որ գեղացի կիներուն բաժին ինկած է. խեղճ կիներ անմռունչ հնազանդութեամբ այս ամէն աշխատութիւններն կը տանին։ Դուք գիտէք ու կը տեսնաք այս աշխատաւոր կիներէն ոմանք, իրենց խստաբարոյ և անխիղճ էրիկներէն չարաչար ծեծ կուտան և հայհոյանքներ կը լսեն։

Գիտեմ, պիտի պատասխան տաք, է՞ Պապիկ, ի՛նչ բաներ, կը խօսիք մեզ մեր անզգամ լեզուանի կիներն եթէ չը ծեծենք և չփետտենք, կարո՞ղ ենք զսպել. դուք խրատ կուտաք մեզ, որ աղջիկներն էլ մանչերուն պէս կարդալ սորվին։ Դուք գիտե՞ք, ի՞նչ կը լինի էն ժամանակ, միտքերնին կը բացուի, լեզուանի և անզգամ կը լինին, ամէն բանին համարձակ պատասխան կուտան, իրենց բնական ամօթխածութեան քօղ կը պատռեն, հնազանդութեան լուծն կը կոտրեն. դուք տես էն ժամանակ էրիկ կնկան կռիւ. տան խաղաղութիւն կը վրդովի, մեր հին նահապետական կարգն ու կանոն կը խանգարուի։ Մենք մեր պապերէն այնպէս սորված ենք, որ կիներ լուռ ու մունջ կենան։ Սորա համար մեր հարսներ սորված են ութն տարի լեզուակապ մնալ տան մէջ, ոչ ոքի հետ չը խօսին, միայն իրենց ամուսիններուն հետ խօսին. էն էլ ոչ թէ մարդոց առաջ, այլ առանձին։ Երբ մեր աղջիկներ կարդալ սորվին, յետոյ ամուսնանան հարս լինին, էլ անոնց լեզուն կը բռնուի՞. մանաւանդ թէ բնագէտ լինին, գիրքեր կարդալով աշխարհի բաներ իմանան. թող այս, չինականի աղջիկներ միթէ ժամանակ ունի՞ն, որ դպրոց երթալ կարդալ-գրել սորվին. մեր տան ու դաշտի գործեր ո՞վ պիտի տեսնայ։

Մենք Պոլիս երթալով գալով տեսեր ենք ու գիտենք, էդ Պոլսոյ կիներ երբ կարդալ-գրել սորվեցան, ամէնք ճարտար վիաստաբան դարձեր են, խեղճ ամուսիններ գերի դարձեր են իրենց ձեռք. մինչեւ անգամ կը համարձակին բողոք կուտան Հայոց Պատրիարքարանին և էրիկներ դատաստանի կը քաշէն։ Մենք այս բաներ տեսնելով, կը վախնամք. լաւ է որ կիներ տգէտ մնան ու հնազանդին մեզ։

Լաւ կը հասկնամ ձեր խօսքեր, սիրելի գիւղացիք, մանկ արէք, որ պատասխան տամ։ Երանուն քառասուն տարի յառաջ՝ ճիշդ խոստովանիմ, որ Պապիկն էլ ձեզ պէս կը մտածէր ու կը խօսէր, բայց երբ որ կարդալ սորվեցայ, գրքերու հանն առի, պանդխտութեան մէջ շրջելով՝ աշխարհի բաներ, փոփոխութիւններն աչքովս տեսայ, էլ այնուհետեւ սկսեցի մտածութիւններս փոխել, պէտք է գիտնաք, որ ժամանակ ամէն բան իւր հետ կը փոխէ։ Դուք ի՞նչ կը մտածէք, կ՚ուզէք որ հնութեան մէջ անփոփո՞խ մնայք։ Դուք եթէ այժմեան ձեր վիճակի մէջ մնաք, էնպէս անշարժ, ինչպէս լճացած ջուր՝ կենդանի գետերու վտակներու պէս յառաջ չ՚երթաք, պիտի ցամքիք ու չարնաք տգիտութեան ու թշուառութեան մէջ։ Մարդ պէտք է ժամանակին հետ քալէ, ով որ ետ մնայ, հացի կարօտ կը լինի, պէտք է գիտնաք որ աշխարհիս վերայ աւելի տղէաներն են, որ խեղճ ու թշուառ կեանք ունին։

Կար ժամանակ, որ քաղաքցին ու գիւղացին առ հաւասարակ տգէտ էին և տգիտութեան մէջ հաւասար կերպով կ՚ապրէին։ Այժմ քաղաքացին յառաջ կ՚երթայ իւր դըպրոցներով, մանչ ու աղջիկ հաւասարապէս կը կրթուին։ Մենք գիւղացիք, եթէ ոչ քաղաքացւոց չափ, գոնէ փոքր ի շատէ ուսմունք սորվելով չը կրթուինք, էն ժամանակ մենք քաղքցւոց յառաջ սարուկ կը լինինք վասն զի տգիտութիւն է, որ մարդ սարուկ, գերի կը դարձնէ։ Ահա սորա համար է, որ քաղաքացին յառաջ կ՚երթայ, կը հարստանայ, իսկ գիւղացին ետ կը մնայ ու կը չքաւորի։

Դուք էնպէս կը կարծէք ու կը դատիք, որ երբ աղջիկներ գրել ու կարդալ սորվին, լեզուանի ու անզգամ կը դառնան, և այլեւս իրենց բնական պատկառանք և համեստութիւն կը կորսնցնեն։ Ձեր այս դատաստանն շատ սխալ է։ Օրինակ մեր աչքին առաջն է, մեր բնակած գիւղ երկու հարիւր տունէն աւելի է։ Մեր գիւղին կիներն ամէնքն ևս հաւասարապէս տգէտ են, գրել-կարդալ չ՚գիտեն, դուք ի՛նչ կ՚ասէք այդ ձեր ասած անզգամ և լեզուանի կիներ պակա՞ս են մեզ։ Դուք չ՚գիտէք դեռ թէ ամէն չարաբարոյութեան աղբիւր տգիտութիւնն է։ Եւ կիներու տգիտութիւն աւելի վնասակար է մի ընտանեկան

գերդաստանին, քան թէ այր մարդոց։ Մտիկ արէք թէ ինչ կ'ըսէ Սողոմոն Իմաստուն. «Իմաստուն կանայք շինեցին զտունս, իսկ անզգամք ձեռօք իւրեանց քակեցին»։ Դուք էնպէս կը կարծէք, որ տուն շինել, շէնցունել, պահել, միայն այր մարդիկ են, կիներ շինութեան համար ոչինչ նշանակութիւն չունին։ Բայց պէտք է գիտնաք, որ տան շինութիւն ու լիութիւն կիներուն ձեռքն է։ Դուք դաշտի վաստակներ կը բերէք կը լեցնէք տուն, բայց եթէ կին ագէտ ու յիմար լինէին, չ'գիտնայ տուն կառավարել, չ'գիտնայ թէ ինչպէս պէտք տան կարիքները մատակարարել, չափով ու խնայութեամբ տնտեսել. էն ժամանակ կը տեսնաք դուք, որ տարուան պարէն, կէս տարուան մէջ կ'ըսպառի, ոչ ամբարին մէջ ալիւր կը մնայ և ոչ մառանին մէջ իւղ, պանիր և այլ նպարեղէններ. վասն զի տնտեսելու համար խելք, իմաստութիւն պէտք է, և երբ տանտիկին անխելք է, տան շինութիւն կը սկսի ներքին կողմէն քակուիլ։

Թողունք տան նիւթական շէնք և հացի տնտեսութիւն, մի տուն, կամ ընտանեկան գերդաստան շէն ու հաստատ լինելու համար, աւելի եւս բարոյական շէնք պէտք է, եթէ այդ շէնք չի պահպանէ տունն, շուտով կը փլչի նիւթական շէնք։ Եւ ի՞նչ է այն, որ տան բարոյական շէնք հիմէն սկսելով կը կառուցանէ, գիտէ՛ք, խօսիմ ձեզ, մայրենի կրթութիւն և խնամքն է. և ի՞նչպէս կարող է մի մայր կրթել իւր մատաղածին մանուկներն, երբ ինքն անկիրթ և ագէտ է, Սորա համար է. որ չարաբարոյ կը լինին մեր մանուկներն, երբ մայրերն անմիտ են, այնչափ որ՝ իրենց ծնած զաւակներն անգամ կարող չեն սնուցանել։ Այդ պատճառաւ է որ, մեր զաւակներն մատաղ-մատաղ կը մեռնին։ Զարմանալի է, շատեր կը կարծեն թէ գիւղական ժողովուրդ աւելի բազմածին է ու կը բազմանայ։ Այս կարծիք շատ սխալ է. մենք կը տեսնամք որ ծնածներէն կէսն անգամ չի մնար. խեղճ տղայք իրենց մայրերու անկրթութեան զոհ կ'երթան։ Մենք իրաւունք չ'ունինք մեղադրել այդ մայրերն. դուք կը կարծէք որ տղաքներն ծնել ու պահել դիւրի՞ն բան է. տղաքներ մեր դաշտերու ինքնաբոյս խոտեր չեն, որ ինքնին առանց դարմանի աճեն և զօրանան։ Մի միայն կրթուած մօր



Հա՛յրիկ, Հա՛յրիկ, ես հայրենիք
Վասպուրական մեր աշխարհ,
Վարդի փոխան ես փուշ բերաւ,
Յաւերդ դառաւ բիւր հազար։

Մայիսն եկաւ սոխակներով,
Վարդի բլբիլ որոնեց,
Փոխան բլբիլ փըշեր գտաւ,
Լալահառաչ ձայն հանեց։

Հայրիկն ասաց.— «իմ հայրենեաց,
Փուշն անուշ է քան զվարդ,
Ես այն փշոց մէջը դարձեալ
Կը որոնեմ սիրուն վարդ։

Այն սայրասուր փշերն ամեն,
Փուշը կապեցէք շար ի շար,
Թողէ՛ք գլխիս պսակ կապեն,
Որուն ճակատս է յօժար։»

Հա՛յրիկ, Հա՛յրիկ, ես սուրբ ճակատ
Արիւն, արցունք են, ո՜հ, միշտ,
Փըթեալ վարդից կարմիր բերբեր,
Կը պըսակեն փառօք զարդ։

Հ. ՃԱՆԻԿԵԱՆ

խնամքն է, որ գիտէ լաւ տածել ու ընուցանել իւր զաւակներն։

Մի այնպէս կարծէք և ասէ՛ք թէ կաթն ու հաց բաւական են տղայոց ընուելդին համար, մինք կը տեսնամք որ թռչունք, անասունք, այլեալ միայն կը հոգան, երբ ձագերուն թեւիկներ բուսանին՝ կը թռչին, իրենք զիրենք կը հոգան, նմանապէս հարթիկներ երբ կաթէն կտրուին՝ կը սկսին դաշտն երթալ արածալ և իրենց ճարակ գտնել։

Ի՛ սիրելի՛ գիւղացիք, չ՚գիտէք ուրեմն, թէ դուք բանաւոր մարդ էք, ձեր կեանք թռչնոց և անասնոց կեանքին հետ նմանութիւն չ՚ունի։ Տէր Աստուած Ադամայ անէծք տալով ասաց. քո հաց ճակատիդ քրտինքով ուտես, այսինքն՝ տաժանելի աշխատութեամբ ճարես հացըդ, բայց թռչնոց և անասնոց համար ոչինչ բան չ՚ասաց, վասն զի երկնաւոր հայր կը կերակրէ զանոնք, ինչպէս կը վկայէ Յիսուս։ Մենք եթէ միայն հացով ապրինք, էն ժամանակ անասուն կը դառնամք։ Սորա համար Յիսուս ասաց. մարդ ոչ միայն հացով կ՚ապրի, այլ Աստուծոյ բանիւ։

Դուք ի՛նչ կ՚ասէք, Աստուծոյ բան, երկնից արքայութիւն միայն ա՞յր մարդոց համար է, կիներ մասն չ՚ունի՞ն, զրկուա՞ծ են. Աստուածաչունչ գիրք, օրէնք, պատուիրան, Աւետարան, միայն ա՞յր մարդոց համար, տուաւ Աստուած։ Ո՛չ, այդպէս չէ, Տէր Աստուած Ադամայ և Եւայի հաւասարապէս տուաւ իւր պատուէր. նոյնպէս նոցա սերունդին հաւասար կերպով աւանդած է իւր Աստուածային պատուէրներն Մովսէսին և Յիսուսին ձեռքով։

Ուրեմն կին-արմատն էլ պէտք է գիտնայ ու հասկընայ այդ Աստուածային պատուէրներն, որք բովանդակուած են Հին ու Նոր կտակարանին մէջ, և ի՞նչպէս կարող է կարդալ ու հասկնալ Աստուծոյ բան, եթէ փոքրիկ հասակէն սկսեալ նա չը սորվի դպրոցին մէջ, որ յետոյ մեծնալով նա կրթուած մայր լինի և կարող լինի կրթել իւր ծնած մատաղ զաւակներն։ Դուք չը գիտէք որ այդ փոքրիկներն միայն իրենց ծնող մօր կրթութեան ու խրատմոց յանձնուած են, հայրեր ոչինչ փոյթ չ՚ունին, մանաւանդ գիւղացի հայրեր, որ բոլորովին զբաղած կը լինին իրենց մշակական աշխատութեան։ Ո՛վ է տղուն առա-

ջին անգամ երես խաչակնքել կը սորվեցնէ, քրիստոնեայ մայր. ո՛վ է, որ հետաքրքիր մանկան ամէն մէկ հարցմունքներուն քաղցր ու մայրենի գորովով պատասխան կուտայ անձնակից մայր. ո՛վ է որ երբ մանուկ աչերն դէպ երկինք դարձնելով՝ կը տեսնայ կապոյտ երկընքին երես լուսաւոր բաներ, կը հարցնէ թէ ի՞նչ են, մայրն է որ կը պատասխանէ թէ արեւ, լուսին, աստղեր են, Աստուած ստեղծեր է մեզի համար, որ ցորեկ ու գիշեր լոյս տան։ Հապա երբ մանուկ իւր չրջապատ մօտ եղած բաներն կը տեսնայ ու կը հարցնէ, այդ ամէն բաներուն պատասխան տուող ո՛վ է, դարձեալ մայրն։ Այո՛, մանուկ իւր լեզուն մօրմէն կը սորվի. Աստուած, և Աստուծոյ բաներն էլ մօրմէն կը սորվի։ Մարդիկ էնպէս կը կարծեն, որ այդ բաներն միայն վարժապետէն կամ՝ վարդապետէն պէտք է սորվին մանուկներն։ Այդպէս չէ, մտիկ արէք բացատրեմ ձեզ։ Մեր նորածին երախաներն կը տանեն եկեղեցին, քահանան կը մկրտէ աւազանին մէջ, կնքահայր անլեզու երախայի կողմէն թարգման կը լինի, հաւատք, յոյս, սէր խնդրելով քրիստոնէութեան դաւանութիւն կուտայ, բայց ո՞վ է, որ կը մկրտէ երախան մայրենի տան աւազանին մէջ, այդ մկրտիչ բնական քահանայն նոյնիսկ ծնող մայրն է, որ երբ երախային լեզուն ու միտք կը բացուի, կը սկսի սորվեցնել քրիստոնէութեան համառօտ՝ պարզ ու բնական դասերն նորա մատաղ սրտին մէջ կը ցանէ սուրբ կրօնի սերմիկներն, որք հետզհետէ կը բողբոջին իւր աճման հետ։

Հիմի տեսա՞ք, որ տան ընտանեկան դպրոցին առաջին բնական և մեծ ուսուցիչ ու կրթիչ ծնող մայրն է, չենք սխալիր թէ որ ասենք, քրիստոնէական ուսման և նախակրթութեան մէջ, առաջին վարժապետ, վարդապետ, աստուածաբան, դաստիարակ մայրն է, և մանաւանդ բարեպաշտ մայրն, որ միայն լեզուով չ'ուսուցաներ, այլ և իւր մայրենի բարի օրինակով կը կրթէ զաւակներն։ Մեր գիւղացի ժամասէր մայրեր, կը տեսնա՞ք, իրենց երախաներ գրկելով կ'երթան եկեղեցին, Աստուածածնայ հետ խաչի պատկերներուն առաջ մոմ կը վառեն, ծունր կը դնեն, աղօթք կ'անեն, երախան իւր մօր այս օրինակներն տեսնելով կը տպաւորէ ինչպէս կնիք իւր մանկական մա-

քուր սրտին վերայ։ Իսկ երբ տակաւ-տակաւ զարգանայ, ակսի հարցնել, մայրիկ, ո՛վ է Աստուածածինն, ո՛վ է Քրիստոս, ինչո՞ւ համար խաչուած է Քրիստոս, ի՛նչպէս չարութիւն առած է, և համբարձեր է երկինք. ո՜հ, այս տեղ անուս և տգէտ մայր կարող չէ պատմել Քրիստոսի ծնունդ և այլ գործքերն։

Հասկցա՞ք այժմ, գիւղացի եղբայրներ, թէ մայրերն են միակ առաջին վարժապետ ու կրթիչ իրենց զաւակներուն։ Այն եւս բաւ է, վարդապետի չափ երկար քարոզ ու խրատ խօսեցայ ձեզ. պահեցէք իմ այս վերջին կտակ, հոգ տարէք այսուհետեւ ձեր զաւակներն, մանչն ու աղջիկ հաւասար կերպով կրթել։ Ինչպէս խօսած եմ Թուռնիկիս դասերուն մէջ, մեր գիւղական դպրոցներ մեծ-մեծ ծախքեր չ'ուներն, եթէ իւրաքանչիւր տուն կալի ժամանակ մէկ-մէկ կօտ ցորեան տան, դպրոցի բոլոր ծախքերը կը հոգացուին։ Գիտեմ, դուք չատ ցաւեր ու տուրքեր ունիք հոգալու, բայց դպրոցի համար եղած տուրքն այնպիսի մի կարեւոր և չահաւոր տուրք է, որ ձեր այդ չատ ցաւերուն դարման կը լինի. դուք այս խօսքեր չէք հասկընար, բայց պիտի հասկնաք այն օր, երբ տեսնաք կըրուելեան արդիւնքն, պիտի յիշէք զիս և ողորմիս տաք Պապկի հոգւոյն։

Սիրելի գիւղացիք, կարծեմ այսչափս չատ բաւական եղաւ, իմ խրատ ու կտակ պահեցէք և ձեր զաւակաց ժառանգ թողէք. դեռ չատ բան կար ձեզ խօսելու, բայց չունչս սպառեցաւ, էլ չեմ կարող չարունակել։ Մնաք բարեաւ խաղաղութեամբ, աղօթեցէք ինձի համար, որ բարի հրեշտակ քաղցրութեամբ առնէ հոգիս. չեմ արժանի երկնից արքայութեան լուսեղէն դարպասին, չատ է ինձ համար, եթէ նորա դրան սպասաւոր և դռնապան լինիմ, դուք երկրէն աղօթեցէք, ես էլ երկնից արքայութեան դրան առաջ ծունկ չոքած հոգւով կ'աղօթեմ, բարերար Աստուած ողորմութիւն անէ բոլոր աշխարհին և մեր խեղճ հայ ազգին, ամէն։

Է՛, սիրելի Թուռնիկ ժամանակ հասած է, որ հոգիս աւանդեմ, հրեշտակ կը սպասէ, տակաւին մի վերջին կտակ ունիմ ձեզ զոր պէտք է ամենայն հաւատարմութեամբ և ճշդութեամբ կատարէք և ժառանգէք Պապկի օրհնութիւն։

Ես կը մեռնիմ Թոռնիկ, զիս տարէք թաղեցէք մեր պատով արտի մէջ, որ գերեզմանոցի մօտ է։ Գերեզմանս փորել տուր արտի մի քունջ, ուր բարտի, ուռենի ծառեր կան։ Դու գիտես, որ շատ ժամանակ Պապիկ աշխատութենէն յոգնած, կ'երթար այդ ծառերուն տակ կը նստէր, կը հանգստանար։ Երբեմն ես գլուխս ծառի բունին վերայ դրած՝ անուշ կը քնանար, իսկ այժմ գերեզմանին մէջ պիտի ննջեմ, մինչեւ Գաբրիէլ իւր փող հնչէ։

Այդ իմ գերեզմանի արտ երբ կը վարես, ցորեն կը ցանես, պատուէր կուտամ քեզ, որ այդ արտի մաքուր ցորենէն, բաւականի չափ ապաս ալիւր անես, յանձնես գիւղի քահանային, որ նչխար գործէ, Պապկի հոգւոյն համար պատարագ անէ հինգ տաղաւարաց մեռելոցի օրերն։ Նմանապէս մեր այգին երբ կթես, լաւ ու հասուն խաղողներ ձեռքովդ զատէ ու քամէ, բոլոր տարուան բաժակցուն պատրաստելով՝ քահանային յանձնէ, թող պահէ եկեղեցւոյն մէջ։

Իմ հոգեճաշն ամենայն առատութեամբ պատրաստէ, ձեր հարանիքին սեւ ծուռ եզն մորթեցինք, նայէ դարձեալ, մեր գութանի տաւարներէն ծուռ եզներ պակաս չեն լինիր, որ լծընկերին հետ հաւասար չեն քաշեր և միշտ խոփն ակօսէն կը հանեն. եթէ կան մորթէ, Պապկէ հոգւոյն մատաղ արա, բոլոր գիւղի աղքատներ լիութեամբ կերակրէ։ Դու այժմ չուտ մարդ ղրկէ վարագայ վանք, թող կանչեն Դանիէլ վարդապետ, որ գիւղի յառաջդիմութեան աշխատող բարի մշակն է, թող գայ զիս թաղէ և ասէ հոգւոցն։ Մի գոմէշի նորահաս ձագ հոգեբաժին տուր վարագայ վանքին, վասն զի այդ վանքի չնորհիւ մենք կարդալ սորված եմք։

Թոռնիկ, գերեզմանիս վերայ մի խաչքար տնկէ, և այսպէս գրէ յիշատակ։ «Այս է տապան Առճակեցի Պապկեն, որ ետ ու մահ սիրեց, իւր Թոռնիկին հողագործութեան դասեր խօսեց, իւր կտակն աւանդեց ու մեռաւ։ Որ հանդիպիք, ասացէք Աստուած ողորմի Պապկէ հոգւոյն»։

Հոգեհանգստեան ժամ կը հասնի, Թոռնիկ. կանչէ մայրիկդ, կանչէ Շուշան և իւր զաւակներն. եկէք ի միասին Պապկի ձեռք համբուրեցէք, առէք իմ վերջի օրհնութիւն և դուրս գնացէք, զիս առանձին թողէք, որ պահիկ մի հանգիստ ինամ աւանդեմ հոգիս։

Իմ պահապան բարի հրեշտակ, ոսոխկանի պէս գըլխուս վերայ կեցեր ես, կը տեսնա՞ս անձս բոլոր մահուան քրտինքին մէջ կը լողայ. այն քրտինք որ ես կը թափէի դաշտին մէջ, ո՛հ, այս վերջին քրտինքն է, որ մահուան համար կը թափեմ. այլևս պէտք չեն ինձ աշխարհիս հաց. միայն թէ երկնից արքայութեան հացին արժանի լինիմ։

Բարի հրեշտակ, չատ չնորհապարտ եմ քեզ, խանձարուրիս ծննդենէն մինչեւ մահուանս վիճակ դիս պահպանեցիր, չատ անգամ գքեզ վշտացուցի, բայց չատ անգամ էլ ուրախացուցի, թէ մեղանչէի, երես դարձուցած կը տրտմէիր, թէ զղջացած ապաշաւէի, կը ցնծայիր, բոլոր կեանքիս չը գիտեմ ո՞րչափ լացիր, որչա՛փ խնդացիր. օրհնեալ է Աստուած, այս վերջին հոգեհանուստեան պահուս, խիստ պայծառ կ'երեւիս. ոգիս յուսով կը լեցուի, կը հաւատամ թէ հաւատով պիտի աւանդեմ հոգիս։ Միայն կը խնդրեմ որ ասես ինձ, մահու հրեշտակ, հոգիս առնելով ո՞ւր պիտի տանես։

Միթէ չը գիտե՞ս, Պապիկ, դու գրոց աչակերտ ես, թէ հաւատացելոց հոգիներն նախ պէտք է Քրիստոս դատաւորին առաջ երթեն, միայն քննող դատաւոր կ'որոշէ մարդկանց հոգիներուս համար վիճակ և տեղերն. դորա համար մի մտածեր, Քրիստոսի Հօր տունն չատ ընդարձակ է, և բազում որոշեալ օթեւաններ ունի։

Ուրեմն կ'աղաչեմ, բարի հրեշտակ, ինձ համար բարեխոս եղէք Քրիստոսի առաջ. ես տուն, օթեւան չեմ ուզեր, ես դաշտի հողագործ մարդ եմ, աշխատութեան սորված, երկնից արքայութեան դաշտէն միայն փոքրիկ արտիկ մի կ'ուզեմ, վարուցան անեմ. գիտեմ, արքայութեան արտեր չատ պարարտ ու բեղուն են աշխարհիս արտերէն, որ տատասկ, փուշ և որոմն խառն կը բուսանեն։

Ներեց Պապիկ, խելքդ հողին ու աշխատութեան ես տուեր, չես գիտեր ի՛նչ կը խօսիս. կը թուի ինձ, որ Յիսուսի Աւետարանի խօսքեր մոռցած ես. գուցէ ծերութիւն զառամութիւն բերեր է վրադ. դու չ'գիտե՞ս, որ արքայութեան մէջ ամէն աշխատութիւն դադրած է ադամորդւոց համար. օրհնեալ լինի Քրիստոս, որ ձեր Ադամայ պապուն վրայէն վերցուց այն անէծք, թէ քրտամբ

հրեսաց քո կերիցես զհաց քո։ Պէտք է գիտնաս, Պապիկ, որ արքայութեան մէջ աչխատութիւն, քրտինք, ցաւ, տառապանք ոչինչ բան չկայ, արքայութիւն միայն Աստուծոյ փառաց վայելքն է. մարմնեղէն մարդիկ մեզ պէս հրեչտակ կը դառնան, ոչ հաց պէտք է, ոչ ջուր, ոչ հանդերձ, մարդն ու հրեչտակ Աստուծոյ փառքով կը յագենան և լուսոյ մէջ կողողին. բայց այս խօսեմ քեզ, Պապիկ, ամէն ծնած մարդ, ինչ որ ցաներ է աչխարհիս վերայ, զայն պիտի հնձէ, այսինքն ինչ որ գործեր է, իր գործոց չափով պիտի ընդունի. բարի գործոց համար Քրիստոսի արքայութիւն է բաժին, իսկ չարագործաց համար դժոխք։

Այդ գիտեմ, բարի հրեչտակ, և դեռ այս անձուկ մահաժամ վայրկեանիս սորվիլ կ'ուզեմ քեզմէ, եթէ իրաքանչիւր մարդ, ինչ որ ցաներ է այս աչխարհիս մէջ՝ զայն պիտի հնձէ անդիի աչխարհ, ուրեմն երկնից արքայութեան մէջ ինձ համար գործ կայ, այստեղ ցանածս այնտեղ բուսած կը լինի և հասած է այժմ, իմ գերանդիս հետս առնեմ, որպէս զի ցանածներս քաղեմ։

Դու կ'ասես արքայութեան մէջ ուտել խմել չը կայ, հապա ի՞նչ է այդ բարեկից սեղան, զոր կը պատրաստէ Քրիստոս իր սիրելեաց համար և ինքն էլ գօտի ածելով կը ծառայէ սեղանին։ Ա՜հ, Պապիկ կը ցանկայ, որ աչխատի այդ երկնային սեղանին հաց պատրաստէ։ Միթէ առանց հացի սեղան կը լինի, կամ առանց այգի տնկելու գինի. ես հացի մշակ եմ, Մասիսի Նոյ Նահապետն էլ թող այգի տնկէ, գինի պատրաստէ։

Շատ պարզամիտ ես Պապիկ, ի՞նչ բաներ կը խօսես. Յիսուս եկաւ աչխարհ, ամէն բան Աւետարանով ձեզ պատմեց, երբ ձեզ նման մարդ եղաւ, և ինքն մարդիկ տեսաւ, փորձեց ու վկայեց թէ՝ այս աչխարհիս որդիքներ աւելի իմաստուն են քան լուսոյ որդիքներ։ Բայց ես կը զարմանամ ձեր վերայ Պապիկ, երբ դուք մահու հրեչտակին հետ կատակով խօսել կ'ուզէք, դու չ'գիտե՞ս որ հրեչտակներ կատակ չեն սիրեր։ Զաքարիան Թերահաւատութեան կատակ մի արաց՝ իսկոյն պատժուեցաւ։ կ'ասես թէ գերանդիս հետս առնեմ, կարծելով թէ մենք հրեչտակներս հնձող գերանդի չունիմք. չի՞ս կարդացեր Յայտ-

նուիրեան գիրք և մարգարէից տեսիլքներու մէջ երեւցած գերանդիներ, մենք մէկ գիշերուան մէջ երուսաղէմ պաշարող Սենեքերիմի զօրքերէն հարիւր ութսուն հազար հոգի հնձեցինք։ Աւելի կը զարմանամ այն բանին, որ կը ցանկաս արքայութեան մէջ քեզ մի արտիկ տան և դու արքայութեան սեղանին հաց պատրաստես։

Է՛, Պապիկ, դու չես կարող ըմբռնել այժմ երկնային խնջոյք, որոյ սեղանն անմահական է, հացն անմահական, գինին անմահական, դու ո՛վ ես, մահկանացու ապիկար մարդ, որ կը մեծամտիս այն սեղանին հաց պատրաստել, զոր միայն Յիսուս իւր խաչով և արիւնով պատրաստեց։ Այլեւս բան մի յաւելուր, Պապիկ, տարաժամ է, տուր հոգիդ, հաւատայ ու հանգիստ եղիր։ Գիտէ Աստուած թէ իւր հաւատարիմ ծառաներ ինչպէս պէտք է վարձատրել։ Գիտեմ, Պապիկ, վարձքդ մեծ է երկնից մէջ, երբ ընկերասիրութեան պարտքդ կատարեր ես, ու մենք ըրկանք չես արեր, ճակատիդ քրտինքով հացդ կերեր ես, մինչեւ յայսօր և այժմ բարի մահով պիտի ննջես։

Պապիկ պինդ բռներ է իւր հոգին, դեռ խօսել կ'ուզէր, այլ երբ տեսաւ որ հրեշտակ համբերութիւն չ'ունի, ձեռքեր խաչեց սրտին վերայ, փակեց իւր նուաղած աչքեր, և վերջին բարբառ մրմնջեց։ Ասաց, ահա հոգիս առ, բարի հրեշտակ։ Այնչափ զուարթ ու դիւրութեամբ տուաւ Պապիկ իւր հոգին, ինչպէս խնձոր մի ծոցէն հանելով, ութսուն երկու տարի կեանքի ծառէն կախուելով՝ բոլոլովին կարմրած հասունցած էր։

Խնձոր ծառէն կաթուկ արած՝ հրեշտակ հասաւ վերէն առեց թռաւ։

Այսպէս մեռաւ Պապիկ, աւանդեց իւր հոգին և հոգւոյն հետ աւարտեց նաեւ իւր ՊԱՊԻԿ ԹՈՌՆԻԿ։

Աստուած ողորմի Պապիկ Ցահապետի հոգւոյն, ամէն։

(վ ե Ր Ջ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԷՏՎԱՆ» ԹԻ 28

Թիւ	1	Ց. Թուրաճեան	ԱՆՈՒՇ (Սպառած)	Գինն	75	Լ.
»	2	Ա. Ծառուկեան	ԹՈՒՂԹ ԱՌ ԵՐԵՒԱՆ	»	200	»
»	3	Ա. Իսահակեան	ՍԱՍՄԱՑ ՄՀԵՐ	»	100	»
»	4	Պ. Դուրեան	(Սպառած)	»	125	»
»	5	Մ. Իշխան	ԵՐԵՔ ՄԵԾ ՀԱՑԵՐ	»	150	»
»	6	Դ. Վարուժան	ՀԱՐՃԸ	»	75	»
»	7	Ց. Շիրազ	ՇՈՒԱՆ եւ ԹԱՄԱՐԸ	»	75	»
»	8	Սայաթ-Նովա	ՏԱՂԵՐ (Սպառած)	»	150	»
»	9	Ա. Իսահակեան	ԱԲՈՒ ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ	»	75	»
»	10	Ց. Թուրաճեան	ԱՆՈՒՇ (Բ. տպագրութիւն)	»	75	»
»	11	Վ. Տէրեան	ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ	»	100	»
»	12	Ե. Չարենց	ՀԱՏԸՆՏԻՐ	»	250	»
»	13	Մ. Մեծարենց	ԾԻԱԾԱՆ-ՆՈՐ ՏԱՂԵՐ	»	200	»
»	14	Վ. Թէքէեան	ՀԱՏԸՆՏԻՐ	»	150	»
»	15	Ինտրա	ՆԵՐԱՇԽԱՐՀ	»	300	»
»	16	Սիամանթօ	ՀՈԳԵՎԱՐՔԻ ԵՒ ՑՈՑՍԻ ՋԱՀԵՐ՝— ԿԱՐՄԻՐ ԼՈՒՐԵՐ ԲԱՐԵԿԱՄԸՍ — ՀԱՑՐԵՆԻ ՀՐԱՒԷՐ — ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ	»	300	»
»	17	Ց. Շիրազ	ՍԻԱՄԱՆԹՕ եւ ԽԱՉԷԶԱՐԷ	»	100	»
»	18	Ա. Իսահակեան	ԻՄ ՑՈՒՇԵՐԻՑ	»	150	»
»	19	Վրթ. Փափազեան	ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ	»	200	»
»	20	Աւ. Իսահակեան	ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ (Ա. Հատոր)	»	300	»
»	21	Աւ. Իսահակեան	ԱՐՁԱԿ ԷՋԵՐ (Բ. Հատոր)	»	300	»
»	22	Ց. Պարոնեան	ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ	»	200	»
»	23	Վ. Շուշանեան	ԳԱՐՆԱՆԱՑԻՆ	»	350	»
»	24	Ա. Արփիարեան	ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ	»	150	»
»	25	Պ. Դուրեան	ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ ԵՒ ՆԱՄԱԿՆԵՐ	»	200	»
»	26	Փ. Միքայէլեան	ԵՒԱ (Արձակուրդի բացիկներ)	»	100	»
»	27	Վ. Թոթովենց	ԿԵԱՆՔԸ ՀԻՆ ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱՑ	«	350	»
»	28	Խրիմեան Հայրիկ	ՊԱՊԻԿ ԵՒ ԹՈՌՆԻԿ	«	200	»

ԿՈՂՔԻ ԳԾԱԳՐԱԾ՝ ԿԱԼԵՆՑ Ի

ԵԴՈՒԱՐԴ ՊՈՂՊԱՏԵԱՆ
EDWAN PRESS
B. P. 3261 Tél. 36712
RUE NAHR- St MICHEL
BEYROUTH - LIBAN

PRINTED IN LEBANON

Գին՝ 200 Լիբ. դահեկան
Արտասահման 75 Սենթ

ՏՊԱՐԱՆ ԷՏՎԱՆ
ՊԷՅՐՈՒԹ

EDOUARD BOGHBADIAN
B. P. 3261
RUE NAHR- St MICHEL
BEYROUTH (LIBAN)